

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - 2009

Հանրապետական գիտական մատաչքանի գեկուցումներ
(Երևան, ապրիլի 28-29, 2009 թ.)

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА
ИНСТИТУТ ЯЗЫКА им. Р. АЧАРЯНА

ДЖАУКЯНОВСКИЕ ЧТЕНИЯ - 2009

Доклады республиканской научной сессии
(Ереван, апрель 28-29, 2009г.)

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA
INSTITUTE OF LINGUISTICS AFTER H. ACHARYAN

JAHUKIAN READINGS - 2009

Republican Scientific session reports
(Yerevan, April 28-29, 2009)

ЕРЕВАН
"НАИРИ"
2009

809, 198, 1

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՋԱՀՈՒԿՅԱՆԱԿԱՆ
ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ - 2009

Հանրապետական գիտական մատաչիջանի ղեկուցումներ
(Երևան, ապրիլի 28-29, 2009թ.)



ԵՐԵՎԱՆ
«ՆԱԻՐԻ»
2009

95779

ՀՏԴ 809.198.1:06

ԳՄԴ 81.2Հ

Ջ 229

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Ջառնկյանական ընթերցումներ - 2009

Ջ 229 Հանրապետական գիտական մատաչրջանի գեկուցումներ (Երևան,
2009թ., ապրիլի 28-29).– Եր., Նաիրի, 2009, 198 էջ:

ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-550-01576-6

© ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ,
2009թ.

ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱԼԵԶՎԻ ԿՈԿՈՐԴԱՅԻՆ
ՀՆՉՅՈՒՆՆԵՐԻ ԱՂԵՐՄԻ ՀԱՐՑԸ

Հայերենում, ներառյալ նրա տարածքային տարբերակները, կարելի է առանձնացնել չորս տիպի կոկորդային հնչյուններ՝ խուլ *հ*, ձայնեղ խոչակային *չ*, ըմպանային (քմային) *ճ* և ձայնեղացած (ձայնալարերի մասնակցությամբ) *հ* [տե՛ս Հանեյան, էջ 361]: Վերջինս խուլ շփական *հ*-ի ձայնեղացած տարբերակն է՝ միջձայնավորային և բառասկզբում՝ ձայնավորից առաջ դիրքերում (հմմտ. գրական արևելահայ. *ահա*, *ահեղ*, *ահալոր*) [տե՛ս Խաչատրյան, էջ 183]: Այն հանդիպում է նաև բարբառներում (հմմտ. *հըն-ցըճ՞ էլ*, *հնոճըլ՞ էլ*. Կոտայք, գ. Գեղաշեն): Դիրքով պայմանավորված այս-

պիսի ձայնեղացած կոկորդային հնչյունը, պարզ է, առաջացել է հետագայում: Սակայն դժվար է որոշել մյուս երեքի առաջացման աղբյուրները:

Կոկորդային ձայնեղ կամ խուլ հնչյունները (հազագները), շնչեղ հպական և շնչեղ կիսաշփական բաղաձայններ պարունակող հնչյունական համակարգերի պարտադիր անդամներն են: Այսինքն՝ շնչեղ խուլ բաղաձայններին ուղեկցում է նաև խուլ շփական *հ*, իսկ շնչեղ ձայնեղներին՝ ձայնեղ *չ*: Տիպաբանական հնչյունաբանության տվյալները փաստում են, որ շնչեղ ձայնեղներով համակարգերում գործառու են նաև շնչեղ խուլ բաղաձայններ, բայց վերջիններիս գոյությունը պարտադիր պայման չէ շնչեղ ձայնեղների առաջացման համար [տե՛ս Яковсон, стр. 95-105]:

Դասական վերականգնումներով՝ հնդեվրոպական մախալեզուն, գոնե որոշակի տարածքում, որի մեջ է մտել նաև հայերենը, ունեցել է շնչեղ ձայնեղ հպականներ, իսկ շնչեղ խուլերի գոյությունը հարցականի տակ է դրվում: Սակայն վերը նշված ընդհանրության վրա հենվելով՝ Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը հնդեվրոպական մախալեզվի համար շնչեղ ձայնեղների կողքին վստահորեն վերականգնում են և շնչեղ խուլ հպականներ [տե՛ս Гамкрелидзе, Иванов, էջ 13]: Ուրեմն այդպիսի համակարգում պետք է որ լինեին նաև ձայնեղ և խուլ կոկորդային հնչյուններ: Հավանաբար այդպիսիք են եղել հնդեվրոպական կոկորդայինները (laryngals), որոնց ուսումնասիրությամբ համեմատաբանները ստեղծել են տարբեր տեսություններ, բայց այդ հնչյունների և համապատասխան շնչեղ (խուլ կամ ձայնեղ) հպականների հետ առնչության հարցը չեն արծարծել:

Հնդեվրոպական կոկորդային հնչյունների (laryngals) վերաբերյալ վարկածները, ինչպես հայտնի է, հենվում են Ֆ. դը Սոսյուրի կողմից առաջ բա-

շած այն տեսակետի վրա, ըստ որի՝ նախալեզվում գործառել է, այսպես կոչված, ձայնորդային մի գործակից (կոեֆիցենտ), որի ազդեցությամբ հնչյունները կրել են որոշակի փոփոխություններ: Սակայն առայսօր այդ հնչյունի (հնչյունների) թե՛ հնչարտաբերական, թե՛ գործառական հատկանիշները ամբողջությամբ լուսաբանված չեն: Համեմատաբանները, հաճախ ցանկանալով նախալեզվի հնչյունաբանական կնճռոտ հարցերի պատասխանները գտնել այդ կոկորդայինների օգնությամբ, նրանց թիվը հասցնում են ավելի քան մեկ տասնյակի՝ դրանց վերագրելով իրենց հարևան հնչյունների վրա ազդելու ամենատարբեր հատկություններ:

Հայերենի ընդհանուր հնչյունական համակարգում բոլոր կոկորդայիններից չնշոթավորվածը խուլ շփական *հ-ն* է: Իսկ որքանով է այն համապատասխանում հնդեվրոպական որևէ կոկորդայինի:

Հայերենի բառասկզբի *հ-ն* երբեմն իր զուգահեռն ունի խեթերենում՝ *հան* «տատ», խեթ. *hannaš* «տատ» (<*an-), *հալ* «պապ», խեթ. *halyas* «պապ» (<*ayos-): Այս փաստը համեմատաբաններին հիմք է տվել եզրակացնելու, որ այդ երկու լեզուներում էլ հնդեվրոպական կոկորդային *Հ-ն* բառասկզբում պահպանվել է:

Գ. Ջահուկյանը բերում է հնդեվրոպական ծագման մի շարք բառեր՝ *հացի*, *հասկ*, *հալ* «թոշում», *հում* և այլն, որոնց բառասկզբի *հ-ն*, ըստ հեղինակի, հավանաբար հանգում է նախալեզվի կոկորդային հնչյունին [Джаукян, 1967, стр. 240-242]: Բայցևայնպես, ինչպես հեղինակն է գրում, «պետք է նկատի ունենալ, որ հայերենում բառասկզբի *հ-ն* կարող է և ինքնուրույն (երկրորդաբար) զարգացման արդյունք լինել, ինչպես ցույց են տալիս բարբառային տվյալները» [Джаукян, 1967, стр. 239]: Ուրեմն՝ խնդրի լուծման համար չկան բավարար տվյալներ:

Հնդեվրոպական կոկորդայինների ազդեցությամբ նրանց հարևան հնչյունները, ինչպես ենթադրվում է, որոշ փոփոխությունների են ենթարկվել: Ուշագրավ է, որ «հնդեվրոպական կոկորդայինների տեսության» համաձայն շնչել խուլ հպականները առաջացել են *խուլ հպական + Ի* միացության արդյունքում: Այստեղից կարելի է եզրակացնել, որ շնչել խուլերը հնդեվրոպական համակարգում սկսել են գործառել ուշ շրջանում:

Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը հնդեվրոպական նախալեզվի համար վերականգնում են հպականների եռաշարք ենթահամակարգ՝ շնչել խուլ, շնչել ձայնել և ձայնածերպային, որոնք ունեցել են, անշուշտ, իրենց դիրքային տարբերակները: Այս ենթահամակարգի չնշոթավորված անդամը շնչել խուլերի շարքն է: Վերջինիս համեմատ նշոթավորված են շնչել ձայնեղները, իսկ ձայնածերպայինները ամենանշոթավորվածներն են [Гамкрелидзе, Иванов, стр. 15-17]: Հեղինակները իրենց կողմից առաջ քաշած տեսակետների հաստատման համար հաճախ դիմում են հայերեն բարբառների ընձեռած փաստերին: Ավելին, նրանք գտնում են, որ հնդեվ-

րոպական լեզուներից հայերենի բաղաձայնական համակարգն է, հավանաբար, հնչյութաբանորեն առավել հնատիպը և մոտը հնդեվրոպականին [ճույնը, էջ 41]:

Ֆ. Կորտլանդտը հայերենի բարբառների հպական բաղաձայնների համեմատական քննությամբ վերականգնում է ընդհանուր հայերենի բաղաձայնական համակարգը. ι^e (շնչեղ խուլ), d (ձայնեղ), t (ձայնածերպային): Այն, ըստ հեղինակի, համապատասխանում է հնդեվրոպական dh (շնչեղ ձայնեղ, թույլ), t (պարզ, ուժեղ), d (ձայնածերպային, թույլ) համակարգին [Kortlandt, p. 15]:

Հայերենում հնդեվրոպական հպականների տեղաշարժի տեսության համաձայն մույնպես նախահայերենում առաջացել են շնչեղ խուլ բաղաձայններ (* $b > p$, * $b > u$, * $p > \varphi$):

Ուրեմն՝ բոլոր համեմատաբանները, անկախ հնդեվրոպական հնչյունական համակարգի վերաբերյալ իրենց ունեցած տեսակետներից, նախահայերենի բաղաձայնական համակարգում վերականգնում են շնչեղ խուլ հպականների շարք: Դրանից հետևում է, որ նախահայերենում գործառել է նաև խուլ կոկորդային h հնչյուն:

Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը, հնդեվրոպական նախալեզվում վերականգնելով և՛ շնչեղ ձայնեղ, և՛ շնչեղ խուլ հպականներ, այսպիսի համակարգի պարտադիր անդամների՝ խուլ ու ձայնեղ կոկորդային հնչյունների և համապատասխան հպական բաղաձայնների փոխադարձ կապի գոյությունը չեն դիտարկում: Սակայն հայտնի է, որ հայերեն բարբառներում շնչեղ խուլների հետ գործառում է խուլ շփական h , իսկ շնչեղ ձայնեղ հպականներով համակարգերում՝ նաև ձայնեղ հազագ: Ճիշտ է, մի քանի բարբառներում (Վանի, Խոյի, Բայազետի) $h > \varphi$ անցումով որոշ ժամանակ h -ն բացակայել է, բայց հատկապես միջին դարերից սկսվող փոխառություններով նրա գործառությունը այդ համակարգերում վերականգնվել է:

Այլ համեմատաբանների մնաց հեղինակները ևս գտնում են, որ կոկորդային հնչյունները գործառել են հնդեվրոպական լեզվաընդհանրության վաղ շրջանում, և վերականգնում են երեք կոկորդային (լարինգալ) հնչյուններ, որոնք ունեցել են ավելի հետին արտաբերություն, քան փափկաքիմքայինները (կատկայիններ, увулярные): Հենվելով տիպաբանական ուսումնասիրությունների վրա՝ նրանք գտնում են, որ դրանք ընկալմային (фарингальные) չընդհատվող (непрерывные) հնչյուններ են եղել: Ըստ հեղինակների՝ այդ կոկորդայինները տարբեր ձևով են ազդել իրենց հարևան ձայնավորի վրա, որից ելնելով էլ՝ կարելի է վերականգնել երեք կոկորդայինների *քմային, չնշութավորված և շրթնայնացած* ($\tilde{H}$, H , H^o): Գործառական հաճախականությամբ, բնականաբար, աչքի է ընկել չնշութավորված H -ն [Гамкрелидзе, Иванов, стр. 159]: Այդ կոկորդայինների գործառական հատկանիշներից մեկը՝ ձայնավորի հետ վանկ կազմելը, հուշում է, որ դրանք

ծայնորդային տիպի հնչյուններ են եղել [Гамкрелидзе, Иванов, стр. 165]: Այս հարցում գրեթե բոլոր համեմատաբանները միակարծիք են: Ի դեպ, հնդեվրոպական նախալեզվում դրանց առկայությունը որոշ լեզվաբաններ համարում են սեմական լեզվաընտանիքի համապատասխան էմֆատիկ հնչյունների ազդեցություն:

Ինչպես վերը նշվեց, հնդեվրոպական նախալեզվի շնչեղ խուլ հպականները բաղաձայնական համակարգի չնշուրավորված անդամներն են, որոնք, ըստ Թ. Գամկրելիձեի և Վ. Իվանովի, գրեթե նույնությամբ պահպանվել են հայերենում [Гамкрелидзе, Иванов, стр. 41]: Այստեղից, բնականաբար, բխում է այն եզրահանգումը, որ նախալեզվում, ինչպես և հայերենում, գործառել է նաև խուլ շփական *h* կոկորդային բաղաձայնը՝ որպես համակարգի՝ նշված հպականներով պայմանավորված անդամ: Սակայն այդպիսի համակարգը, պետք է ենթադրել, ձևավորվել է նախալեզվի ոչ թե վաղ, ինչպես կարծում են հեղինակները, այլ ուշ՝ բարբառային տրոհվածության շրջանում և հատուկ է եղել հատկապես հայ-հույն-արիական տարածքին: Դրանով պետք է բացատրել, թերևս, այս բարբառային միավորներում հետագայում այլ բաղաձայնների հնչյունավորության հաշվին խուլ *h*-ի գործառական ոլորտի ընդլայնումը: Հետևաբար, կարելի է եզրակացնել, այդ հնչյունը հնդեվրոպական նախալեզվից ժառանգություն էր ստացվել որպես համակարգի, այսպես ասած, պակասավոր անդամ:

Գ. Ջահուկյանը գտնում է, որ հին հայերենում «շարունակում է գործառել նախնական կոկորդային *h*-ի սկզբնական արտացոլումը՝ փոխառությունների և հնչյունական երևույթների հետևանքով ուժեղանալով և տարածվելով այլ դիրքերում» [Джакян, 1982, стр. 28]: Իսկապես, հայերենի խուլ շփական *h*-ն հանգում է նաև նախալեզվի այլ հնչյունների:

Հնդեվրոպական նախալեզուն հայուստ հպական բաղաձայնների կողքին ուներ շփականների խիստ աղքատիկ շարք, իսկ կիսաշփականներ ընդհանրապես չուներ: Հնդեվրոպական բարբառներում դրանք հիմնականում առաջացել են հետագա ինքնուրույն զարգացման ընթացքում: Այդ ընտանիքի լեզուների ընդհանրության շրջանում գործառել է միայն խուլ սուլական *s-ն, որը ձայնեղ բաղաձայնների մոտ, ինչպես ենթադրվում է, ուներ իր ձայնեղացած տարբերակը՝ *z: Նախալեզվում շփական *s-ն, հատկապես բառասկզբում, կարող էր սղվել՝ *s mobile: Որոշ լեզվաբաններ էլ վերականգնում են *s-ի նաև քմայնացած, շրթնայնացած տարբերակներ [Гамкрелидзе, Иванов, стр. 126]:

Հնդեվրոպական *s-ն, ըստ դասական վերականգնումների, հայերենում պահպանվել է հպական բաղաձայնին նախորդող դիրքում, ինչպես՝ *ster/l- > *ստող*, *ster-dh(j)o- > *ստեղք*, *spel- > *սառ-սպել*: Իսկ բառասկզբում՝ ձայնավորից առաջ, հաճախ սղվել է, երբեմն էլ վերածվել է կոկորդային (խուլ կամ ձայնեղ) հնչյունի, ինչպես՝ *sip-to- > *հիւք*, *scno- > *հին*, *sāy- >

յագ, *sal- > *աղ*, *sed-lo- > *ետղ*, *տեղ*: Ընդդրում, նմանատիպ երևույթ է դիտվում նաև հունարենում և հնդիրանական լեզուներում, այսինքն՝ հայ-հույն-արիկան տարածքում: Սովորաբար ենթադրվում է, որ նախապես եղել է *s>h անցում, ապա տեղի է ունեցել *h-ի անկում այս կամ այն լեզվում՝ կախված բառում ունեցած նրա դիրքից: Հայերենում *s-ի կրած փոփոխությունները, քնականաբար, նախորդել են h.-ն. *k(h) > hյ. *ս* հնչյունափոխությանը, այլապես այդ ճանապարհով առաջացած *ս*-ն (*k(h)erd- > *սիրտ*, *k(h)ubh-ro- > *սուրբ*, *k(h)ik(h)er- > *սխտն*) նույնպես կենթարկվել նշված հնչյունական օրենքին, որը, ինչպես երևում է, բավական հին երևույթ է:

Հարց է առաջանում. ի՞նչու հնդեվրոպական համակարգի միակ տուականը մի որոշակի տարածքում կամ նախահայերենում սկսել է փոխարկվել կոկորդային հնչյունի: Արդյո՞ք դա բխում էր նրա հենց եզակի լինելուց, և տնտեսման օրենքով դատապարտված էր կամ լծորդական տարբերակներ (*զ*, *շ*, *ժ*) ձեռք բերելու, կամ աստիճանաբար այլ հնչյունի փոխարկվելու: Վերջին հարցում, հավանաբար, քիչ դեր չի կատարել նաև խուլ շփական *հ*-ի, որն ունեցել է սահմանափակ գործառնություն, դիրքերն ամրապնդելու գործոնը: Այս ենթադրության օգտին է խոսում բերևս *p(h)> հայ. *հ* հնչյունափոխությունը (*p(h)otēr- > *հայր*, *p(h)ont- > *հուն*, *p(h)ur- > *հուր*): Այսպիսով՝ նշված հնչյունական անցումներով համալրվել և ընդարձակվել է *հ*-ի գործառնության ոլորտը:

Ինչպես նշեցինք, հնդեվրոպական նախալեզվում շնչեղ ձայնեղների գոյությունը գրեթե կասկածի տակ չի դրվում: Այդ դեպքում, ինչպիսի՞ն է եղել նրանց ուղեկցող ձայնեղ կոկորդայինը: Այս հարցի քննարկմանը հնդեվրոպաբանության մեջ չենք հանդիպում:

Շնչեղ ձայնեղ հպականներ և կիսաշփականներ հայերեն բարբառներից, ինչպես հայտնի է, ունեն հիմնականում կենտրոնական տարածքների՝ Մուշի, Կարնո, Արաբկիրի, Արարատյան, Բայազետի խոսվածքները: Դրանցում առկա է նաև, այսպես կոչված, ձայնեղ հազագ, որը գործառնում է միայն բառասկզբում՝ ձայնավորից առաջ դիրքում. «սա ենթադրել է տալիս դրանցում շնչեղ սկիզբ՝ և՛ ձայնավորով, և՛ ձայնեղներով սկսվող դեպքերի համար» [Ջահուկյան, էջ 266]: Բայց նշված բարբառային միավորներում ոչ միշտ է, որ ձայնավորասկիզբ բառերը ձայնեղ *ե* են ստանում (հմմտ. *սխչիկ*, *ուլ*, *ինչ*, *ամօք*, *խ՛ն* և այլն):

Հ. Մուրադյանը գրում է, որ հայերեն բարբառներում «եթե ձայնեղ *ե*-ի հավելումը տարածվել է նաև արաբական ու թուրքական փոխառությունների վրա, ուրեմն երևույթը սկսվել է X-XI դարերից ոչ շուտ» [Մուրադյան, էջ 318]: Սակայն այսպիսի փաստը կարող է լույս վկայել տվյալ ժամանակահատվածում հնչյունական երևույթի շարունակվող կենսունակության մասին և ոչ՝ ծագման: Բացի այդ, և՛ ուսումնասիրողները, և՛ փորձառական հետազոտության տվյալները փաստում են, որ հայերեն բարբառների շնչեղ

ձայնեղ համարվող բաղաձայնների բաղկացուցիչ տարրը խնդրո առարկա ձայնեղ շունչն է, որը տարածվում է հաջորդ ձայնավորի վրա [տե՛ս *Խաչատրյան*, էջ 146]: Իսկ հայերենագետները, Հ. Աճառյանից սկսած, մի անգամ չէ, որ իրենց հետազոտությունների արդյունքում հանգում են այն եզրակացության, որ գրաբարի ձայնեղ համարվող հայականները և կիսաշփականները, ամենայն հավանականությամբ, եղել են շնչեղ ձայնեղ բաղաձայններ: Ինչ վերաբերում է այդ համակարգում ձայնեղ կոկորդայինի առկայությանը, ապա հայտնի է, որ գրաբարի բառասկզբի յ-ին վերոհիշյալ բարբառային միավորներում հաճախ համապատասխանում է ձայնեղ *с* (հմմտ. *յիսուն* գրբ. – *իցուն* բրբ., *յանցանեն* – *ընցնի՛ւն*, *յստակ* – *իստակ*, *Յուսիկ* – *ուսիկ*): Այս փաստը ենթադրել է տալիս, որ գրաբարում բառասկզբի յ-ն եթե ոչ բոլոր, ապա որոշ դեպքերում ունեցել է այսօրվա բարբառային, այսպես կոչված, ձայնեղ շունչին համարժեք հատկանիշներ: Այդ է վկայում նաև նշված դիրքում նրա՝ աստիճանաբար կոկորդային հնչյունի՝ *հ*-ի վերածվելու փաստը: Ուրեմն հայերենի շնչեղ ձայնեղ բաղաձայնները և դրանց ուղեկցող ձայնեղ կոկորդայինը ունեն ավելի մեծ հնություն:

1982-83 թվականներին կատարվեց Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի կողմից կազմակերպված «արշավախմբի՝ հայերեն բարբառների շնչեղ ձայնեղների վերաբերյալ հավաքած նյութերի օսցիլոգրամային ուսումնասիրություն: Խնդրո առարկա բաղաձայններին վերաբերող հետազոտության արդյունքները խմբի ղեկավար Ա. Խաչատրյանը հրատարակել է վերը նշած իր մենագրության մեջ: Բայց այդ հնչյուններին ուղեկցող, այսպես կոչված, ձայնեղ հագագի փորձառական քննության նյութը, ցավոք, մինչ օրս մնում է անտիպ: Եզրակացությունների համար կաշխատենք հենվել ինչպես հրապարակում առկա տվյալների, այնպես էլ մեր՝ որպես նշված աշխատանքների մասնակցի սեփական դիտարկումների վրա:

Շնչեղ ձայնեղ բաղաձայնների շնչեղացումը չի նմանվում շնչեղ խուլների համապատասխան հատկանիշին: «Եթե խուլ շնչեղացումը իրականանում է բաղաձայնի սահմաններում, ... ապա ձայնեղ շնչեղացումը չի իրականանում բաղաձայնի սահմանում. այն տարածվում է ձայնավորի վրա, և հավանորեն պետք է համարել վանկային հատկանիշ» [*Խաչատրյան*, էջ 146]: Նույնը կարելի է ասել խուլ *հ*-ի և ձայնեղ *ս*-ի մասին. առաջինի օսցիլոգրամային պատկերը համեմատաբար ավելի հստակ է, իսկ *իստագ*, *ուժի՛ւ*, *առչի* և այլն բառերում, օրինակ, շունչը չի առանձնանում, այն տարածվում է բառասկզբի ձայնավորի վրա, որի տոնը իջնում է: Ուրեմն ձայնեղ շունչը (հագագը), ինչպես և շնչեղ ձայնեղ բաղաձայնները, որ կիսախուլ-կիսաձայնեղ հնչյուններ են, ինքնուրույն հնչույթներ չեն: Նրանց տարբերակիչ հատկանիշը՝ ձայնեղ շունչը, ի հայտ է գալիս վանկի սահմանում, որի հետևանքով հնչույթային միավորներ են *բաղաձայն+ձայնավոր* և

ծայնեղ շունչ+ծայնավոր կապակցությունները: Այսինքն՝ դրանք վանկահնչույթներ են [տե՛ս Aghabekian, էջ 39]:

Նմանատիպ երևույթ է արձանագրում S. Ելիզարենկովան հնդկական լեզուներում և եզրակացնում, որ դրանցում շնչեղացումը վերհատությանիմ հատկանիշ է [Елизаренкова, стр. 181]: Իսկ Վ. Իվանովը, ընդհանրացնելով, գտնում է, որ տարբեր հնչյունական համակարգերի փորձառական ուսումնասիրությունները լեզվաբաններին հանգեցնում են մի եզրակացության. կոկորդայնացումը որոշ լեզուներում իրացվում է որպես վերհատությանիմ հատկանիշ [Иванов, стр. 115]:

Հայերենի՝ շնչեղ ծայնեղ արտաբերությամբ հնչյունների նյութի հիման վրա կատարած հետազոտությամբ նախահայերենի վանկի՝ մեր կողմից վերականգնված կադապարը հետևյալն է՝ $\Sigma^{\text{H}^{\text{C}^{\text{S}}}\text{V}}$ (Σ =վանկ, f =ուժգնություն, l =կոկորդայնություն, s =ծայնեղություն) [տե՛ս Aghabekian, p. 39]: Այն գրեթե նույնանում է հնդեվրոպական նախալեզվի համար L. Գերցենբերգի առաջարկած կադապարին՝ $\Sigma^{\text{H}^{\text{C}^{\text{S}}}\text{V}}$ [Герценберг, стр. 66]: Հեղինակը բալթիական լեզուների չորս տիպի տոնային շեշտերի պատմահամեմատական ուսումնասիրությամբ հանգել է այն եզրակացության, որ հնդեվրոպական նախալեզվում կոկորդայնությունը վերհատությանիմ վանկային հատկանիշ էր, որը տարբեր բարբառներում վանկի սահմանում կարող էր իրացվել և՛ վերհատությանիմ, և՛ հատությանիմ մակարդակներում՝ ինչպես ծայնեղությունը և ուժգնությունը: Հայերենի նյութը այդ աշխատանքում անտեսված է՝ մեզանում շեշտի (շեշտերի) համապատասխան քննության բացակայության պատճառով: Այնուամենայնիվ, L. Գերցենբերգը, առանց փաստերի, հայերենը բխեցնում է հունարենի կադապարից՝ հուն. $\Sigma^{\text{f}^{\text{C}^{\text{S}}}\text{V}} >$ հայ. $\Sigma\text{C}^{\text{H}}\text{V}^{\text{s}}$ [նույնը, էջ 71]:

Հայերենի շնչեղ ծայնեղ բաղաձայնների «արտաբերության ժամանակ խոշակը նկատելիորեն իջնում է, որն, ըստ երևույթին, հենց տոնի իջեցման պատճառն է, քանի որ խոշակի իջեցման հետևանքով մեծանում է կոկորդի հնչարանը» [Խաչատրյան, էջ 147]: Նույնը կարելի է ասել շնչեղացած ծայնավորների մասին:

Հայերենի բարբառների ծայնեղ կոկորդայինի քմային տարբերակը, ի տարբերություն խոշակայինի, ըմպանային է: Այն «իրեն հաջորդող հետին շարքի ձանավորին հաղորդում է բարձր տեմբրայնություն, քանի որ այդ հնչյունակապակցությունը գրեթե մեկ միասնություն է կազմում» [Միքայելյան, էջ 98]: Հայերենում և՛ խոշակային, և՛ ըմպանային հազագները, որ ընդունված է անվանել հավելական՝ ծայնավորասկիզբ բառին ավելացող, ընդգրկում են գրեթե միևնույն բառերը, ինչպես՝ ^օպշք, ^օպիսպուր, ^օպռեճ (Մուշ). ^օսնշք, ^օսնիսպո՛ր, ^օսնռճ (Շատախ) և այլն: Սա կարող է հուշել, որ երկու տիպի շնչեղացումները բարբառներում ունեն միանման սկիզբ: Սա-

կայն խոչակային հագագը առկա է շնչեղ ձայնեղ բաղաձայններ ունեցող այնպիսի բարբառներում, որոնցում ձայնավորների քմայնացում, անգամ փոխառություններում, ընդհանրապես չի դիտվում, իսկ ըպանացած հագագի դեպքում ոչ միայն նրան հաջորդող ձայնավորն է քմայնանում, այլև համակարգում գործում է Աճառյանի օրենքը, ինչպես օրինակ՝ Վանի բարբառի Արծկեի և Արճեշի խոսվածքներում: Վերջիններս իրենց շատ հատկանիշներով, հատկապես շնչեղ ձայնեղների առկայությամբ, մոտենում են Մուշի բարբառին: Ուրեմն այդ խոսվածքներում Մուշի խոչակային հագագը Վանի ազդեցությամբ աստիճանաբար մոտեցել է ըմպանայինին [Միքայելյան, էջ 99]: Մյուս կողմից էլ, Շատախում, ըմպանացած (քմային) կոկորդայինի գործառությանը հանդերձ, պատմականորեն չկան շնչեղ ձայնեղ, անգամ պարզ ձայնեղ հպականներ ու կիսաշփականներ: Գուցե այս խոսվածքը ներկայացնում է շնչեղ ձայնեղներով համակարգի հաջորդ փուլը:

Թ. Գամկրելիձեն և Վ. Իվանովը, հնդեվրոպական մախալեզվում վերականգնելով քմային $\tilde{H}$, գտնում են, որ նրա ազդեցությամբ հարևան անորոշ երանգի (թույլ ձայնդարձ) ձայնավորը (* $\tilde{a}$) վերածվել է առաջնային շարքի * $\tilde{e}$ -ի [Гамкрелидзе, Иванов, стр. 166]: Նույնը տեղի է ունեցել Վանի բարբառի խոսվածքներում, երբ ըմպանային (քմային) հագագի ազդեցությամբ հաջորդ ձայնավորը առաջընթաց արտաբերություն է ձեռք բերել: Սակայն մի բան պարզ է. հայերենի տարածքային տարբերակներում խոչակային և ըմպանային կոկորդայինների միևնույն համակարգում միաժամանակյա գործառությունը բացառվում է:

Հնդեվրոպական մախալեզվի հետագա զարգացման ընթացքում, ըստ Լ.Գերցենբերգի, բարբառներում ուժգնություն, ձայնեղություն, կոկորդայնություն հատկանիշները տարբեր ձևով են իրացվել հատությային և վերհատությային մակարդակներում: Կոկորդայնությունը հատությային մակարդակում, բնականաբար, կվերածվեր ինքնուրույն հնչյունի: Հնարավոր է, որ հայերենի խուլ շփական h -ն այս ձևով է առաջացել՝ ոչ լայն գործառական դաշտով, որը հետագայում ընդլայնվել է * $s >$ հայ. h , * $p(h) >$ հայ. h անցումներով կամ պարզապես հավելումով: Ինչ վերաբերում է խոչակային ձայնեղ հագագին, ինչպես սովորաբար անվանում ենք, և նրա քմային (ըմպանային) տարբերակին, ապա դրանք մնացել են վերհատությային մակարդակում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Խաչատրյան, *Ժամանակակից հայերենի հնչույթաբանություն*, Եր., 1988:
2. Ա. Հանեյան, *Բարբառային ձայնեղ հագագները և նրանց արերսը հին հայերենի բառասկզբի Յ ձայնորդի հետ*, «Միջազգային հայերենագիտական գիտաժողով», Եր., 1984:

3. Ժ. Միքայելյան, *Հասարակական խոսվածքների քննարկն ձայնավորները*, Եր., 2009:
4. Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հատ. I, Եր., 1982:
5. Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Եր., 1972:
6. Т. В. Гамкрелдзе, Вяч. Вс. Иванов, *Индоевропейский язык и индоевропейцы*, т. I, II, Тбилиси, 1984.
7. Л. Г. Герценберг, *Реконструкция индоевропейских слоговых интонаций*, "Исследования в области сравнительной акцентологии индо-европейских языков", Ленинград, 1979.
8. Г. Б. Джаукян, *Очерки по истории письменного периода армянского языка*, Ереван, 1967.
9. Г. Б. Джаукян, *Сравнительная грамматика армянского языка*, Ереван, 1982.
10. Т. Я. Елизаренкова, *Исследования по диахронической фонологии индоарийских языков*, Москва, 1974.
11. Вяч. Вс. Иванов, *О функциях ларингальной окклюзии*, "Фонетическая конструкция языка", Москва, 1979.
12. Р. Яковсон, *Типологические исследования и их вклад в сравнительно-историческое языкознание*, "Новое в лингвистике", вып. 3, Москва, 1963.
13. М. Aghabekian, *L'origine indo-européenne des consonnes occlusives de l'arménien*, Slovo, INALCO, Volum 26-27, Paris, 2001-2002.
14. F. Kortlandt, *Notes on Armenian historical phonology II*, "Studia Caucasica", 4, 1978.

Տիգրան Ավետիսյան
Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտ

**ՄԱԿԱՆՈՒՆ ՏՈՀՄԱՆՎԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

Հայերենում տոհմանվան բառակազմությանը մենք անդրադարձել ենք: Այստեղ կանգ կառնենք մականվանական հիմքերով տոհմանունների իմաստաբանության վրա: Հիշեցնենք, որ տոհմանունը միևնույն նախնուց սերած լինելու ինքնագիտակցությամբ արյունակից մարդկանց խմբի անունն է, որ երբեմն նույնացվում է ազգանվան հետ: Տոհմանունները բացառապես բանավոր խոսքի դրսևորումներ են և լայնորեն շրջանառվում են հատկապես գյուղական համայնքներում: Օրինակ, Մաճկալ Սարգսի հետնորդները սկսել են կրել Մաճկալանք տոհմանունը, որ հետագայում դարձել է նաև ազգանուն՝ Մաճկալյան: Մականուն-տոհմանուն-ազգանուն շղթայում տոհմանունները յուրատեսակ միջին դիրք են գրավում, ուստի նրանցում, ինչպես նաև ազգանուններում նկատելի է մականունների զգալի առկայությունը: Տոհմանունը սերտորեն առնչվում է նաև ազգանվանը, և պատահական չէ, որ ազգանունակերտության զանգվածային փուլում տոհմանունները կարևորագույն աղբյուր են եղել նրանց ձևավորման համար, ու հայտնի են նաև մասնավոր դեպքեր, երբ տոհմանունը առանց փոփոխության անցել է ազգանունների կարգը: Խոսքը Գորիին, իսկ ավելի ճիշտ՝ Խնձորեսկին է վերաբերում: Բերենք հետևյալ օրինակները՝ Աղոնց, Աբասունց, Ակունց, Այունց, Բուլունց, Բուլանց, Բրդանունց, Գարունց, Գիլունց, Դիլունց, Խոսունց, Թաթունց, Թրվանց, Խունունց, Խեչունց, Մակունց, Վանդունց, Տոնունց, Սաթունց, Շալունց, որոնք մեր օրերում անձի անվանման բանաձևի՝ անձնանուն+հայրանուն+ազգանուն, երրորդ բաղադրիչ են դարձել, այսինքն, ինչպես նշվեց, պարզապես դարձել են ազգանուն:

Միևնույն ժամանակ -ունց, -անց ածանցները այդ նույն շրջանում փոխարինվել են -յան-ով՝ Թաթունց-Թաթյան, իսկ որ ավելի հետաքրքրական է, վերը նշված տոհմանուններին ավելացել է -յան՝ Ակունց+յան, Մալունց+յան, Մակունց+յան, Մալենց+յան, Մակինց+յան:

Նման ընթացք է ունեցել նաև իշխանական որոշ տոհմանունների անցումը ազգանունների շարքը՝ Ամատունի > Ամատունյանց և Ամատունյան, Արծրունի > Արծրունյանց և Արծրունյան, Գնունի > Գնունյան և Կնունյանց, Խորխոռունի > Խորխորունյան, Ռշտունի > Ռշտունյան, Արշակունի > Արշակունյան, Բագրատունի > Բագրատունյան, Բզմունի > Բզմունյան, Մանդակունի > Մանդակունյան:

Տոհմանուն > ազգանուն անցումը ներկայանում է հետևյալ դեպքերով՝

1. Տոհմանունը և ազգանունը ամբողջապես համընկնում են՝ Ղազարանք > Ղազարյան, Տոխոլանք > Դոխոլյան, Ավետանք > Ավետյան և/կամ Ավետիսյան, Շահնանք > Շահինյան, Սիրզանք > Սիրզոյան, Զյասպարանք > Գասպարյան, Շեկոանք > Շեկոյան: Սա ամենատարածված ուղին է:

2. Միևնույն տոհմանունը դառնում է մեկից ավելի ազգանունների հիմք, որոնք, սակայն, միավորվում են նույն տոհմանունով: Ուզում ենք բերել մի հատկանշական օրինակ Ջավախքի Գանձա գյուղից, որը Վ.Տերյանի ծննդավայրն է: Այդ գյուղում վերջինիս Տեր-Գրիգոր նախապապի անունով տոհմը կոչվում է Տերտերանք, որից սերել են՝ Տեր-Գրիգորյան և Գրիգորյան, Տեր-Ղազարյան և Ղազարյան ազգանունները, իսկ Վ.Տեր-Գրիգորյանը իր համար ընտրել է Տերյան գրական կեղծանունը: Այս երևույթը նկատելիորեն զիջում է նախորդին, բայց նույնպես զգալի տեղ ունի տոհմանուն > ազգանուն անցման դեպքում:

3. Տոհմանունը և ազգանունը ձևական առումով կապ չունեն միմյանց հետ, կապը հայտնի է միայն տվյալ համայնքում: Բերենք հետևյալ օրինակը՝ Տավուշի Սարի-գյուղում Թունմանք (Հարություն նախահոր անունից) կրում են Ավետիսյան ազգանունը, որի պատճառաբանվածությունը, սակայն, արտաբնական է, այսինքն՝ հեռու գնացող հարցերի հետ է կապվում, որ մեր խնդիրներից դուրս է:

Տոհմանվանական հիմքերը հանգում են՝

1. Անձնանունների, որոնց մեծ մասը արական են՝ Աբգարանք, Ղազարանք, Գիբրյենք, Նազարեթենք, Գալոենք, Թունինենք, Պետենք, Ենոքենք, Մանիշակի, Աբգարի, Օվակիմցի, Սլրծի:

2. Տեղանունների՝ Կուլիգամցոնք, Մշեցոնք, Արդահանցոնք, Մարգաղիք, Գոմցենք, Խանցոնք, Քաշենցի:

3. Արհեստի, զբաղմունքի անունների՝ Դաբբնանք, Չարչոնք, Չոբանանք, Կլեկչոնք, Ղասաբանք, Ծիթի պուկանք, Բուժականի, Աշուղանք, Զուռնաչոնք, Շիրիփանք:

4. Մականունների՝ Շաշակմշտողանք, Ափիցարանք, Բոշանք, Գունդուտողանք, Ալանանք, Պուկանք, Ճորիկանք, Քառանք, Պոեզանք, Բիլբուլի խալիս:

Առաջնորդվելով տոհմանվան վերը բերված ըմբռնմամբ՝ առանձնացնում և քննում ենք մականվանական հիմքերով տոհմանունները: Նյութերը հավաքված են Շիրակի, Լոռվա մարզերից, ինչպես նաև Ջավախքից, Ղարաբաղից և հարակից հայկական գյուղերից:

Նյութին անդրադառնալուց առաջ ուզում ենք նշել, որ տոհմանունները, ինչպես նաև մականվանական տոհմանունները, առաջին անգամ են ուշադրության արժանանում, ուստի մեզ բավականին անկաշկանդ ենք զգում դրանց՝ հատկապես իմաստաբանական դասակարգման հարցում:

Մականուն տոհմանվանական հիմքերի խմաստաբանությունը

Մականուն հիմքերը, ինչպես և պետք էր սպասել, իրենց առանձնահատկություններով հաճախ ընդհանրություններ են հանդես բերում բուն մականունների և մականուն-ազգանվանական հիմքերի հետ:

Նկատելի են դիպվածային հիմքերը, երբ տոհմանունը տրվել է այս կամ այն միջադեպի, պատահարի հետ կապված, զանազան հանգամանքների բերումով: Ավելին, ինչպես կհամոզվենք, ստորև բերվող օրինակները հաճախ անսպասելի մեկնաբանություններ են ունենում և հենց այդ պատճառով անկրկնելի են: Ի տարբերություն մյուս մականվանական հիմքերի, որ կապվում են մարմնի չափերի, բնավորության գծերի և այլ հանգամանքների հետ և հաճախ տարբեր վայրերում կրկնվում են, ունենալով զանազան դրսևորումներ, այս խմբի օրինակները մեծ մասամբ բացառիկ են:

Քոթկանք, կիսախավարում բոթուկը շփոթել է իր կնոջ հետ: Գաղաջանանք, շատ է օգտագործել «գաղա/գյաղա» ջան արտահայտությունը: Պրտներ, իր պահվածքով պրիստով է հիշեցրել, Յավանունք, ցավի նկատմամբ զգայուն, Շվիդյանք, Գացոանք, սիրել են վրացերեն այդ բառերով դիմել շրջապատողներին, Մակրասանք, ծակ աբասի է գտել, Ճիթի պուկանք, ձեթի պուլիկներ շատ են ունեցել, Մմբանք, գետի ափին են ապրել, Ժաժոենք, մեծ քար է տեղահան արել, Թանոտանք, անսպասելիորեն գլխին թան է լցվել, Շորորենք, սիրել է «Շորորա» պարը, Փորոենք, շատ, «ծալքերով» փող է ունեցել, Պարպարենք՝ ականջը կտրած, Քուլանք, մայրը ծննդաբերել է բոլում (անտառում), Քաշվետանք, ոտքերը քաշել է, Լաբէշանք, էշին «լաբեյ» են, նախապատրաստել վաճառքի, Գյուդի, անպոչ հորթ են ունեցել, Աբրազանք, ռուս. обрзз, Սորոկիվարդանք, ռուս. сорок «մնացորդ», Պրիչինանք, անհարկի պատճառ բռնող, Աբաժանք, սիրել է ռուս. обожли բառը գործածել, Քրոցանք, շատ քրոց են ունեցել, Չմոթանք, արաղաղի կտուցը գմոսել (փակել) են, Փքրանք, երբ իրենց հարսանիքի չեն հրավիրել, երդիկից հարսանիքի ճաշի մեջ փթիք (գոմաղը) են թափել, Չաշլունք, առաջինն են եղել, որ ճակնդեղ (ջաշլու) են մշակել: Չախկալանք, հավ են գողացել, Սոխենք, սոխ են վաճառել, Գիր նայող Օսոյենք, Օրդուներ, որդան կարմիր են մշակել, Չավոդչինենք, Չնջուլանք, այդ բույսը մշակել են, թթու դրել և վաճառել, Հաչող Գրխանք, ջրի համար բոլորի հետ կռվել է, Էշներգողանք, Աթարծակողանք, Գունդուտողանք, Տաշտ քերողանք, Չոռանանք, Քնկոտանք/Քնահարամանք, շշմած, մոլորված, միևնույն տոհմին տված մականուններ: Ստանանք, սովորաբար կապվում է խորամանկ մարդկանց հետ, բայց այս դեպքում խաբել է, թե զիշերները սատանաները գալիս են, Կոտիճանք, մի ոչխար կուտի, Սուրբանք, աստվածավախ, Թքվանք, բնավորության համար են ասել, Կոպտանք, արտաքինի և ներքին

նի համար, Վուշիուշանք, Ծրավանք, Ոսենք, ռուս կին է բերել, Շորորենք, Շորորա երգը շատ է սիրել և երգել, Դոնակապանենք, հաց ուտելիս դուռը կողպել են, Փորձանքենք, Զրոենք՝ անմարդամոտ, Հատուկենք, Իմացալենք, շատ է գործածել խնացալ բառը, Սրտոնենք, ապրել են գերեզմանոցի մոտ, Երկու երեսանիներ, Կրիա ուտողներ, Առնետանք, պնդել են, որ հարևանի ոսկին առնետն է տարել, Նավստուանք, չար աչքերի համար են ասել, Բաղեն փռոցներ, պարծենկոտ, Պախենք, պտուղ անողներ, Սիպտակ քարից վախողներ, Սիհի ֆռռացնողներ, Քելեն ուտողանք, Աղեկի ծեղ, իբրև Աստծո դեմ բողոքի նշան կրակել է երկինք, Պիճիկտաշենք, ոչ խորը մտածող, Թոսով Ալեքսանք (Բուլնիս-Խ.) տրվել է հայաստանցիներին, Աբասի Սյորզանի, 20 աբասու գրագով համբուրել է էշի..., Ազմիաբանք, սիրել է մեզ միաբ (համար) ամեն ինչ անել, Մորունանք, շատ է սիրել աղի կերակուր, Սաղակ (գոմեշ) սիրվցողներ, փխբ. «վարպետ միջամարդ», Զուրխանք, սիրել են ձկան այդ տեսակը, Յայա գնացողանք, մեկ այծի համար յայա են գնացել, Դուռանանք, Դուրան է կարդացել, Ծիտո Վարուժենք, ծիտ է խփել: Վերջին դեպքում ևս գործ ունենք դիպվածային երևույթի հետ, քանի որ, ինչպես կիսամոզվենք ստորև, «Ծիտ» մականունը սովորաբար գտնվում է «փոքրիկ, փոքր մարմնով» իմաստային դաշտում:

Իմաստաբանորեն բննարկվող հիմքերը մեծ մասամբ հանդես են բերում «մականուն» ըմբռնմանը հատուկ գծեր:

1. Մարմնի և ցրա մասերի չափերի և այլ ֆիզիկական հատկանիշների հետ կապվող հիմքեր՝ Դմբուզանք, Սգխանք, աճդահա, Բոյտոնենք, Պուզայենք, Զարոնք, Ղանդլանք, Ուզունանք, Լզրանք, լազլազանման, բարձրահասակ, Զորլակուխանք, հզոր, ուժեղ, Բոյուկ Ժորանք, մեծ, հսկա, Ալոմակետանք, երկարաբայ, Դշունք, խոյանման, կտրիճ, Գելխոյենք, գելխեղդ, փխբ. ուժեղ, հզոր, Տաղլու, լեռնցի, կոպիտ, խոշոր, Գյողականք, կարճ, Դուզլավանք, փոքր, կտրիկ, Քատոլանք, Դիջուլանք, փոքրամարմին, Պճուկենք, Պիճիկենք, փոքր, Կոլտենք, Օջոներ, Կոտողները, Ականջ-մտնողանք, կարճ, փոքրամարմին, Ծիթիկենք, նիհար, փոքր: Զյոմբանք, ածուխ, սև, Թուխիկենք, Սկոյենք, Սև Սիագանք, Բողոյենք, բուխ: Ծիվժիվանք, Զքշանք, Խողողոռանք, սուր, ուժեղ, կոպիտ ձայն, Շղարանք, խաժակն, Քոռ Հովհանենք, Սուղունք, Տիտոզանք, կարճատես, Պռատ Խեշոանք, ականջներից մեկը կտրած: Կակազենք, Լալոյենք, Լալանք, Զոփուռանք, Զոփուռանք, չեչոտ, պեսեկնոտ, Քեսենք, մազագուրկ, Քաչալանք, Զաչալանք, անմազ, Գեշոենք: Պղնձբեղանք, Դազարանք, բիզ մազերը, Ծունգը հաստանք, Ծուռքաք, Ծուռվիզ, Փեշեշներ, ծուռ ոտքերով, Խլոյենք: Դնդուռուզանք, տոզած, գեր, Դողոշներ, գնդիկ, Փուշիկենք, փուշիկանման, ճրթանք, կուզիկ, Քաշվետանք, ոտքի արատ ունեցող:

2. Առանձնանում են նաև նման իմաստային դաշտի հետևյալ դրսևորումները՝ Բոշանք, նաև մաղ վաճառող, Քրդեր, Քրդենք, նաև հաղ-

քանդամ, Բուլիկենք, բաղանման, Կատվանք, Ակռավանք, Իծուկանք, Հոպոպանք, Գելոանք, Թռչունանք, Ճնճղանք, Կիտայանք, չինացու նման, նեղաչք, էմշանք:

3. Բնավորություն, խառնվածք, հակումներ՝ Սուտասանանք, Սուտիկանք, Սուտ Սոնոյենք, Սուտնանք, Փոփոլներ, Բաղեն վռներ, պարծենկոտ, Դալունք, Դալի Սաքունք, շաշ, խև, Ղամազանունք, անհասկացող, Մահրնանք, սուտ մահանա, պատրվակ, պատճառ բերող, էշ Մելունք, համառ ու կոպիտ, Տգկրենք, տգրուկի նման գործին կաշող, Ավանակ Միգոենք, շատ են աշխատել, Դմարանք, ամուր, պինդ, չենթարկվող, Բորդլենք, շատակեր, Կուտիմանք, մի ոչխար կուտի, Թիշունք, վախկոտ, Չլանք, չուլ հագնել սիրող, Խանչլանք, խանչալ սիրող, Փոշոտանք: Հաջորդ վեց օրինակները իրենց իմաստով մոտենում են դիպվածային դեպքերին՝ Գունդուտողանք, խմորի գնդերը «կմշտել» են, Թանոտանք, թանոտ, տվյալ դեպքում՝ փնթի, թափթփված, Տաշուն քերողանք, ժլատ, Ծրավանք, իբրև սոված-ծարավի հոմանիշ, Աթարծալողանք, սրանք աթար են պատրաստել մեջտեղը ամացքով, ոչ սովորական ձևի, Շառունք, Փորձանքենք, Շինդղունք, հմուտ շինարարներ, Պծծանանք, արագաշարժ և շատախոս, Շուշակմշտողանք, խիստ ժլատ, Ջռանանք, Վուշվուշանք, Թթվանք, Ջրոենք, Թթենք, անմարդամոտ, մեկուսի, Հատուկենք, Գեշանք, վատ բնավորություն ունեցող, Քոնձոնք, անշնորհք, Ճգնավորանք, խռովել է հասարակությունից, գնացել է սարում ապրել, Փթթենք:

Անհատի խառնվածքի հետ են կապվում՝ Ծքոյանք, Ջուլումաթենք, տաքարյուն, կռվազան, Վերասյանք, դատարկ խոտող, Տաքդեղանք, Աղվեսանք, Աղվես Կողյենք, Քնկոտանք / Քնահարամանք, Քնածանք, Ուրբաթանք, քչախոս, ուրբաթախոս, Դինջանք, հանգիստ, չշտապող, Իշանենք, միամիտ Տփլականք, բթամիտ, Խելառներ, Շոեր, Ջուջակենք, խև, ծուռ, գիժ, խելառ ընդհանուր իմաստով, Սարսենք, սարսաղ, տխմար, Փուլանք, Դեանման, Գող Տիտիշանք, Փամպուղենք, բամբականման, մեղմ, Սուրբանք, աստվածավախ, Ծտանք, Դոչաղանք, Չրոենք, Չաթխանք, Թռչկանք, արագաշարժ, շարժուն, աշխույժ, արագաքայլ ընդհանուր իմաստով:

4. Գործունեության, արհեստի, զբաղմունքի հետ կապվող՝ Դուրգարանք, Հյուսնանք, Չորենք (չի բացառվում նաև կոպիտ, անտաշ), Ջուռնաչոնք, Փափախչունք, փափախ կարող, Կլեկչոնք, Ագենք, ակագործ, Քամանչոնք, բամանչա նվագող կամ պատրաստող, Չարչոնք, մանրավաճառ, Դաքբենք, տանձ Նախշքարենք, Գգողանք, Վարժապետենք, Ներկարարենք, Տանձանք, տանձ վաճառող, Բյնարանք, սագ, քնարագործ, Շրիփանք, շերեփագործ, Հաքիմանք, հեքիմ, Ջրգյարանք, արծաթագործ, Դգազանք, մետաքսագործ, Ըշկիճենք, կոշկակար, Չլնգիր, փակնագործ, Ջառահանք, վիրաբույժ, Ջնջողանք, Վրաստանում ջոնջող աճեցնող և նրա

թթուն վաճառող, Գիր նայող, Փալչմանք, բախտագուշակ, Չարչոնք, մանրավաճառ, Չավողչիներ, վկայված է Ջաջուռում, ուստի պետք է ենթադրել մի փոքրիկ արտադրություն և ոչ ավելին:

5. Չունևորություն / ունևորություն՝ Ջրապուր, Վռոշ, Չլրուր (հասարակ ճաշ), ուտողներ, Չրավորանք, Փաբջոնք, Բաբուռանք, ոտաբորիկ, աղբատ, խեղճ, Ճորտանք, ուրիշի հողի վրա են աշխատել, Գաղթականանք, Գյալմանք, բնականաբար սրանք ամեն դեպքում խեղճ ու աղբատ են լինում: Կուղամանք (Սելիբյան) տոհմանունը կրողի նախնին գաղթական է եղել, անկասկած՝ արևմտահայ, հարևաններից ուտելիք հավաքելիս անընդհատ կրկնել է «Ջամ-ջամ հավաքեմ խան-խան կուղամ»: Ունևորության իմաստով միայն երեք տոհմանուն ենք գտնում՝ Եղունք (չատ յոտ ունեցող), հիշենք թեկուզ Եղշատյան ազգանունը, Ջնդոսանք, հարուստ են, բայց համապատասխան հագուստ չեն կրում, Փթանք, ամեն ինչ փթերով ունեն:

Առանձնանուն են նաև հետևյալ տոհմանունները՝ Բերծենանք, բերծեն «հույն» և քանի որ կապվում է Բոլնիս Խաչեն գյուղի հետ, որին մերձ հունաբնակ գյուղեր կան, ուստի՝ «այդ կողմերից եկած», Մազթթոտանք, մագութոտ, անցյալ դարի 40-50-ական թթ. բեռնատարի վարորդ է եղել, որոնք բոլորն էլ «մագութոտ» էին: Էշներգողանք, փխբ. ճարպիկ, Ագռավուտողանք, Դուշուտողանք:

Քանի որ, ինչպես նշեցինք, տոհմանունները և մասնավորապես մականունն հիմքերով տոհմանունները առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ, ուստի հարկ ենք համարում քննարկված փաստական նյութը ներկայացնել ամբողջությամբ:

Աբաժդանք, Աբասի Միրզանք, Աբրազանք, Ագենք, Ագռավուտողանք, Աթարծակողանք, Ալոմակետանք, Ականջմտնողանք, Ակռավանք, Ադանք, Ադեկի ծռեր, Ադվես Կոլյենք, Առնետանք, Ավանակ Միրոենք, Ավցենք, Բադենն վռոներ, Բերծենանք, Բիզ Դազարանք, Բոբոլենք, Բոգոենք, Բոյտոներ, Բոյուկ Ժորանք, Բոշանք, Բուլիկենք, Գաղաջանանք, Գաղթականենք, Գացոանք, Գելխոենք, Գելոենք, Գվիրներ, Գիր նայող Օտենք, Գյալմանք, Գյողականք, Գյուղի, Գող Տիտիշանք, Գունդուտողանք, Դալի Սաքունք, Դալունք, Դինջանք, Դիջոենք, Դլաքանք, Դմբուզանք, Դմուրանք, Դնդուզանք, Դողոլներ, Դռնակապանենք, Դուզլականք, Դուրզարանք, Եղունք, Եմշանք, Ենոբներ, Երկաթենք, Երկու երեսանիներ, Ջալոնք, Ջավողչի, Ջիլանք, Ջմուսանք, Ջորլակլովանք, Ջռուսանք, Ջուլումաթենք, Ջրգյարանի, Ջրոյենի, Ջուռնաչոնք, Էշ ներգողանք, Թանոտանք, Թիշոսանք, Թոսով Ալեքսանք, Թռչկանք, Թռչունանք, Թուխիկենք, Թքենք, Ժածոնք, Իծուկանք, Իմասցարանք, Իշանենք, Լալանք, Լալոենք, Լաքէշանք, Լգլոանք, Լեկզոնք, Խանչանք, Խելառ, Խելառանք, Խելառներ, Խզոենք,

Խլոենք, Խնչլենք, Խոզանք, Ծակաբասանք, Ծիբոյանք, Ծիթի պուկենք, Ծիվծիվոնք, Ծիտո Վարուժենք, Ծոներ, Ծտանք, Ծրավանք, Ծունգը աստանք, Ծուռքաքանք, Կատվանք, Կիզանք, Կիտայանք, Կլեկչոնք, Կկազանք, Կշենք, Կոլլոտենք, Կոպտանք, Կոլլոտանք, Կոռներ, Կրիա ուտողներ, Կուղամանք, Կուտիմանք, Կուրյանք, Հաշող Գրիսանք, Հաջիլսանլու, Հատուկենք, Հաքիմանք, Հեղմարանք, Հոպոպանք, Հորմոտ, Դամագանք, Դանդլանք, Դառղառանք, Դգազանք, Դգիկ, Դոռղոռանք, Դոչաղանք, Դոչանք, Դուշուտողանք, Դուշ պահողանք, Դուռանանք, Դգնավորանք, Դլքանք, Դղարանք, Դմբանք, Դնճղանք, Դնչղու, Դորտանք, Մաղակ, Մագըթոտանք, Մահըմանք, Մանիշակի, Մգիսանանք, Մգմհարանք, Մլրծի, Մուկանք, Մուրմանք, Յայլա գնացողներ, Նավստոտանք, Նեմեց, Ներկարարանք, Շառունք, Շիթիլենք, Շինողլոնք, Շշանոց, Շորոթենք, Շվիլոյանք, Շրիփանք, Շուշա կմշտողանք, Չաբխանք, Չախկալանք, Չաչալանք, Չարչի, Չլբուր, Չլինգիրանք, Չոփոանք, Չոփոտանք, Չութխնանք, Չրավորանք, Պարպարենք, Պետենք, Պժժանանք, Պիճիկենք, Պիստոնանք, Պղնձբեղանք, Պճուկենք, Պոզգալներ, Պռատ Խեչոանք, Պտխենք, Պրիչինանք, Պրսոներ, Ջաշլոտենք, Ջառահանք, Ջլբուր, Ջնդոանք, Ջնջողանք, Ջուլուկենք, Ջրապուր, Ռսենք, Սարսենք, Սաքունք, Սիրվցնողներ, Սինի ֆռացնողներ, Սպիտակ քարից վախեցողներ, Սոլոյի, Սոխենք, Սորոկիվարողանք, Ստանանք, Սրտոներ, Սուղունք, Սուտիկանք, Սուտնանք, Սուտ Մոնոյենք, Սուրբանք, Վարժապետանք, Վերասյանք, Վուշվուշանք, Տաղլու, Տաշտ քերողանք, Տարդեղանք, Տերովնեսենք, Տգկրենք, Տիտոզանք, Տուտնանք, Տփլականք, Ուզունանք, Ուրբաքանք, Փաքջունք, Փալչնանք, Փամպուղենք, Փափախչոնք, Փելեշներ, Փքանք, Փքթենք, Փոթոներ, Փոշոտանք, Փորձանքենք, Փոփոլներ, Փուլանք, Փուչիկենք, Քամանչոնք, Քաշվետանք, Քարփի կատուներ, Քեթցոնք, Քելեխ ուտողներ, Քեսենք, Քեսենք, Քթոցանք, Քյաշաշենք, Քյնարանք, Քյոմրանք, Քնածածանք, Քնահարամանք, Քնկոտանք, Քոթկանք, Քոլանք, Քոնձանք, Քոռխոզանք, Քոռ Սուղունք, Քոռ Սուղունք, Քչալանք, Քստողանք, Քրդենք, Քրդեր, Օգոներ, Օսկերչու, Օվակիմցի, Օրդոներ, Ֆարմատոն, Ֆարմատոնանք, Ֆրանգանք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ավետիսյան Տ., Տոհմանունը հայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ-2007», Երևան 2007, էջ 24-28:
2. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան 1976, էջ 1453:

ՈՐՈՇՅԱԼ, ԺԽՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱԽՍԱՍՏԱՅԻՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ
ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

Քննության առնելով հայերենի բարբառներում *անորոշ, որոշյալ և ժխտական* դերանունների արտահայտության ձևերն ու միջոցները՝ նյութեր ենք քաղել բարբառագիտական մենագրություններից, բարտեզագրման նպատակով գրանցված բարբառային 500 խոսվածքային միավորներից, ինչպես նաև բանահյուսական նմուշներից: Մեզ հետաքրքրում է, թե ընդհանրական իմաստ ունեցող և առարկաների քանակական ամբողջություն ցույց տվող *որոշյալ* և հաղորդակցման բնույթով պայմանավորված՝ չտարբերակված առարկա, որակային կամ քանակային հատկանիշ արտահայտող *անորոշ* դերանունները ժողովրդի լեզվամտածողության մեջ բառանվանողական ի՞նչ ձևեր ու դրսևորումներ են գտել, տվյալ քերականական իմաստը ձևական ի՞նչ միջոցներով է արտահայտվում, ո՞ր դեպքերում են լայնորեն գործառել փոխառյալ բառերը:

Որոշյալ դերանունները, ինչպես գիտենք, արտահայտում են առարկաների առկայացած (որոշյալ, հայտնի) ամբողջություն՝ միասնաբար կամ առանձին-առանձին վերցրած: Ժամանակակից գրական հայերենի որոշյալ դերանուններն են՝ *ամեն, ամենքը, բոլոր, յուրաքանչյուր, ամեն ինչ, ամեն մի, ամեն մեկը, ողջ, ամբողջ, համայն, ամենայն* և այլն: Դերանունները այլ խոսքի մասերի հետ ունեն նկատելի ձևաբանական, էլ ավելի շատ՝ կիրառական հարաբերակցություններ, այնքան, որ լեզվաբանների մի մասը դրանք բաշխում է առնչակից խոսքի մասերի միջև (գոյական դերանուն, ածական դերանուն և այլն)¹: Արդի հայերենի որոշյալ դերանունների համապատասխանությունները բարբառներում նույնպես ցուցաբերում են կիրառական բաշխում, ասենք, *ամեն* և *ամենքը, բոլոր* և *բոլորը*: Դա հատկապես նկատելի է փոխառյալ դերանունների հարցը քննելիս:

Սշո բարբառում *ամեն, ամենքը* դերանունները նույնանում են՝ *հըմէն մառտ, հըմէն տէխ*, իսկ գոյականական կիրառությամբ՝ *հըմէն գածին, հըմէն մէռան*: Վերջին դեպքում ընդունված է բաղաձայնի կրկնությամբ բառին սաստկական երանգ հաղորդելը՝ *հըմմէն* (բոլորը, ամենքը՝ առանց բացառության): Սաստկական իմաստ է վերագրվում *էլ* (այս տարածքի խոսվածքներում՝ *լէ*, Սասունում՝ *լը*) բառի հավելումով, ինչպես՝ *հըմմէն լէ* (Մուշ), *ըմմէն լը* (Սասուն):

¹ Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 179:

Ըստ մեր ձեռքի տակ եղած նյութերի՝ Ղարաբաղի բոլոր խոսվածքներում *ամենքը* հասկացության իմաստով գործառուում է *լոխ* համապատասխանությունը, ինչպես՝ *Լոխ յեկալ ըն: Լոխճուները յեկալ ըն* (Բոլորը եկել են):

Ամեն դերանունը բարբառում միայն որոշչային արժեքով է գործառուում, ինչպես՝

Ամեն մարթ ուրան հետե մարթ ա (Ամեն մարդ իր համար մարդ է):

Ամեն վեղում վարթ չի փըսնել (Ամեն հողում վարդ չի բուսնի)¹:

Հասկանալի է, որ *ամեն* և *լոխ* բառանվանումներն այս բարբառում տարբերվում են իրենց գործառական բաշխմամբ. մի դեպքում հատկանիշ է ցույց տալիս, մյուս դեպքում առարկայանիշ է:

Թե՛ արևմտյան, թե՛ արևելյան խմբակցության բարբառներում առկա է մի հետաքրքիր բառածև՝ *ամեգ* (Մուշ, Սասուն), *ամեկ* (Ղարաբաղ), որն առաջին հայացքից կապվում է *ամեն* կամ *ամենքը* որոշյալ դերանունների հետ: Մինչդեռ այն ուղղակի *ամեն մեկը* որոշյալ դերանունն է՝ *յուրաքանչ-յուրը* նշանակությամբ (բաղադրիչների կցումով և մեկ շեշտով արտասանելիս առաջին բաղադրիչի հնչյունների կորուստով): Բերենք օրինակներ.

Ամեգ հավկ՝ վըր ուր էրմին (Յուրաքանչյուր բռնուն՝ իր երամի հետ)²:

Ամեկն ուրան գումնան ա ածում (Ամեն մեկն իր գումնան է փչում)³:

Առավելագույն արտահայտչականության ձգտելով՝ այս կամ այն հասկացության համար այլ ժողովուրդների բառամթերքից փոխառյալ ձևեր են ներթափանցել հայ բարբառներ: Իսկ դա ինքնին օտար բառի իմաստային և կիրառական նրբերանգներով է պայմանավորված: Արաբերենից փոխառյալ *թամամ* բառին, օրինակ, հատուկ է բազմիմաստությունը՝ *լրիվ, ավարտված, ամբողջ, կատարյալ, վերջ, ավարտ*:⁴ Իր արտահայտած նրբիմաստներով բառը լայն գործառույթ ձեռք բերել և՛ արևելյան, և՛ արևմտյան խմբակցության բարբառներում: Բերենք օրինակներ.

Իդը գընիզ *թամամ* ձուռ ը (Սասունի Սպաղանք գ.):

Հըմի առթեն *ամեն* պան *թամամ* ա (Երևանի Նորք):

Հայերենի բարբառներում շատ գործածական է հայաբանության արժեք ունեցող *թամամել* բայը՝ *իր լրումին հասնել, լրանալ, ամբողջանալ* իմաստներով: Այսպես՝

Ինը ամիսն օր թըմավ, պարգավ, տըղա բերեց (Կարոն բարբառ):

Մշո բարբառում *թամամ* բառը *կատարյալ* լինելն է ընդգծում, ինչպես՝ *թամամ տղա*, այսինքն՝ *հասուն, չափահաս*:

¹ Տե՛ս Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 177:

² Տե՛ս *Ս.Բաղդասարյան-Թափալցյան*, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 212:

³ Տե՛ս Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991, էջ 219:

⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Խ. Ա. Ե., 1987, էջ 245:

Սայաթ-Նովայի տաղերում մեծ հաճախականություն է դրսևորում *քամամ* բառը.

Թամամ աշխար պըտուտ էկա, չը թողի Հաբաշ, նազանի,
Չը տեսա քու դիդարի պես, դուն դիփունեն բաշ, նազանի...¹

Երկու տողում փոխառյալ երկու որոշյալ դերանուն՝ *քամամ* և *դիփի* (դիփունք), որոնցից յուրաքանչյուրը ոճական-արտահայտչական պլանում իր նրբիմաստն ունի: *Դիփ* բառի գործառնությունը Արդվինի, Թիլիսի, Կարնո, Դարաբադի, Շամախիի բարբառներում վկայված է Հայոց լեզվի բարբառային բառարանում, ինչպես՝

*Դիփունանց խոսելու պիտի դառնամ, դիփունքը մասխարա պիտի գըջին ինձ*²:

Նույն բառարանում վկայված է Նոր Նախիջևանի, Մալաթիայի բարբառներում *ալամ* բառի գործառնությամբ՝ *ամբողջ, բովանդակ, բոլոր* նշանակությամբ, ինչպես՝

*Աշխար գիտի, ալամ գիտի՝ դու իմն ես*³:

Միջին հայերենի բառարանում *alam* բառը ներկայացվում է որպես պարսկերենից կամ արաբերենից փոխառություն՝ *աշխարհ, երկիր, տիեզերք* (ամեն ինչ) իմաստով, որի թուրքերեն *alem* ձևը նույնպես գործածական է բարբառներում, ինչպես հիշատակվող ժողովրդական խաղիկում.

*Ալեմին սուլթան ըլլայի*⁴:

Հայ բանահյուսական պատառիկները վկայում են, որ լայն գործառնությամբ է դրսևորում *ալամ աշխար* կապում բառակապակցությունը:

Հայ բարբառներից շատերում (Նոր Նախիջևան, Վան, Սվեդիա, Համշեն) *բոլորը, ամենը, ամենքը* նշանակությամբ գործառնում է թուրքերենից փոխառյալ *alay* բառը: Փոխառու լեզվում ունեցած *ամբոյս, բազմություն* նշանակությամբ այս բառանվանումը հայերենի բարբառներում գործածվում է *բոլորը* որոշյալ դերանվան արժեքով, իսկ *ալայ-մալայ* հարադրությանը Նոր Նախիջևանի բարբառում հատուկ է *ընդամենը* իմաստը, ինչպես.

Ալայ-մալայ հարուր տարի ապրիմ⁵:

Հ.Աճառյանը Համշենի բարբառին նվիրված մենագրության մեջ ներկայացնում է որոշյալ, ժխտական և անորոշ դերանունների գործառնությամբ: *Ընդունը* (ամենը, բոլորը) որոշյալ դերանվանը համարժեք է *եղինը* բառաձևը, որի մասին Աճառյանը գրում է. «Կարծես թե «մինչև յետին» գաղափարից է

¹ Տե՛ս Սայաթ-Նովա, Ե., 1959, էջ 51 :

² Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001, էջ 337:

³ Նույն տեղում, էջ 12:

⁴ Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ.Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, հ. Ա, Ե., 1987, էջ 17:

⁵ Նույն տեղում:

ձևացած»։ Նույն բարբառում գործառող հետաքրքիր ձևեր են մահ *բազիքը* (ոմանք), *վէօր մը* (ոմանք), *ինչիզ* (ոչինչ)¹։

* *Բիթուն* որոշյալ դերանվան գործածության վկայությունը Համշենի, Մշո, Վանի, Կարնո, Երզնկայի, Ղարաբաղի բարբառներում գտնում ենք վերոհիշյալ Բարբառային բառարանում, ուր բերված է օրինակ Կարնո բարբառով.

*Էնոնը բիթուն քևավոր են, կը քրոնին*²։

Ինչպես որոշյալ դերանուններից շատերին, այնպես էլ *բիթուն* –ին հավասարապես բնորոշ է գոյականական և ածականական կիրառությունը, ինչպես՝ *տարին բիթուն* (ողջ տարին), *ամառ բիթուն* (ամբողջ ամառ) և այլն։

Համշենի բարբառում այս բառը շատ գործածական է հատկապես իբրև գոյական։ Օրինակ՝

Չուրը ծածգեժ բիտունին (Չուրը բոլորին ծածկեց)։

Բիտունը ըրազի ըղոն (Բոլորը համաձայն եղան)³։

* *Թօմարի* բառը արևմտյան խմբակցության բարբառներում գործածվում է ինքնուրույնաբար, բայց առավել հաճախ հարադրության կազմում, ինչպես՝ *թօփ-թօմարի*, *թօմ-թօմարի*՝ այդ կերպ ընդգծելով *բոլորը*՝ *առանց բացառության* նրբիմաստը, ինչպես Մշո կատակերգում.

Թօփ-թօմարի գածինը հարսնիկ։

* Հայերենի շատ բարբառներում լայնորեն գործառում է բուրբերենից փոխառյալ *սաղ* որոշյալ դերանունը՝ խոսքում կատարելով ենթակայի, խնդրի, որոշչի պաշտոն և ունենալով *ողջ ամբողջ*, *լրիվ* իմաստները, ինչպես.

Սաղ տու արիլ, վօր նեղացավ (Քանաքեռ)։

Սաղ տարին էդ հացերը վո՞րդուց իր բերըմ (Կոտայք)⁴։

Հայերենի բարբառներում գործառող *որոշյալ*, *մխտական* և *անորոշ* դերանունների բազմազանությունը ցույց տանք Արարատյան բարբառի Լոռու խոսվածքի օրինակով՝ օգտվելով խոսվածքի ուսումնասիրությանը նվիրված մենագրությունից⁵։ *Որոշյալ* դերանուններից այս խոսվածքում հաճախադեպ կիրառություն են դրսևորում *ամեն*, *ամէքը*, *ամեն մինը*, *չիմ*, *բիրադի*, *սաղ* որոշյալ դերանունները։ Այս ձևերից յուրաքանչյուրին հատուկ տարբերակված իմաստով էլ պայմանավորված է կիրառությունը խոսքում։

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 111։

² Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, Կ. Ա, Ե., 2001, էջ 193։

³ Տե՛ս Հ. Աճառյան, Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947, էջ 211։

⁴ Տե՛ս Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989, էջ 293։

⁵ Տե՛ս Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Ե., 1968։

Խոսվածքի *անորոշ* դերանուններն են՝ *մինը, օքմին, ուրիշ, էսինչ, էնինչ, մի քանի*: Ի դեպ, *օքմին* ձևը, որն ակներևաբար *որ մի* դերանունից է սերում, ձեռք է բերել *մարդ*, էակ իմաստը և արտաբերվելով մեկ շեշտով՝ *օքմին* (վերջընթեր վանկի շեշտումն օրինաչափ է), կարող է ստանալ անորոշ հոլին համարժեք *մի* բառը, որից՝ *մի օքմին*, այսինքն *ինչ-որ մարդ*: Նույն ծագումն ունի Ջուդայի բարբառում կիրառվող *իքմին* բառաձևը: Կա նաև *մին իքմին* (մի բան) կրկնաբանությունը:

Հայերենի բարբառներում համատարած է *մարք* բառին անորոշ դերանվան իմաստ վերագրելը, ինչպես՝

Մարք էկավ, շուտ արա, պրծի (Արարատյան բ.):

Մարտ չիդէ, հո՞ւ՞ր փախնի (Գյումրի):

Մարք ուրան աշկը քօռ չօզիլ (Ղարաբաղ):

Վանա բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ Հր. Աճառյանը հակադրում է *մարք էկավ* (մարդը եկավ) և *մա՛րք էկավ* (ինչ-որ մեկը եկավ) արտահայտությունները՝ վկայելով, թե վանեցին դրանց տարբերությունը զգում է շեշտից: Որոշյալ հող չօգտագործելով՝ առանց շեշտի արտաբերվող *մարք* բառը տվյալ դեպքում նշանակում է մարդը, որի մասին խոսում էին, իսկ շեշտով՝ *մա՛րք էկավ*, խոսքը գնում է անձանոթ մարդու մասին¹:

Խոսքին լրացուցիչ պատկերավորություն է հաղորդում *մարք-մաղաք* հարադրությունը, երբ ուզում են սաստկական իմաստ հաղորդել անորոշ դերանվան արժեքով գործառող այս բառաբաղադրությանը: Օրինակ՝

Մէր մայլէն մարք-մաղաք չըկա (Երևանի Կոմո):

Բարբառներում *ոչ որ չկա* արտահայտությանը համարժեք է *մարք չկա*, իսկ *ոչինչ չկա* իմաստով՝ *բան չկա*, *բան-ման չկա* կամ՝ *բանուման չըկա*: Դրա վկայությունը կարելի է գտնել բանահյուսության մեջ: *Բան-ման չկա*² արտահայտությունը գրեթե դարձվածքային արժեք ունի ժողովրդի լեզվամտածողության մեջ, երբ ակնարկում է ինչ-որ սպասելի, ակնկալվող բանի մասին:

*Հայ լեզվաբաններից շատերը նպատակահարմար են գտել *ժխտական* դերանունները որոշյալ դերանունների հետ քննել, քանի որ բացառում է որոշյալ դերանվան իմաստը (ինչպես՝ *ամենքը, ամեն որ - ոչ որ, ամեն մեկը - ոչ մեկը*), թեև ոչ բոլոր որոշյալ դերանուններն ունեն ժխտական անմիջական ձևեր³: Բարբառներում ժխտական դերանունների գործածության մասին անհրաժեշտ տեղեկություններ փնտրել և գտել ենք բանահյուսական նյութերում, ինչպես նաև բարբառագիտական մենագրություններում: Լոռու խոսվածքին նվիրված ուսումնասիրության մեջ Մ. Ասատրյանը հետաքրքիր դիտողություն է անում, թե խոսվածքը փաստորեն *ժխտական դե-*

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Բնություն Վանի բարբառի, Ե., 1953, էջ 144:

² Տե՛ս Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Ե., 1987, էջ 179:

քանուններ չունի: Դրանց համապատասխանում է հատուկ շարահյուսական կառուցվածք: Այսպես՝ *ոչ որ, ոչ մեկը* ժխտական դերանունների փոխարեն գործածվում է *մինն էլ ա*, իսկ *ոչ մի* դերանվան իմաստով՝ *մի բան էլա* կապակցությունները: Ինչպես՝

Մինն էլա յեկավ վօչ (Ոչ որ չեկավ):

Մի բան էլա բերէլ չի (Ոչինչ չի բերել)¹:

Նման եղանակով ժխտական ձևեր ունենալը, ինչպես ցույց են տալիս բանահյուսական նյութերը, հատուկ է շատ բարբառների: Օրինակ, ասենք, Քեսաբի բարբառին նվիրված ուսումնասիրության մեջ նշվում է թուրքերենից փոխառյալ *հէչ(հիչ)*, ինչպես նաև *ման* բառերի բաղադրումով կազմված ժխտականները, ինչպես, ասենք,

Նան միկա մէսսի (ոչ մեկին մի՛ ասա):

Նան միէլ չըլըսսի գը (ոչ որ նրան չի լսում)²:

Նկատելի է, որ այս բարբառում ժխտական դերանունների հետ սովորաբար ժխտական բայաձև է գործածվում, թեև արևմտահայերենի ազդեցությամբ կիրառելի է նաև դրական բայաձևը.

Նան միէլ փուօղը ընծան կը հօտտի (Ոչ մի վարդ այսպես չի բուրում):

Քեսաբի բարբառով *հիչ բանն մոհքանձ չիմ* նախադասությունը գրական արևմտահայերենով ներկայացնելիս կունենանք՝ *ոչ մեկ բանի կարոտ եմ*, իսկ գրական արևելահայերենով՝ *ոչ մի բանի կարոտ չեմ*³:

Ժխտական դերանվան արժեքով *հէչ(հիչ)* փոխառյալ բառի գործածությունը բնորոշ է շատ բարբառների՝ *հէչ մարտ*, *հէճ մեզ* (Մուշ), *հէճ պան* (Սասուն): Ազուլիսի բարբառում առկա *փուչ մի* և Կաքավաբերդում՝ *հուչ մի* (ոչ մի)⁴, ինչպես նաև Արարատյան բարբառի խոսվածքներում շատ գործածական ժխտական *փօչփօք*, *փօչ մի*, *փօչ մեկը*, *հէչ մե*, *փօչինչ, փունչինչ, օջօլ* (Թիֆլիս)⁵ դերանունները թույլ են տալիս ենթադրել, որ դրանք թուրքերենի հետ կապելու փոխարեն կանելի է համարել *ոչ* ժխտական բառի կիրառություն:

Մի հետաքրքիր արտահայտություն ենք գտել Վանա բարբառում՝ *սկի* (իսկի)՝ *ոչինչ* բառի իմաստով: Հայրենակից պանդուխտների երկխոսության մեջ կա այսպիսի հարցուպատասխան.

– *Ի՞նչ կա յերկիր, ի՞նչ չկա:*

¹ Տե՛ս Մ. Ասատրյան, Լոռու խոսվածքը, Ե., 1968, էջ 113:

² Տե՛ս Յ. Չոլաքեան, Քեսապի բարբառը, Հալեպ, 1986, էջ 101 :

³ Նույն տեղում: :

⁴ Տե՛ս Հ. Մուրադյան, Կաքավաբերդի բարբառը, Ե., 1967, էջ 133:

⁵ Տե՛ս Ռ. Մարկոսյան, Արարատյան բարբառ, Ե., 1989, էջ 135:

– *Սկի, սիվտայ սիվցեր ի...*¹

Նույն կերպ ոճարտահայտչական հնարքներից մեկով՝ խոսքի զեղչումով, բարբառներում շատ ընդունված է հեշ (ոչինչ) պատասխասական բառի գործառույթը, ինչպես, ասենք, Երևանին մերձակա Նորքի և Ջանաբեռի խոսվածքներում .

– *Ի՞նչ կա, ի՞նչ կօրձի* (գործի) *էք* :

– *Հէ՛հ* :

Հայերենի բարբառներում հաճախադեպ գործառույթ են դրսևորում անորոշության ընդգծված երանգ ունեցող *մեզէ, միգալ* ձևերը՝ մեկ այլ կազմությամբ: Բառն ավելի հաճախ *մյուս* ցուցականի արժեքով է գործառույթ, ինչպես, ասենք, Համշենի բարբառով՝ *միգանկէքը*, Մշո բարբառին հատուկ - դան, -դանք, -դօնք հոգնակերտներով՝ *մեզէլդան, մըզըլդօք* և այլն: Ասենք, *մըզլօք* ժամանակահատված մակբայը *մեկ այլ օր* բառակապակցությունից է առաջացել՝ վերջին բաղադրիչի վրա ընկած շեշտման արդյունքում սկզբնամասի ձայնավորների կորուստով: Բառիմաստի փոփոխություն կրելով՝ *մըզլօրը* ձեռք է բերել *անցյալ օրը* նրբիմաստը: Արարատյան բարբառի խոսվածքներում շատ գործածական են *էսինչ, էսինճ, էնինճ, ուրիշ* (կամ *հուրիշ*) անորոշ դերանունները:

Մեկը անորոշ դերանունը համատարած է բարբառներում: Անորոշ հոդին համարժեք *մեկ* բառով (մե, մի) անորոշության երանգ է հաղորդվում ցանկացած առարկայի, երևույթի: Բերենք օրինակներ Մշո բանահյուսությունից.

Մեզ ամօթու ձեն չըհանէ, մեզէլ կըսէ՝ ընծմէ գըվախենա:

*Մեզ չըկա ձըցմէ իմ ձըցում, յես էրթենք ձըցմենք ռեսի ձըցում*²

(Մեկը չկա՝ իմ խնոցին հարի, որ ես գնամ հարեն ռեսի խնոցին):

Հայերենի բարբառներում հաճախադեպ կիրառություն ունի *իք* անորոշ դերանունը՝ *մի բան* իմաստով: Գրաբարում բացակայող այդ *իք* ձևը Հր.Աճառյանը համարում է հայերենի հնագույն շրջանից եկած ձև, որ գործածվում է մոռացված մի առարկայի մասին խոսելիս՝ բերելով մոռացկոտների՝ ծաղրելու համար գործածվող հետաքրքիր զվարճախոսության մի նմուշ. «Իքը իքին իք է արել»: Այա ավելացնում է, որ, հավանաբար, շփոթվելով *ինքը* դերանվան հետ, շատ բարբառներում այդ *իք* բառը դարձել է *ինքը*, ինչպես՝ *ինքը* (Պոլիս), *ինքյն* (Մարաղա) և այլն³: Մշո բարբառում գործածական է *իքք* ձևը: Օրինակ՝

Իրքըն քօղէր իմ հօնի: (Ինչ-որ բան բողել եմ այնտեղ):

¹ Տե՛ս Հ.Աճառյան, Քննություն Վանի բարբառի, Ե., 1953, էջ 221:

² Տե՛ս Ս.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Ե., 1958, էջ 226:

³ Տե՛ս Հ.Աճառյան, Լիակատար բերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954,

Սուլավայի բարբառում առկա *իք* անորոշ դերանունից էլ կազմվել է *իք-մընա* բաղադրությունը, որն ունի ժխտական դերանվան արժեք՝ *ոչինչ, ոչ մի բան* իմաստով:

Անորոշ դերանվան արժեքով գործառուղ փոխառյալ *ֆրլան*, *ֆրլանքյաս* ձևերը լայնորեն գործառուում են ազգագրական տարբեր գոտիներ ընդգրկող բանահյուսության մեջ: Իրանական լեզուներից փոխառյալ այս ձևերին հատուկ է անորոշությունը, որը լրացուցիչ արտահայտչականություն է հաղորդում խոսքին՝ կիրառվելով *ոմն* անորոշ դերանվան արժեքով: Այս փոխառությունը շատ է կիրառվում նաև *ֆրլան-ֆրստան* հարադրության ձևով, բայց արդեն ցուցական դերանվան արժեքով: Խուլ շփական *ֆ*-ի դիմաց շնչեղ-խուլ պայթական *փ* ունեցող բարբառներում, ինչպիսին, ասենք, Ղարաբաղ-Շամախիի կամ ծայր հյուսիսարևելյան միջբարբառախումբն է, շատ գործածական են *փրլան*, *փրլանքյաս* ձևերը՝ *ոմն* բառի իմաստով:

Այսպիսով՝ *որոշյալ, ժխտական* և *անորոշ* դերանունների արժեքով բարբառներում բնիկ հայերեն բառանվանումների կողքին այդ հասկացությունների վերացականությունը հաղթահարելու նպատակով լայնորեն գործառուում են պատմական շփումների ընթացքում տարբեր ժողովուրդների բառամթերքից վերցված հոմանիշային համապատասխանություններ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Ե., 1954:
2. Աբրահամյան Ս., Ժամանակակից հայերենի քերականություն, Ե., 1969:
3. Բարսեղյան Հ., Հայերենի խոսքի մասերի ուսմունքը, Ե., 1980:
4. Աճառյան Հ., Քննություն Վանի բարբառի, Ե., 1952:
5. Աճառյան Հ., Քննություն Համշենի բարբառի, Ե., 1947
6. Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Ե., 1968:
7. Բաղդասարյան -Թափալցյան Ս., Մշո բարբառը, Ե., 1958:
8. Կոստանոյան Դ., Երզնկայի բարբառը, Ե., 1979:
9. Հանեյան Ա., Տիգրանակերտի բարբառը, Ե., 1978:
10. Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, Ե., 1953:
11. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, հ. Ա, Ե., 1987:
12. Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառ, Ե., 1989:
13. Մուրադյան Հ., Կաթավաթերոլի բարբառը, Ե., 1967:
14. Չոլաքեան Յ., Քեսապի բարբառը, Հալեպ, 1986:
15. Պետոյան Վ., Սասունի բարբառը, Ե., 1954:
16. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Ե. 1987:
17. Զահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:
18. Սայաթ-Նովա, Տաղեր, Ե., 1959:
19. Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. Ա, Ե., 2001:
20. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 3-19, Ե., 1972-1999:
21. Նշխարներ Արցախի բանահյուսության, Ե., 1991:
22. Հայ ժողովրդական հեքիաթներ, հ.1, Ե., 1958

**ՁԲԱՂՄՈՒՆՔՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԱԶԳԱՆՎԱՆԱԿԵՐՏ
ՀԻՄՔԵՐԻ ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

Արիեստ, զբաղմունք, մասնագիտություն իմաստներով ազգանվանակերտ հիմքերի ծագումնաբանական քննության համար իբրև լեզվանյութ են ծառայել Տ.Մ.Ավետիսյանի «Հայոց ազգանունների բառարանը», «Նորահայտ ազգանուններ» հոդվածը, ինչպես նաև տպագրության պատրաստ ավելի քան 1000 ազգանունները, որոնցում յուրաքանչյուր ազգանվան համար այլ հատկանիշներից բացի՝ նշվում է նաև ծագումը և ազգանվանակերտ հիմքի բացատրությունը: Մասնավոր դեպքերում օգտվել ենք նաև «Турецко-русский словарь»-ից:

Ուսումնասիրությունները վկայում են, որ խնդրո առարկա ազգանվանակերտ հիմքերը միատարր չեն:

Արիեստ, զբաղմունք, մասնագիտություն նշանակություններով ազգանուններում բավականին մեծ թիվ են կազմում այլալեզու օրինակները, որոնք հետևանք են տարբեր ժողովուրդների հետ անմիջական շփումների, քաղաքական, տնտեսական, առևտրական ու մշակութային հարաբերությունների: Ընդ որում, հայկական հիմքերով ազգանունները փոքրաթիվ են՝ շուրջ 120:

Աջապահյան «հոգևոր պաշտոն, աստիճան»¹, Ատամնաբուժյան, Արծաթագործյան / Արծաթաբանյան / Արծաթականյան, Աբլորյան 1.«աբլոր վաճառող», 2.«աբլորակոփ սարքող», Բաղկերհանյան «լուսանկարիչ», Բժիշկյան / Բժշկյան, Բրուտյան, Գանձապետյան, Գզարյան, Գինեգործյան / Գինեպանյան, Գործակալյան, Գրագիրյան, Դատավորյան, Դարապետյան «գլխավոր դռնապան», Դեղարարյան, Դերձակյան, Դոխտուրյան «բժիշկ, բուժակ», Դուռուկյան, Երեցփոխյան, Զորապետյան «զորքի գլխավոր հրամանատար», «առաջնորդ», Ժամագործյան, Ժամակոչյան / Ժամկոչյան, Ժամհարյան, Լցկարյան, Լուսարարյան, Խաղախորդյան, Խառատյան, Խնձորյան «խնձորավաճառ», Խոհարարյան, Խոտագործյան «խոտեղեն դեղամիջոց պատրաստող», Կազմարարյան, Կալավորյան «կալի աշխատող, կալատեր», Կաշեգործյան, Կառավարիչյան, Կոշկապանյան / Կոշկարյան, Համտեսյան, Հացագործյան / Հացբանյան / Հացպանյան, Հյուսնյան / Հյուսնունց, Հովիվյան, Զկնորսյան, Ճանճապանյան, Ընոնյան «մուշտակագործ, -կար», Մազմանյան, Մանագործյան, Մաշկա-

¹ Այն դեպքերում, երբ հիմքերի նշանակությունը ակնհայտ չէ, տրվում է մեկնաբանություն:

կարյան / Մաշկարյան / Մաշակարյան / Մաշակալյան, Մաքսապետյան, Մեծավորյան, Մշակ-Մանուկյան, Մսագործյան, Նավավարյան, Ներկարարյան / Ներկարյան, Նուբարավաճառյան, Շախկամյան / Շաղգամյան, Շինականյան, Ոսկերչյան, Որմնադիրյան, Որսորդյան, Պարտիզպանյան, Ջորջյան «կտորեղեն, գործվածքեղեն պատրաստող, վաճառող», Ջորեպանյան, Ջրբաշխյան / Ջրբաշյան, Ջուլիակյան, Ռանջբարյան «հողագործ, երկրագործ», Սանրագործյան / Սանրագարսյան¹, Սարկավազյան, Սափրիչյան, Սերագործյան / Սրագործյան, Սխտորյան, Սրճարարյան, Վաճառականյան, Վարդապետյան, Վարժապետյան, Վարպետյան, Տանուտերյան, Տավարածյան / Տավարյան, Տնտեսյան, Փաղունց, Փայտահատյան, Փայտյան «փայտագործ», «փայտանման», Փոխսրարյան «բամբակի մանած թելի փոխարեն բամբակ տվող, այդ թելը վաճառող», Փողհարյան, Փոչիկյան «փող փռող», Փորբաշյան / Փորքեշյան 1. «փորբաշ (թամբը ամրացնող) պատրաստող», 2. «փորը քաշած, նիհար», Բարակոփյան, Բարհանյան, Բարոզիչյան, Բարտաշյան, Բացախյան, Բյարունց «քարագործ, քարտաշ», Բյոշկարյան / Բոշկարյան «տնային կոշիկ կառող»:

Հետաքրքիր է, որ Մաղջյան / Մեղչյան, Մառանջյան / Մարանջյան, Մոմջյան / Մոմջյան, Չորդաջյան «ջրհորղան պատրաստող, տեղադրող», Ջիրմենջյան «հանքային ջրերում աշխատող, նրանցով զբաղվող», Սեկդորջյան, Սվաղչյան / Սվաքճյան / Սվաճյան «սվաղարար, ծեփագործ», Փեթակչյան, Փոթախչյան «ալյուրի, ցորենի խոշոր ամբար պատրաստող» ազգանունները ձևավորված են *հյ. ազգ. հիմք + «գործող անձ»* իմաստով բյուր. *ածանց* կաղապարով, որը թույլ է տալիս ենթադրել, որ սրանք կերտված են Արևմտյան Հայաստանում, իսկ *Գինադարյան*-ը ձևավորված է *հյ. ազգ. հիմք + պրսկ. ածանց* կաղապարով:

15-րդ դարի վերջերից սկսած՝ օսմանյան տիրապետությունն իր բացասական ազդեցությունն է ունեցել մեր ժողովրդի ինչպես ֆիզիկական գոյության, այնպես էլ մշակույթի ու լեզվի վրա: Հր. Աճառյանը թուրքերենի ազդեցությունների ու հետևանքների մասին խոսելիս նշել է. «Այս երկար ժամանակեա ազդեցությամբ է, որ բազմաթիվ թուրքերեն բառեր, ոճեր և ասացումներ մտած են մեր խոսակցական լեզուի մեջ, եթե ի նկատի առնենք մեր արդի ժողովրդական բարբառը կը տեսնենք թե ամենէն աւելի գօրեղ մասը կը ներկայացնէ բոքական տարրը, որ տեղ-տեղ կը գերազանցէ մինչև անգամ հայերէնը: Ի հարկէ այս բոլորին վրայ նույն կերպով, նույն ուժով չէ ազդած օսմանեան տիրապետութիւնը, այլ կեղդոնական տեղերը աւելի գօրեղ, իսկ կեղդոնէն հեռացած տեղերը և բուն Հայաստանի մեջ հա-

¹ Սանրագործյան > Սանրագարսյան, Ժ-ի պարզ. և բաղարկ. *Գարսիս* անձնանվան հետ:

մենատարար աւելի տկար»¹: Պատկերն ամբողջացնելու համար նա հայ ժողովրդին բաժանում է երեք խմբի.

ա. ամբողջովին թրքախոս,

բ. ոչ թրքախոս, որոնց բառապաշարը ողողված էր թուրքերեն բառերով,

գ. ոչ թրքախոս, որոնց բառապաշարում փոքրաթիվ թուրքերեն բառեր կան:

Քանի որ *արիեստ, զբաղմունք, մասնագիտություն* իմաստներով ազգանունների ճնշող մեծամասնությունն արևմտահայ իրականությանն է հատուկ, ուստի պատահական չէ շուրջ 1500 թուրքական հիմքերի առկայությունը (աշխատանքը չձանրաբեռնելու նպատակով բերում ենք ընդամենը 100 օրինակ).

Ագուջյան «ղեղագործ», Արդարյան «մանրավաճառ», Ալթունջյան «ոսկերիչ», Արմաջյան «խնձորավաճառ», Աիջյան «խոհարար», Ասթարճյան «սվաղարար», Արամանջյան «խուզարկու», Բալխիշյան «ձկնորս, -վաճառ», Բակմազյան «դռշաք պատրաստող», Բահալբաշյան «քարձր կարգի առևտրական», Բանահյան «պատշար», Բանջարջյան «ճակնդեղագործ, -վաճառ», Բասմաջյան «չթագործ, -վաճառ», Բաքիրջյան «պղնձագործ», Բեյլանջյան «մաքսավոր», Բերբերյան «վարսավիր», Բյուկյուջյան «գործվածքագործ», Բոյաբեհյան «ներկարարների ավագ», Բորոզանյան «շեփորահար», Բունարջյան «աղբյուրագործ», Բուբուրջյան «մանածագործ», Գաբանջյան «կշռավար», Գագրուրյան «սագարած», Գալայճյան «կլայեկող», Գալսիակճյան «գոակկար», Գասրեմճյան «կապալառու», Գզգզյան «փորագրող», Գըրլանկըճյան «թափառական հեքիմ», Գոմճյան «մեղրահաց պատրաստող», Գովբաջյան «գյուղավագ», Գուլեկջյան «ականջաբույժ», Դանդուրջյան «կառավարիչ», Դարակչյան / Տարակչյան «սանրագործ, -վաճառ», Դեմիրայաքյան «գայլիկոն պատրաստող», Դեվեճյան «տղտապան», Դեքիրմանջյան «ջրաղացպան», Դիշեկանյան «ատամնաբույժ», Դոլաբչյան «կահագործ, կահույքագործ», Եվանջյան «ամանեղեն պատրաստող ու վաճառող», Եումճյան «ակոսատող», Զամպաքչյան «շուշանավաճառ», Զանցինյան «արիեստավոր», Զարգավաթճյան «կանաչեղեն վաճառող», Զարնիշանճյան «ոսկերիչ», Էկսուրջյան «գամ պատրաստող», Էմանեթճյան «առաքիչ», Էսկիջյան «հնավաճառ», Էրգիսյան «նկարիչ», Լըղաթբաշյան «վերակացու», Թանավեճյան «թիթեղագործ», Թավշանճյան «փայտի վրա փորագրող», Թավուխչյան «թոշնաբույժ, -վաճառ», Թերզիբաշյան «ղերձակապետ», Թիֆեկչյան «զինագործ», Թխմաճյան «սերմնավաճառ», Թուլումբաջյան «հրշեջ», Ժունգուրդարյան «փրկարար», Ինաջյան «մարգարտագործ», Իսլեմեճյան «ապխտող», Իսպենջյան «ղեղագործ, -վաճառ», Լյուլեճյան «ծխամորճագործ, -վաճառ», Լորչյան

¹ Հր. Աճառյան, Էմինյան Ազգագրական ժողովածու, հ. Գ:

«կաթնաշոռ պատրաստող», Լոքմանյան «բլիթ, կարկանդակ պատրաստող», Խալպախյան «գլխարկագործ», Խորջիյան «փայտածխագործ, -վաճառ», Կեզեկջյան «ասեղնագործ, -ուհի», Կերքեջյան «ոսկրահարդար հեքիմ», Հալլաճյան «գզրար», Ղանալանյան «պատյանագործ», Ղեմչյան «թնդանոթ նորոգող», Շազմաչյան «կոշկակար», Մազակյան «երաժիշտ, նվագածու», Մանթարջյան «սնկավաճառ», Մելմարյան «ճարտարապետ», Յալոզչյան «ոսկեզօծող, ոսկեգործ», Յանուջյան «յահնի պատրաստող», Նալչաջյան «պայտար», Շիլաջյան «սառը զենք պատրաստող», Շոռաչյան «խաղողի հյութ պատրաստող», Չեմենջյան «չաման պատրաստող ու վաճառող», Պառութճյան «վառողագործ, -վաճառ», Ջերաճյան «սափորագործ, -վաճառ», Ռազչյան «օղեգործ», Սապոնջյան «օճառագործ», Ուրգանջյան «պարանագործ», Փիտենյան «բլիթագործ», Բաղջյան «թուղթ վաճառող», Բուրեջյան «հնոցապան», Ֆեթչերջյան «տակառագործ», Ֆոնջյան «հացբուխ», Օրաջյան «քուժակ, հեքիմ», Օրարյան «գեղեղող», Օրջյան «նետագործ»:

Հայերենի բառապաշարում առկա բուրբական փոխառությունները, ամբողջությամբ վերցրած, իմաստային հարուստ նկարագիր ունեն: Ինչպես վկայում են բերված շուրջ 100 օրինակները, իմաստային բազմազանությունը արտացոլվում է նաև հայկական ազգանուններում:

Հայ և արաբ ժողովուրդների կապերն ու հարաբերությունները պայմանավորված էին 7-10-րդ դարերում արաբների կողմից Հայաստանի նվաճմամբ, իսկ այնուհետև 12-րդ դարում և դրանից հետո Կիլիկիայում և Ասորիքում արաբական տիրապետության գերիշխանության հաստատմամբ: Հր.Աճառյանի վկայությամբ՝ արաբական փոխառությունները հենց այդ ժամանակահատվածների արգասիք են, որոնց մի մասն էլ մուտք է գործել ազգանվանակերտության ոլորտ: Հարկ է նշել, որ անմիջական փոխառությունները համեմատաբար սակավաթիվ են՝ *Անքեշյան «նախշող, նախշար», Աշուղյան «գուսան», Իսախանյան «ղերձակ», Հալիքալյան «աղախին», Հեքիմյան «բժիշկ», Մուղիրյան «կառավարիչ», Մուղամանյան «ժողովրդական երգեր կատարող», Ռախյան «գյուղապետ», Սարաֆյան, Սարաֆ-Սարաֆյան «լումայափոխ», Սիմսարյան «միջնորդ», Բաֆասյան «թղթատար, նամակատար»*: Արաբական հիմքերի գերակշիռ մասը միջնորդաբար կատարված փոխառություն է, որտեղ միջնորդ լեզուն բուրբերենն է: *Արաբական հիմք + բուրբական ածանց* կաղապարով ազգանվանակերտները ևս հաստատում են բուրբերենի միջնորդ լինելու հանգամանքը:

Ստորև ներկայացնում ենք արաբական հիմքերից կերտված այն ազգանունները, որոնք բուրբերենով միջնորդավորված փոխառություններ են կամ ձևավորված են *արաբ. հիմք + բուրբ. ածանց* կաղապարով.

Աճերյան «վարձով տվող», Արեգտերյան «գղակ կարող արհեստանոցի տեր», Բազազյան «գործվածքեղեն վաճառող», Բաղալյան «նպարավա-

ճառ», Բաքարջյան «խոշոր եղջերավոր անասունի առևտրով զբաղվող», Գեղմեջյան «խաղողագործ», Գուպուրյան «գերեզմանաքար պատրաստող», Գուրամաջյան «վարկատու, պարտատեր», Դալլաբյան «վարսավիր», ճան «բաղնեպան», Դամինյան «մատակարար», Դամկերտյան «արծաթյա, պղնձյա իրերի վրա զարդանախշեր փորագրող», Դավլաշյան «ախոռասպան», Դեակոչյան «կաշեգործ, խաղախորդ», Զահրեջյան «սննդամթերք վաճառող», Զեյթյան / Զեյիթյան «յուղ, հատկապես հալած, պատրաստող ու վաճառող», Զեյթունյան «ձիթապտուղ աճեցնող ու վաճառող», Էյբջյան «գիպսե արձանագործ», Էնֆիաճյան / Էնֆեջյան «քթախոտ պատրաստող ու վաճառող», Էստատյան «գրագիր», Թաբիբյան «բժիշկ», Թազամբյան «նոր գուշակ, մարգարե», Թիփախյան «ղեղաբույսեր հավաքող», Իմաստարյան «տարածող, բաժանող», Ինֆիջյան «քթախոտ պատրաստող ու վաճառող», Իտարեճյան «օժանելիք պատրաստող և վաճառող», Իփրեճյան «ասեղ և նման գործիք պատրաստող ու վաճառող», Խբրյան «եգիպտացորենի բոված հատիկներ՝ աղիբուղի վաճառող», Կադեհեջյան «ըմպանակագործ, -վաճառ», Կազազբաշյան «զլխավոր մետաքսագործ, -վաճառ», Կայմակամյան «կազախի պետ», Կասմիրյան «բաժանող, բաժար», Կիբրիտջյան «լուցկիավաճառ», Հաբարջյան «հանձնակատար, սուրհանդակ», Հաբլանյան «ճուպան, պարան պատրաստող և բանեցնող», Մատենճյան «հանքափոր, լեռնագործ, մետաղագործ», Համալբաշյան «համալների գլխավոր», Հայրջյան «բեռնակիր», Հասասյան «փողոց մաքրող», Հատտենճյան «փայտահատ», Հաքենյան «միջնորդ», Հուսենճյան «ժողովրդական երգի մի տեսակի՝ մուղամի կատարող», Հուսուսյան «դատարանի հանձնակատար», Հաթրանճյան «կուպրի, ձյուրի գործով զբաղվող», Հալփաղյան «գդակկար, -վաճառ», Ճարահյան «վիրաբույժ», Ծնահիրճյան «փակոցափեղկ, նաև ջրակալ պատրաստող», Մադաջյան «մթերքով, սպառման ապրանքով, կերով զբաղվող», Մագուջյան «աճուրդով, սակարկությամբ զբաղվող», Մալաբինյան «փորձառու, հմուտ, իր գործի վարպետ», Մակազաջյան «մկրատագործ», Մահիբեջյան «մեղրավաճառ», Մահսուջյան «արտադրանքի, բերքի հետ գործ ունեցող», Մադազաճյան «խանութպան», Մադազարյան «խանութի, պահեստի, ամբարի տեր», Մանունյան «մածնավաճառ», Մանկուչյան «թուրմ պատրաստող ու վաճառող», Մասրիշիյան «ծախսարար, տնտես», Մավիչյան «զարդատուփ, պատյան պատրաստող ու վաճառող», Մգեբրյան «նամակատար, փոստատար», Մեծաշյան «սակարկող», «աճուրդ կազմակերպող», Մեյմեջյան «քուրճներ, մահլամ պատրաստող ու վաճառող», Մեշտոճյան «տնային երկարաճիտ սաֆյանե ոտնաման կարող ու վաճառող», Մերզլիկյան «գերեզմանափոր», Մեքգյավակյան «շաղափ, դուր բանեցնող», Մեքթուպճյան «ուսուցիչ», Մերամեքճյան «կարկատող, վերանորոգող», Միրիճյան «պաշտոնյա», Մյուհենուխյան «ճարտարագետ», Մյուրեբյան «վե-

րահսկիչ, հսկիչ», Մոլնարյան «լրաբեր, համբավաբեր», Մոսկաջյան «հմա-
յիչ, հոտուիքք պատրաստող ու վաճառող», Մուշաղյան «հսկիչ», Նալբանդ-
յան «պայտար, պայտագործ», Նալդրաթյան / Նալդրանյան «պայտա-
գործ», Նաղալյան «ուղեկցող, տեղափոխող», Նաջարյան «ատաղձագործ,
հյուսն», Շավեշյան «բուժող», Շերիտնյան «եզրաժապավեն պատրաստող
ու վաճառող», Չեմնալոյան «բեռնակիր», Չուբջյան «մի տեսակ հագուստ`
ջութքե կարող», Պագջալյան / Պակալյան «նպարավաճառ», Ջարախյան
«բուժակ, վիրաբույժ», Ջիլաջիյան «լաքագործ, փայլեցնող», Ջուկակեյլյան
«ապրանք իրացնող», Ջունդանյան «վարժ ձիավոր», Սաշրանյան «սածիլ
անող, վաճառող», Սապաջյան «գիշերապահ, «գիշերային հերթապահ»,
Սավաղջյան «արծաթի սևաներկման վարպետ», Սետեֆնյան «սաղափա-
գործ», Սիդիրջյան «կախարդանքով զբաղվող, հմայող», Սիյահյան «բու-
ժակ», Սիվաբեյյան «քաղաքական գործիչ», «ղիվանագետ», Սուլուկջյան
«տգրուկի գործով զբաղվող», Տաբուրյան «խոհարար», Քալալյան «ակնա-
բույժ», Քեղոնյան «գրանցող, նշում անող», Քեթաբջյան / Քիթաբջյան
«գրավաճառ, գրահրատարակիչ», Քեթեֆյան «գրագիր, նամակատար»,
Քեյխնջյան «կտրտող, մանրացնող», Քերբաջյան «տիկագործ», Քեֆեջյան
«կշեռքի թաթ պատրաստող», Քիրապալյան «զլխավոր վարձակալ», Զյա-
թիպյան «քարտուղար, գրագիր», Զյուրենյան «քուրա պատրաստող, շա-
րող», Զուրենբերյան «բամբակից ու մետաքսից գործվածք պատրաստող»,
Ֆալլյան / Ֆալջյան «բախտագուշակ», Ֆալխյան «բախտագուշակ»:

Ազգանվանակերտ հիմքերի հաջորդ խումբը կապվում է պարսկերեն
փոխառությունների հետ: Փաստերը ցույց են տալիս, որ հայերն ապրել են
պարսիկների հարևանությամբ, և նրանց միջև հասարակական, պետական,
վարչական ու մշակութային սերտ կապերն ու հարաբերությունները պատ-
ճառ են պարսկերենից կատարված մեծաթիվ փոխառությունների: Ազգան-
վանական հիմք հանդիսացող պարսկերեն անմիջական փոխառություննե-
րը, ճիշտ է, սակավաթիվ են՝ Գեովշանյան / Գովշանյան «գյուղի հանդերձի
սահմանը հսկող», Դբավաջյան «նախշերով մետաքսե կտորի արտադրու-
թյամբ և առևտրով զբաղվող», Ջարգարյան «ռսկերիչ», Խազմանյան / Խզ-
մանյան «փորագրող», Խազնադարյան «զանձապահ», Խարազյան «մա-
շակար», Խոջասարյան «խոջապետ», Միրզաթունյան / Միրզայան
«դպիր, գրագիր», Չարյան / Չերյան «մանրավաճառ, փերեզակ», Չո-
բանյան / Չոբոյան «հովիվ», Սպիտանյան «կողովագործ», Փանչուսթյան
«հմուտ վարպետ», Բալանթար / Բալանթարյան «ոստիկնապետ», սակայն
առավել շատ են թուրքերենի միջնորոշությամբ կամ պարսկ. հիմք + թուրք.
ածանց կաղապարով հայկական ազգանունները:

Ամբարդարյան «ամբարի պետ, բանվոր», Ամբարջյան «պահեստա-
պետ», Անթեզեյյան / Անթիբաճյան «անտիկվար իրեր հավաքող ու վաճա-
ռող», Առաշկարյան «հնոցապան», Բավրաջյան «շրջանակ, քիվ պատ-

րաստող», Գյումուշքերդյանյան «արծաթագործ», Դերերեջյան / Թեր-
պանջյան «մաքսավոր, կապանի պահապան», Ջերդելյան «ծիրանի
առևտրով զբաղվող», Էվրենգեջյան «գահավորակ, բազկաթոռ պատրաս-
տող», Թաշեջյան «պսակ, հարսի թագ պատրաստող ու վաճառող», Թաջջ-
յան «թագ (իրև զխազարդ) պատրաստող», Թաքսիլդարյան «վճարը հա-
վաքող, գանձապահ», Լեյեջյան / Լուլուկյան «ղաստիարակ», Կասկարյան
«տուփ, արկղիկ պատրաստող ու վաճառող», Կաֆեսջյան «վանդակա-
գործ, -վաճառ», Հանենյան «երգիչ», Հավանջյան «հավանգագործ», Ճան-
ֆեսճյան «մետաքսե դիպակ վաճառող», Մասչյան / Մեսչյան «սաֆյանե
տնային ոտնաման կարող», Նարկիլեջյան «նարգիլե (գործիք) պատրաս-
տող», Նիմանյան «կիսող, բաժանող», Շամտանճյան «մոմակալներ պատ-
րաստող ու վաճառող», Շիրիճյան «օշարակագործ», Շիքարյան «որսող,
ծկնորս», Շորջյան «կաթնավաճառ», Չամասանյան «լվացարարուհի»,
Չարալյան «ճարը գտնող, բուժող», Չարսավչյան «անկողնային սպիտա-
կեղեն կարող ու վաճառող», Չիրքեջյան «աղտեղություն մաքրող», Չուխա-
դարյան «սուրհանդակ», Պեյկիրճյան «վարձով ձի տրամադրող», Ջարկե-
յան «սրելու ճախարակ բանեցնող», Ջինիշյան «ճենապակե իրեր պատ-
րաստող ու վաճառող», Ջուհարջյան «գոհարագործ», Սազանդարյան /
Սազբանդյան / Սազջյան «սագ նվագող», Սամանճյան «հարդի առևտրով
զբաղվող», Սանդեկյան «սնդուկագործ», Սարիգյումջյան «ընտիր ոսկե-
րիչ», Փեշեքերյան «արհեստ բանեցնող», Փերդեջյան «վարագույր կարող
ու վաճառող», Փիրվեսյան «շրջանակ պատրաստող ու վաճառող», Քալջ-
յան «խալխավաճառ», Քեհրիբարյան «սաթե իրեր պատրաստող», Քոլո-
սարյան / Քոլոբաշյան «քարավանապետ», Քյուլիանջյան / Քուլիանջյան
«վառարան, հնոց մաքրող ու վաճառող», Ֆարգճյան «պիստակ վաճա-
ռող»:

1828թ. հայ ժողովուրդն անցավ ռուսական կայսրության տիրապետու-
թյան տակ: Պատմական այդ իրողությամբ պայմանավորված՝ հայերենը
առավել մեծ չափով իր վրա կրեց ռուսաց լեզվի ազդեցությունը և բազմա-
թիվ բառեր փոխառեց, որոնք, սակայն, ազգանվանական հիմքերում փոք-
րաթիվ են.

Աբդոլյան / Աբդշյան «գումակի սալապան», Լոդոշնիկյան «մակույկա-
վար», Խլերնիկյան «հացթուխ, հացագործ», Կոժեվնիկյան «խաղախորդ»,
Կրասիլնիկյան «ներկարար», Կուզնեցյան «ղարբին», Կուշներյան / Զուշ-
նարյան «մորթեգործ», Կուպեցյան «վաճառական», Մեղնիկյան «դեղա-
գործական գծով մասնագիտացած», Մելնիկյան «ջրաղացպան», Մյաս-
նիկյան «մսագործ, -վաճառ», Յարուկյան «խնձորի առևտրով զբաղվող»,
Շապովնիկյան / Շապովալյան «գդակկար», Շոկովնիկյան / Շելկովնիկ-
յան «մետաքսագործ, -վաճառ», Պովարյան «խոհարար», Սբորշիկյան
«հարկ գանձող, հարկահավաք», Սերեբրակյան «արծաթագործ», Սվեշ-

նիկյանց / Սվեշնիկյան / Սվեշնիկյան «մոմագործ», Տաբաշնիկյանց «ծխախոտագործ, -վաճառ», Օֆիցերյան / Աֆիցերյան «սպա», Ֆաբրիկատորյան / Ֆաբրիկանտյան / Ֆաբրիկաջյան «ֆաբրիկայի տեր», Ֆուրդունջյան «քեռնասալլ բանեցնող»:

Միայն *Լոշկաջյան «գդալագործ, -վաճառ»* ազգանունն է, որ ձևավորված է *ռուս. հիմք + բրբ. ածանց* կաղապարով:

Հայերենի բառապաշարում աննշան տեղ են զբաղեցնում վրացական փոխառությունները, որոնք գերազանցապես ժողովրդախոսակցական բնույթի են: Եվ բնականաբար, առավել փոքրաթիվ են նրանցով ձևավորված հայկական ազգանունները՝ *Մամասախիսյան «գյուղավագ», Մեքուրնությանց / Մեքուրնության «քթախոտ պատրաստող», Մեղվինյան «գինեգործ, -վաճառ», Մենագարյան «նաղարայի նվագածու», Մեպուրնյան «հացագործ, հացթուխ», Մովրովյան «զավառապետ»:*

Օգտագործված գրականության ցանկ

1. Հր.Աճառյան, Էմինյան Ազգագրական ժողովածու, Մոսկվա, 1911, հ. Գ:
2. Հր.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1951, մաս II:
3. Տ.Մ.Ավետիսյան, Հայոց ազգանունների բառարան, Երևան, 2000:
4. Տ.Մ.Ավետիսյան, Հ.Վ.Բարխուդարյան, Հ.Պ.Հարությունյան, Նորահայտ ազգանուններ, Գիտական նյութերի ժողովածու, Վանաձոր, էջ 59, 2004:
5. Турецко-русский словарь, Москва, 1977:

**ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՊԱԿՑՄԱՆ ՈՉ ՃԻՇՏ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐ ԱՐԴԻ ՄԱՍՈՒԼՈՒՄ**

«Նախադասությունների կապակցությունն իր բաղադրիչների սոսկական գումար չէ ոչ կառուցվածքային, ոչ բովանդակային առումներով, այլ շարահյուսական կառույց է՝ իր քերականական, բառական, հնչերանգային ներքին օրինաչափություններով» (1, 221):

Ժամանակակից լեզվաբանությունը նախադասությունների կապակցությունը դիտարկում է թե՛ բարդ նախադասությունների ներսում՝ որպես բաղադրիչների կապակցության, թե՛ անկախ, ինքնուրույն նախադասությունների միջև՝ որպես խոսքի հատվածների կապակցում: Ընդ որում, երկրորդ դեպքում կիրառվում են ինչպես բարդ նախադասության բաղադրիչներին հատուկ լեզվական միջոցներ, այնպես էլ բառային, շարահարական և լայն առումով հնչերանգային այլ կարգի միջոցներ:

Բացի բառական միջոցներից նախադասությունների կապակցումը կատարվում է նրանց արտահայտած մտքի ներքին կապով, շարադասությամբ, լայն առումով՝ հնչերանգով:

Բարդ նախադասության կառուցվածքում համադաս և ստորադաս հարաբերություններն արտահայտվում են բառական միջոցներով (շաղկապներ, հարաբերական բառեր) և շարահարությամբ:

Բոլոր շաղկապները մասնակցում են նախադասությունների կապակցմանը (համադասական հարաբերությունն արտահայտվում է համադասական շաղկապներով, իսկ ստորադասականը՝ ստորադասական շաղկապներով, ինչպես նաև հարաբերական բառերով):

Հոլվածում մենք նպատակ ենք դրել հիմնականում համառոտակի անդրադառնալ բարդ նախադասությունների բաղադրիչների շարահյուսական կապակցման տարածված սխալների, որոնք նկատել ենք արդի մանուկում:

Ցույց տանք փաստերով.

ա. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված շաղկապների և շաղկապական բառերի սխալ գործածությամբ:

Բարդ համադասական նախադասության (և ոչ միայն համադասական) բաղադրիչ նախադասությունների իմաստային կապը առավել սերտ է վիճում զուգադրական շաղկապների դեպքում: Մինչդեռ արդի մանուկում ոչ միշտ է այս զուգորդումը ճիշտ կատարվում: Այսպես՝ միավորական հարաբերությամբ կապված բարդ համադասական նախադասության բաղադրիչ-

ները, որտեղ չկան հակադրվող եզրեր (մեկի, ժխտում և մյուսի հաստատում), գործածվում են *ոչ միայն այլ* զուգորդումները *ոչ միայն այլև-ի* փոխարեն (սա տարածված սխալ է):

«Ես Ձեզ համարում եմ *ոչ միայն* հայ ժողովրդին մոտ կանգնած անձնավորություն, *այլ*՝ ժողովրդավար և ճիշտ մարդ ու ցանկանում, որ Դուք շարունակեք հեռուստատեսությամբ հաղորդաշար վարել» (Իր., 3.5.2007):

«Ընթերցողը հնարավորություն կունենա *ոչ միայն* տեղեկանալ Հայաստանի աշխատանքային շուկայի մասին, *այլ* սեփական հայտարարությունները տեղադրել աշխատանքի առաջարկի կամ պահանջարկի վերաբերյալ (Աշխ., 1.3.2009):

Հայտնի է, որ որոշիչ ստորադաս նախադասությունը գերադասի հետ հիմնականում կապվում է հարաբերական բառերով *որ(ը)*, *ինչպիսի, որպիսի, ինչ, որքան* և այլն, *որ, քե* շաղկապներով, որոնք, գերադաս նախադասության մեջ ունենալով համապատասխան հարաբերյալներ (ձևական որոշիչներ), կազմում են զուգորդումներ՝ *այն.... որ(ը), այնպիսի.... ինչպիսի, այնքան.... որքան* և այլն:

Մինչդեռ արդի մամուլում հաճախ որոշիչ ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է *ով* հարաբերական բառով, եթե որոշվող գոյականն անձ է կամ հատուկ անուն (հիարկե, առանց հարաբերյալի):

Այսպես՝ «Երգչին, *ով* գնում է «Եվրատեսիլ պետք է անպայման պրոֆեսիոնալներն ընտրեն» (Առ., 27.4.2007): «Հայտնվեց բեյրութահայ երիտասարդ բարերար Պիեռ Գույումջյանը, *ով* Մատենադարանին նվիրեց իր գնած թվայնացման սարքը» (Իսկ. իր., 29.6.2007): «Բյուրեւելում է գտնվում ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Արմեն Բայբուրդյանը, *ով* նաև հանդիպումներ է ունեցել ԵՄ կառույցներում» (ՀՀ, 3.2.2007):

«Ի դեմս Գագիկ Շառուկյանի տեսնում էին *այն* հզոր մարդուն, *ով* իրենց կալաշտպանի» (Փակ., 19.4.2007):

Հմմտ. «Նա կամ պետք է տեր կանգնի այն վստահության քվեին, *որ* իրեն տալիս է հասարակության զգալի մասը» (նտ):

«Շնորհավորական ուղերձը, որում մասնավորապես նշվում էր, որ Վ. Հակոբյանը մանկավարժ է, *ով* շարունակում է սերունդներին փոխանցել իր գրքերն ու փորձը...» (ՀՀ, 29.10.20008):

«Չարմանալիորեն նա դարձավ առաջինը, *ով* ներկուսակցական հարցերը «լուծեց» դատ ու դատաստանի միջոցով» (Իր., 27.2.2007):

Հանդիպում ենք նաև շաղկապի և շաղկապական բառի սխալ գործածությունների հետևյալ օրինակներում.

Այսպես՝ «Նա երբեք չէր լուծում հարցն իր անձնական շահի տեսանկյունից *և* քանի որ ներկայացնում է կուսակցություն» (Իր., 3.5.2007):

«Այդ օրը օպերայում տեղի է ունենալու «Հատուկ նշանակության երգի» անունը կրող համերգը, իսկ դրսի վրանը, խոհանոցն ու ավտոբուսները բեր-

վել են միայն մի նպատակով, որպեսզի համերգի մասնակիցները մինչև դաիլիժ մտնելը տեսնեն *Լ ընդամենը*» (Հայկ. ժամ., 5.4.2007):

Դիշտ չէ մաս *Լ* շաղկապի գործածությունը հետևյալ պարզ նախադասության մեջ.

Այսպես՝ «Ժամերով շուռումուռ եմ գալիս անկողնու մեջ *Լ* մինչև լուսաբաց» (Առ., 29.3.2009):

Ինչպես գիտենք, *ու* միավորիչ շաղկապը գործածվում է ավելի փոքր լեզվական միավորներ կապելու համար, իսկ *Լ-ը*՝ ավելի մեծ լեզվական միավորներ: Միշտ չէ, որ արդի մամուլում դրանք ճիշտ են կիրառվում: Բերենք թեկուզ մի օրինակ, որտեղ բարդ նախադասության մեջ և՛ նախադասության անդամները, և՛ բաղադրիչ նախադասությունները կապված են *ու* միավորիչ շաղկապով:

Այսպես՝ «Հանդիսատեսը մի փոքր վրդովված էր, որ ներկայացումների բուկլետներն *ու* բնութագրերը անգլերեն են, *ու* իրենք չեն կարող հասկանալ օտար լեզվով խաղացվող ներկայացումները» (Առ., 13.8.2008):

Սխալ են մաս շաղկապների գործածության հետևյալ դեպքերը.

Այսպես՝ «*Ինչքան* էլ Պոռուսեն զրկվել է էստոնացիների հետ պաշտոնական հանդիպումներից առաջ մեր հավաքականի լավագույն կազմը փորձարկելու հնարավորություններից, բայց, ինչպես ասում են, չկա չարիք առանց բարիքի» (Ֆուտ., 11.2.2009):

Դիշտ է՝ Թեև Պոռուսենը զրկվել է...

Կամ՝ «Իր նախագահության առաջին 50 օրվա ընթացքում Բարաք Օբամայի վարկանիշն ընկել է ավելի արագ, *քանի* նույն ժամանակահատվածում Ջորջ Բուշինը» (Առ., 17.3.2009) (գուցե և վրիպում է, սակայն հանդիպել ենք մի քանի օրինակների):

«Այստեղ են սովորել մեր երկրի երաժշտական աշխարհի բոլոր մեծերը, բացառություն է միայն Արամ Խաչատրյանը, *այն էլ, քանի որ* նա ծնվել է Թիֆլիսում» (Իր., 12.2.2007):

Դիշտ է՝ Խաչատրյանը, քանի որ նա ծնվել է Թիֆլիսում:

Ուղիղ խնդիր ստորադաս նախադասությունը գերադասի հետ կապվում է *որ* մեկնական շաղկապով և ոչ թե՝ *որպեսզի* նպատակային շաղկապով:

Ինչպես՝ «Կամենում ես, *որպեսզի* մարդիկ հանդուրժող լինեն մեր երկրում» (Իր., 10.3.2008):

«Կարծում եմ, *որպեսզի* ճգնաժամը շրջանցի մեր երկիրը, այնքան էլ հավանական չէ» (Առ., 16.4.2009):

բ. Ոչ ճիշտ ձևեր՝ պայմանավորված քերականական միջոցների սխալ գործածությամբ:

Նախադասության կապակցման քերականական միջոցներից է շարահարությունը, որի դեպքում չկան բառական միջոցներ: Այստեղ դեր են կա-

տարում բաղադրիչ միավորների միջև փոքրիկ դադարը, հնչերանգը, շարահատությունը, իմաստը: Ի տարբերություն բառական միջոցների՝ այդ դերն առավել նկատելի է:

Արդի մամուլում առանց շաղկապի բարդ համադասական նախադասության բաղադրիչները, որտեղ կարևոր է դադարից կախված նրանց ինքնուրույնությունը կամ մեկը մյուսի մեկնաբանություն լինելը, ճիշտ չեն տրոհվում (միջակետի փոխարեն՝ ստորակետ):

«Կաթսայատունն աշխատում է կեսից էլ պակաս հզորությամբ, վերանորոգել են հին սարքավորումներով (168 ժամ, 18.9.2008):

Կամ՝ «ՀՀ հավաքականը կորուստներ ունի, իրենց խաղընկերներին չեն միացել ռումինական «Պոլիտեխնիկա» ակումբի ներկայացուցիչներ Արման և Արտավազ Բարամյանները» (Հայկ. ժամ., 28.5.2008):

գ. Ոչ ճիշտ շարահյուսական կառույցներ՝ պայմանավորված սխալ քարգմանությամբ:

Նախադասությունների կապակցման բուն քերականական միջոցներից է նաև շարահատությունը: Այն կարևոր է նախադասությունների իմաստալին-քերականական փոխհարաբերությունն արտահայտելու համար:

Արդի մամուլում հաճախակի են հանդիպում շարահյուսական այնպիսի կառույցներ, որոնք այլ լեզուներից նույնությամբ են ընդօրինակվում և հայերենում ընդունելի չեն:

Բերենք մամուլից քաղված մի օրինակ, որտեղ չկա որոշակի շարադասություն՝ պատճառահետևանքային, նպատակային հարաբերություններն արտահայտելու համար, ինչպես նաև անկապակցություն է օրինակի առաջին պարբերությունը:

Այսպես՝ Կանանց միջազգային օրվա առթիվ ուղերձ է հղել ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը

«Շատ հասարակություններում արգելում են կանանց նկատմամբ բռնությունները. մինչդեռ իրողությունն այն է, որ շատ հաճախ այն թաքցվում է կամ էլ անձայն համակերպվում:

Ահա թե ինչու է Կանանց միջազգային օրն այդքան կարևոր: Այն պարզաբանում է մեր պատասխանատվությունը՝ աշխատելու հանուն տևական փոփոխության արժեքների և վերաբերմունքի բնագավառներում» (ՀՀ, 8.3.2007):

Ոչ ճիշտ շարահյուսական կառույցներ՝ կրկին սխալ քարգմանությամբ պայմանավորված:

Ինչպես՝ «Սակայն այդ ճգնաժամից հետո նրանց միջև սկիզբ առավ մերձեցման մի գործընթաց, որը 21-րդ դարի սկզբին բերեց այդ երկրների միջև գոյություն ունեցող հարաբերությունների աննախադեպ բարձունքներին» (Առ., 10.2.2007):

Կամ՝ «Միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մատնանշմամբ, զլոբալ ճգնաժամը կարող է ազդել հազարամյակի զարգացման նպատակներին մինչև 2015 թ. հասնելու երկրի կարողության վրա» (ՀՀ, 15.3.2009):

Բերենք մամուլից քաղված այլ օրինակներ (ոչ թարգմանությամբ), որտեղ շարադասության խախտումը հանգեցրել է նախադասության մտքի աղավաղման:

Այսպես՝ «Ես այդ բեմայով չեմ կարող խոսել, ես պարզապես ասում եմ, որ մենք ունենք *շատ հզոր տնտեսությունից հասկացող առաջնորդ*, միայն այդպանը կարող եմ ասել» (Հայկ. ժամ., 14.1.2009):

Պատգամավորի խոսքից ստացվել է այնպես, որ մեր տնտեսությունն է հզոր, մինչդեռ նրա ասածը վերաբերում է կուսակցության առաջնորդին և ոչ թե՝ տնտեսությանը:

Դիշտ է՝ մենք ունենք տնտեսությունից շատ լավ հասկացող առաջնորդ:

«*Բարեփոխումների մեր սկսած շարքը* նպատակ է հետապնդում, այո, համալրել պետական բյուջեն» (Հայոց աշխ., 20.9.2008):

Դիշտ է՝ Մեր սկսած բարեփոխումների շարքը նպատակ է հետապնդում,

«Նման օրինակներ այսօրվա կյանքից կարելի է բազմաթիվ բերել» (Հայկ. ժամ., 18.7.2008):

Դիշտ է՝ Այսօրվա կյանքից նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել:

«Ուզում եմ՝ նրան ինչ-որ կերպ օգնել փորձելու համար» (Հայկ. ժամ., 26.12.2007):

Դիշտ է՝ Ուզում եմ՝ ինչ-որ կերպ օգնել նրան՝ փորձելու համար:

«Հիմա ես պատրաստ եմ ներկայացնել զեկույցի տպագիր տեքստը. *չեմ ուզում օրենքը խախտած դուրս գալ*» (Իր., 20.3.2007)

Դիշտ է՝ չեմ ուզում օրենքը խախտել:

«Դա առայժմ նախագիծ է, որն իրականացնելու համար հսկայական *աշխատանք է պետք սկսել*» (ՀՀ, 30.1.2007):

Դիշտ է՝ որն իրականացնելու համար հսկայական աշխատանք է պետք անել:

«Իսկ տաքսիների վարորդները ոչ թե հոգեխանգարված են եղել, ինչպես հավանաբար թվացել է ոստիկաններին, այլ բողոքել են նախօրեին՝ տրանսպորտի և կապի նախարարության սկսած դեղին համարանիշների չունեցող տաքսիների նկատմամբ *սկսած* վերահսկողության կապակցությամբ» (168 ժամ, 8.11.2008):

Քերականական միջոցներից շարադասության ոչ ճիշտ ձևերի ենք հանդիպում նաև պարզ նախադասություններում:

Բերենք մամուլից մի քանի օրինակներ.

«Բաքվի մոտ ամերիկյան կոնդակայվի^օ ավիառազմահանգրվան» (ՀՀ, 13.3.2009):

Ճիշտ է՝ Բաքվի մոտ ամերիկյան ավիառազմահանգրվան կոնդակայվի^օ:

«Սակայն այս թեմայով զրուցեց որոշ հայաստանյան մշակութային օջախների ղեկավարների հետ» (Առ., 28.5.2008):

Ճիշտ է՝ զրուցեց Հայաստանի մշակույթի որոշ օջախների ղեկավարների հետ:

Կամ՝ մշակույթի օջախների որոշ ղեկավարների հետ:

«Հայք» և «Էրեբունի» թիմերին առաջարկում էին հարցեր՝ վերաբերող Հայաստանի պատմությանն ու մշակույթին» (ՀՀ, 17.3.2009):

Ճիշտ է՝ առաջարկում էին հարցեր՝ Հայաստանի պատմությանն ու մշակույթին վերաբերող:

«Այլ կերպ *լինել* չէր էլ կարող լինել» (Հայկ. ժամ., 17.7.2008):

«Երևանի բռնաբռնական» ֆաբրիկայի (ԵԹՖ) արտադրած ձվի գնեքը մոտ 5 դրամով դեռ մի բան էլ իջել են (Առ., 12.4.2007):

Ճիշտ է՝ մոտ 5 դրամ կամ դրանից էլ պակաս իջել են:

Այսպիսով՝ արդի մամուլում նախադասությունների կապակցությունը, ինչպես նաև նրանց բաղադրիչ նախադասությունների կապակցությունը միշտ չէ, որ ճիշտ են իրենց բառական, քերականական, հնչերանգային ներքին օրինաչափություններով:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ս. Աբրահամյան, Հայոց լեզու. շարահյուսություն, Երևան, 2004:
2. Ս. Աբրահամյան, Ն. Պառնապյան, Հ. Օհանյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզու, հ. 3, ՀՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1976:

Համառոտագրություններ

ՀՀ – Հայաստանի Հանրապետություն (թերթ)

Առ. – Առավոտ (թերթ)

Հայկ. ժամ. – Հայկական ժամանակ (թերթ)

Իր. – Իրավունք (թերթ)

Իսկ. իր. – Իսկական իրավունք (թերթ)

նտ – նույն տեղում

Հայոց աշխ. – Հայոց աշխարհ (թերթ)

Փակ. – Փակագիծ (թերթ)

Աշխ. – Աշխատանք (թերթ)

Ֆուտ. – Ֆուտբոլ (թերթ)

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

Ավանդաբար նշվում է, որ մինչև 3 տարեկան երեխաների խոսքի զարգացումը ընթանում է 3 փուլով.

1. մինչխոսքային փուլ (կյանքի առաջին տարի), որում առանձնացվում է 2 ենթափուլ՝ գվգվոց (гуление) և թոթվանք (лепет).

2. լեզվի նախնական յուրացման կամ նախաբերականական փուլ (կյանքի երկրորդ տարի).

3. քերականության յուրացման փուլ (երեք տարեկան):¹

Նշենք, որ առանձնացվող փուլերը, նշվող տարիքները ունեն պայմանական բնույթ: Իրականում յուրաքանչյուր երեխայի ինչպես մտավոր, այնպես էլ խոսքի զարգացումը խիստ անհատական բնույթ ունի, նշվող փուլերի ու ենթափուլերի սահմանները կարող են տատանվել: Այսպես, երբեմն մեկ տարեկան երեխան ազատ խոսում է, ինքնուրույն նախադասություն է կառուցում, իսկ երկու տարեկան երեխան դեռևս միայն առանձին բառեր է արտաբերում:

Գրականության մեջ նշվում են մանկական խոսքի ուսումնասիրության մի շարք եղանակներ: Այսպես, կան ուսումնասիրություններ, որոնցում դիտարկվում է որևէ տարիքի (օրինակ՝ 3 տարեկան) մի խումբ երեխաների խոսքը: Քննվում են այդ տարիքի երեխաների բառապաշարը, գործածած քերականական ձևերը, դերանունների, բայերի գործածությունը, առաջին անգամ լսած բառերի հետագա կիրառությունը և այլն:

Կա նաև այլ մոտեցում, երբ դիտարկվում է միայն մեկ երեխայի խոսքի զարգացումը: Դրա համար հիմք են դառնում օր առ օր կատարած գրանցումները, մայրերի պահած օրագրերի գրառումները: Այս կարգի հետազոտությունները հնարավորություն են տալիս պարզելու երեխայի ընկալումները, հետևելու նրա մտավոր զարգացման ընթացքին: Լեզվականի միջոցով ի հայտ են գալիս երեխայի աշխարհընկալման, ճանաչողության գործընթացում եղած փոփոխություններն ու տեղաշարժերը: Հատկապես կարևորվում է գրանցումներ կատարողի (մայր, հայր, դայակ, տատ, պապ, հետազոտող) դիրքորոշումը. արդյոք նա ճիշտ է ըմբռնում երեխայի արտաբերած բառը, գործածած այս կամ այն բառակապակցությունը, արտահայտությունը, արտաբերած հնչյունախմբերի իմաստը, նրա ռեակցիաները մեծահասակների այս կամ այն խոսքին: Շատ հաճախ երեխային ճիշտ հասկանալը նրա նախորդող փորձին ծանոթ լինելու դեպքում է հնարավոր:

¹ Այս մասին տե՛ս *А.А. Леонтьев, Основы психолингвистики*, էջ 172-189, М. «Смысл» – С. Петербург, «Лань», 2003.

Բերենք մի քանի օրինակ նման դժվարըմբռնելի իրադրություններից, որ հանդիպել է մեր գրանցումների ժամանակ:

Արցախի Առաջածոր գյուղում հյուրընկալվելիս մի հետաքրքիր դեպք տեղի ունեցավ: Հյուրը կապել էր գույնզգույն գնդիկներով շղթա ունեցող մի անսովոր ժամացույց: Ժամացույցի գնդիկների վառ գույները գրավեցին մեկուկեսամյա Ազնեսայի ուշադրությունը: Հյուրը ասաց.

– Նայիր, Ազնեսա, *шарик а, шарик*:

Ազնեսան մոտեցավ.

– Ա՜շու, ա՜շու:

Սկզբում ոչ ոք չհասկացավ, թե երեխան ինչ է ասում:

Հետո ամեն ինչ պարզ դարձավ, երբ իմացանք, որ Ազնեսայենց շան անունը Շարիկ է:

Մի դիտարկում ևս երեխայի այս ասածի վերաբերյալ:

Ղարաբաղի բարբառում շումը հնչում է շոմ ձևով: Բայց քանի որ ընտանիքի անդամները խոսում են բարբառով, իսկ մայրը, որ Հայաստանից է՝ Երևանի խոսակցական լեզվով, երեխան ասում է ոչ թե շոմ, այլ շու: Ն-ի անկումը մանկական խոսքին հատուկ բացավանկության դրսևորում է:¹

Նույն երեխայի բառապաշարում, որն ընդգրկում է մոտավորապես երկու տասնյակ բառ, առկա է մի ընդհանրական բառ՝ կաքիլ, որը նա գործածում է, կարելի է ասել, ամեն ինչի, բոլոր առարկաների, բոլոր գործողությունների իմաստով:

Թե առաջին անգամ երբ, ինչպես, մեծերի որ խոսքերից հետո, ինչ բառի կամ բառախմբի նմանությամբ, աղավաղմամբ կամ աղճատմամբ է ստեղծվել այդ «բառը», ինչ պայմաններում է երեխան սկսել գործածել այն, ծնողները սպառիչ չկարողացան պատասխանել: Ուղղակի այժմ այդ կաքիլ-ն նշանակում է կամ կարող է նշանակել, ըստ շփման իրադրության՝ ուզում եմ, սոված եմ, տո՛ւր (որևէ կոնկրետ բան՝ խաղալիք, որևէ իր), ուզում եմ քնել, ուզում եմ գրկից իջնել, գրկի՜ր: Ընդ որում, նայած թե այդ ցանկությունը որքանով է ուժգին, երեխան բառը գործածում է 1,2,3 և մույնիսկ 4 անգամ:

Ֆրանսիայում բնակվող թոռնուհու՝ երկամյա Էմմայի համար երգեր էի երգում՝ «Լորիկը», «Կաքավիկը»: Հաճույքով լսում էր ու ռիթմիկ շարժումներ անում: Հետո երգեցի.

– Լեպիո լե,լե, լեպիո լե, լե...

Հո դալո ջան, հո դալո ջան, հո դալո,

Աչեր սիրուն դարալո ջան, դարալո:

Մի քանի օր անց ասացի.

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Երևան, 2005, էջ 86:

– Էմմա, ո՞ր երգը երգեմ քեզ համար:

– Լե, լե, կաթիկ, կաթիկ:

Առաջին պահին չպատկերացրի, թե որ երգն է ուզում, ի՞նչ կաթիկ: Հետո միայն հիշեցի, որ ֆրանսերենում lait (արտասանվում է լե) նշանակում է կաթ: Ուրեմն երգի մեջ երեխան լե, լե ձայնարկությունը հասկացել և մտապահել է որպես կաթ:

Բերենք ևս մեկ օրինակ.

Երկու տարեկան 2 ամսական Էմմային մայրը սովորեցնում է ծով - ծովափ, գետ - գետափ:

Քայլում են գետի ափով: Էմման ասում է.

– Ջուր, ջուր, ջուրափ:

Ուրախ-ուրախ կրկնում է իր ասած ջուրափ «բառը»:

Վերլուծելու և պարզելու համար, թե արդյոք այդ բառը ստեղծվեց «ծով - ծովափ, գետ - գետափ» կազմությունների մանրությամբ, անհրաժեշտ է նաև հաշվի առնել երկլեզու միջավայրը. ֆրանսերենում կա *bord de l'eau* արտահայտությունը: Այսպիսով, դժվար է պատճառաբանել ջուրափ-ի ստեղծման պայմանները. ֆրանսերենի *bord de l'eau*-ի թարգմանությունն է, թե՞ ծովափի, գետափի մանրողությամբ ստեղծված «բառ»:

Բառերի և արտահայտությունների իմաստի, խոսքի շղթայի միավորների յուրովի ընկալումը երեխայի կողմից:

Դիտարկենք հետևյալ օրինակը:

Ոսկի աշուն էր: Նստած էինք բակում՝ նստարանին:

– Լիլի՞թ, տերևներ հավաքիր ու քեք, – ասացի ես:

Լիլիթը դեղին, կարմիր տերևներ հավաքեց, տվեց ինձ: Ապա վազեց հենու:

– Լիլի՞թ, ու՞ր ես գնում:

– Գնում եմ ուրեր հավաքեմ:

– Ինչ հավաքե՞ս:

– Ուրե՞ր հավաքեմ, ուրե՞ր:

Խոսքի շղթայի միավորների անսպասելի, յուրօրինակ ընկալման ու չազրավ մնուշ է սա:

Բերենք մեկ այլ օրինակ ևս: Մեծերի խոսակցությունից մի երեխա լսում է «Белочка» բառը և հարցնում.

– Բեյլլ չկա՞, Բեյլլ չկա՞:

Դարձվածքների գործածությունը մանկական խոսքում: Երեխաները անմիջական, բառացի են հասկանում դարձվածքները, լեզվի կայուն, քարացած կապակցությունները, խոսքային բանաձևերը, փորձում են դրանք յուրովի մեկնաբանել: Նրանց միտքը դեռ ազատ է, կադապարված չէ քարացած կապակցություններով, խոսքային զանազան բանաձևերը, կապակ-

ցություններն ու արտահայտութիւնները չեն կաշկանդում երեխային: Ահա մի քանի օրինակ.

*

– Լիլիթ, քունդ տանում է:

Ջարմացավ.

– Ո՞ր ա տանում (Լիլիթ, 3.5 տարեկան):

*

– Էնքան ծիծաղեցի, ուշքս եկավ: (Թամար, 3 տարեկան)

*

– Էս դանակը խուլ ա՞, չի կտրում (Լիլիթ, 4 տարեկան):

*

– Արևը մայր մտավ, գնաց իրա մամայի մոտ: (Սերգեյ, 2.5 տարեկան)

*

Երեքամյա Մարինեն, լսելով մեծերի զրույցը՝ մի երկու օր էլ յոլա կզնանք, ասում է.

– Ես էլ եմ գալիս յոլա:

*

– Մամ, խնձոր եմ ուզում,– ասում է 4-ամյա Էվելինան:

– Խնձորները ցուրտը տարել է:

– Չի տարել, տե՛ս, սեղանին դրված են:

*

– Ձյուն է գալիս, Աշոտիկ:

– Ձյունը ոտքեր ունի՞:

*

4 տարեկան Հրանտը ասում է.

– Մամ, լույսը փակվեց, գնանք:

*

Երեխան թվարկում է գույները.

– Կարմիր, կապույտ, բաց կանաչ, փակ կանաչ:

*

Պապիկն ու քեռին նարդի են խաղում: Խաղի վերջում քեռին ասում է.

– Գալու՛տ ջան, տարա պապիկին:

– Ո՞ր ես տանում պապիկին, քեռի՛:

Հատկապես դարձվածքների բառանյութի քննության ժամանակ են ակնհայտ դառնում մանկան դեռևս չկադապարված, լեզվական սովորույթից, օրենքներից, ընդունված նորմերից ազատ մտքի ելևէջները:

Մանկական ստուգաբանություններ: Երեխան դիտում է շրջապատը, աշխարհը, մարդկանց: Փորձում է հասկանալ իր շուրջը կատարվող երևույթները. մտածում է, պատճառահետևանքային կապեր է որոնում

առարկայի, երևույթի անվանման և բնույթի միջև, ընդհանրացումներ է անում:

*

- Երեխաներ, եկեք, սպանախ ենք ուտելու:
- Սպանախը ո՞րն է, որ սպանում ե՞մ (Տիգրան, 5 տարեկան):

*

- Իմ պապան հայր է՞:
- Այո՛:
- Ուրեմն հայ է (Աշոտ, 4 տարեկան):

*

- Մարիամ, ջան, ասա՝ Քոչարյան Մարիամ:
- Իմչարյան Մարիամ (Մարիամ, 3 տարեկան):

Հաճախ երեխան հայերեն բանավոր խոսքում առկա օտար բառերը բացատրում, ստուգաբանում է հայերենի իմաստներով: Յուրովի ստուգաբանում է անձնանունները և տեղանունները: Դիտարկենք հետևյալ օրինակները:

*

- Մա՛մ, էս ի՛նչ ա:
- Վազելին:
- Որ դեմ գետնին, կվազի՞: (Նարեկ, 3,5 տարեկան)

*

- Երեքամյա Սասունը մորը «տղղում» է.
- Վազելին չի, սխմելին ա:

*

- Հատակին նրա համար են ասում պարկետ, որովհետև վրան պառկու՞մ են: (Թամար, 3 տարեկան)

*

- Մուլտիկինիկացիոն կինոնկար: (Արուսյակ, 5 տարեկան)

*

- Ցույց է տալիս տուփը, որի վրա գրված է «мыка»:
- Սրա մեջ մուկ կա՞: (Տիգրան, 5 տարեկան)

*

- Մեր խմբում մի տղա կա, անունը մի քալլ ա:

*

- Էդ աղջիկը չաղ ա, դրա համար ե՞մ անունը դրել լեն ա: (Աշոտ, 6 տարեկան)

Հետևյալ օրինակում, ընդհակառակը, հայերեն բառի մեջ երեխան «գտնում է» ռուսերեն արմատ:

4,5 տարեկան Անին հարցնում է.

– Ռուսերեն ո՞նց կլինի՝ կատու:

– Кошка:

– Ես էլ ասում եմ ինչի՞նչ ասում կոշկավոր կատու:

Բազմիցս հանդիպել է հարխա բառի հավխա ձևը, որ երեխաները գործածում են ստուգաբանության հետևանքով: Տուրապսե բառը երեխան գործածել է տուաման ձևով, Նեղոս բառի մեջ ընկալել է նեղ ածականի իմաստը և գործածել է Լայնոս բառը:

– Մամ, էդտեղ լիքը բանան կա, դրա համար են ասու՞մ Լիբանան,– հարցրել է Մարիամը:

– Մամ, որ դու ռուս ըլներիր, քեզ կասեին Ռուսկոյ՞2,– Հայկուշին հարցրել է տղան՝ Սասունը:

Երկլեզվությունը և երեխաները: Առավել դժվար լեզվավիճակ է այն երեխաների համար, ովքեր մեծանում են երկլեզվության պայմաններում: Ահագնացած արտագաղթի հետևանքով այլ երկրներում (ԱՄՆ, Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա և այլն) հայտնված կամ այնտեղ ծնված հայ երեխաների համար լեզվավիճակը բարդ է: Ընտանիքում նրանք լսում են հայերեն, իսկ ամենուր՝ փողոցում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, մանկապարտեզում, խանութում, տրանսպորտում՝ օտարալեզու խոսք: Հաճախ նաև ընտանիքի անդամներից էլ խոսում են օտար լեզվով: Այստեղ գործ ունենք վաղ երկլեզվության երևույթի հետ: Որպեսզի երեխան լիարժեք տիրապետի և՛ մայրենիին, և՛ տվյալ հանրության լեզվին, «չխառնի» լեզուները, նրա հետ պետք է շփվել «մեկ անձ – մեկ լեզու» սկզբունքով¹:

Գրական ստեղծագործությունը և փոքրիկը: Ինչպե՞ս է ընկալում փոքրիկը հեքիաթները, բանաստեղծությունները, երգերը: Այստեղ էլ նա պրպտող է, հետազոտող, յուրովի իմաստավորում է լսածը, ուզում է հասկանալ անհասկանալին, բացատրել անբացատրելին, նոր բառեր է «ստեղծում», պայմանականություններ չի ընդունում:

*

Տատիկը կարդաց «Չոփչոփիկը» հեքիաթը:

Հաջորդ օրը Արփինեն խնդրեց.

– Տատիկ, «Լողլողիկը» կարդա:

*

4,5 տարեկան Էմման ասում է մորը.

– Շատրվանը երգիր, էն, որ ջուր է գալիս, փրփրում:

¹ Տե՛ս Н.В. Имедадзе, Экспериментально-психологическое исследование овладения и владения языком. – Тбилиси, 1979.

Նույն ձևով Սերգեյը խնդրում է նորից կարդալ «Ջերմաչափիկի» հեքիաթը, «Կարմիր գլխաշորը», Արուսիկը՝ «Շունի գանգատը», իսկ Լիլիթը ասում է, որ տատիկի տանը տեսել է «Բժիշկ Աբրոցիտը» գիրքը:

«Չարի վերջը» լսելիս, երբ աղվեսը ասում է՝ գնամ կացինը քերեմ, ծառը կտրեմ, 4,5 տարեկան Գագիկը ամեն անգամ լաց է եղել և միջամտել՝ չկտրե՛ս, չկտրե՛ս:

Մայրը ոտանավոր է սովորեցնում Սասունին.

– Սասնու՛կ ջան, ասա՛, բժի՛շկ, բժի՛շկ, ե՛կ մեր տուն:

Սասունը ասում է.

– Չէ՛, չեմ մըսել:

Ինչպես տեսնում ենք, երեխան անմիջական է ընկալում ասվածը, պատմածը, գրական ստեղծագործության պայմանականությունը չի ընդունում, պատմվող գործողություններին անմիջական ձևով մասնակցում է:

3-ամյա Արամը «Գիքորը» լսելուց հետո լաց լինելով դիմում է պապիկին.

– Պապի՛կ, նորից պատմի, բայց բոլ Գիքորը չմեռնի, իրա հոր հետ գնա իրանց տուն:

Մանկական խոսքի ուսումնասիրությունը, տարբեր լեզուների տվյալների համադրումը, ընդհանուր օրինաչափությունների վերհանումը մեծ չափով կնպաստեն մի կողմից՝ լեզվի ուսումնասիրությանը առհասարակ, մյուս կողմից՝ երեխայի աշխարհընկալման, մտավոր զարգացման դիտարկմանը: Հ. Պիաժեի, Մ. Բրեյնի, Ռ. Բրաունի, Դ. Մակլինի, Ի. Շլեզինգերի, Ա. Լուրիայի, Ա. Ա. Լեոնտևի, Ա. Շախնարովիչի, Դ. Սլոբինի և այլոց աշխատությունները¹ լույս են սփռում այնպիսի բարդ և բազմաչափ երևույթի առանձնահատկություններին, ինչպիսին երեխայի առաջին տարիների լեզվական վարքն է:

¹ Մատենագիտական աղբյուրների ընդարձակ ցանկը տես՝ А.А. Леонтьев, Основы психолингвистики, էջ 186-188:

ԶՈՒԳԱԶԵՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՐԲԱՆՆԵՐԻ ԽՈՆԱՐՀՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հայերենի մի շարք բարբառների բնորոշ է զուգաձևություններ ներկայի և անկատարի հարացույցներում: Դրանք սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը կազմելիս կիրառում են ձևաբանական այնպիսի միջոցներ, որոնք բնորոշվում են իմաստային համարժեքությամբ և ձևային տարաբեկությամբ: Նյութի դիտարկումից պարզվում է, որ բայական համակարգում առկա զուգաձևությունները զուրկ են բացարձակ միօրինակությունից և անհամասեռ պատկեր են ներկայացնում ոչ միայն ըստ տարածական բնութագրի, այլև միևնույն բայական հարացույցի ներսում:

Հիշյալ բարբառային միավորները կարելի է դասակարգել երկու հիմունքով՝ մի դեպքում նկատի ունենալով ներկա և անցյալ անկատար բաձևերի նյութական արտահայտությունը, մյուս դեպքում՝ խառնման, համադրման աստիճանն ու բնույթը:

Ըստ երկրորդ հիմունքի կունենանք բարբառային միավորների 5 խումբ, որոնցում առկա են զուգաձևություններ՝

ա/ լծորդությամբ պայմանավորված /Կաքավաբերդի խոսվածքներ, Ագուլիս/

բ/ բայական սեռով պայմանավորված /Նոր Զուղա/

գ/ նույն բայի տարբեր դեմքերով պայմանավորված /Արեշ և Խոյի խոսվածքներ/

դ/ սկզբնահնչյունով պայմանավորված /Խոտրջուր, Արամո/

ե/ նույն բայի դեպքում /Թբիլիսի, Արդվին, Սասունի որոշ խոսվածքներ/ Ելնելով ներկայի և անցյալ անկատարի կազմության նյութական արտահայտության ձևերից՝ կարելի է առանձնացնել բարբառային 3 տարածք՝

ա/ դերբայակազմ

բ/ դերբայակազմ-մասնիկավոր

գ/ գրաբարատիպ-մասնիկավոր

Ի դեպ, այս բաժանումը կատարվում է՝ նկատի ունենալով միայն դրական /ոչ շրջում, ոչ ժխտական/ կազմությունները:

Դերբայակազմ տարածքը ընդգրկում է Կաքավաբերդ, Ագուլիս, Արեշ, Խոյ /մի շարք բնակավայրեր/ բարբառային գոտին, որտեղ ներկայի և անկատարի իմաստն արտահայտելու համար կիրառվում են դերբայական տարբեր ձևեր: Կաքավաբերդում զուգաձևությունները պայմանավորված են լծորդությամբ: Այսպես՝ ի, ե լծորդության բայերն ունենում են -ում /ըմ/,

իսկ ա լծորդության բայերը՝ -լիս վերջավորությամբ դերբայ: Վերջինս առանց հնչյունափոխության պահպանված է Վարիավարի և Գուդեմնիսի խոսվածքներում, իսկ Կուրիսում և Ագարակում առկա է -լիս ձևությամբ փոփոխակը՝ խըմում ըմ // իրվալիս ըմ, խըմում ըս // իրվալիս ըս, խըմում ա // իրվալիս ա /ՎԱՐՀԱՎԱՐ - ԳՈՒԴԵՄՆԻՍ/ և խըմում ըմ // իրվալիս ըմ, խըմում ըս // իրվալիս ըս, խըմում ա // իրվալիս ա /ԿՈՒՐԻՍ - ԱԳԱՐԱԿ/ /Հ. Մուրադյան, 1967, էջ 138, 145/:

Ներկայի նմանատիպ կազմություն է առկա նաև Նախիջևանի /նախ-կին Գողթն գավառ/ Ագուլիս, Բիստ, Յոնա, Ռամիս, Փառակա բնակավայրերում: Հիշյալ վայրերում, սակայն, լիս ձևությամբ դերբայ ունենում են ա լծորդության բայերը /Ագուլիսում՝ նաև ի լծորդության մի շարք բայեր՝ խուսիլ. հաջիլ, ճընանչիլ, ըմանչիլ, իրվատիլ/: Մյուս բայերը ներկան և անկատարը կազմում են ում-ով անկատարով կամ նրա փոփոխակներով, այսպես՝ սա՛յրամ ըմ, սա՛յրամ ըս, սա՛յրամ ա, սա՛յրամ ըք, սա՛յրամ ըք, սա՛յրամ ըն /Հայերենի բարբառագիտական ատլասի նյութեր /այսուհետ՝ ՀԲԱՆ/, Ագուլիս, 22/:

Արեշի բարբառը, ի տարբերություն նախորդների, բայական նույն միավորի դեպքում է գործառնում ըմ և լիս ձևությամբ բայաձևեր. լիս-ովը՝ եզակի 1-ին դեմքում, ում-ովը՝ մնացած դեմքերում, ինչպես՝ ապրե՛լիս ըմ, ապրե՛լում ըս, ապրե՛լում ի, ապրե՛լում անք, ապրե՛լում աք, ապրե՛լում ան /Ա. Լուսինց, 1982, էջ 103/:

Սրանցում դերբայական նույնարժեք ձևերի գործածությունը կարելի է մեկնել հետևյալ կերպ:

Հիշյալ տարածքը բարբառների համատարած շղթայում առանձնանում է ենթադրական ապառնիի կազմությամբ: Դրանց խոնարհման հարացույցում բացակայում է կու/կը մասնիկը, և ենթադրական եղանակի ժամանակաձևերին բնորոշ է անորոշ դերբայ+օժանդակ բայ կադապարային կառույցը՝ խըմիլ իմ, խըմիլ իս, խըմիլ ա /Մուրադյան, 1967, էջ 140/:

Նշված խմբում հավանաբար նախապես անորոշ դերբայ և օժանդակ բայ կադապարը ունեցել է երկակի արժեք՝ արտահայտելով ինչպես խոսելու պահին կատարվող, այնպես էլ կատարվելիք գործողություն: Հետագայում ներկա և ապառնի բայաձևերը տարբերակելու միտմամբ կիրառվել են լիս-ով կազմությունները, իսկ անորոշով բայաձևերը, դառնալով միարժեք, գործառնել են միայն ապառնիի իմաստն արտահայտելու համար: Ավել ուշ Ում ճյուղի բարբառների համաբանությամբ սկսել են գործածվել նաև ում-ով ներկան և անկատարը: Կարելի է ենթադրել, որ դերբայակազմ խմբում ներկայի և անկատարի լիս-ով ձևերը նախնական են, իսկ ում-ովը՝ հետագա ազդեցություն: Թերևս նույնիմաստ ձևերի կիրառությունը հանգեցրել է նրան, որ նոր ներկան և անկատարը աստիճանաբար դուրս են մղել հինը և ձեռք բերել ավելի լայն գործածություն: Այսպես՝ Կաքավաբերդում և Նախիջևանի նշված վայրերի խոսվածքներում նախնական լիս-ով ներկան և

անկատարը, ինչպես արդեն ասվել է, պահպանված են ա լծորդության բայերում, իսկ Արեշում՝ եզակի առաջին դեմքում:

Նոր Զուղայի տարածքում ներկայի և անկատարի հարացույցում ում-ով դերբային զուգահեռ գործածվում է ման-ով ձևը: Վերջինիս գործառության միակ ոլորտը այս բարբառն է: Դերբայական մույնարժեք ձևերի առկայությունը այստեղ պայմանավորված է սեռային տարբերությամբ: Ում-ով դերբայ ունենում են ներգործական, իսկ ման-ով՝ կրավորական, չեզոք և կրավորակերպ չեզոք բայերը, այսպես՝ սիրում ամ, սիրում աս, սիրում ա, սիրում անք, սիրում աք, սիրում ան, սակայն՝ այրման ամ, այրման աս, այրման ա, այրման անք, այրման աք, այրման ան /Հ. Աճառյան, 1940, էջ 28/:

Դերբայակազմ խմբի մեջ են մտնում նաև Խոյ-Սալմաստ տարածքի որոշ խոսվածքներ: Դրանք խոնարհման հարացույցում գործառում են դերբայական երկու ձև՝ ել-ով կամ ալ-ովը՝ եզակի 3-րդ դեմքում, իսկ մնացած դեմքերում՝ լիս-ով դերբայի ս վերջնահինչյունով փոփոխակը, այսպես՝ սիրաս էմ, սիրաս էս, սիրալ ի, սիրաս էհյ, սիրաս էհյ, սիրաս էն /ՀԲԱՆ, ԽՈՅ, ՄԵՅՐԱՎԱՐ, 173/: Հավանաբար ել /ալ/-ով տարբերակը նախնական անորոշով ներկայի և անկատարի վերապրուկային արտահայտությունն է:

Դերբայակազմ-մասնիկավոր տարածքը ընդգրկում է Թբիլիսի, Արդվին, Սասուն /որոշ խոսվածքներ/ բարբառային գոտին: Այստեղ ներկայի և անկատարի իմաստն արտահայտելու համար զուգահեռաբար գործածվում են դերբայով և կու եղանակիչով կազմություններ:

Ղարիբյանը, ուսումնասիրելով Սայաթ-Նովայի և Սունդուկյանի լեզուն, նկատել է, որ Թբիլիսիի բարբառում ներկայի և անկատարի խոնարհման հարացույցում ում-ով դերբային զուգահեռ գործածվում են կու-ով կազմություններ, ընդ որում «Օրինակները այնքան շատ են, որ կարելի է մույնիսկ ասել, թե կու մասնիկով կազմված ներկան շատ ավելի հաճախ է գործածվում, քան անկատար դերբայով, ուստի ամենայն իրավամար Թբիլիսիի բարբառը կարելի է գետեղել նաև Կը ճյուղի մեջ, այդ պատճառով մենք այն կոչում ենք միջճյուղային բարբառ» /Ա. Ղարիբյան, 1953, էջ 276/:

Իրոք, Սայաթ-Նովայի ստեղծագործություններում ում-ով դերբային զուգահեռ կան կու/կը-ով ներկայի և անկատարի բազմաթիվ օրինակներ.

Շատ մառք կօսե՝ թե յար ունիմ...

Գուզիմ թըռչի բլբուլի պես...

Էրեսըդ տեսնելու գու քան քաղաք քաղքով, գիդ գիդի պես.

Մեռնօղն քիզմեն կու առնե անմահական դիդ դիդի պես.

Իփի տիդեմէդ ժաժ իս գալի, շըխշըխկում իս ջիդ ջիդի պես.

Ի՞նչ կօնիս սանթուր, քամանչեն, զուքսըդ չանգուր չանգ իս անում /Սայաթ-Նովա, 1914, էջ 64-80/:

Նույնը չի կարելի ասել Սունդուկյանի լեզվի մասին, որտեղ գերակշռող դերբայակազմ ձևն է, որը թերևս Ում ճյուղի բարբառների լեզվական միջավայրի ազդեցության հետևանք է:

Հավանաբար Թիֆլիսի բարբառի բայական համակարգում նույնի-մաստ ձևերի զուգահեռ գործածությունը նախնական կու-ով ներկայի և անկատարի պահպանման արդյունք է: Այստեղ էլ, ինչպես մյուս բարբառներում, կա-տարվել է նույն տեղաշարժը. ներկա և ապառնի իմաստների տարբերակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ հավանաբար Ում ճյուղի բարբառների ազդեցությամբ գործածվել է ում-ով դերբայը, իսկ կու-ով կազմությունները գործառել են ապառնի իմաստով: Սակայն քերես Թիֆլիսի բարբառում ներկայի և անկատարի նորակազմ ձևերից հետո էլ շարունակել են ներկայի իմաստով կիրառվել կու-ով կազմությունները՝ ավելի սակավ գործածությամբ: Եվ քանի որ Սունդուկյանը ժամանակագրական առումով հաջորդել է Սայաթ-Նովային, այդ պատճառով էլ աստիճանաբար գործածությունից դուրս եկող մասնիկավոր կազմությունները նրա մոտ հաճախադեպ չեն:

Նույն երևույթն է առկա Արդվինում: Այստեղ, սակայն, կու-ով կազմություններին զուգահեռ գործածվում են լիս դերբայով ձևեր, ընդ որում, ինչպես նախորդ տարածքում, Արդվինում նույնպես կու-ով կազմությունները սակավադեպ են: Հավանաբար այստեղ ևս մասնիկավոր ձևերի առկայությունը պայմանավորված է նույն գործոններով, ինչ Թիֆլիսում:

Սասունի որոշ խոսվածքներում /Հոսներ, Արփի/ ներկան և անցյալ անկատարը բնորոշվում են նախամասնիկավոր և դերբայական ձևերի զուգահեռ գործածությամբ, այսպես՝ սիրիլ իմ, սիրիլ իս, սիրիլ ը, սիրիլ իք, սիրիլ իք, սիրիլ ին // գըսիրըմ, գըսիրըս, գըսիրը, գըսիրըք, գըսիրիք, գըսիրին /Հայերենի բարբառագիտական ատլաս /այսուհետ՝ ՀԲԱ/, 1985, էջ 15-16/:

Վերոբերյալ օրինակներում *սիրիլ իմ և գըսիրըմ* բայաձևերը համարժեք են, այսինքն՝ ունեն միևնույն *«սիրում են»* իմաստը:

Քանի որ Սասունի գյուղերը հեռու են Լ ճյուղի այսօրվա գրաված տարածքից, որով և բացառվում է դրանց լեզվական ազդեցությունը, մնում է միայն կարծել, որ Սասունի հիշյալ վայրերի խոսվածքները իրենց մեջ վերապրուկային ձևով մինչև այսօր էլ պահպանում են անորոշով ներկան, որը միջին դարերում այս վայրերի համար եղել է ներկայի արտահայտության հիմնական կամ քերես միակ միջոցը:

Գրաբարատիպ-մասնիկավոր տարածքի բարբառային միավորների /Խոտրջուր, Արամո/ ներկան և անկատարը բնորոշվում են մասնիկավոր և գրաբարածև կազմությունների զուգահեռ գործածությամբ:

Սահմանական ներկայի և անկատարի գրաբարատիպ կազմությամբ Խոտրջուրը առանձնանում է հայ բարբառների տարածքում: Սակայն այստեղ գրաբարատիպ ներկան զուգակցվում է կու-ով ներկայի հետ:

Այսպես՝ ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Խոտրջուրի բարբառը» աշխատանքում բաղաձայնասկիզբ բայերի ներկան և անկատարը գրաբարատիպ են, իսկ ձայնավորասկիզբ բայերինը՝ կը եղանակիչով՝ մընամ, մընաս, մընա, մընայի, մընայիր, մընար, կաղամ, կաղաս, կաղա, կաղայի, կաղայիր, կաղար /ՀԲԱՆ, Խոտրջուր, Միջին թաղ, 59/:

Այս զուգաձևությունների պատճառով է, որ Խոտորջուրը չի համարվում զուտ գրաբարատիպ ներկայով խոսվածք. «...այս կապակցությամբ դժվար է խոսել զուտ գրաբարատիպ ներկայի մասին. Խոտորջուրում այն զուգակցվում է կու-ով ներկայի հետ...» /Ջահուկյան, 1972, էջ 105/:

Կոստանդյանը Խոտորջուրի մասնիկավոր կազմությունները դիտում է ոչ որպես խոտորջուրյան բարբառային հատկանիշ, այլ հարակից բարբառների ազդեցության հետևանք, «Կու-ով ձևերը հյուսիսային հարևան Համշենի բարբառի թափանցումներն են, իսկ կը-ով ձևերը՝ հարավային հարևան Կարնո բարբառի» /ՀԲԱ, 1985, էջ 59/:

Նրա վկայությամբ խոտորջուրցիների կենդանի խոսքում գործածական են ներկայի և անկատարի զուտ գրաբարատիպ ձևեր՝ խըմիմ, սիրիմ, մնամ, խօսէի, մընայի, սիրէի: Միայն գալ, լալ, տալ միավանկ բայերն են, որ ներկան կազմում են կու/զու-ով, իսկ ձայնավորով սկսվողները՝ կ-ով /Տես ՀԲԱ, 1985, էջ 59/:

Այս առումով Խոտորջուրի բարբառային միավորը եզակի չէ: Ըստ Ղարիբյանի՝ համանման երևույթ կա նաև Արամոյի տարածքում: Այստեղ ևս ներկան բաղաձայնակիզբ և միավանկ բայերի դեպքում, ի տարբերություն Խոտորջուրի, որտեղ վերջիններս մասնիկավոր կազմություն ունեն, գրաբարակերպ է, իսկ ձայնավորասկիզբ բայերի դեպքում՝ նախամասնիկավոր, այսպես՝ համբրէյմ, համբրէյս, համբրէյ, գասէյմ, գասէյս, գասէյ, ուղօում, ուղօսու, ուղօու /Ա. Ղարիբյան, 1958, էջ 42, 48/:

Ներկայի բայաձևերի համանման կիրառություն ոչ օրինաչափ ձևով նկատելի է նաև այլ վայրերում: Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գավաշի, Հայոց ձորի խոսվածքները նկարագրելիս Աբեղյանը ներկա և անցյալ անկատարի կազմության մասին գրում է. «Սահմանական ներկան /որ և ապառնի է/ և անցյալ անկատարը կազմվում են կը մասնիկով, բայց պատահում են առանց կը մասնիկի գործածություններ, ինչպես միջին հայերենում է...» /Մասնա ծոեր, 1936, էջ ՀԲ-72/:

ՀԲԱ-ի ծրագրով լրացված նյութերում ևս նշվում է մասնիկավոր ներկային զուգահեռ գրաբարյան ներկայի առկայություն: Ա. Հանեյանը Բիթլիսի նահանգի Չխուրի շրջանի Քըխսամ գյուղի և Խուրի շրջանի Թաղվու գյուղի խոսվածքները գրանցելիս բերում է այս փաստը հաստատող օրինակներ՝ Քու շուն կապէ՞ս Արշակ. Մատնըքի ակ պըսպըղա. Տօբրագ կախիմը սընից /ՀԲԱՆ, Բիթլիս, Քխսամ, 184, Խուր, Թաղվու, 182/:

Դժվար չէ եզրակացնել, որ շուրջ երկու դար առաջ այս խոսվածքներում գրաբարյան ներկայի և անկատարի կազմությունները շատ ավելի մեծ հաճախականություն են ունեցել, իսկ հետագայում աստիճանաբար նվազել են:

Թերևս գրաբարյան ներկայի պահպանումը բարբառային հիշյալ միավորներում պայմանավորված է բնակչության տեղահանման, սեփական բնակավայրից կտրվելու և բարբառախոս միջավայր չունենալու գործոններով:

Լոռի, Շամշադին, Ղալաչա, Թովուզ, Կոզեն բարբառային տարածքում գուգաձևություն է առկա միայն անցյալ անկատարի խոնարհման հարացույցում: Սյստեղ անցյալ անկատարի գրաբարաձև կազմություններին գուգահեռ գործառում են դերբայակազմ ձևեր, այսպես՝ խօսքը ի // խօսի, խօսքը իր // խօսիր, խօսքը էր // խօսէր, խօսքը ինք // խօսինք, խօսքը իք // խօսիք, խօսքը ին // խօսին / ՀԲԱՆ, Շամշադին, Նավուր, 175/:

Այս երևույթը բացակայում է դրանց ներկայի կազմություններում, որոնք դերբայակազմ են: Թերևս անկատարում դերբայակազմ ձևերի գործածությունը ներկայի կազմությունների համաբանության և գրական լեզվի ազդեցության արդյունք է:

Ինչպես երևում է վերոբերյալից, հիշյալ խոսվածքները տարբերություններ են դրսևորում ներկայի և անցյալ անկատարի կազմության եղանակների մեջ, այսինքն՝ միևնույն կարգի մեջ տեղադրվող երկու ժամանակաձևերից /անկատար ներկա, անկատար անցյալ/ միայն գրաբարի անցյալ ձևն է պահպանվել որոշ տարածքներում, իսկ ներկան ստացել է նոր արտահայտություն: Սինչդեռ նկատելի է, որ հայերենի խոսվածքների ամենագերակշիռ մասում ներկայի և անցյալ անկատարի ձևերն ունեն մույն հիմքերը /տարբերությունները միայն դիմային վերջավորությունների կամ օժանդակ բայերի մեջ են/:

Կոստանդյանը, փորձելով բացատրել այս շեղումը, իրավացիորեն կարծում է. «Անցյալ անկատարը չի ունեցել ներկայի նման իմաստային ծանրաբեռնվածություն, որի պատճառով էլ նրա հիմնական իմաստը՝ անցյալ անկատարությունը, իր ձևային արտահայտությամբ հայերենի թեկուզև փոքր տարածքում պահպանվել է անաղարտ /ՀԲԱ, 1985, էջ 58-59/:

Թերևս գրաբարյան անցյալ անկատարի պահպանումը պայմանավորված է նաև այլ հանգամանքներով: Հայտնի է, որ անկատարը դեռևս գրաբարում կիրառվել է ըղձական անցյալ իմաստով, քանի որ ստորադասական եղանակը անցյալի ձևեր չի ունեցել: Ավելի ուշ ստորադասական եղանակի՝ լեզվից դուրս ընկնելու հետևանքով անկատարի ձևերը դրսևորել են միայն ըղձական եղանակի անցյալի իմաստ, իսկ սահմանականի անցյալ անկատարի համար ստեղծվել են նոր կազմություններ: Հավանաբար այս երևույթը ընդգրկել է հայերենի համարյա ողջ տարածքը՝ բացառելով միայն գրաբարատիպ անկատարով բարբառային միավորները, որոնցում բայական հիշյալ ձևերի զարգացումը ընթացել է այլ կերպ: Դրանք ըղձական անցյալի համար՝ են ստեղծել նոր ձևեր՝ պահպանելով գրաբարատիպ անկատարը որպես սահմանական եղանակի ժամանակաձև:

Հավանաբար հիշյալ տարածքում ըղձական անցյալի նորակազմ ձևերի ստեղծումը նախորդել է ստորադասական եղանակի՝ լեզվից դուրս ընկնելու և հիմնադրերենյան անցյալ անկատարի՝ ըղձական անցյալի իմաստով կիրառվելու գործընթացին, որի հետևանքով գրաբարյան անկատարը պահ-

պանել է իմաստային ամբողջականությունը՝ դրսևորելով միայն անցյալ անկատարի իմաստ:

Այսպիսով, ներկայի և անկատարի հարացույցներում զուգաձևությունների առկայությունը կարելի է մեկնել բարբառային միավորների փոխադրեցությամբ, տարբեր մասնիկներ ունեցող բարբառային միավորների խառնմամբ, համադրմամբ, որի հետևանքով ներկայի և անկատարի հիմ ձևերին զուգահեռ գործառել են դրանց նորակազմ ձևերը:

Բարբառների զարգացման արդի մակարդակում զուգաձևությունների առաջացումը մեծ մասամբ պայմանավորված է գրական լեզվի ազդեցությամբ:

Ներկայումս **ուժ-ով** ներկան և անկատարը գործածվում են նաև բարբառային այնպիսի տարածքներում, որոնք երբևէ Ուժ ճյուղին չեն պատկանել: Այսպես՝ Հայաստանի Հանրապետության բնակավայրերի մեծ մասում միջին և նոր սերնդի մարդիկ իրենց բնիկ ձևերին զուգահեռ և նույնիսկ ավելի հաճախ գործառում են **ուժ-ով** կազմություններ: Այս երևույթը սկսել է գործել վաղուց՝ անցյալ դարի վերջերից, և դա է պատճառը, որ ակնհայտորեն նախապես ներկայի և անկատարի այլ ձևեր ունեցող մի շարք խոսվածքներ այժմ, մոռացության մատնելով ներկայի սեփական կազմությունները, գործածում են բացառապես **ուժ-ով** ներկա /Մեհտիշեն, Ղափանի որոշ գյուղեր, որոնք անցյալ դարի վերջերին գաղթել են Խոյից/: Դա բացատրվում է ոչ այնքան Ուժ ճյուղի բարբառների, որքան գրական լեզվի ազդեցությամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հ. Աճառյան, Համշենի բարբառը, Երևան, 1940:
2. Ա. Լուսենց, Արեշի բարբառը, Երևան, 1982:
3. Հայերենի բարբառագիտական ատլաս: Ուսումնասիրություններ և նյութեր, Երևան, մաս 1, 1982, մաս 2, 1985:
4. Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Երևան, 1977:
5. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:
6. Ա. Ղարիբյան, Հայերենի նորահայտ բարբառների մի նոր խումբ, Երևան, 1958:
7. Հ. Մուրադյան, Կաթավաթերդի բարբառը, Երևան, 1967:
8. Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972:
9. Սայաթ-Նովա, Թիֆլիս, 1914:
10. Սասնա ծռեր, Երևան, 1936:
11. Օգտագործված են Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով հավաքված նյութերը, որոնք պահվում են ՀՀԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում:

ԱՍԱԾԱԿԱՆ ԵՎ ՄՏԱԾԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ
ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ասացական բայերի բառաիմաստային խմբի մեջ մտնող բայերը (այսուհետև՝ ԲԻԽ) միավորվում են բանավոր ձևով միտք արտահայտելու կամ տեղեկատվություն հաղորդելու իմաստային ընդհանուր հատկանիշով: Եվ ինչպես Ջ. Նիչմանն է նկատել, այս խմբի բայերի՝ խոսքային գործունեության մեջ ունեցած բազմունակությամբ էլ բացատրվում է այն փաստը, որ ասացական բայերի բառային նշանակություններում արտացոլվում են ոչ միայն ասացականության, այլև ուրիշ կամ էլ դրան գուգահեռ ընթացող գործողություններ: Այդ պատճառով էլ ասացական բայերի ԲԻԽ-ի հետագոտության ժամանակ շատ դժվար է սահմանազատել հատկապես ասացական գործընթացներ արտահայտող բայերը այն բայերից, որոնք բնութագրում են սահմանակից գործողություններ. դրանց թվին են պատկանում առաջին հերթին մտածական, զգացական, հաղորդման, շփման և այլ ԲԻԽ-երի մի շարք բայեր¹:

Բայերի բազմիմաստությունը ի հայտ է գալիս հատկապես տեքստում գործառնվելիս: Այդ իսկ պատճառով նրանց իմաստային շարժունակությունը բազմապատկվում է գուգորդման որոշակի առանձնահատկություններով՝ բարենպաստ պայմաններ ստեղծելով բայերի անցման համար մի դաշտից կամ մի ԲԻԽ-ից մյուսը:

Ս. Անտոնովան նշում է, որ լեզվական ենթահամակարգերի դաշտային կազմակերպման դրսևորումներից մեկը միջուկային բայերի պատկանելությունն է միաժամանակ սահմանակից դաշտի (կամ էլ ԲԻԽ-ի, հավելումը մերն է՝ Ռ. Դ.) եզրին (периферия), որն էլ տանում է դաշտերի մասնակի վերադրման (իրար վրա դարսվելը՝ Ռ. Դ.), աստիճանական անցման գոտիների ձևավորման²:

Անցման այսպիսի օրինակ է մտածական բայերի ասացական իմաստով գործածվելը: Փորձենք բացահայտել երկու խմբերի իմաստային առանձնահատկությունները և նմանությունների ու տարբերությունների հիման վրա առանձնացնել՝ ուրվագծելով երկու ԲԻԽ-երի միջև սահմանը:

¹ Ничман З. В., К вопросу об определении границ группы глаголов устной речи (говорения) в современном русском языке // Науч. труды / Новосиб. пед. ин-т. Вып. 137, 1977, с. 32.

² Антонова С. М., Глаголы говорения-динамическая модель языковой картины мира: опыт когнитивной интерпретации: Монография, Гродно, 2003, с. 257.

Հ. Օհանյանը մտածական է համարում այն բայերը, որոնք ցույց են տալիս մարդու մտածողությունն ու մտավոր գործունեությունը և դրանց առնչվող, դրանց հետ սերտորեն կապված գործողություններ. օրինակ՝ *գիտակցել, գիտենալ, դատել, եզրակացնել, զգալ, ըմբռնել, ընկալել, իմանալ, խորհել, կշռադատել, կռահել, հասկանալ, հիշել, ճանաչել, մոռանալ, մտածել, պատկերացնել* և այլն¹:

Այս բայերը նշանակում են մտածական գործընթացներ տարբեր հայեցակերպերում. արտահայտում են գիտակցության կամային ակտերին ուղեկցող գործողություններ և մտավոր գործունեության բազմազանությամբ հանդերձ՝ միավորվում են հետևյալ իմաստային ընդհանուր հատկանիշով՝ իրականացնել մտածողության գործընթաց²:

Այդուհանդերձ ասացական և մտածական գործընթացները փոխկապակցված են: Թեև մտածելը ներքին գործընթաց է, բայց հենց բարձրաձայն է արտասանվում, ձեռք է բերում ասացական արժեք. օրինակ՝ *Այս «քանի որ»-ների համար կարելի է և պետք է ներել հայր Չամչյանին, բայց պետք է թշնամաբար նայել բոլոր նրանց, ովքեր այսօր էլ դատում են մտավորապես նույն ձևով. «Մենք որ կայինք, Այսինչ ժողովուրդը դեռ միսն աղել չգիտեր...»:* «Մենք որ Պլատոն էինք թարգմանում՝ նրանք ապրում էին ծառերի վրա...»: «Իսկ հապա մեր Այսինչը, մեր Այնինչը, մեր Էսը, մեր Էնը...»³:

Հարկ է նկատի ունենալ, որ արտաքին խոսքը սովորական, հնչյունական-արտասանական իրացում ունեցող խոսքն է: Ներքին խոսքը մենախոսության այն տեսակն է, երբ խոսքը հնչյունական-արտասանական դրսևորում չունի, ուղղված չէ ունկնդրին, այլ ինքն իրեն է, խոսողը բարձրաձայն չի արտասանում իր մտածածը, արտաբերում է «մտքում», լռելային: Եթե ունկնդիր (խոսակից) էլ կա, ապա այն երևակայական, ենթադրական է: Այն մի տեսակ նախապատրաստություն է երկխոսության համար, ինչպես և կարող է արագ վերածվել բարձրաձայն մենախոսության⁴: Օրինակ՝ *Վասակը մտածեց և կարծես ինքն իրեն ասաց. «Այս հավատից չի կարող խախտել մեզ ո՛չ հրեշտակ, ո՛չ մարդիկ, ո՛չ սուր, ո՛չ հուր»...* Հըմ, ուրեմն ձեզանից ըմբոստություն, ինձանից՝ պատասխանատվություն...

– Պատասխան բողբջ պատրաստ է: Պատասխան բողբի պատասխանը պատրաստ է, պատասխանների պատասխանները պատրաստ են...– հեզմոտ շարունակեց նա կիսաձայն խորհելով⁵:

¹ Հ. Օհանյան, *Մտածական բայերի խնդրառության մի քանի հարցեր*, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», Ե., 1984, N 3, էջ 53:

² Васильев Л. М., Семантика русского глагола, М., 1981, с. 125.

³ Պ. Սևակ, հ. 3, Ե., 1983, էջ 52:

⁴ Հ. Չ. Պետրոսյան, *Հայերենագիտական բառարան*, Ե., 1987, էջ 281:

⁵ Դ. Դեմիրճյան, *Վարդանանք*, Ե., 1987, էջ 17:

Եվ ինչպես ներքին ու արտաքին խոսքերն են կապված իրար հետ անտեսանելի թելերով, այնպես էլ մտածական և ասացական բայերը, և հնարավոր է, որ խոսքային իրադրության մեջ երևակայական, «ենթադրական» խոսակիցը հանկարծ վերածվի իրականի. օրինակ՝

Ես քո մասին

Արդյոք ի՞նչ եմ մտածում:

Ես քո մասին

Ախար ի՞նչ չեմ մտածում.

Բայց քերևըս

Ամենից շատ մտովին

Կորուստներս է,

Որ հաշվում եմ գտածում¹:

Եվ քանի որ այս գործընթացը երկկողմանի է, ապա համապատասխանաբար ասացական բայերն էլ իրենց հերթին կարող են մտածական արժեք ունենալ. օրինակ՝

Սա որ ասավ, էս վայրի տեղ

Երգ է ասում էսքան շքեղ,

Հապա թե մեր տանը լինի

Ի՞նչ դրախտի ծայն կրհանի²:

Հետևաբար այս երկու խմբի բայերը կարող են իրենցից ներկայացնել իբրև ասացական և մտածական բայերի համաձուլվածք, ինչպես օրինակ՝ դատել, եզրակացնել, ենթադրել, գուգադրել, գուգորդել, թվալ, խորհրդածել, կասկածել, համարել, համեմատել, հայտնաբերել, հաստատել, հիմնավորել, մտածել, մտահոգվել, մտատանջվել, ներմուծել, նշել, շարակարգել, որոշել, սահմանել, վերլուծել և այլն:

«...ճրանց կապոցներից և կողովներից, որ ուսանողները ներս էին քերել լայն թիկնոցների տակ, քեռի Մարտինը եզրակացրեց, որ ճրանք դեռ երկար պիտի մտեն...»³ նախադասության մեջ «եզրակացնել» բայը գործածվել է մտածական իմաստով, իսկ հետևյալ՝ «- Չոր չեն ասել, թե ճիպոտդ քոյիցդ կտրիր. հարուստ տնից քերած հարսը մեջ ուտելու, հեռու շուռ տալու սովոր կլինի,- եզրակացրեց Եսային»⁴ օրինակում «եզրակացնել»-ը հանդես է եկել որպես ասացական և մտածական բայերի համաձուլվածք (այսինքն՝ միաժամանակ մտածելը և ասելը):

Գ.Պակը արձանագրում է, որ սկզբնապես ռուսերենի ակադեմիական քերականության մեջ մեկ խմբում են միավորվել միտք և խոսք արտահայ-

¹ Պ. Սևակ, հ. 1, Ե., 1982, էջ 235:

² Հովհ. Թումանյան, հ. 2, Ե. 1990, էջ 152:

³ Ա. Բակունց, Երկեր, Ե., 1986, էջ 598:

⁴ Խանգաղյան, Մխիթար Սպարապետ, Ե. 1961, էջ 211:

տող բայերը՝ հիմնված իրենց գործառույթների նմանության վրա: Սակայն հետագայում այս տեսակետը փոխվել է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերոնշյալ բայերը (իմա՝ ասացական և մտածական) ի հայտ են բերում էական տարբերություններ:

Ասացական բայերը մտածական բայերից տարբերվում են նրանով, որ բնութագրվում են իրենց նպատակաուղղվածությամբ դեպի զրուցակիցը կամ լսողը, նրանք միշտ հասցեագրված են ինչ-որ մեկին, իսկ մտածական բայերը զուրկ են այս հատկանիշից¹:

Մտածական բայերը անվանում են մի գործընթաց, որն ընթանում է սուբյեկտի ներսում, արտաքինապես արտահայտված չէ, ուղղված չէ որևէ մեկին, հայտնի չէ շրջապատողներին, այդ պատճառով էլ չի ենթադրում մասնակից կամ մտքի հասցեատեր: Եվ ինչպես արդեն նկատեցինք, միայն գեղարվեստական խոսքում այն կարող է ունենալ մտքի «նյութականացում»:

Ու հիմա քեզ հագցընելու գործըս բողած՝

Մտածում եմ, որ կան կանայք

Եվ աղջիկներ կան աշխարհում,

Որոնց մարմինն ասես ճշում ու հայցում է

Իրեն փրկել հանդերձանքի կաշկանդումից՝

Կամ՝

Ես կարծում եմ, երբ խոր վերքից

Մարդ ժպտում է համառությամբ,

Այդ ժպիտը վերջ ի վերջո

Փոխարկվում է ծամածռության...՝

Մտածական և ասացական բայերի տարբերակիչ հատկանիշ կարելի է համարել անորոշ դերբայի հետ գործածվելու կամ չգործածվելու հանգամանքը: Ասացական բայերին այն հատուկ չէ, մինչդեռ մտածական բայերը (իհարկե՝ ոչ բոլորը) պահանջում են անորոշ դերբայով լրացում:

Ն.Շապիլովան գրում է, որ կախյալ անորոշ դերբայի առկայությունը բացահայտում է մտածական բայերի մտադրության բովանդակությունը, քանի որ մտադրության իրադրությունը ենթադրում է գործողություն⁴։ օրինակ՝

Նույնիսկ ես էլ գիտեմ ճառել

¹ Пак Г., А., К вопросу о принципах выделения глаголов речи. Вопросы теории русского языка, Научные труды, вып. 119, Новосибирск, 1975, с. 28.

² Պ. Սևակ, հ. 1, տե՛ս էջ 282

³ Պ. Սևակ, հ. 1, տե՛ս էջ 380 :

⁴ Шапилова Н. И., Система значения глагола «думать» и условия их контактной реализации // Семантическая структура слова, Кемерово, 1984, с. 113.

Ու խրատել զիտեմ, անշուշտ¹:

Կամ՝

Դուք այն բուժքույրերն էիք, որ երազել էի իմ կողքին ունենալ այն ժամանակից, երբ Դրեզդենի քաղաքային հիվանդանոցում դեռևս երիտասարդ մի օրդինատոր էի²:

Սակայն մտածական և ասացական բայերն ունեն մահ ընդհանրություններ, որոնց պատճառով էլ նրանք կարող են փոխադարձաբար փոխարինվել, և դա հիմնականում պայմանավորված է նրանց՝ ուրիշի ուղղակի խոսք ներմուծելու կարողությամբ: Ուրիշի ուղղակի խոսքը ներառում է իր մեջ և՛ մտքի, և՛ խոսքի արտահայտման ձևեր և օժտված է բավարարելու երկու խմբի բայերի իմաստային արժույթի պահանջները. օրինակ՝ «Մեր ընտանիքում,– խորհում է նա,– անկասկած շատ օսլա էր օգտագործվում. դաստիարակությունն ինձ թեթևակի օսլայել էր»³:

Այս նախադասության «խորհել» մտածական բայը կարելի է փոխարինել «ասել» ասացական բայով. այսպես՝ «Մեր ընտանիքում,– ասում է նա,– անկասկած շատ օսլա էր օգտագործվում. դաստիարակությունն ինձ թեթևակի օսլայել էր»:

Կամ՝

Ձեներ զընաց դըմբղըմբալով՝

Դավթի ականջն ընկավ հորում.

Հա՛յ-հա՛յ, ասալ, հորեղբայրս է,

Սասմա սարից ինձ է գոռում⁴:

Այս նախադասության «ասել» ասացական բայը կարելի է փոխարինել «մտածել» մտածական բայով՝

Ձեներ զընաց դըմբղըմբալով՝

Դավթի ականջն ընկավ հորում.

Հա՛յ-հա՛յ, մտածեց, հորեղբայրս է,

Սասմա սարից ինձ է գոռում:

Վերոնշյալ երկու օրինակներում էլ փոխարինման ժամանակ արժույթը չի փոխվում:

Այս խմբի բայերի կառուցվածքային առանձնահատկությունների ընդհանրությունը բխում է մահ նրանց խնդրառական կապերից: Այս մասին է վկայում Հ. Հարությունյանը՝ գրելով, որ ներգործական բայերի շարքում իմաստային առանձին խումբ են կազմում ասացական, մտածական բայերը, որոնք ունեն ներխոսքիմասային իմաստով պայմանավորված կառա-

¹ Պ. Սևակ, հ. 1, տե՛ս էջ 610 :

² Ջ.Խալափյան, Ջերմանց մխիթարություն, Ե., 1979, էջ 20:

³ Գ. Բրուտյան, Իմաստասիրական երկխոսություններ, հ. 2, Ե., 1986, էջ 17:

⁴ Հովհ. Թումանյան, հ. 4, Ե., 1991, էջ 35:

վարման (իմա՝ խնդրառական՝ Ռ. Դ.) յուրահատկություններ, այն է՝ պահանջում են ուղղականով (իմա՝ հայցական՝ Ռ. Դ.), բացառականով կամ տրական (իմա՝ սեռական՝ Ռ. Դ.) + մասին հոլովական և հոլովակապային լրացումներ: Այնուհետև թվարկում է ասացական և մտածական բայերի շարքը՝ միաժամանակ նշելով, որ թվարկված բոլոր բայերը կառավարման իմաստով բացարձակ նույնը չեն¹:

Ասացական և մտածական բայերը միավորվում են նաև սուբյեկտի ընդհանրությամբ, օրինակ՝ «Ես ասում եմ» և «Ես մտածում եմ» (որովհետև ասացական և մտածական բայերի սուբյեկտը միշտ մարդն է, եթե հաշվի չառնենք փխբ. կիրառությունները):

Այսպիսով՝ ի մի բերելով ասացական և մտածական բայերի իմաստային առնչությունները՝ կարող ենք եզրակացնել.

ա. Ասացական և մտածական բայերի սահմանային կապը ԲԻՄ-երի միջև անցման գոտիների ձևավորման դրսևորումներից մեկն է:

բ. Ասացական և մտածական ԲԻՄ-երի բայերը հատվում են, որովհետև ունեն ընդհանրություններ և տարբերություններ:

գ. Հնարավոր է ասացական և մտածական բայերի փոխադարձ փոխարինումը որոշակի խոսքային պայմաններում:

դ. Մտածական բայերը ասացական արժեք են ձեռք բերում խոսքային իրադրության պահանջով:

ե. Մեկ բայով կարող են արտահայտվել և՛ մտածական, և՛ խոսքային գործընթացներ՝ առաջացնելով իմաստային «համաձուլվածք»:

¹ Հ. Ա. Հարությունյան, Կառավարումը ժամանակակից հայերենում, Ե., 1983, էջ 143:

**ԲԱՅԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԵՎ
ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐԴԻ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ**

«Խոսակցական լեզու» տերմինը սույն հոդվածում գործածում ենք «գրական լեզվի խոսակցական տարբերակ» ընդունված նշանակությամբ: Սա ըմբռնվում է որպես գրական լեզուն կրողների անկաշկանդ խոսք՝ նրանց առօրյա հաղորդակցմանը ծառայող. «բանավոր լեզու» և «խոսակցական լեզու» հասկացությունները միմյանց չեն ծածկում: Խոսակցական լեզուն բանավոր լեզվի կիրարկության ոլորտներից մեկն է, թերևս ամենատարածվածը: Խոսակցական լեզուն, ինչպես նշում են հայերենագետ հետազոտողները¹, խստորեն սահմանազատված չէ մի կողմից ժողովրդախոսակցական լեզվից, մյուս կողմից՝ բարբառներից, թեև սրանցից առանձին մի որակ է ներկայացնում: Ստորև ներկայացվող իրակությունների մի մասը թերևս ժողովրդախոսակցական շերտին պետք է հատկացվի. զուտ բարբառային իրողությունները, բնականաբար, զանց ենք առել:

Առայժմ մի կողմ բողբելով խոսակցական հայերենի բառապաշարում բայական միավորների յուրահատուկ ժարգոնային, օտարաբան և այլ կարգի դրսևորումները, որոնք հիմնականում բառագիտական-բառակազմական կարգի են, փորձենք ընդհանուր գծերով դիտարկել արդի շրջանի խոսակցական հայերենի բայակազմության (ներառյալ բայածանցումը) և բայագործածության որոշ միտումներ:

Այդ միտումների զարգացման ընթացքն ու հեռանկարը դիտելու առումով հետաքրքիր կլինի համադրել բայածների խոսակցական ձևերի առանձնահատկությունների՝ գրեթե երեք տասնամյակի վաղեմություն ունեցող արձանագրումները այսօրվա իրողությունների հետ: Տվյալ դեպքում համեմատության եզր կարելի է ընդունել Թ. Ա. Ղարազյուլյանի «Ակնարկներ ժամանակակից հայերենի խոսակցական լեզվի» աշխատության համապատասխան բաժնի տվյալները:

¹ Տե՛ս, օրինակ, Էդ. Աղայան, Լեզվի գոյության տարբերակային ձևերը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1973, N 2, Թ. Ղարազյուլյան, Ակնարկներ ժամանակակից հայերեն խոսակցական լեզվի, «Ժամանակակից հայերեն խոսակցական լեզուն», Ե., 1981, Ա. Մարկոսյան, Խոսակցական հայերենի շարահյուսական մի քանի առանձնահատկություններ, Հանրալեզվաբանական, հոգելեզվաբանական և համեմատաբանական ուսումնասիրություններ, Ե., 1979, էջ 46-55, Զ. Աղաջանյան, Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր, Ե., 2007, և այլն:

Արդի շրջանի խոսակցական լեզվում բայակազմության գործող միտումներին անուղղակի անդրադարձեր կարելի է գտնել նաև Ջ. Աղաջանյանի «Ձևաբանական նորմ և խոսքի մշակույթի հարցեր» գրքում: Այդ միտումներն, իհարկե, այստեղ ներկայացվում են որպես գրական նորմայի սահմաններից դուրս գործող: Խոսակցական լեզվին վերաբերող հետազոտությունների հեղինակները առաջին հերթին ուշադրության են առնում հրամայական եղանակի բայաձևերի մանրահամակարգի շրջանակում կատարվող տեղաշարժերը, որոնք, սկիզբ առնելով խոսակցական լեզվում, հետզհետե ներթափանցում են գրական լեզու՝ հանդես բերելով նրանում ընդհանրաձայն միտում: Խոսքը վերաբերում է նախ արգելական հրամայականի՝ բուն (հաստատական) ձևից կազմվելու միտումին՝ խաղացե՛ք – մի՛ խաղացե՛ք (փխ.՝ մի՛ խաղաք), մոտեցի՛ր, մոտեցե՛ք – մի՛ մոտեցիր, մի՛ մոտեցե՛ք (փխ.՝ մի՛ մոտենա(ր), մի՛ մոտենաք), բարձրացրո՛ւ, բարձրացրե՛ք – մի՛ բարձրացրու, մի՛ բարձրացրե՛ք փխ.՝ մի՛ բարձրացնիր, մի՛ բարձրացնե՛ք) և այլն: Այսօր արդեն կարելի է արձանագրել, որ խոսակցականից սերող ձևերը կայունացել են գրական նորմի մեջ, և արգելական հրամայականի՝ միայն անկատարի հիմքից կազմվելու կանոնն այլևս բացարձակ չէ: Արգելական հրամայականի նախկին համակարգային ձևերը (հատկապես պատճառական բայերի դեպքում) այսօր իբրև շեղումներ են ընկալվում: Ինչ վերաբերում է բարբառային մի՛ք (մե՛ք) խոսի, կարդա ձևերին, որոնք Թ. Ղարազյուլյանի կողմից բերվում են որպես խոսակցական լեզվում տարածված, սակայն անհանձնարարելի, ապա պետք է նշել, որ դրանք այսօրվա խոսակցական հայերենից գրեթե լիովին դուրս են մղվել. հազվադեպ կիրառությունները հիմնականում տարեցների խոսքում են հանդիպում:

Հրամայական եղանակի -իդ վերջավորության -ր-ի անկումը խոսակցական լեզվում համատարած բնույթ ունի: Այս երևույթը, մասնավորապես արգելական հրամայականի կազմության մեջ, կարելի է ասել, խոսակցական նորմի փաստ է (մի՛ խոսի, մի՛ հարցնի և այլն) և հաճախ թափանցում է նաև գրական լեզու:

Մի քանի տասնամյակ առաջ հրամայական եղանակի ձևերի կազմության մեջ ևս մի միտում է ձևավորվել. ե խոնարհման պարզ բայերի հոգնակի հրամայականը, որ կանոնավորապես կազմվում էր անցյալ կատարյալի ցոյական հիմքից (գրեցե՛ք, մատեցե՛ք և այլն), աստիճանաբար սկսում է տեղի տալ խոսակցականում լայնորեն տարածված՝ ներկայի հիմքից կազմվող ձևերի առջև (մատե՛ք, գրե՛ք և այլն)¹: Կարելի է նշել, որ այս վերջին ձևերն այսօրվա գրական լեզվում մույնպես կանոնի աստիճանի են բարձրացել. կատարյալի հիմքից կազմված ձևեր այսօր պանդխտում են խիստ հազվադեպ՝ հիմնականում պաշտոնական ոճում:

¹ Տե՛ս Թ. Ղարազյուլյան, նշվ. աշխ., էջ 96:

Հրամայական եղանակի ձևերից միայն խոսակցական ոլորտում են գործառուում պատճառական բայերի՝ -ու վերջավորության փոխարեն -ա վերջավորությամբ կազմվածները՝ վերցրա՛, մոտեցրա՛, հարցրա՛ և այլն: Բացառված լինելով գրական լեզվում՝ սրանք խոսակցական նորմի առումով ևս տարածման միտում չեն դրսևորում, ունեն սահմանափակ կերպարություն: Հանդիպում են նաև լցնել, գցել բայերի լի՛ց, քի՛ց ձևերը:

Արդի գրական և խոսակցական հայերենների կարևոր տարբերակիչ գծերից մեկը բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի կազմությունն է: Խոսակցական լեզվում լայնորեն կիրառվող ա օժանդակ բայը ներկա ժամանակի եզակի 3-րդ դեմքի ձևի սովորական կազմիչն է մասնավորապես նաև անկաշկանդ գրական խոսքում: Վերոհիշյալ աշխատության մեջ ա օժանդակ բայով կազմված ձևերի գնահատումը Թ. Ղարազյույյանի կողմից համարվում է «ներկայումս մեր լեզվի խոսքի մշակույթի դժվարին հարցերից մեկը»: Ահա հեղինակի եզրակացությունը. «Մենք կարծում ենք, որ թեև այն շատ տարածված և ամենատարածված ձևն է առօրյա խոսակցական լեզվում, այնուամենայնիվ, նկատի ունենալով մեր լեզվի զարգացման հեռանկարները, այն չի կարելի ընդունելի համարել գրական լեզվի թեկուզ խոսակցական տարատեսակում: Ա-ն ժողովրդախոսակցական լեզվի իրողություն է, որը խոսակցական լեզվում հանդես է գալիս որպես հասարակաբան երևույթ»¹: Վերջին տասնամյակներում հազիվ թե փոխվել է ա-ով ձևերի այսպիսի գնահատականը: Չ. Աղաջանյանի՝ 2007-ին լույս տեսած աշխատության մեջ դրանք գրական նորմի տեսակետից անընդունելի են համարվում. «Ներկայումս ա-ի գործածության շրջանակը գրական գրավոր լեզվի ազդեցությամբ զգալիորեն նեղացել է... Միայն դյուրահնչությունը բավարար չէ այս կամ այն ձևի հաստատման համար. յուրաքանչյուր միտում լեզվական կանոնի է վերածվում, եթե համապատասխանում է լեզվի զարգացման ներքին օրինաչափություններին, եթե բարոյապես արդարացված է և լեզվակիր հանրության հավանությանն է արժանանում»²: Ա-ով ձևերի՝ խոսակցական հայերենում հաճախված լինելու փաստն է հավանաբար որոշ հեղինակների և լրատվական միջոցների դրդում դրանք գրական խոսքում գրանցելու և է-ով ձևերից լիովին հրաժարվելու: Հմտ. «Բյուրոն նստել, որոշել ա», «Միավորումը... կայանում ա», «Հաղթանակը հնարավոր ա» և այլն³: (Մեջբերումները Մ. Պետրոսյանի հոդվածից են. ի դեպ, սույն հեղինակը բանաստեղծություններում ևս ա-ով ձևերն է նախընտրում: Սկզբունքորեն միայն ա-ով է խոսում նաև «Կենտրոն» հեռուստատեսության «Ուրվագիծ» հաղորդաշարի վարողը): Այս կարգի փորձերը, սակայն,

¹ Ն. տ., էջ 103:

² Չ. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 285:

³ «Հայկական ժամանակ», սեպտեմբերի 12, 2008:

առայած գոնե տարածվելու միտում չունեն և մնում են մեկուսի՝ որպես հեղինակային քմահաճության դրսևորում: Ա-ով ձևերը, լայնորեն գործածվելով խոսակցական լեզվում, խորք տարրեր են գրական վերահսկվող խոսքի համար:

Արդի խոսակցական հայերենին հատուկ բայակազմության՝ գրականից տարբերվող միտումներից մեկն էլ ա լծորդ ձայնավորով կազմությունների կիրառությունն է ե լծորդով կազմվող գրական ձևերի փոխարեն: Խոսքը վերաբերում է ոչ միայն անորոշ դերբային (խոսալ, գովալ, հաչալ, ցավալ, բողալ, երդվալ և այլն), այլև թեքված ձևերին՝ խոսացող, խոսացել, խոսացած, խոսա՛, խոսացե՛ք և այլն: Այս միտումի մի դրսևորումն էլ առկա է պատճառական բայերի կազմության մեջ. -եցն ածանցով գրական ձևերին խոսակցականում համապատասխանում են -ացն-ով կազմությունները՝ խոսացնել, աշխատացնել, սովորացնել, փայլացնել, զգվացնել, նստացնել, կանգնացնել, զժվացնել, սատկացնել և այլն: Գրական նորմի տեսակետից անընդունելի այս ձևերը սովորական և կանոնական են խոսակցական նորմի շրջանակներում:

Մի շարք բայերի՝ -ացն և -եցն ածանցներով կազմված զուգաձևերը գրական լեզվում կանոնական է դիտում Ջ. Աղաջանյանը՝ դրանք համարելով նախատիպ բայերի զուգահեռ ձևերից առաջացած, ինչպես՝ ցամաքեցնել (ցամաքել) – ցամաքացնել (ցամաքանալ), նիհարեցնել (նիհարել) – նիհարացնել (նիհարանալ), սպիտակեցնել (սպիտակել) – սպիտակացնել (սպիտականալ), դանդաղեցնել (դանդաղել) – դանդաղացնել (դանդաղանալ) և այլն: «Նշված բայերի պատճառական զուգահեռ ձևերի տեսակարար կշիռն ըստ գործածության որոշվում է նրանց սկզբնատիպ ձևերի գործածությամբ: Օրինակ՝ երբ պարզում ենք, որ մեր արդի գրական լեզվում **դանդաղեցնել** ձևն ավելի գործածական է, քան **դանդաղացնել**-ը, այդ նշանակում է, որ սկզբնատիպ զուգահեռ ձևերից ավելի գործածական է **դանդաղել** ձևը: Այսպես և ցամաքացնել/ցամաքեցնել զուգաձևություններում ցամաքեցնել-ը գերակշռում է, հետևաբար ցամաքել-ը գերակշռում է ցամաքանալ-ին: Կամ էլ համեմատությունը սկզբնատիպ ձևերից ենք կատարում. քանի որ նիհարանալ/նիհարել զուգաձևության մեջ **նիհարանալ**-ը քիչ գործածական է, հետևաբար նրանից կազմված պատճառականն էլ քիչ գործածական կլինի»¹: Ջուգահեռ ձևերի այսպիսի գնահատությունը, որ առկա է նաև ակադ. Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» մեծարժեք աշխատության մեջ, մեզ թվում է որոշ իմաստով առարկելի: Արդի գրական լեզվում, թերևս նաև դրա խոսակցական տարբերակի մեջ ցամաքանալ, նիհարանալ, դանդաղանալ և այսպիսի շատ ձևեր գրեթե գործածական չեն, և -ացն-ով պատճառականները հազիվ թե կապվում են -անալ-

¹ Ջ. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 268:

ով նախատիպ բայերին: Դրանք, ըստ երևույթին, պետք է դիտարկել որպես խոսակցական լեզվում **-եցն-** ածանցի հաշվին իր կիրառության սահմանները բավականաչափ լնդլայնած **-ացն-** ածանցի՝ գրական լեզու թափանցելու միտումնի դրսևորում: Մանավանդ որ խոսակցականում **-ացն-**ով պատճառականները հաճախ սերում են **-ալ-**ով նախատիպ բայերից. հմնտ.¹ աշխատել-աշխատացնել, սովորել-սովորացնել, հաջողել-հաջողացնել (սա գրական լեզվում հաստատվելու միտում ունի) և այլն:

Առարկության տեղիք է տալիս նաև վերոհիշյալ աշխատության մեջ **-չ-** ածանցով կազմված սոսկածանցավոր մի քանի բայերի պատճառական ձևերի գնահատականը գրական նորմի դեասակյունից: Չ. Աղաջանյանը նշում է, որ «սառցնել-սառեցնել, ոռցնել-ուռեցնել, հալցնել-հալեցնել գուգածներում առաջին տարբերակներն են գրական, նորմով հաստատված»¹: Կարծում ենք, սակայն, որ բերված գույգերի առաջին անդամները, որքան էլ որ համապատասխանում են **-ն-**, **-չ-** սոսկածանցով բայերի պատճառական ձևերի կազմության կանոնին, դուրս են մնում գրական նորմի շրջանակներից: Սառեցնել, հալեցնել և նման ձևերը, որ պայմանավորված են խոսակցական լեզվում սառել, հալել, ոռել ձևերի գերակշիռ գործածությամբ, մտել են գրական լեզվի կանոնի մեջ՝ որպես համակարգային կազմություններից շեղվող ձևեր (այդպես է նաև իջեցնել-ը, որ համակարգից շեղվել է ոչ թե խոսակցական լեզվի ազդեցությամբ, այլ, ինչպես նշում է հեղինակը. «բարեհնչության պահանջով»): Հանդիպում են նաև ակնհայտ սխալ կազմություններ, որոնք խոսակցական նորմի առումով էլ մերժելի են, օրինակ՝ **հանգչել-հանգեցնել**: Հետաքրքիր է, որ այս սխալ ձևը կարծես օրինականացվել է հրշեջ ծառայության ոլորտում. «կատարվում են **հանգեցման** աշխատանքներ» (հրշեջ ծառայության պետի խոսքից):

Պատճառական բայերի խոսակցական դրսևորումներում, հատկապես երիտասարդների խոսքում որոշակի տարածում ունի **-եցն-** ածանցի փոխարեն **-ցն-**ի գործածությունը՝ քնցնել, սովորցնել, խմցնել, վագցնել և այլն: Գրական լեզուն միանշանակորեն մերժում է այս կարգի կազմությունները, խոսակցական լեզվի կանոնի մեջ ևս սրանք հաստատված չեն և ընկալվում են որպես հասարակաբան կամ ժարգոնային ձևեր (մանավանդ ը գաղտնավանկի սխալ տեղադրումով կազմվում են ակնհայտ ժարգոնային՝ ցածրակարգ ձևեր զգ(ը)վցնել, խոս(ը)ցնել և այլն):

Ի հակադրություն խոսակցական լեզվում **-ացն-** ածանցի ակտիվության, ավելի ստույգ՝ իբրև հակազդեցություն **-ացն-**ով ոչ կանոնական կազմությունների՝ գրական լեզու ներթափանցելու միտումնի՝ գրական լեզվում նկատվում են **-ան-** ածանցով նախատիպ բայերից **-եցն-**ով պատճառական ձևերի կազմության դեպքեր: Այսպես, ՉԼՄ-ների լեզվում, մասնավորապես

¹ Չ. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 265:

գովազդային տեքստերում կարելի է հանդիպել թարմեցնել («թարմեցնող բուրմունք»), բարդեցնել (բարդանալ-ից), հնեցնել (կոնյակ՝ 10 տարվա **հնեցմամբ**»։ այս բայանունը կարծես տերմինի արժեք է ձեռք բերել), անշարժեցնել («պետք է անշարժացնել վերջույթը» – բժշկական հաղորդումից) մզեցնել (մզեցված ապակիներ) և այլն։ Սրանք շինծու ձևեր են՝ պայմանավորված գրական լեզվի կանոնի չիմացությամբ, և գրական լեզուն խոսակցական տարրերից զերծ պահելու ավելորդ ջանադրության արդյունք են։

Հարկ է անդրադառնալ նաև պատճառականության իմաստի արտահայտման հարադրական եղանակին, որի գործադրումը ևս որոշակի յուրահատկություններ ունի լեզվի խոսակցական և գրական տարբերակներում։

Հայտնի է, որ «տալ» բայը, հարադրվելով այլ բայերի հետ, արտահայտում է «ցն» ածանցի իմաստին համարժեք պատճառականության քերականական իմաստ։ Պատճառականության արտահայտման համադրական և հարադրական եղանակները միմյանց փոխյալացնում են. կան բայեր, որոնց համար անսովոր են ածանցավոր պատճառականները, և այդ դեպքում լեզուն դիմում է հարադրությանը (գրել տալ, կարդալ տալ, դիտել տալ, բերել տալ և այլն. մշելի է, որ սրանք հիմնականում ներգործական սեռի բայեր են)։ Հակառակ պարագայում էլ հարադիր կազմությունն է խորթ լեզվական սովորույթին. լեզուն մախընտրում է ածանցական կազմությունը (հիվանդացնել, առողջացնել, աճեցնել, ծլեցնել և այլն. սրանք էլ հիմնականում չեզոք սեռի բայեր են)՝։ Բայերի մի որոշակի խմբի համար էլ սովորական են թե՛ ածանցմամբ, թե՛ հարադրությամբ կազմվող պատճառականները (հիշեցնել – հիշել տալ, խոսեցնել – խոսել տալ, զգացնել – զգալ տալ և այլն՝ գերազանցապես ասացական կամ մտածական բայեր)։ Ջուզահեռ ձևերից մորմատիվ քերականություններն առավել հանձնարարելի են համարում ածանցումով կազմվածները։ Հարադրավոր ձևերն ընդհանրապես թերևս ավելի հաճախական են խոսակցական տարբերակում, թեև վերջինիս համար ածանցական կազմությունները մույնպես հարազատ են։ Ավելին. խոսակցականում երբեմն հանդիպում են գրական լեզվին խորթ ածանցավոր ձևեր, որոնք յուրահատուկ (երբեմն՝ ոչ պատճառական) իմաստներով են կիրառվում (պարապեցնել (պարապցնել, լվացնել և այլն)։

Ինչ վերաբերում է պատճառականության արտահայտման այս երկու եղանակների համատեղմամբ ստեղծվող ձևերին՝ զգացնել տալ, հիշեցնել տալ, խմեցնել տալ և այլն), սրանք միանշանակորեն մերժելի պիտի համարվեն գրական մորմի տեսակետից՝ թերևս բացառություն անելով այն սակավ դեպքերի համար, երբ, իրոք, անհրաժեշտ է լինում կրկնակի պատճառականություն արտահայտել։ Գրական լեզվի համար անընդունելի այս-

¹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջք 588–589։

այիսի կազմությունները, այնուամենայնիվ, խոսակցական լեզվում հաճախ են գործածվում. հավանաբար սա է հիմք տվել գրել դպրոցական դասագրքում դրանք որպես գրական ընդունելի ձևեր ներկայացնելուն: «Մերօրյա հայերենում անցյալ լեզվավիճակի համեմատությամբ պատճառականի կազմության մատնանշված շեղումները (նկատի ունի կրկնակի պատճառականները – Լ. Թ.) համեմատաբար նվազել են, նկատվածների և արձանագրվածների մեծ մասն էլ առավելապես գրական լեզվի խոսակցական տարբերակի են բնորոշ», – պնդում է Ջ. Աղաջանյանը¹:

Տարբերակներին զուգահեռ գործածության է արձանագրվում նաև պատճառական բայերի՝ անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում: Խոսքը վերաբերում է սրանց կանոնավոր՝ քեական հիմքով (հիշեցր-ի, -իր, -եց) և ցոյական հիմքով՝ ոչ ճիշտ համարվող ձևերին (հիշեցրեցի, -իր, -եց): Այս վերջինները ստեղծվում են պարզ բայերի՝ ցոյական հիմքով ձևերի (գրեց-ի, կարդաց-ի) համաբանությամբ և, պետք է ասել, բավական տարածված են մանավանդ չվերահսկվող գրական խոսքում, լրատվամիջոցների լեզվում: Սրանց մասին նշել է դեռևս Թ. Ղարաբյուլյանն իր վերը հիշատակված աշխատանքում. «Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում խոսակցական լեզվում լայնորեն տարածվեցին -եցն, -ացն, -ցն – ածանցներով կազմված պատճառական բայերի անցյալ կատարյալի հանգցրեցի (հանգեցրեցի) դարձրեցի, վերցրեցի, հիշեցրեցի, զարմացրեցի և նման ձևեր.....: Նույն սկզբունքով շատ սովորական են փախցրեցի, վախեցրեցի, բարձրացրեցի, հասկացրեցի, զարմացրեցի, հագցրեցի, կպցրեցի, փայլեցրեցի, հեշտացրեցի, բարկացրեցի, ջղայնացրեցի, քաղցրացրեցի, խորացրեցի, պնդացրեցի և նման ձևերը: Սրանց ավանդական՝ կանոնական փախցրի, վախեցրի, բարձրացրի, հասկացրի, հանգցրի, կպցրի, ջղայնացրի, քաղցրացրի և այլ ձևերը գնալով ավելի սահմանափակ կիրառություն են ստանում խոսակցական լեզվում»²: Կարելի՞ է արդյոք արձանագրել, որ Թ. Ղարաբյուլյանի նշած այս միտումը այսօրվա խոսակցական հայերենում պահպանվել կամ խորացել է: Կարծում ենք՝ ոչ: Արդի առօրյա-խոսակցական լեզվի կիրառության մեջ մեր դիտարկմամբ առավել հաճախ հանդիպում են կարճ ձևերը (հանգցրի, հիշեցրի, փախցրի և այլն), և սա հավանաբար լեզվի տնտեսման օրենքի գործողությամբ պետք է բացատրվի, ոչ թե, ասենք, հաղորդակցվողների կողմից լեզվական կանոնին հետևելու հատուկ ջանքի գործադրմամբ: Ընդհակառակը, մենք կարծում ենք, որ երկար (ոչ ճիշտ) ձևերի (հիշեցրեցի, փախցրեցի և այլն) կիրառությունն է հենց թելադրված կարծեցյալ կանոնը պահելու ճիգով և՛ գրական լեզվում

¹ Ջ. Աղաջանյան, նշվ. աշխ., էջ 270:

² Թ. Ղարաբյուլյան, նշվ. աշխ., էջ 100:

(հատկապես պաշտոնական խոսքում), և՛ նրա խոսակցական տարբերակում:

Ընդհանրապես կարճ ձևերին նախապատվություն տալը խոսակցական լեզվի բնութագրիչ գծերից մեկն է (հմմտ. հրամայական եղանակի վերաբերյալ ձևերը): Դրա վկայությունը պետք է համարել նաև արդի խոսակցականում, մանավանդ երիտասարդների խոսքում գործածվող՝ սահմանականի անցյալ կատարյալ ժամանակի ցոյական հիմքով կազմվող կանոնական ձևերի փոխարեն դրանց «կրճատված» տարբերակների գործածությունը՝ զրի (փխ.՝ գրեցի), խմանք (փխ.՝ խմեցինք), նստա (փխ.՝ նստեցի) և այլն: Որպես անցյալ կատարյալ ժամանակի կազմության՝ խոսակցական լեզվում հաճախ հանդիպող միտում՝ պետք է արձանագրել ոչ միայն ցոյական հիմքի փոխարինումը պարզ հիմքով, այլև պարզ բայերին բնորոշ -ի, -իք, -ինք, -իք, -ին վերջավորությունների փոխարեն -ա, -ար, -ալ, -անք, -աք, -ան ձևերի կիրառությունը՝ կանգնա, նստա, սկսա և այլն): Ընդգծված ժարգոնային երանգ ունեն (հավանաբար բարբառից եկող) հատկապես կրավորական վ ածանցով այդ կարգի կազմությունները՝ թափվալ, համաձայնվալ, հաջողվալ և այլն:

Սահմանական եղանակը խոսակցական լեզվում գրական լեզվից տարբերվող ձևեր է արձանագրում նաև վաղակատար դերբայով կազմվող ժամանակաձևերի՝ դերբային նախադասվող օժանդակ բայով կազմություններում: Սրանց մեջ նկատվում է վաղակատարի -ել վերջավորության լ-ի անկման միտում՝ ակներևաբար արտասանական գործոնով պայմանավորված: Օրինակ՝ ես եմ ասե, գիրքս չեմ բերե, ոչ մի բան չեմ տվե, դու ես մոռացե և այլն: Շեշտակիր ձայնավորին հաջորդող բաղաձայնի անկումը բառավերջում պատճառ է դարձել փաստորեն յուրահատուկ դերբայական ձևերի առաջացման խոսակցական լեզվի մեջ: Հիշենք, որ մույն այդ գործոնի ազդեցությամբ է ժամանակին առաջացել արդի հայերենի ժխտման դերբայը:

= **Բազմապատկական** (նաև զորացման կամ սաստկական) ածանցներով կազմված բայերը ավանդականորեն առավել հաճախված են խոսակցական լեզվում (գրականի համեմատությամբ), իսկ որոշ ածանցներով կազմություններն էլ ակնհայտ բարբառաբանություններ են: «Այսպիսի ածանցման հարցում գրաբարը շատ զուսպ էր,– գրում է Ա. Աբրահամյանը.– մեր հին մատենագրության մեջ կարելի է հանդիպել շատ քիչ օրինակների: Ժամանակակից արևելահայ գրական լեզուն գրաբարի համեմատությամբ մի քիչ ավելի ազատ է բազմապատկական ածանցների գործածման մեջ, իսկ բարբառների համեմատությամբ չափավոր է, ընտրելով բարբառային ձևերը՝ հղկում է ու պատշաճ գործածմամբ ներառում իր մեջ»¹: Թերևս ճիշտ կլինի արձանագրել, որ արդի խոսակցական հայերենը այս

¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 270:

կազմութեամբ բայերի գործածութեան տեսակետից միջին դիրք է գրավում բարբառների և գրական հայերենի միջև: Գրական լեզվի համար բազմապատկական ածանցներից առավել գործածականը **-ոտ**-ն է. Ա. Աբրահամյանը բերում է դրանով կազմված բայերի ցանկը՝ ըստ Սս. Մալխասյանի բառարանի (100 բայ, որոնցից Մալխասյանը հանձնարարելի է համարում 36-ը՝ առանց նշելու հնացած, հազվադեպ կամ բարբառային լինելու հանգամանքը): Սրանցից էլ Ա. Աբրահամյանը «արևելահայ գրական լեզվի արդի շրջանում այս կամ այն չափով գործածական» է համարում մոտ մեկ տասնյակը՝ բռնոտել, խոցոտել, ծակոտել, կապոտել, կծոտել, կոխոտել, կրծոտել, հոշոտել, մորթոտել, սատկոտել, ցատցոտել, փողոտել¹: Նշելի է, որ գրական լեզուն հաճախ նախընտրում է այս բայերի ածանցազուրկ տարբերակները (եթե, իհարկե, հատուկ անհրաժեշտություն չկա շեշտելու կերպային իմաստները), մինչդեռ խոսակցականն ազատորեն գործածում է ածանցավոր ձևերը: Գրեթե նույն կարգով են բաշխվում բազմապատկական մյուս ածանցները՝ **տ**, **ատ**, **կտտ**, **կռտ**, **շտ**, **ոտ**. սրանց կիրառության առավել հարազատ միջավայրը խոսակցական լեզուն է, որն առավել ընկալունակ է բարբառային տարրերի նկատմամբ: Գրական նորմի սահմաններում գրեթե չեն հանդիպում բռնոտել, բանդոտել, խառնշտ(որ)ել, ջարդոտել, ցատկոտել, մինչդեռ կտրտել, բոցկլտալ, փայլատակել տիպի կազմությունները գրական լեզվի շրջանակում ավելի սովորական են: Խոսակցական լեզվին առավել բնորոշ են նաև բազմապատկական իմաստի արտահայտման մյուս եղանակով՝ արմատի կրկնությամբ կազմվող ձևերը՝ ծամծմ(որ)ել, պաչպչել, ծալծել, կծմծել և այլն:

= Կրավորական վ ածանցով կազմվող բայերի՝ խոսակցական լեզվին բնորոշ դրսևորումների մասին խոսելիս պետք է առանձնացնել երկու կարգի իրողություններ՝ նախ՝ գրական նորմի տեսակետից սխալ և մերժելի կազմություններ, ապա՝ կանոնական կազմությունների ոչ ճիշտ կիրառություններ:

Գրական կանոնի տեսակետից մերժելի են չեզոք սեռի բայերից վ ածանցով կազմվող այնպիսի ձևեր, ինչպիսիք են տուծվել², բռնվել (ինձնից բռնվիր), վիճվել, նախանձվել, խնդրվել, պարապվել, քծնվել, խաչակնքվել, սրճվել և այլն³: Խոսակցական լեզվում տարածված այսպիսի կազմությունները ստեպ-ստեպ հանդիպում են նաև գրական լեզվում. սա հետևանք է բայիմաստի սխալ ընկալման կամ գրական լեզվի կանոնի չիմացության: Երիտասարդների խոսքում հաճախ են գործածվում լուվել (սպասել նշանա-

¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 272:

² Տուծվել ձևը հետևանք է «տուծել» բային «պատծել» իմաստի վերագրման:

³ Հայտնի հեռուստահաղորդումներից մեկի վարողը, օրինակ, այսպիսի ձևակերպում արեց. «դա է, որ վերաճվում է գաղափարախոսության»:

կությամբ), ցնդվել, ցվովել (վ-ի կրկնությամբ և այլ) ձևեր: Արտառոց սխալակազմություններ ևս հանդիպում են՝ տվցվել (փողը պիտի տվցվի), լովցվել («ստեղ լովցվել են» – գովազդային հոլովակից) և այլն: Վ-ին զուգորդվող ն ածանցով յուրահատուկ կազմություններ են կապնվել, խաբնվել, խփնվել (գժվել նշանակությամբ):

Երկրորդ կարգին են վերաբերում կրավորական կանոնավորական կազմությունների սխալ կիրառությունները, որոնք, մերժելի լինելով գրական վերահսկվող խոսքում, արդարացված չեն նաև խոսակցական նորմի տեսակետից: Խոսքը վերաբերում է կրավորական սեռի բայերի՝ ոչ կրավորական կառուցվածքի նախադասություններում գործածելու դեպքերին, որոնք ԶԼՄ-ների խոսքում և պաշտոնական ելույթներում սակավադեպ չեն: Օրինակներ. «Մեր կատարված աշխատանքը գոհացուցիչ է», «Ձեր սիրված երգչի անունը ուղարկեք», «Հագեցված է մեր երկրի քաղաքական կյանքը», «Սփյուռքում մեծացված երեխաները ազգասեր են» (հեռուստահաղորդումներից) և այլն: Այլևս չենք խոսում վերաբերել – վերաբերվել, սպասել – սպասվել և այս կարգի զույգերի մասին, որոնց ճիշտ կիրառության հանձնարարականները շատ են մասնագիտական և հանրամատչելի գրականության մեջ:

Սոսկածանցավոր բայերի՝ խոսակցական լեզվում ունեցած կիրառությունների առընչությամբ պետք է արձանագրել չ ածանցով կազմությունների՝ խոսակցական տարբերակից աստիճանաբար դուրս մղվելու փաստը: Արդի հայերենում առանց այն էլ ոչ մեծ թիվ կազմող այս բայերը խոսակցական լեզվում կրում են հետևյալ կարգի փոփոխություններ.

ա) -չ- ածանցը փոխարինվում է -ն-ով՝ թոչել–թոնել, փախչել–փախնել, կաչել–կպնել, դիպչել–դիպնել,

բ) -չ- ածանցն ընկնում է՝ կորչել–կորել, սառչել–սառել, ուռչել–ուռել, հանգչել–հանգել,

գ) -չ-ն փոխարինվում է վ-ով՝ հալչել–հալվել, փլչել–փլվել:

Այս տեղաշարժերն արձանագրվում են ոչ միայն բայերի ուղիղ ձևերում, այլև հիմքերի ու թեքված ձևերի կազմության մեջ: Այսպես, սառչել, ուռչել, կորչել բայերի դերբայական և դիմավոր շատ ձևեր կազմվում են պարզ բայերի կանոնով՝ սառում են, կորում են, հանգում է և այլն, կատարյալի արմատական հիմքի փոխարեն հանդես է գալիս ցոյական հիմքը՝ սառեցի, հանգեց, ուռեց (կորել բայի դեպքում գործածվում են կատարյալի ձևերը՝ կորա, կորաք ևն): Որոշ դեպքերում էլ -չ- ածանցը չի գիտակցվում, և կազմվում են դիպչեց, հանգչեց, հանգչել է, դիպչել է, չի դիպչել և նման ձևեր:

Սա մեր երևույթ չէ մեր լեզվի համար, և խոսակցականում լայնորեն գործածվող ձևերը վաղուց ներթափանցել են նաև գեղարվեստական գրականության լեզու: «Տաղանդավոր արձակագիր Ա. Բակունցը թոչել ձևը գրե-

քե լիովին փոխարինում է **թոնել** ձևով,– գրում է Ա. Աբրահամյանը և հետո ավելացնում, Սակայն ինչպիսի հաճախականությամբ և որ հեղինակի երկերում էլ գործածված լինեն **-ն-** ածանցով փոխարինված ձևերը, մինևույն է, նրանք դեռևս ժամանակակից արևելահայ գրական լեզվում չեն բարձրացել մաքուր գրական ձևերի աստիճանին և ճանաչվում են իբրև բարբառային ձևեր կամ գուցե ավելի ճիշտ կլիներ ասել շատ նվազ չափով են դուրս եկել նեղ բարբառային շրջանակներից և մտել հասարակ խոսակցական խոսքի մեջ, բայց առավել չափով բարբառային են, քան գրական: Ոչ մի խոսք չի կարող լինել այն մասին, որ հանդիպող նման ձևերից գրական լեզվի համար հանձնարարելի են միայն **-չ-**ով ձևերը»¹: Երախտավոր հայագետի այս կտրուկ ձևակերպումը այսօր քերևս որոշ վերապահումով պիտի ընդունվի՝ հաշվի առնելով խոսակցական ձևերի՝ գրական լեզվում հաճախանալու խորացող միտումը:

Սոսկածանցավոր մյուս ձևերի (**-ան-**, **-են-**, **-ն-** ածանցներով կազմվածների) խոսակցական կիրառությունները գրականի համեմատությամբ ավելի քիչ տարբերություններ են հանդես բերում: Կարելի է նշել քերևս **-ան-** ածանցի **ա-**ի անկումով որոշ ձևեր, որոնք բարբառի կամ ժարգոնի կնիք են կրում՝ (նաև՝ գիտնալ, վախճալ՝ **ե-**ի անկումով) գիտնալ, հիվնդնալ, չորնալ, կարողնալ, անուշնալ և այլն, **-են-** ածանցի՝ **-ան-**ով փոխարինվելու դեպքեր՝ կարենալ–կարանալ, վեր կենալ–վեր կանալ (կատարյալի **կաց** հիմքի ազդեցությամբ), մերձանալ, հոռանալ (հոռենալ ձևը հնացած է) և այլն: Խոտելի են **հեռվանալ**, **մոտիկանալ**, **պատկանալ** տիպի կազմությունները, որոնք խոսակցականում երբեմն հանդիպում են հավանաբար բարբառի ազդեցությամբ: Նշելի է նաև **թողնել** բայի՝ **ն-**ի անկումով ձևերի կիրառությունը՝ չեն թողում, աշխատում ենք մեկնաբանության տեղ թողել (պատգամավորի ելույթից) և այլն:

Բայի եղանակային ձևերի՝ խոսակցական յուրահատուկ կազմությունների ու կիրակությունների արդեն նշված դեպքերին կարելի է հավելել նաև հետևյալները.

ա) Ի տարբերություն գրական լեզվի՝ խոսակցականում հանդիպում են **հարակաար+եմ**, **էի** կառույցով բաղադրյալ ստորոգյալներ (այլ մոտեցումով՝ սահմանական եղանակի ժամանակային ձևեր) նաև ներգործական բայերի համակարգում: Արևելահայ գրաան լեզուն նման դեպքերում գործածում է այդ բայերի կրավորական ձևերը, հմմտ. դրած է(ա) – դրված է, գրած է(ա) – գրված է, կտրած է(ա) – կտրված է, քանդած է(ա) – քանդված է և այլն: Այս կառույցի, ինչպես նաև անվանական ստորոգյալների ժխտական ձևերի կազմության ժամանակ խոսակցական լեզուն նախընտ-

¹ Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 264, 265:

րում է եզակի երրորդ դեմքի օժանդակ բայի չի տարբերակը գրական չէ-ի փոխարեն՝ նստած չի, քնած չի, մարդ չի և այլն:

բ) Հազվադեպ կ պայմանական եղանակիչը կամ չ ժխտական մասնիկը դրվում են հարադրավոր բայի ոչ բայական բաղադրիչի վրա՝ կման գամ, չդուս գաս, կվեր կենաս, չքույլ տաք, կբաց անեն և այլն:

գ) Մի հորդորական վերաբերականի՝ հրամայական բայերի հետ գործածվելու դեպքերը, խոսակցական լեզվին հատուկ լինել, անցել են մահ գեղարվեստական խոսք՝ մի տուր տեսնեն, մի գնա բեր և այլն: Սակայն հատ բառի հավելմամբ կիրառությունները՝ մի հատ գնա, մի հատ ասա և այլն, տարածված են բացառապես խոսակցական լեզվում:

դ) Գալ, տալ անկանոն բայերի սահմանական ներկա և անցյալ անկատար ձևերում առկա է դերբայի ս վերջնահնչյունի անկման միտում՝ օժանդակ բայի նախադաս կիրառության դեպքերում. հմմտ.՝ չեմ գալի, դուր է(չի) գալի, չի տալի և այլն:

ե) Դառնալ անկանոն բայի դարձ- հիմքի փոխարեն դառ- հիմքով կազմություններ՝ դառել է (փխ.՝ դարձել է), դառավ (փխ.՝ դարձավ) և այլն: Ասել բայի ասեցի, ասի և այլ ձևերի կիրառություն՝ ասացի և այլ ձևերի փոխարեն: Անկախ դերբայական ձևերից նշելի է խոսակցականում -խս-ով համակատարի փոխարեն անորոշի բացառականի կիրառությունը՝ տուն գնալուց տեսա (փխ.՝ գնալիս) և այլն:

ը) Վերլուծել, վերածել, ներմուծել, գործածել և այս կարգի նախածանցավոր բայերի խոնարհված ձևերը հաճախ կազմում են հարադիր բայերի կանոնով, որը նույնպես խոսակցական իրողություն պիտի նկատվի, քեւ գրական բանավոր խոսքում էլ հաճախ հանդիպում է (վեր է ածվում, գործ է ածում, ներ են մուծում և այլն):

թ) Դիմավոր բայ+անորոշ դերբայ կառույցի մեջ խոսակցական լեզվում անորոշ դերբայի փոխարեն հաճախ գործածում է ըղձական եղանակի ձևը՝ ուզում եմ գնամ, որոշել եմ չխոսեմ, այլև՝ կարամ բերեմ և այլն):

«ՁԻՆՎՈՐ» ԲԱՈ-ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բառերի իմաստային վերլուծությունը ենթադրում է գտնել այն բոլոր կապերը, որ դրսևորում է տվյալ հասկացությունը լեզվական ամենատարբեր կապակցություններում: Հենց այդ կապերի ամբողջությունն էլ բնորոշում է տվյալ բառական միավորի իմաստային ամբողջականությունը: Անկասկած ամեն մի հասկացություն, որ գործառվում է մի որևէ լեզվում, ունի նման կապեր նաև այլ լեզվական համակարգերում, սակայն սրանց իմաստային դրսևորումները միշտ չէ, որ կարող են լիովին ծածկել միմյանց, և սա կարող է հատկապես քարգմանական բնույթի աշխատանքներում լուրջ վրիպումների պատճառ դառնալ: Գործը առավելապես բարդանում է անգամ ոչ գեղարվեստական տեքստերի քարգմանության ժամանակ, որ մասնագիտական եզրերի ընտրությունը ոչ միշտ է հնարավոր ներկայացնել մեկ բառային հասկացությամբ, որով էլ առաջանում է տերմինային անհստակություն:

Բառ-հասկացության ոչ միայն քերականական-լեզվական բովանդակության, այլև իմաստային կապերի հաշվառմամբ է հնարավոր մեքենական քարգմանության բնագավառում առավել ընդունելի արդյունքներ ստանալ: Փորձենք սա ներկայացնել **զինվոր** հասկացության օրինակով: Մի կողմ թողնելով նրա քերականական հատկանիշների քննությունը, այն է՝ գոյական, քանձբացական, անձ, եզակի թիվ, անորոշ առում, հոլովական չթերված ձև, ի հոլովման ենթակա բառ, կազմությամբ ածանցավոր, արմատի է-ի պատմական հնչյունափոխություն, դիտարկենք այս բառին առնչվող իմաստային կապերն ու հարաբերությունները:

Բնականաբար իմաստային կապերի նշվող հատկանիշները կարող են կիրառվել նաև այլ բառային հասկացությունների բովանդակային կողմերի բացահայտման համար: Հասկացության մասին լիակատար պատկերացում կազմելու համար այստեղ պետք է ընդգրկել այս բառի ինչպես տերմինային, այնպես էլ լայն բառային նշանակությունները, այլև բառակապակցություններում և դարձվածային միավորներում հանդես գալու հնարավորությունները:

Անձ ցույց տվող հասկացությունների համար կարելի է առանձնացնել հետևյալ իմաստային հատկանիշները՝ **սեռ, տարիք, կրթություն, զբաղմունք-մասնագիտություն, սոցիալական, նյութական ու ֆիզիկական վիճակներ, ընտանիք, հագուստ, առնչությունը կրոնին և այլն:**

Այժմ տեսնենք, թե այս հատկանիշները ինչպես են հարաբերվում մեր կողմից ընտրված բառ-հասկացությանը:

ա/ **Մեղք:** Հայ իրականության մեջ խաղաղ պայմաններում *զինվոր* ասելով հասկանում են արական սեռին պատկանող երիտասարդի, որը օրենքով կանչվել է պարտադիր զինվորական ծառայության. սակավադեպ իգական սեռի ներկայացուցիչները բանակում կարող են լինել պայմանագրային հիմունքներով: Իսրայելի բանակում կան իգական սեռին պատկանող անձանց ստորաբաժանումներ: /Մարտիկ, բանակային, ֆիդայի, ազատամարտիկ, ռազմիկ, զինվորական, հրացանակիր, հետևակային, զորական հոմանիշային հասկացությունները թերևս կարելի է դիտարկել հասկացության լեզվական-քերականական բաժնում/:

բ/**Տարիքը:** Ձինվորական ծառայության կանչվում են 18 տարին լրացած անձինք և մինչև զորացրման հրամանի հրապարակումը մնում են բանակում: Հայկական բանակում այն առնվազն երկու տարի է: Մինչզորակոչային տարիք կարելի է համարել 16-18 տարեկանը:

Պայմանագրային կարգով ծառայող զինվորների տարիքը կարող է լինել 21 և ավելի: Նման տարիք կարող են ունենալ նաև այն անձինք, որոնք լրացրել են իրենց տարեկետման ժամկետները և նորից կանչվել պարտադիր զինվորական ծառայության: Բոլոր դեպքերում զինվորի տարիքը խաղաղ պայմաններում հիմնականում չի գերազանցում 30 տարեկանի սահմանները: Այս դեպքում նկատի է առնվում իհարկե ոչ սպայական անձնակազմը:

գ/ **Կրթությունը:** Ձինվորների մեծամասնությունը ունի միջնակարգ կրթություն: Համեմատաբար փոքր տոկոս են կազմում բուհերն ավարտած և տարեկետման ժամկետն ավարտած ու բանակ կանչվածները, որոնք ունեն բարձրագույն կրթություն: Ձինվորների մի մասը բանակում կարող է ստանալ միջնակարգ տեխնիկական որակավորում և դառնալ վարորդ, տեխնիկ, կապի մասնագետ, խոհարար և այլն: Առհասարակ բանակում զինվորների գերակշիռ բանակը կազմում են բանվորների, գյուղացիների, արհեստավորների ընտանիքների ներկայացուցիչները: Չունենալով համապատասխան պատրաստակաություն՝ սրանցից շատերը ծառայում են ցամաքային զորքերում և շինգումարտակներում, մինչդեռ լայն գիտելիքներ և որակավորում ունեցող զինվորները կարող են ծառայել առավել էլիտար ստորաբաժանումներում՝ հրթիռային, օդային, դեսանտային: Եթե այլ երկրների բանակների համար սրանց մեջ մտնում են նաև ծովային զործի գիտակները, ապա հայկական բանակում նման ստորաբաժանումներ չկան: Աստիճանաբար այս համամասնությունը փոխվում է, և առավել մեծ տոկոս են կազմում բուհերն ավարտածները, բանի որ բնակչության մեջ ավելանում է նրանց տեսակաար կշիռը, այլև նորագույն տեխնիկական սարքերը բանակում ևս կարիք ունեն բարձրորակ մասնագետների:

Բժշկական հանձնախմբերի կողմից հետազոտված և ծառայության համար պիտանի համարված բոլոր երիտասարդները, որոնց տարիքը չի գերազանցում 28 տարեկանը, պարտավոր են կանչվել պարտադիր զինվորական ծառայության:

դ/ **Սոցիալական վիճակը:** Զինվորները հիմնականում սոցիալական վատ պայմաններում ապրող ընտանիքների երեխաներ են: Շատերը չեն կարողացել բարձրագույն կրթություն ստանալ նյութապես անապահով լինելու հետևանքով: Նրանք բանակում չեն կարող այնքան գումար վատակել, որ կարողանան օգնել իրենց ընտանիքներին: Երբեմն ընտանիքի անդամներն են փորձում հոգալ նրանց մասին: Պայմանագրային կարգով ծառայողների վիճակը այլ է:

ե/ **Ֆիզիկական վիճակը:** Զինվորները ֆիզիկապես առողջ մարդիկ են: Սինչ զինվորական ծառայության անցնելը նրանք ենթարկվում են բժշկական հետազոտության, և ֆիզիկական ու հոգևոր խանգարումներ ունեցողները ազատվում են զինվորական ծառայությունից: Հայկական բանակում հասակը միջին ցուցանիշներով տատանվում է 160-180 սմ սահմաններում: Մաշկի գույնը՝ սպիտակամորթ: Աչքերի գույնը՝ թուխ, մազերը՝ սև: Ունեն ինքնուրույն տեղաշարժվելու հատկանիշ: Կարող են հանդերձանքով շարժվել ժամում գրեթե 5 կմ արագությամբ:

զ/ **Ընտանեկան դրությունը:** Զինվորների գերակշիռ մասը ամուսնացած չէ: Նրանցից շատերը մինչև զորակոչվելը ապրել են իրենց ծնողների հետ, սեփական գործ կամ հիմնական մասնագիտություն չեն ունեցել և առավելապես բանակ են զորակոչվել դպրոցն՝ ավարտելուց հետո:

է/ **Հագուստը:** Եթե մարդկային գործունեության բազմաթիվ ոլորտների համար հագուստը չի մտնում տարբերակման էական հատկանիշների մեջ, ապա զինվորը տարբերվում է նրանցից արտաքինով հենց համանման զինվորական հագուստով: Հանդերձանքը կարող է լինել ինչպես ամառային, այնպես էլ ձմեռային, որի փոփոխությունը կատարվում է միայն վերադասի հրամանով: Հատուկ միջոցառումների համար գոյություն ունի նաև շքերթային հանդերձանք: Առանձին զորատեսակների զինվորները միմյանցից տարբերվում են նաև հատուկ զինանշաններով և ուսադիրներով: Երկարատև արշավների ժամանակ կրում են ուսապարկեր:

ը/ **Հավատալիքը:** Զինվորները, ինչպես նաև հասարակության այլ խավերի ներկայացուցիչներ, մտնում են աշխարհականների կազմի մեջ և հակադրվում կրոնավորներին, որոնք առանձին դաս են կազմում իրենց ստորակարգությամբ՝ քահանա, երեց, վարդապետ, եպիսկոպոս, կաթողիկոս և այլն: Թեև սահմանադրությամբ ամրագրված է խղճի ազատություն, սակայն հայկական բանակում պաշտոնապես գործելու թույլտվություն ունեն հայոց ավանդական քրիստոնեական առաքելական եկեղեցու սպասավորները:

թ/ **Ստորադասությունը:** Զինվորները գտնվում են ծառայական ստորակարգության ամենից ցածր աստիճանում: Նրանք պարտավոր են կատարել իրենցից բարձր կարգավիճակում գտնվողների հրամանները, իսկ ավելի ցածր կամ ենթակայության մեջ գտնվողներ չկան: Վերադասների հրա-

մանները չկատարելու դեպքում նրանք ենթակա են պատասխանատվության: Սա ձևակերպված է օրենքով:

Բանակ զորակոչվածները իրենց հավատարմությունը զինվորական կանոնադրությանը հավաստում են երդմամբ: Միայն երդումն ընդունելուց հետո զինվորը կարող է ունենալ այդ կանոնադրությամբ ամրագրված իրավունքներ ու պարտականություններ: Չինվորները ունեն ընտրական իրավունք և իրականացնում են այդ իրավունքը իրենց համոզմունքների համաձայն: Բանակի նպատակը՝ հայրենիքի պաշտպանությունն է արտաքին բշխման:

Երկրի ներքաղաքական խնդիրները, հասարակական կարգի պահպանումը ներքին գործերի նախարարության գործերի պարտականությունն է:

Բանակում զինվորները կարող են գտնվել ամենատարբեր ստորաբաժիններում՝ ջոկ, դասակ, վաշտ, գունդ, գումարտակ և այլն: Ըստ գործունեության հիմնական տարածքի՝ գտնվել ցամաքային, օդային կամ ծովային ուժերի թվում: Սրանք ևս ունեն իրենց տարատեսակները՝ հրթիռային, դեսանտային, կապի, սակրավորների և այլն:

Չինվոր հասկացությունը սերտորեն առնչվում է ստորակարգության այլ հասկացությունների, ինչպիսիք են՝ սերժանտ, եֆրեյտոր, ավագ, լեյտենանտ, կապիտան, մայոր, գեղապետ, գեներալ, մարշալ և այլ զինվորական կոչումներ արտահայտող բառային միավորներ:

Չինվորական կոչում չունեցողներին կամ ստորակարգության առաջին կարգին պատկանողներին անվանում են շարքային զինվոր կամ պարզապես շարքային:

Բառային այս հասկացության ոլորտի մեջ են մտնում զինվորական տեխնիկայի և սպառազինության հետ կապված բազմաթիվ հասկացություններ՝ հրացան, ատրճանակ, նռնակ, ավտոմատ, սվին, սաղավարտ, խրամատ, բլինդաժ, հրանոթ, արկ, ական, գնդացի, տանկ, ականանետ, սավառնակ, ուղղաթիռ, հաժանավ և այլն:

Բառային մի առանձին խմբի մեջ պետք է ընդգրկել որոշ կարգի բառակապակցություններ, ինչպիսիք են՝ զինվորական գործ, ստորաբաժանում, երդում, ծառայություն, տեխնիկա, զինկոմիսարիատ, զինդեկ, բազա և այլն:

ժ/ Երկիրը: Հայերենի բառապաշարում առանձին երկրների զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց բնորոշող բառ-հասկացությունների մեջ կան այդ տարածքի պետական, իշխանական համակարգերին բնորոշ արտահայտություններ: Այսպես, երբ հանդիպում ենք *ենիշերի* արտահայտությանը, ապա այն վերաբերում է Թուրքիային, *կոզակը*՝ Ռուսաստանին, *սամուրայը*՝ Ճապոնիային, *ֆրիցը*՝ ֆաշիստական Գերմանիային և այլն: Երբեմն բանակ նոր զորակոչված հայ երիտասարդներին փորձառուները անվանում են *վառեկներ* կամ ռուսերենի ազդեցությամբ *սալազաներ*:

ժա/ Ժամանակը: Բառ-հասկացության իմաստային այս հատկանիշը լայնորեն կապվում է որևէ ժողովրդի կյանքում կատարված կարևորագույն իրադարձությունների հետ, որոնք, սակայն, միշտ չէ, որ համընկնում են լեզվի պատմական ժամանակաշրջանները ընդգրկող ստորաբաժանման հետ: Գրավոր հայերենի համար ընդունված է նրա լեզվական երեք վիճակների՝ գրաբարի /5-11դ./, միջին հայերենի /12-16դ./ և արդի հայերենի /17-ից հետո մինչև այժմ/ ստորաբաժանումը: Բառերի իմաստային առանձնահատկությունների դրսևորման համար կարելի է որոշ փոփոխություններ նկատի առնել ժամանակային հատվածների առանձնացման համար՝ սրանց մեջ ընդգրկելով ինչպես նախագրային ժամանակաշրջանը, այնպես էլ առանձին դեպքերում առանձնացնելով որոշակի դարեր ու նույնիսկ տարիներ: Պետք է նկատի ունենալ, որ պատմական քերականության հետ կապված հասկացությունների օգտագործումը՝ համաժամանակություն տարժամանակություն, արխանիկ և ժամանակակից բառապաշար, բառերի իմաստափոխություն և փոխառյալ բառերի գործածության, հնչյունական օրենքների գործադրության և դադարեցման ժամանակաշրջաններ և այլն, կարող են նոր ճյուղավորումների հիմք հանդիսանալ:

Փոխաբերական կիրառության օրինակներից է. «Ինձ ձեր կուսակցության -զինվորը համարեք»_պատրաստակամ ծառայելու, անվերապահորեն կատարելու տրված հանձնարարությունները:

Փոխառյալ ասացվածք է. «Վատ է այն զինվոր, որը չի ուզում գեներալ դառնալ»- «քշով բավարարվել»:

«Զինվորական կարգապահություն» բառակապակցություն - հստակ ենթակայություն, օրինակելի կարգ ու կանոն:

Ներկա բառ-հասկացության վերլուծությունը չի սպառում ինչպես այս հասկացության բոլոր դրսևորումները, այնպես էլ ընդհանրապես գոյական խոսքի մասային պատկանելությանը բնորոշ բառերի դասակարգման առանձնահատկությունները: Դիտարկելի է, որ առանձին բառ-հասկացությունները կարող են խմբավորվել մի շարք հատկանիշներով ըստ նրանցում առկա իմաստային ամենաբազմազան դրսևորումների: Գործնական աշխատանքներ կատարելու համար անհրաժեշտ է ստեղծել նման հիմունքներով պայմանավորված լայնածավալ բառարան, ուր յուրաքանչյուր բառ ստանում է բառական մյուս կարգի միավորներից տարբերակվող հատկանիշ, որով էլ ի հայտ է գալիս այդ հասկացության գործառության ողջ սպեկտրը: Բացառված չէ, որ նույն բառ-հասկացությունը և առնչվող այլ հասկացություններ, բառական կապակցություններ միավորվեն առավել ընդհանրական խմբեր ներկայացնող բաժիններում, որոնց միավորումը կատարվում է իմաստային որևիցե հատկանիշով: Ասենք մեր կողմից քննարկվող բառային միավորը իր տեղը կարող է ունենալ բանակ կամ ռազմական գործ ավելի ընդգրկուն հասկացական խմբում:

**ԹՈՆՐԻ ՕԴԱՆՑՔԵՎ ԵՐԴԻԿ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ**

Հայերենի բարբառներում, ինչպես հայտնի է, բազմաթիվ հասկացություններ տարբեր անվանումներ ունեն: Այդպիսիք են նաև *թոնրի օդանցք* և *երդիկ* հասկացությունները, որոնց բառային դրսևորումները ներառել ենք «տուն և տնտեսություն» իմաստային դաշտն արտացոլող բառանվանումների մեջ:

Թոնրի օդանցք և *երդիկ* հասկացությունների բառային տարբերակները բարբառներում բազմազան են՝ պայմանավորված իրականության ընկալմամբ, լեզվամտածողության առանձնահատկություններով:

Նախ ներկայացնենք *թոնրի օդանցք* հասկացության բարբառային արտահայտությունները:

1. *Թոնրի օդանցք* հասկացության բարբառային տարբերակ է դիտվել *ակ* բառազուգաբանությունը:

Հր. Աճառյանը այն համարում է բնիկ հայերեն բառ, և «Գավառական բառարանում» *ակ* բառահոդվածում ներկայացված են հետևյալ բառիմաստները՝ 1. քանկագին քար, 2. ջուրին բխած տեղը, աչքը, 3. թոնրին ծակը, որու մեջ օդ կը բանի՝ կրակը հրահրելու համար:

Ակ բառանունը՝ որպես թոնրի օդանցք, հայերենի բարբառներում գործառում է *ակ*, ինչպես նաև բառակապակցային *թոնրի ակ* բառաձևերով:

Մեր բարբառների գերակշռող մասում գործածվում է *ակ* բառանունը: Այն ընդգրկում է բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի (Կարինի բարբառի Կարին, Բասեն, Գյումրի), հարավ-կենտրոնական բարբառախմբի խոսվածքները (Վան՝ *ակ*, Բաղեշ, Մուշ, Սասուն, Մանազկերտ, Ալաշկերտ՝ *ազ*), իսկ բարբառների արևելյան խմբակցությունից՝ Խոյ-Մարաղայի և հյուսիսարևելյան բարբառախմբերը (Ջուղայի բարբառ), ինչպես նաև պարսկահայ խոսվածքները:

Ինչպես նշեցինք, բարբառներում այն հանդես է գալիս առանձին *ակ* և *թոնրի ակ* բառակապակցային ձևերով, որոնք իրենց հերթին ունեն հնչյունական զանազան տարբերակներ՝ *ազ*, *հ'ազ*, *ա՞կ*, *ակ* և այլն: *Թոնրի ակ*-ը՝ *թունդրա ակ*, *թոնդրան ակ*, *թօրվան ակ* (Վան, Շատախ, Բերկրի), *թընդրի ակ* (Բայազետ), *թընդրա հ'ազ* (Ախալքալաք), *թընդրի հ'ազ* (Ախուրյան):

Յուրահատուկ՝ հոլովված բառաձևով է հանդես եկել Ղարաբաղի Մարաղա գյուղի խոսվածքում՝ *ակ* բառի գրաբարյան սեռական հոլովաձևով՝

ական (ի դեպ, Մարադայի բնակիչները հին մարադացիներ են՝ գաղթած Խոյ-Մարադայից):

Նախիջևանի Ազնաբերդ գյուղում *թոնրի օղանցքը* փաստված է *ազ, սն-դու* և *սնչկ* բառաձևերով: Ինչպես նշում է Հր.Աճառյանը, *ակը* գրաբարյան *ակն* բառն է «նոր առումներով հարստացած» (Հր. Աճ., Թիֆլիս, ԳԲ, 1913, էջ 57): Ական և *սնչկ* բառաձևերի առկայությունը ևս հաստատում է այս տեսակետը:

2. *Սնդու*: Բարբառային *սնդու* բառանունը՝ որպես թոնրի օղանցք, տարբեր մեկնաբանությունների առիթ է տվել: Գ. Ջահուկյանը «Հայ բարբառագիտության ներածության» մեջ *սնդու* բառը ներկայացնում է որպես բարբառային հմաբանություն՝ այն կապելով հայերեն ընթացք, ընթանալ-ի. վ. գերմաներեն *sind* «ընթացք, ուղի, ճանապարհ» և հ.-ե. *Sent* - «ուղղվել, գնալ, ընթացք, ուղի, ճանապարհ» բառերի հետ: (Գ.Ջահուկյան, ՀՔՆ, Ե., 1972, էջ 327): Նոր Հայկագեան բառարանի հավելվածում փաստված են *սնկուալ, սնկուարք, սնկվրկալիչ, սնտու* բառաձևերը, որոնց համար տրված են հետևյալ բացատրությունները. «Խուփն կամ դղխաճն սընկուալի. Ծակ կամ խողովակ թոնրի ի ստորե՝ որպես *ծխահանք*. Ընդ որ արծածանեն և գլխարկոյն լուցեալ ի մնա *թոնրի մխանք, սօլուգլուգ*» (ՆՀԲ, հտ. 2-րդ, Ե., 1981, էջ 1066): ՆՀԲ-ն բառի ծագումնաբանության մասին ոչինչ չի տալիս: Հր. Աճառյանը ևս ստուգաբանական ոչ մի մեկնաբանություն չունի. միայն ներկայացնում է բարբառային տարբերակները և տալիս բառի բացատրությունը. «Գետնի վրայ շինված ծակ մ'է, որ նեղ անցքով մը թոնիրին մէջ օղ կը բանի» (Հր. Աճ., ԳԲ, Թիֆլիս, 1913, էջ 976): Հետաքրքրական է, որ Հր. Աճառյանը Արաբկիրի բարբառի համար փաստում է *սնկուալ* բառաձևը, որը հիշատակված է նաև ՆՀԲ-ում: Գիտնականը վկայված *սնդկալ* բառի համար հղում է նաև *ակնկալ*-ին, այնուհետև՝ *ակ* բառաձևին: Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ կարծում ենք, որ *սնկուալ*-ը *սնդու* և *կալել* բառերի համադրումից առաջացած բառաձև է՝ *սնդուի կալիչ* իմաստով: Ըստ ՀԲԱ ծրագրով հավաքած նյութերի՝ Խոտորջուրի և Ախալցխայի Ջուղա և Ծղալթբիլա գյուղերի խոսվածքներում ևս փաստված է *սընկուալ*-ի *սընգվալ* տարբերակը:

Ընդհանրապես բարբառներում *ազը կալել* արտահայտությունը շատ գործածական է: Հնարավոր է՝ այն շորի կտորն է, որով փակել են թոնրի օղանցքը: Այս մասին հիշատակում է նաև Հր. Աճառյանը. «*ակնկալ, սնդուալ, սնդկալ, սնդուեկալիչ* - Հասարակ լաթի մը կտոր, որ թոնիրն ծակը (*ակ, սնդու*) կը թխմեն, որպեսզի օղ քիչ բանելով հրավառ կրակը հանդարտվի» (Հր. Աճ., ԳԲ, էջ 64):

Ինչպես գիտենք, թոնրի օղանցքը մախատեսված է այն բանի համար, որ օղը ներս մտնի, ու կրակը բորբոքվի, և երկար ժամանակ թոնիրը կրակ

ունենա: Այսինքն՝ թոնրի օղանցքը կրակին սնունդ տալու միջոց է: Ենթադրում ենք, որ *սնդու* կամ *սնտու* (ՆՀԲ-ում առկա է *սնտու* տարբերակը) բառաճանաչը կարող է առաջացած լինել *ստնտու* կամ *սննդատու* բառաձևերից՝ իբրև *սնունդ տվող* (ի դեպ, ըստ Հր. Աճառյանի, *սնունդ*-ը և *ստինք*-ը նույն արմատից առաջացած ձևեր են):

Սուն-ը բնիկ հայերեն բառ է՝ հնիս. *psen, pson, psn* (Հր. Աճ., ՀԱԲ, հտ. 4, Ե., 1979, էջ 251): Չնայած բարբառներում *սնվե*-ը և *սուն*-ը քիչ գործածական են, այնուամենայնիվ առկա են, և հնարավոր է՝ լեզվի ավելի հին շերտերի արտացոլում են:

Նույն տրամաբանությամբ ու լեզվամտածողությամբ վերոհիշյալ հասկացության համար հայերենի բարբառներում առկա է *սնվածք* բառաճանաչը, որի արմատական բաղադրիչը նույն *սուն*-ն է, այս անգամ՝ *-վածք* վերջածանցի համադրությամբ:

Սնդու բառանվան տարածական շառավիղը հայերենի բարբառներում ընդգրկում է արևելյան խմբակցության հյուսիսարևելյան բարբառախմբի Արարատյան բարբառի (Փարպի, Առինջ, Երևան, Եղվարդ, Օշական), Ջուղայի բարբառի (Ջուղա, Պարսկահայք), Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի Ղարաբաղի բարբառի (Հաղործ, Խանազահ, Գորիս), Հավարիկի, Շամախիի բարբառները, արևելյան բարբառախմբի (Կարճևան) խոսվածքները:

Սնդու բառաձևն ունի հնչյունական հետաքրքիր տարբերակներ՝ 1. *սոննդ* (Հաղործի Բարագլուխ). 2. *սոնդոո* (Գորիս, Ղափան). 3. *սընդու* (Ջուղա, Եղվարդ):

Կղզյակների ձևով, մեկուսացած գործածվել է նաև արևմտյան խմբակցության որոշ խոսվածքներում. Շապին-Կարահիսար՝ *սունդու*, Երզնկա՝ *սընդու*, Բասեն՝ *սընդուկ*: *Սունդու*-ն բարբառներում օգտագործվել է նույնիսկ *ն* որոշյալ հոդի հավելմամբ. Ղարաբաղ՝ Թալիշ, Հավարիկ, Հաղործ, Նուխի (օրինակ՝ Ղարաղաղի Խանազահ գյուղում ասվել է՝ թորմեն *սոնդոունը* ք'եց): Ինչպես գիտենք, հայերենի բարբառներում ձայնավորահանգ բառերի որոշյալությունը կարող է դրսևորվել նաև *նը* կրկնակի որոշյալ հոդով (օրինակ՝ *Չինը* խատավ): *Սընդու* զուգաբանությունը հայերենի մի շարք խոսվածքներում (Բասեն, Պարսկահայք) հանդես է գալիս մեկ այլ տարբերակով՝ *սընդուգ*, որում, ըստ երևույթին, առկա է *սուն + տուք* բառակազմական կաղապարը (հմտ. *ջրտուք* բառի հետ):

3. *Սնվածք* զուգաբանությունը՝ որպես *թոնրի օղանցք* հասկացության բառանվանում, սահմանափակ կղզիացած ընդգրկում ունի. այն վկայված է Ջավախքի խոսվածքներում և ունի հետևյալ հնչյունական տարբերակները՝ *սընվասք*, *սըմկացք*, *սընվածք*: Ամատունին *սնդու* կամ *սնտու* բառաձևերին

գուգահեռ տալիս է նաև *սնկուածք* բառանունը (*Ս.Ամատունի, Հայոց բան ու բառ, Վաղարշապատ, 1912, էջ 594*):

4. *Ծակ*: Ըստ մեր դիտարկած նյութերի՝ *ծակ* բառանունը՝ որպես *թոնրի* *օղանցք* հասկացության գուգաբանություն, ընդգրկում է որոշակի ենթատարածք՝ Փոքր Ասիայի բարբառախմբի Մալաթիայի (*թոնրի ձագ*), Սեբաստիայի (*ձագ*), Մալաթիայի, Խարբերդի (*ձագ*), Արաբկիրի (*թոնրի ծագը*), ինչպես նաև Եդեսիայի (*թոնրի ձագ*), Տիգրանակերտի բարբառների խոսվածքները:

5. *Չորձ*: Ըստ Հր. Աճառյանի՝ *ձորձ*-ը «գգեստ» նշանակությունն ունի: Գիտնականը, սակայն, բառի հստակ ստուգաբանությունը չի տալիս (*Հր. Աճ, ՀԱԲ, հտ 3, Ե., 1977, էջ 158*): Թոնրի օղանցքը հաց թխելիս փակել են որևէ շորով, որպեսզի թոնրի ջերմությունը դուրս չգա: *Չորձ*-ը հավանաբար եղել է այն շորը, որով փակել են թոնրի օղանցքը: Կարծում ենք՝ *ձորձ* բառանունը իմաստային գուգորդումների շնորհիվ վերածվել է այլ հասկացության՝ *թոնրի օղանցք*-ի անվանման չափանիշի: *Չորձ* բառանունը ևս սահմանափակ կոդիացած ընդգրկում ունի՝ Սասունի բարբառի մի շարք խոսվածքներ (*Հազգո, Հոսներ*):

6. *Ակուկա*: Ապարանի շրջանի մի խոսվածքում, որի բնակիչները Վանից են գաղթել, արձանագրված է *ագուգա* բառաձևը: Ըստ Հր. Աճառյանի՝ *ակուկա*-ն նշանակում է ջրի փողրակ, «հողից թրձած Ռ ձևով հենարան, որ թոնրի ակի մոտ են դնում և վառելիք փայտերը վրան դնում, նույն բառը Կարինում «թոնրի ծակ, սնդու» իմաստն ունի: Համարվում է ասորերենից փոխառյալ բառ *agōgā*» (*Հր. Աճ, ՀԱԲ, հտ. 1, Ե., 1971, էջ 78*):

7. Որպես *թոնրի օղանցք* հասկացության բառագուգաբանություն է փաստված նաև *քամքաշ* բառանունը, որ հանդիպում է Հաղորթի շրջանի մի խոսվածքում: Կարծում ենք՝ սա երևույթը հակիրճ արտահայտելու լեզվական մտածողության արդյունք է՝ *քամի քաշելու միջոց*-ը *քամի+քաշ* բառաբարդմամբ մեկ բառով ձևակերպելու կադապարով, ասել է թե՛ քամքաշը միջոց է, որ թոնիր օղ մտնի, և կրակը թեժանա:

8. Սվեդիայի բարբառում առկա է *բըլիզ* (առկայացված ձևը՝ *բըլէյզ*) բառանունը՝ որպես *թոնրի օղանցք* հասկացության գուգաբանություն: *Բըլիզ*-ը *սլլուզ* բառի բարբառային տարբերակն է: Ըստ ՆՀԲ-ի և Հր. Աճառյանի՝ այն ունի *փոքրիկ* նշանակությունը (ՆՀԲ, հ 2, Ե., 1981, էջ 652, Հր. Աճառյան, ՀԱԲ, հ 4, Ե., 1979, էջ 87): Գ. Ջահուկյանը *սլուլիկ, սլլուզ* բառերը համարում է գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ և կապում է հ.-ե. *po(u)los <ձագ> pou - փոքրիկ, մանր* արմատի հետ (*Գ. Ջահուկյան, ՀԲՆ, Ե., 1972, էջ 319*):

Կարծում ենք՝ *սլլիզ*-ը փոխաբերացման հիմքի վրա առաջացած բառաձև է. *փոքրիկ օղանցք*-ից *բըլիզ ձագ* բառակապակցությունը վերածվել է *սլլուզ* գոյականական իմաստով բառի: Նույն կերպ, այսինքն՝ իմաստային

փոխանցումով, հայերենի որոշ բարբառներում (Մարաշ, Հաջըն, Ջեյթուն) *բըլուզ* կամ *բըլուզիկ* բառաձևերը *երեխա* հասկացության բառանվանումներ են դիտվել, որոնց անդրադարձել ենք *երեխա* բառանվանման մասին մեր դիտարկումներում (Հ. Խաչատրյան, Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., 2009, էջ 65):

9. Բարբառներում առկա են նաև մի շարք փոխառյալ բառեր՝ 1. *մանյանգու* (Քեսաբ). 2. *քուլչան* (Սեբաստիա). 3. *քյոյրնյրանդ* (Շամախիի Սաղյան գ.):

Երդիկ: Դեռևս գրաբարյան ժամանակաշրջանում 5-րդ դարի մատենագիրներ Եղիշեի, Եզնիկի, Ագանթագեղոսի երկերում գործածվում է այս բառը և ունի *տուն*, *տնվոր*, *տնեցիներ* իմաստը: Միջնադարյան հայ գրականության մեջ ևս՝ Նահապետ Քուչակի հայրեններում, փաստված է *երդիկ* բառը (*երդիք*).

Շատ *երդիք* ու վար կու հայիս

Կու տեսնիս շատ գյոզալ ի քուն:

Երդիկ բառի ստուգաբանությունը հստակ չէ: Հր. Աճառյանը «Գավառական բառարանում» տալիս է *երդիկ*-ի բացատրությունը. «*Երդ* - (Ղրբ. Կ՛սուի և հիւրք որևէ երդիքքնակ) Գյուղական տուներու տանիքին վրա բացուած ծակ կամ պատուհան, որմէ լույսը կը թափանցէ ներս և թոնրին ճիշտ ու ճիշտ դեմը գտնուելով՝ ծուխը անկէ դուրս կ'ելայ: Ասկէ առնելով լայնաբար կընշանակէ նաև «*ծխնեղոյզ*»» (Հր.Աճ, ԳԲ, էջ 299): Նույն մեկնաբանությունն է տալիս նաև ՆՀԲ-ն «*Երդ* - լուսամուտ տանեաց, պատուհան ի՛վերուստ յարկաց, *երդիք, երդիս, պաճա, տամ պաճասը*» (ՆՀԲ, հտ. 1-ին, էջ 675):

Երդիկ բառը հայերենի բարբառներում դրսևորվում է հնչյունական և բառակազմական զանազան տարբերակներով՝ *երդիկ, էրտիկ, էրտիս, հոյրտուս, հոյրդ, հ՛էրտիկ* և այլն:

Բառի արմատական ձևը՝ *երդ*, հանդես է գալիս արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի, ինչպես նաև Ագուլիս-Մեղրիի բարբառախմբի, երբեմն նաև Արարատյան բարբառախմբի որոշ խոսվածքներում (Աստապատ, Ջուղա, Լիվասիան): Միայն *երդ* արմատական բառաձևը հանդես է գալիս բազմաթիվ հնչյունական տարբերակներով՝ 1. *հոյրք* (Ղարաբաղի Չափար, Հին Թաղլար, Խանաբաղ, Նորշեն, Վարդաշենի Յաղափլու և այլ խոսվածքներ). 2. *հոյրդ* (Ղարադաղ-Սարդու, Ուգուրուն, Կարճևան, Ագուլիս). 3. *հէրք* (Նախիջևանի Փարադաշտ, Բիստ, Փերիայի գավառի Վերին Բուրվարի Խորգենդ, Դեյնով, Հավարիկ). 4. *հիդք* (Նախիջևանի Փառակա). 5. *յեդք* (Փերիայի գավառ Միլակերտ, Ղարդուն,

Սանգիբարան). 6. *հըրթ* (Գորիս). 7. *հ' երտ* (Սուրմալուի Բլուր գ.). 8. *հէրթ* (Չարմահալի Սինագան գ.):

Հաջորդը *երդ* բառային սկզբնաձևից *-իկ* վերջածանցի համադրությամբ առաջացած *երդիկ* բառանունն է, որը հայերենի բարբառներում տարածական ամենալայն ընդգրկումն ունի. բարբառների արևմտյան խմբակցության Փոքր Ասիայի բարբառախմբի Կարիին, Շապին-Կարահիսարի, Եվդոկիայի բարբառներ, Պոլսի միջբարբառի Պարտիզակի, Խարբերդի խոսվածքներ, Մուշ-Տիգրանակերտի բարբառախմբի Մուշի, Բաղեշի, Արծկեի, Մանազկերտի, Ալաշկերտի, Խնուսի, Բուն Սասունի և Տիգրանակերտի, ինչպես նաև Վանի միջբարբառախմբի Վանի, Շատախի բարբառներ: *Երդիկ* բառանվան տարածական շառավիղը ներառում է նաև բարբառների արևելյան խմբակցության Արարատյան, Ջուղայի, Խոյ-Մարաղայի բարբառները:

Երդիկ բառանունը ևս բարբառներում դրսևորվում է բազմազան հնչյունական տարբերակներով՝ իհարկե, ելնելով տվյալ տարածքի բարբառային-լեզվական առանձնահատկություններից: Հարկ ենք համարում նշել *երդիկ* բառանվան հնչյունական տարբերակներից առավել հետաքրքրականները և գործածականները:

Այսպես՝ *Էրտիկ* (Սասուն), *հ'* շնչեղ ձայնեղով տարբերակ՝ *հ'երտիկ* (Մուշ, Կարս, Բասեն, Խոթ և այլն), *երդիք* բառի հոգնակի հայցական հոլովածով՝ *երդիք > երդիս > հ'երտիս* (Մուշ, Բիթլիս), *էրթիս* (Նախիջևան, Սալմաստի Փայաջուկ), *ռի* առաջնալեզվային ձայնավորի և հոգնակի հայցական հոլովով բառաձևի տարբերակ՝ *հոիրտուս* (Շատախ): Մոկսում, երբեմն նաև Շատախում *հերտիս* բառը հանդիպում է նաև երկբարբառային և եռաբարբառային արտասանությամբ, օրինակ՝ Մոկսի Կճավ գյուղ՝ *հերտուս*, Մամուտանց՝ *հերտօնու*, Շատախ՝ *հոիրթոնու*: Հանդիպում են նաև հոգնակի հայցական հոլովածևի առավել աղավաղված տարբերակ՝ *հերթուզ* (Բերկրի Խաչան), *հըրդիք'* (Պարսկահայքի Մուժունբար), *յէշտիք* (ինչպես հայտնի է, Էրզրումի բարբառում շատ հաճախ *ք* ձայնորդը փոխվում է թույլ արտասանությամբ *շ*-ի, օրինակ՝ *երտանք > էր(շ)տանք*. նույն կերպ էլ Ախալքալաքի Կարծախ գյուղում *յէրտիկ*-ը դարձել է *յէշտիք*), իսկ Քեսաբում վկայված է դարձյալ երկբարբառային արտասանության բառաձև՝ *արտէ'գ*:

Հր. Աճառյանը, ՀԱԲ-ում ներկայացնելով *երդիկ* բառանվան բարբառային տարբերակները, հավելում է այլ բառաձևեր՝ *երդիքնակ*, *երդմուխ* և այլն: Եթե *երդիք* բառը նախապես ունեցել է *տուն* իմաստը, ուրեմն *երդիքնակ* կնշանակի *տանը բնակվող*: Գիտնականը «շատ սղուած մի ձև» է համարում Ագուլիսում հանդիպող *ըրբաննակ'* «երդիկի ծակը», որը, ըստ նրա, առաջացել է *երդիքնակ* ձևից (Հր. Աճ., ՀԱԲ, հտ. 2, էջ 44): Նախիջևանի

Տանակերտ գյուղում ևս փաստված է *էրքանակ*՝ բառաձևը՝ որպես *երդիկ* հասկացության բառագուգարանություն: Իսկ Շամախիի Սաղյան գյուղի խոսվածքում արձանագրված է *ըրքանակ* բառաձևը: Դժվար է ասել՝ նշված բառը երդի՞կ բառաձևից է առաջացել, թե՞ ըրքանակ:

Երդիկ հասկացության բառային դրսևորումների մեջ առանձնանում է *բուխարիկ* բառանվանումը: Հր. Աճառյանը *բուխերիկ*-ը («ծխնելոյզ») համարում է «յետին ժամանակի բառ», որը գործածական է բարբառներում և ունի «վառարան կամ ծխնելոյզ» նշանակությունը: Բառն առկա է նաև թուրքերենում, վրացերենում և ասորերենում. Աճառյանը համարում է, որ թուրքն էլ ծագում են արաբ. *buxāri* «շոգի, գոլորշի» բառից (Հր. Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 480):

Ս. Ամատունին տալիս է հետևյալ բացատրությունը. «Պատի մեջ շինած՝ երեսը բաց կամարակալ վառարան», ինչպես նաև՝ «ծխնելոյզ, օճախ, պատի միջի վառարան» (*Հայոց բառ ու բան*, էջ 116):

Ինչպես գիտենք, հայերենի բարբառներում շատ հաճախ միևնույն բառը իմաստային տարբեր զարգացումներ է ունենում: Այսպես էլ այս դեպքում. *բուխարիկ* բառը իմաստային ճյուղավորմամբ ձեռք է բերել նաև *երդիկ* նշանակելիի իմաստը:

Բուխարի բառանունը՝ որպես երդիկ հասկացության անվանում, «ծխնելոյզ պատի մեջ» բառիմաստով կոգյակների ձևով հանդես է գալիս բարբառների արևմտյան խմբակցության Անտիոքի բարբառախմբի Ջեսաբի (*փուխարու*), Բեյլանի (*փոքրխուրի*), Փոքր Ասիայի բարբառախմբի Սեբաստիայի (Ջառա, Խուռնավուզ գյուղեր (*փըխերիզ*), Խարբերդի (*պըխերիզ*), Կարինի բարբառի (Ախալքալաք, Ալաստան (*բուխուռիզ*), Ախալցխայի Ջուլդա և Շղալքիլա (*պուխուլիք*) խոսվածքներում: Արևելյան որոշ՝ Նոյեմբերյանի Կոթի գյուղի, Լոռու Հաղպատի, Տավուշի Չինչին գյուղի խոսվածքներում *երդիկ* հասկացության նշանակելի է դիտվել *լիսածակ* նկարագրական բառակաղապարը, իսկ Եդեսիայի Գարմուց գյուղում *լուսածագ* բառանվանը զուգահեռ գործածվել է *լուսաբաղֆոն* բառը. *լուսաբաղֆոն*-ը, ըստ բարբառը արձանագրողի, *տան պատի վերևում* է գտնվել: *Բաղֆոն* բառը, ինչպես ներկայացրել ենք *որմնախորշ* հասկացության առիթով մեր դիտարկումներում, հայերենի որոշ բարբառներում (Խարբերդ, Տիգրանակերտ) *որմնախորշ*, *պատրիան* նշանակությունն ունի:

Արևելյան մի քանի խոսվածքներում առկա է նաև նկարագրական *կըտեր ծակ* (Հաղպատ), *կըտրի ծակը* (Տավուշի Բերդ ք.), *տըմսի քար* (Սալմաստի Փայաջուկ գյուղ) բառակաղապարները:

Որպես *երդիկ* հասկացության զուգաբանություններ են փաստված փոխառյալ որոշ բառանուններ. *Բաջա բառը* թուրքերենում նշանակում է *ծխան, ծխնելոյզ*, երկրորդ իմաստով՝ *վառարան, բուխերիկ*: Թուրքերենից փոխառյալ *բաջա* բառը գործածվել է Համշենի Սամսոնի, Ճանիկի, Ունիեի

Բալլուդ գյուղի (*բաջա*), Պուսի միջբարբառի Նիկոմեդիայի (Աղաբազար, Արմաշ գյուղեր), Արաբկիրի (*պաջա*) խոսվածքներում, Մարաղայում (*փաջա*), Ասլանբեկում (*ջաբա*, հնարավոր է՝ այստեղ տեղի է ունեցել դրափոխություն): Ուրմիայի շրջանի Իքի-Աղաջում վկայված է *կուբա* փոխառյալ բառը, Սեբաստիայի Թոմոսի գավառի Դենոլիլ գյուղում՝ *չանդու-ն*, Երզնկայում՝ *տալբազ-ը*, Մոտկանի Մցու գյուղում՝ *ք'ուլէք-ը*, Սեբաստիայի Ջառա գյուղաքաղաքում՝ *բաջադափրս-ը*:

Հայոց լեզվի բարբառային բառարանում փաստված է *պողոզակ* բառանունը, որը գործածվել է Թիֆլիսի բարբառում ու նաև Գ. Սունդուկյանի ստեղծագործություններում. «Պողոզակի ծակ ունեինք, վուր բասնուհինգ ակոշկեր ամեր» (*ՀԼԲԲ, հտ. Ե, Ե., 2008, էջ 99*):

Տարբեր աղբյուրներում վկայված են *երդիկ* հասկացության այլ բառանուններ ևս (օրինակ՝ *ծըխնիք, ցըխինք, մըխսհան, մըխանք* և այլն), որոնք, սակայն, մեր բարբառային նյութերում փաստված չեն:

Այսպիսով՝ *թոնրի օղանցք* և *երդիկ* հասկացությունների բառանունների ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ բարբառների գերիշխող մասում գործածական են՝ առաջինի դեպքում՝ *ակ* և *սնդու*, երկրորդի դեպքում՝ *երդ* բառանվանման արմատական, հոլովական և վերջածանցավոր բառաձևերը, ինչպես նաև բառաբարդումով առաջացած ձևերը՝ իհարկե, բազմաթիվ հնչյունական տարբերակներով: Մյուս բառանունները խիստ սահմանափակ ընդգրկում ունեն:

Համառոտագրություններ

ԳԲ – Հր. Աճառյան, Գաւառական բառարան

ՀԱԲ – Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան

ՆՀԲ – Աւետիքեան Գ., Սիւրմելեան Խ., Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի

ՀԲՆ – Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն

ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան

ՆՈՐԱՅՐ Ն. ԲՅՈՒՉԱՆԴԱՅՈՒ «ՀԱՅ ՊԱՐՏԷՁ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Լեզվաբան, հայագետ Նորայր Բյուզանդացին ծնվել է 1844 թ-ին Պոլսում: Սկզբնական կրթությունը ստացել է Բերայի Մխիթարյան դպրոցում: 1854 թ-ին ուսումը շարունակել է Ս. Ղազարի վանքում՝ աշակերտելով Ղևոնդ Ալիշանին: Հենց դա էլ կարևոր դեր է խաղացել նրա հետագա գիտական հետաքրքրությունների կազմավորման գործում: Մինչև 1870 թ. եղել է Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, որից հետո հրաժարվել է հոգևոր կոչումից և նվիրվել գիտական ուսումնասիրություններին: Արդեն 1880 թ-ին լույս է տեսել նրա «Հայկական բառաքնություն» աշխատությունը: Դրանում, ինչպես նաև ավելի ուշ հրատարակված աշխատություններում, Բյուզանդացին օգտագործել է հայ մատենագրության մեջ եղած լեզվական փաստեր, կատարել ստուգաբանություններ: 1895 թ-ին Ղևոնդ Ալիշանը հրատարակում է «Հայբուսակ կամ Հայկական բուսաբանություն» աշխատությունը, որում բնութագրում է հայկական բնաշխարհի շուրջ 3400 տեսակ բույսեր: Հենց այս աշխատությամբ էլ Բյուզանդացին հետաքրքրվել է հայերեն բուսանուններով ու դրանց ստուգաբանություններով: Գիտական հետաքրքրությունն էլ Բյուզանդացուն ստիպել է անդրադառնալ Ղևոնդ Ալիշանի «Հայբուսակ»-ին: Արդյունքում, արդեն նրա մահից հետո՝ 1921 թ. սկզբում, «Հանդես ամսօրյա»-ում, այնուհետև 1925թ. առանձին գրքով հրատարակվում է «Քննադատություն Հայբուսակի» աշխատությունը: Բյուզանդացին իր այս աշխատությունում խիստ կարևորել է այդ ժամանակաշրջանում Ալիշանի կատարած եզակի աշխատանքը, բայց միաժամանակ ազնվորեն քննադատել նկատված բացթողումները: Ալիշանի այս հանրահայտ աշխատության մանրակրկիտ ուսումնասիրությունն էլ Նորայր Բյուզանդացուն հանգեցրեց նոր բուսաբանական աշխատության՝ «Հայ պարտեզի» ստեղծման մտքին: Այսպիսով, այս աշխատանքը կարելի է համարել «Քննադատություն Հայբուսակի» մեմագրության բնական շարունակությունը: Ըստ Բյուզանդացու գրառումների՝ «Հայ պարտեզի» առաջին գլխաբառի մշակումը սկսվել է 1877 թ-ին, իսկ աշխատանքները ավարտվել են 1900 թ-ին: Ամբողջական անվանումն է «Հայ պարտեզ, յորում հաւաքեալ կան անուանք բուսոց և բուսականաց յիշատակելոց ի գիրս Նախնեաց և Յետոնց հանդերձ այնոքիւք որ պահեալք են միայն ի բերան ռամկին»: Գրել է Շվեդիայում՝ Ստոկհոլմում: Ձեռագիր վիճակում պահպանվել է Գյոթեբորգի համալսարանի կենտրոնական գրադարանի

ձեռագրատանը՝ Բյուզանդացու անտիպ ձեռագրերի բաժնում: Ձեռագրի որոշ տետրերի էջեր կամ մույնիսկ առանձին տետրեր չեն պահպանվել: Գլխաբառերի ընդհանուր շարքը հուշում է, որ հատկապես պակասում են 1-62 էջերը: Սևագրության կորած էջերի բառերի մի քանիսը գտնվել են Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի» աշխատության մեջ:

Բյուզանդացու «Հայ պարտեզում» հաճախ է հանդիպում «օտարաձայն բառք» (կամ «օտարք») հղումը, որը հավանաբար բառարանի երկրորդ մասը, կամ առանձին աշխատություն պետք է եղած լինի, սակայն դրանք արխիվներում չեն հայտնաբերվել:

«Հայ պարտեզի» հրատարակումը 2001 թ-ին ժնկում իրագործել է Մարտիրոս Մինասյանը: Մ. Մինասյանը այդ աշխատությունը հրատարակելու համար քրտնաջան աշխատանք է կատարել, քանի որ Բյուզանդացու դժվարընթեռնելի ձեռագրին գումարվել են բազմաթիվ ջնջումներն ու առավել դժվար կարդացվող լրացումները և ուղղումները (ըստ Մ. Մինասյանի՝ «... այս բոլորից առաջացել են գլխապտույտ պատճառող խճողումներ»): Անհրաժեշտ ենք համարում արժանին մատուցել Մարտիրոս Մինասյանին՝ բազմաթիվ լեզվաբանական, բանասիրական և բնագրագիտական ուսումնասիրությունների հեղինակին: Հրատարակել է նաև հսկայածավալ «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»՝ սրբագրված և ճոխացված Նորայր Ն. Բյուզանդացու ձեռքով՝ աշխատանքը: Իսկ «Հայ պարտեզը» հրատարակելու համար կատարած տքնաջան աշխատանքը եկել է լրացնելու նրա բազմաբեղուն գիտական կենսագրությունը:

«Հայ պարտեզ»-ում Մ. Մինասյանը կատարել է շատ կարևոր լրացում: Քանի որ ձեռագիր բառարանը չի ունեցել մատենագիտական ցանկ, հրատարակիչը նպատակահարմար է համարել ավելացնել Բյուզանդացու «Քննադատություն Հայբուսակի» և «Բառգիրք ստորին հայերենի» աշխատություններում եղածը: Այդ ցանկը բաղկացած է 25 անուն հայերեն և օտարալեզու աշխատանքներից: Մ. Մինասյանը մատենագիտական մեկ լրացում էլ արել է «Հայ պարտեզի» վերջում: Դա բավական ընդարձակ մի ցուցակ է, որը նա հայտնաբերել է Բյուզանդացու անտիպներում: Այդ մատենագիտական ցուցակը անմիջականորեն չի առնչվում «Հայ պարտեզին», սակայն լրացնում և ճշգրտում է Մ. Մինասյանի՝ 2000 թ-ին հրատարակած Բյուզանդացու «Բառգիրք ստորին հայերենի» աշխատության մեջ բերված «Անուանք մատենագրաց և մատենագրութեանց հիշատակելոց ի բառարանիս»-ը: Եվ դա կատարում է այդ մատենագիտական ցանկը անհայտությունից փրկելու համար: Բյուզանդացին այն անվանել է «Ցուցակ մատենագրութեանց և թարգմանութեանց ԺԲ-ԺԷ դարուց չեի եիս հրատարակելոց»: Այդ ցուցակը հեղինակը պատրաստել է 7 օրվա ընթացքում (ըստ գրառման՝ 11 ապրիլի 1888-18 ապրիլ 1888 ժամանակահատվածում):

Բյուզանդացին «Հայ պարտեզ»-ի ամեն մի զլխաբառ բացատրելու համար օգտագործել է հայ մատենագրության մեջ եղած լեզվաբանական փաստերը, կատարել ստուգաբանություններ: Ես փորձեցի կազմել մեջբերվող հեղինակների ցանկը: Եվ այդ ոչ լրիվ ցանկում կային 45-ից ավելի հեղինակներ: Հանրահայտ Ղևոնդ Ալիշանի, Ղուկաս Ինճիճյանի, Ստ. Շահրիմանյանի, Գարեգին Սրվանձտյանցի, Մ. Բարխուդարյանցի, Մ. Չամչյանի, Հ. Ավգերյանի, Ս. Ռոշքյանի, Ա. Դավթիժեցու կողքին այստեղ կան քիչ հանդիպող ազգանուններ (Ա. Պոլսեցի, Պ. Մեհերյան, Հ. Ջախջախյան, Խ. Տեր-Վարդանյան, Վկ. Սուքիասյան, Ս. Եազընյան, Դ. Ներգինացի, Ս. Կամերկապցի, Ն. Խտշյան և այլն): Ըստ որում հաճախ մեջբերումներն ավելի ընդարձակ են, քան զլխաբառերի բացատրությունները: Եվ դա ինքնապատասխան չէ: Այսպես, Աղմաթիքոն անվան ներքո մեջբերվում են Տեր-Վարդանյանի հրատարակած Տարոն աշխարհի 63 անուն ուտելի վայրի բույսերի անունները, կամ Բաղուկ հոդվածում մեջբերվում է Մ. Սարյանի հավաքած Մշեցոց երգերից մի ընդարձակ հատված և այլն:

«Հայ պարտեզը» ակնառու երևույթ է բույսերի հայերեն անունների ճշգրտման, ստուգաբանման, բարբառագիտական և ազգագրական ուսումնասիրությունների, այլ լեզուներից փոխառությունները ճշտելու համար: Հատկապես հարուստ են շատ բուսանունների ընդարձակ ստուգաբանությունները: Դրանք հիմնված են գրաբար, ֆրանսերեն, թուրքերեն, արաբերեն, պարսկերեն, երբեմն՝ եբրայերեն, նույնիսկ՝ ռուսերեն սկզբնաղբյուրների վրա: Բույսերի լատիներեն անվանումները առանձին բացառություններով տրված են հայատառ գրությամբ: Որոշ անուններ ստուգաբանվում են մանրամասն՝ երբեմն լրացման կարգով տալով նմանատիպ կիրառություն ունեցող (օրինակ՝ ուտելի) բույսերի ամբողջ ցանկը և տարածքը, որտեղ դրանք օգտագործվում են (օրինակ՝ Տարոն, Շոռոթ, Արարատյան դաշտ, Մուշ և այլն): Ստուգաբանություններում պարտադիր նշվում են այդ բույսերի թուրքերեն, պարսկերեն, ֆրանսերեն անվանումները: Հետաքրքիր է, որ առօրյա բառապաշարում հայերեն համարվող որոշ բուսանուններ իրականում թուրքական, պարսկական, ասորական կամ արաբական ծագում ունեն (օր.՝ արևելահայերեն՝ մաղադանոս, արևմտահայերեն՝ մաղտանոս, թուրքերեն՝ մաղտանոս կամ հայերեն՝ դափնի, ասորերեն՝ դափնի, հայերեն՝ լոլիկ, թուրքերեն՝ լոլիկ կամ լեոլիկ, հայերեն՝ կանեփ, արաբերեն՝ քնեփ կամ զրննապ, հայերեն՝ նարինջ, պարսկերեն՝ նարինճ կամ նարենճ, հայերեն՝ թարխուն, պարսկերեն՝ թերխուն և այլն):

Այսօր էլ ընդունելի կարող է համարվել Բյուզանդացու առաջարկած որոշ օտարալեզու անվանումների փոխարինումը հայկականով (օր.՝ օգտագործվող գեոկչա սալոր, թուրքերենով՝ կեոքճե սուլթան, բառարանի հայկական տարբերակը՝ հաղեճան):

Ն. Բյուզանդացիին հաճախ նշում է որոշ բույսերի անվանումների անցած ճանապարհը և՛ ժամանակի, և՛ տարածքային իմաստով: Վերջին դեպքում հատկապես նշում է առանձին բարբառներում դրանց օգտագործման ձևը (օր.՝ ալեորուկը վանեցիներն անվանում են խալիվորեկ, կամ ռամկորեն՝ հալեորուկ, որը հիմա էլ օգտագործվում է Արարատյան բարբառում և գրականության մեջ. ջղախոտի կամ գաղտիկուռի համար նշվում է, որ արցախցիք այն կաթնկոռնի կամ կխտկուր են կոչում և այլն): Առանձին հոդվածներում նշվում են, որ դրանք նորաբանություններ են, և բացատրության մեջ տրվում է հին անվանումը (օր.՝ եղեսպակը նորաբանություն է եղել այն ժամանակ: Հին անունը եղել է սոժ, որը վերցված է ֆրանսերենից):

Հաճախ առանձին գլխաբառերով նշվում են մույն բույսի կամ մրգատեսակի արևմտահայերեն և արևելահայերեն տարբերակները, օրինակ՝ խնձորի Գերեկենի (արևմտահայերեն) և Շաքարկենի (արևելահայերեն) տեսակները:

«Հայ պարտեզը», շատ հետաքրքիր և արժեքավոր լինելով իր ժամանակի համար, այսօր թերևս քննադատելի բացթողումներ կամ սխալներ ունի: Այսպես. առանձին անուններ նշվում են որպես բույսեր, բայց իրականում դրանք մույն բույսի (օր.՝ դեղձի, թթի կամ խնձորի) տարբեր տեսակներ են կամ որոշակի բույսերի առանձին մասերն են (օր.՝ ճավիկը բացատրված է «վայրի ուտելի կանաչեղեններ են՝ ավելուկ, սինձ, ճավիկ» և այլն): Իրականում ճավիկը բազուկի՝ թթու դրված տերևուքն է և այլն): Հաճախ մույն բույսը բերվում է տարբեր գլխաբառերով և բացատրություններով (օր.՝ Գաթ, գափ՝ բացատրության մեջ մաս՝ գաթիլ և խավրձիլ, իսկ մեկ այլ տեղում գլխաբառ է Գաթիլը և ունի իր բացատրությունը): Բայց կան մաս որպես գլխաբառ բերված մույն անվան առանձին տարբերակները, որոնցում նշված է, թե որն է գերադասելի տարբերակը (օր.՝ Ավշինդր և Ափսինթին: Վերջինս նշվում է որպես գերադասելի):

Բյուզանդացիին գրականությունից վերցրած օրինակները երբեմն սխալ է մեկնաբանում՝ տարբեր բույսեր անվանելով մույն անունով: Օրինակ՝ բաղբաթ կամ աղբաղբուկ: Իրականում բաղբաթը մեր հասկացողությամբ սամիթն է, իսկ աղբաղբուկն այժմ էլ հայտնի է մույն անունով: Կամ Բաղեղ, տե՛ս Պատատուկ: Իրականում դրանք տարբեր բույսեր են: Բաղեղը լատիներեն *Hedera* է, իսկ պատատուկը՝ *Convolvulus*: Մեկ այլ օրինակ. Գազ անունով մույնացվում են և՛ գազը, և՛ մոշին:

Հետաքրքիր է, որ «Հայ պարտեզում» կան բուսանուններ, որոնք ժամանակակից նմանատիպ բառարաններում (Թ. Շատուրյան, Ռ. Ղազարյան, Յա. Մուլիջանյան և Ա. Բարսեղյան) չեն կարողացել գտնել (օր.՝ Բաղուկ, Բամայուկ, Պան, Բաշխ, Բարդիսապահ, Ազատ և այլն): Թերևս դրա պատ-

ճառն այն է, որ բառարանների հեղինակները հավանաբար չեն խորացել արևմտահայերենի ու մեր բարբառագիտական հարստության մեջ:

Նշեմ «Հայ պարտեզի» մեկ այլ հետաքրքիր առանձնահատկություն: Այստեղ շատ են բույսերից ստացվող նյութերի մասին առանձին գլխաբառ հոդվածներ: Օրինակ՝ Բևեկնի-ից բացի կա առանձին հոդված նվիրված Բևեկն-ին կամ Բևեկնո խեժին: Կամ գազից բացի կա նաև գազապեն, որը գազից ստացվող ձյուք է:

Ն. Բյուզանդացին ժամանակին իրագործել է մեծ և մինչև այժմ իր արժեքը չկորցրած աշխատանք: Մ. Սինասյանը տքնաջան և համառ աշխատանքով այն անհայտությունից վերադարձրել է մեզ: Եվ այսօր դրանում պետք է փնտրել այն, ինչը կարող է մեզ օգնել ժամանակակից հայերեն բուսանունները ճշտելու, հարստացնելու, գուցե և ավելի հայերեն դարձնելու համար:

ՁԵՌԱԳՐԱՅԻՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ XII-XVIII դդ.
ՀՈՍԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ

XII-XVIII դդ. հոմանիշների ձեռագիր բառարաններում բառային տարբերակներին, գրչագրական շեղումներին, սխալագրություններին զուգահեռ հանդիպում են և ձեռագրային հավելումներ: Եվ որքան էլ, ինչպես նշված է լեզվաբանական գրականության մեջ, «... չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը»¹, ընդօրինակողները, այնուամենայնիվ, ձեռագրերում կատարել են որոշ հավելումներ, տվել բացատրություններ (հմմտ. նաև բառարանի գործնական բնույթով պայմանավորված ծանոթագրություններն ու հղումները)²:

Նշված ձեռագիր բառարանները չունեն բնագրային օրինակներ, ուստի և տվյալ հոմանշային շարքում բառ-հավելումների «անհրաժեշտությունը» հնարավորինս պարզաբանելու համար, հարկ է հենվել բառարանային տվյալներին (գրաբարի, միջին, արդի հայերենի բառարանների համեմատությամբ), միաժամանակ հաստատել նաև դրանց (մասնավորապես գրաբարի բառարաններում³ չարձանագրված բառերի) գոյությունը (կամ չգոյությունը) հետագա բառարաններով:

Ելնելով ձեռագրերի համեմատական քննությունից՝ հարկ է անդրադառնալ որոշակի հետաքրքրություն ներկայացնող բառ-հավելումներին:

Վուկ. որովայնակոչ. մաղաբով. լերդահմայք. ձեռնածուք. գիտնաց. քովչաց. կիսից. կախարդք. մոգք. դիւքք հոմանշային շարքում՝ **որովայնակոչ**-ը թիվ 3937 ձեռագրում փոխարինված է **գերեզմանակոչ**-ով (57բ). վերջինս արձանագրված չէ բառարաններում: Այն **որովայնակոչ** և **գետնակոչ** բառերի նմանությամբ բաղադրված է իրանյան **գերեզման** բառով և բնաձայնական **կոչ** արմատով (ՀԱԲ, 2, 635): Ձեռագիրն ընդօրինակողի կարծիքով հավանաբար **գերեզմանակոչ**-ն առավել լիարժեք, ամբողջական է բնորոշել կախարդությունը՝ «...մեռելահմայութեան, այսինքն՝ մեռելոց ոգիներուն հետ իբր թէ խօսելու արուեստին կարգը»⁴, քան **որովայնակոչ**-ը, որ

¹ Հովհաննիսյան Լ., Բառային տարբերակներ V դարի գրաբարում. Հայոց լեզվի պատմության հարցեր, սյրակ 3, Ե., 1991, 8-9:

² Տե՛ս Հովհաննիսյան Ն., Հոմանիշների ձեռագիր բառարանների տեսակները և կազմությունը, Հանդես ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2005, 1-12, 133-134:

³ Խոսքը վերաբերում է ՆՀԲ, ԱԲ, ՆԲՀԼ, ԳԲ բառարաններին:

⁴ Հոմանշային շարքերը ներկայացնելիս որևէ ձեռագիր հիմք չի ընդունվել. դրանք բաղված են XII-XVIII դդ.-ից վկայված ձեռագրերի համեմատությամբ:

⁵ Հմմտ. Բառարան Սուրբ գրոց, Կ.Պոլիս, 1881, 262 և 525:

ՆՀԲ-ն բացատրում է իբրև «Որովայնախօս. փիուկ, կամ այս հարցուկ, որ ձայն է յորովայնէ» (ՆՀԲ, II, 535):

XV դ. թիվ 7117 ձեռագրում էլ հոմանշային շարքին հավելված է **գարընկեցք**-ը (319ա), որը հանդիպում է XVII դ. թիվ 6097 (147ա) և 6624 (287բ), այլև XVIII դ. թիվ 9992 (4բ) ձեռագրերում: Բառը՝ «Որ գարիս ընկենու ի հմայել. գարեղիք» բացատրությամբ, արձանագրում են ՆՀԲ-ն (I, 530-531), ԱԲ-ն (204), ՂԳՀԲ-ն (178): Հետագա բառարաններից ՀԲԲ-ն է հիշատակում **գարընկեց**, այլև **գարեղիք**, **գարեհմայ** բառերը (ՀԲԲ, I, 414 - 415): **Գարի ձգել**-ն ունի ՄՀԲ-ը (ՄՀԲ, I, 140) ՆՀԲ-ին հղումով: Արդի բացատրական բառարաններից միայն ԺՀԼԲԲ-ն է արձանագրում **գարընկեց** - ը՝ հղելով **գարեհմա** - ին (ԺՀԼԲԲ, I, 374):

Նաւագէտ բառը արձանագրված է միայն XVII դ. թիվ 2381 ձեռագրում՝ *Ղեկավար. նաւավար. նաւագ. նաւատոյի. նաւասէտ. նաւալիդ. նաւուլիդ. նաւակառոյց* (229 ա) հոմանշային շարքում: Բաղադրված է **նաւ** և **գէտ** (մանրամասն տե՛ս ՀԱԲ, I, 551- 553) արմատներով, հայերենում գործուն կառույցով (հմտ. խորագէտ, երկնագէտ, բնագէտ, ձեռագրագէտ, բեռագէտ... կազմությունները)՝ թերևս «նավի գիտակ և մասնագէտ» նշանակությամբ:

Նաւագէտ –ն արձանագրված չէ բառարաններում:

Դառնալով հոմանշային շարքին՝ հարկ է առանձնացնել XIII դ. թիվ 4612 (172ա), XVII դ. թիվ 2431 (292բ) և 3824 (50բ) ձեռագրերում առկա **Ղեկաւոր** հենաբառը: Հ. Աճառյանը այն դիտում է «նորագիտ բառ»՝ «ղեկ բռնող» նշանակությամբ՝ վկայված Գր. Մագիստրոսի թղթերում (ՀԱԲ, 3, 167): ՀԲԲ-ը հավելում է «ղեկավար» (ՀԲԲ, 3, 185), արդի հայերենի բացատրական բառարանները՝ «ղեկ ունեցող», «ղեկանիվը վարող՝ կառավարող» իմաստները (ԺՀԼԲԲ, 2, 428. ԱՀԲԲ, 931):

Ձեռագրերում արձանագրված **նաւուլիդ** (տե՛ս ՆՀԲ, II, 409. ԱԲ, 612. ՀԱԲ, 3, 596) հոմանիշին զուգահեռ XIV-XVI դդ. թիվ 2371, 2372, 7117 (համապատասխանաբար 279բ, 337ա և 312բ) և XVII դ. թիվ 268, 516, 536, 2281, 2330, 2381, 3286, 5995 ձեռագրերում առկա է **նաւուլ(դ)իչ**-ը: Այն կարելի է սխալագրություն համարել դ-ի և չ-ի գրությունը շփոթելու հետևանքով, բայց և կարելի է նորակազմություն դիտել՝ միևնույն «նավին ուղղություն տվող» նշանակությամբ, ստեղծված *գրիչ, ծնիչ, սնուցիչ*... բառերի համաբանությամբ. մասնավոր **ուղղիչ**-ը «առաջնորդ, կառավար, ղեկավար» են դիտել (ԱԲ, 660. ՆՀԲ, 2, 548), իսկ ՀԲԲ-ն՝ «հին բառ կամ նշ.» նշումով՝ նաև «նավին ուղղութիւն տուող, ղեկավար» (ՀԲԲ, 3, 599): Հետագայում **ուղղիչ**-ը կիրառվել է իմաստային այլ նրբերանգով, ինչպես հուշում է Եղ. Չարենցի՝ 1927թ.-ին գրած «Երևանի ուղղիչ տնից» երկը, և արձանագրվել արդի հայերենի բացատրական բառարաններում՝ արդեն «ուղղելու ծառայող, ուղղելու նպատակ ունեցող» առաջնային իմաստներով (ԱՀԲԲ, 1493. ԺՀԼԲԲ, 4, 594):

Նաուդ(դ)իչ -ը նույնպես արձանագրված չէ բառարաններում:

Ձեռագրերի գրչագրական շեղումներին, սխալագրություններին անդրադառնալիս նշվել է, որ միայն XVIդ. թիվ 5126 ձեռագրում՝ *Նուագ/դ. դուն. սուտ. սուն. դոյզն. խուն. սակաւ. դուզնաքեա(յ)...* հոմանշային շարքում առկա է **նիխար** բառը¹. այն հանդիպում է նաև XVIդ. թիվ 268, 533, 537, 540, 545, 682, 3261, 3824, 10223 և XVIIդ. թիվ 3450 ձեռագրերում: Թիվ 682 և 3450 ձեռագրերում **նիխար**-ին հավելված է **վտիտ** -ը (համապատասխանաբար 6ա և 78բ): Մեկ այլ հավելում էլ՝ **փոքր բառը**, առկա է XVIդ. թիվ 6097 (285բ) և XVIIդ. թիվ 9992 (4բ) ձեռագրերում:

Իսկ ահա XVIդ. թիվ 532 ձեռագրում (94բ) արձանագրված քիչ -ը որևէ այլ ձեռագրում չի հանդիպում: Այն փոխառություն է դիտվում իրանական լեզուներից՝ վկայված XIդ.-ից (ՆՀԲ, 2, 1007. ՀԱԲ, 4, 580. ՍՀԲ, 2, 444), բեև Հ.Աճառյանը հավանական է համարում բնիկ թաթարական բառ լինելը՝ համեմատելով տոճկ. *kučuk*, թթր. *kičik* և այլ ձևեր (տե՛ս ՀԱԲ, ն.տ.): Հ.Աճառյանի մոտեցման թեական լինելը կարելի է, թերևս, ամրագրել հետևյալ փաստերով. քիչ-ը արձանագրված չէ Գ.Ջահուկյանի և Լ.Հովհաննիսյանի առանձնացրած իրանական փոխառությունների ցանկերում², Գ.ՀԲ-ում: Այն պահպանվել է հայերենի բարբառներում (մասնավորապես Մեղրու³, Կարճևանի⁴, Ղարաբաղի⁵, Ագուլիսի⁶) *կի՛նջի* «քիչ. փոքրիկ», *կիճի* «քիչ. փոքր. փոքրիկ. մանրիկ» բառաձևերով, ասել է՝ վերոբերյալ ձևերը փոխառվել են ժամանակագրորեն ավելի վաղ, ինչպես փաստարկում են Գ. Ջահուկյանը և Լ.Հովհաննիսյանը՝ գտնելով՝ «հին և միջին շրջանի իրանական լեզուների համար բնորոշ է խուլ պայթական և կիսաշփական բաղաձայնների ոչ շնչեղ արտասանությունը. այս առումով *թ, տ, կ, ճ* բաղաձայնների դիմաց հայերենում *պ, տ, կ, ճ* պարզ խուլերի առկայությունը վկայում է նրանց ժամանակագրական ավելի վաղ շերտերի պատկանելու մասին՝ ի տարբերություն *փ, թ, ք, չ* արտացոլումների...»⁷:

¹ Տե՛ս Հովհաննիսյան Ն., Ձեռագրային որոշ հավելումներ միջինհայերենյան ձեռագիր բառարաններում, Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, 4, 2003, 54:

² Տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Ե., 1987, 488-582: Հովհաննիսյան Լ., Հայերենի իրանական փոխառությունները, Ե., 1990, 263-271:

³ Աղայան Է., Մեղրու բարբառը, Ե., 1954, 311:

⁴ Մուրադյան Հ., Կարճևանի բարբառը, Ե., 1960, 218:

⁵ Աճառյան Հ., Հայերեն գավառական բառարան. Էմինյան ազգագրական ժողովածու, հ. Թ, Թիֆլիս, 1914, 925:

⁶ Գողթան գավառի Փառակա գյուղի խոսվածքում՝ *կիճի* «քիչ»:

⁷ Ջահուկյան Գ., նշվ. աշխ., 559: Հովհաննիսյան Լ., նշվ. աշխ., 78:

XIIIդ. թիվ 4612, XIVդ. թիվ 2371 և XVդ. թիվ 2372 ձեռագրերում *Շաղ-դակերը. մարմնակերը. գիշախանձը* հոմանշային շարքին հավելված է *փաղաղալոր* բառը, որ առկա է XVդ. ձեռագրերում: **Փաղաղել** նաև «գիշատել» է նշանակում՝ «գէշ գէշ պատառել. յօշատել. պատառօտել» (ՆՀԲ, I, 554, II, 925. ԱԲ, 804), որ և ենթադրում է, թերևս, անշունչ, անկենդան մարմին:

Թիվ 532 ձեռագրում *գիշախանձը*-ի փոխարեն արձանագրված է *գիշակեր*, որն առկա է նաև XVդ. թիվ 3468 (463բ) ձեռագրում: Բառարանները արձանագրում են՝ «Կերօղ գիշոյ. ուտօղ զմեռելոսի...» (ՆՀԲ, I, 554), «Հում միս ուտող՝ բզբրտելով» (ԱԲ, 215):

Նշված, այլև թիվ 10223 ձեռագրում (199բ) հավելված է *մսակեր*-ը, որը ընդհանրապես միս ճաշակողն է (ՆՀԲ, II, 302)՝ ի հակադրություն խոտակեր, բուսակեր, ամենակեր-ի. տվյալ դեպքում, ինչպես նշում է ՆՀԲ-ն, «Սիս... տե՛ս Մարմին»՝ «Որպես Սիս՝ դիմաբաժանեալ ընդ արիւն, և ընդ ոսկր...» (ՆՀԲ, II, 226, 281), ասել է՝ *մսակեր*-ը նաև *մարմնակեր*-ը, *գիշակեր*-ը, *գիշատիչ*-ն է, որ արձանագրում են արդի բառարանները (ԱՀԲԲ, 1030. ԺՀԼԲԲ, 3, 562)՝ առաջնային նշելով, սակայն, «հիմնականում մսով սնվող, միս ուտող» իմաստը:

Հաջորդ բառ-հավելումը *հմակեր(ք)*-ն է XIIIդ. թիվ 4612 (76ա), XIVդ. թիվ 3937 (57բ) և XVդ. թիվ 2281 (130ա), 3488(117ա), 7004 (135ա), 7995 (44ա) ձեռագրերում: ՆՀԲ-ի վկայությունները X դ.-ից են՝ իբրև հում միս ուտող՝ «... շաղդակեր» (ՆՀԲ, II, 104. ԱԲ՝ «հում-հում ուտող» (498)): Նույնն է նշում ՀԲԲ-ն (ՀԲԲ, 3, 112):

Արդի բացատրական բառարանները արձանագրում են միայն «անունը հում՝ առանց եփելու ուտող» իմաստը (ԱՀԲԲ, 875. ԺՀԼԲԲ, 3, 356):

Ստահակ-ը առկա է միայն XVդ. թիվ 3824 ձեռագրում՝ *Այտուցեալ* հենաբառով հոմանշային շարքում (47ա): ՆՀԲ-ում բառը բացատրվում է «իբր ՚ի հեստութիւն հակ, կամ ըստահակեալ... Անաստ. ստամբակ. անկարգ. անխրատ. անառակ. խռովարար. խեռ. ըմբոստ. յանդուգն. խիստ» (ՆՀԲ, 2, 741): Հ.Աճառյանը բառը համարում է թերևս իրանական փոխառություն¹: Էդ. Աղայանը, համեմատելով ՆՀԲ-ի վկայությունները, գտնում է, որ «մեծագույն մասին ավելի հարմար է «անկարգ, մոլար, անխրատ» իմաստը», ուստի «բառի նախնական իմաստը պետք է համարել «մոլար, մոլի, ստամետ»... կազմված *սուտ* և *հակ* արմատներից»²: Այս վարկածին է հակված Լ.Հովհաննիսյանը՝ առանձնացնելով *ստահակ*-ը իրանական փոխառությունների ցանկից³: Իր հերթին Գ.Ջահուկյանը *ստահակ*-ը համա-

¹ ՀԱԲ, 4, 268:

² *Աղայան Է.*, Բառաբանական և ստուգաբանական հետազոտություններ, Ե., 1974, 135-136:

³ *Հովհաննիսյան Լ.*, նշվ. աշխ., 230:

բում է իրանական փոխառություն՝ համեմատելով նաև միջին պարսկերենի պազենդական տարբերակ *vastāx*-ը «վստահ, ինքնավստահ, համարձակ, անպատկառ, լիրք», պարսկերեն *gustāx*-ը «վստահ, համարձակ, լկտի»¹:

Բառ-հավելմանը հարկ է անդրադառնալ՝ **այտուցեալ, փքացեալ, ամբարշտեալ, ըմբահկեալ** բառերի իմաստային քննությունից ելնելով², որքանով ՆՀԲ-ի նշած, այլև բառի՝ իրանական լեզուներում ունեցած վերոբերյալ իմաստները հնարավորություն են ընձեռում **ստահակ**-ը դասելու նշված հոմանշային շարքին. անվերապահորեն չի կարելի պնդել, որ ինքնավստահ, համարձակ, հպարտ, ամբարտավան, ամբարիշտ անձը մշտապես ստույգան է հակված, բայց և միաժամանակ գոռոզ-ը, ամբարիշտ (-անհաշտ)-ը, բնականաբար որոշ վերապահությամբ, անհնազանդ և ըմբոստ կարող են լինել:

Այս առիթով հավելենք, որ ԺՀԼԲԲ-ն **ստահակ**-ը բացատրելիս «անգուսպ, բուռն, հանդուգն»-ը նշում է «հնց.»՝ առաջնային համարելով «անկարգ, թուկից փախած, սրիկա»-ն (ԺՀԼԲԲ, 4, 330), իսկ ԱՀԲԲ-ն՝ «1. ... խարդախ, նեցգ, վատ: 2. Անկարգ, սանձարձակ (մարդ)»...» (ԱՀԲԲ, 1328) առանց որևէ նշումի:

Հետաքրքիր է **սաղարթախիտ** և **սաղարթափթիթ** բառերի գործածությունը: **Սաղարթախիտ**-ն առկա է միայն XVII դ. թիվ 537 (18ա) և թիվ 3286 (300ա) ձեռագրերում³՝ *Անտառախիտ. հովանաւոր. վարսաւոր. տերեւախիտ. բազմաշաւիղ//բազմաշառաւիղ. ծառանոց. ծաղկոց. դրախտ. թփուտ. մացառ. մայրի. բալ վայր. անտառ*⁴: Թիվ 3286-ում հանդիպում է նաև **սաղարթափթիթ**-ը:

ՆՀԲ-ում **սաղարթախիտ**-ը վկայված է VII դ.-ից, **սաղարթափթիթ**-ը՝ X-XI դդ.-ից՝ համապատասխանաբար «Ոստախիտ. տերեւախիտ. սաղարթագեղ» և «Որոյ սաղարթք են փթթեալ՝ ցցուեալ և բացեալ» (ՆՀԲ, II, 689) բացատրություններով: Ստ.Մալխասյանը նույնպես առանձնացրել է **սաղարթախիտ**-ը և **սաղարթափթիթ**-ը (ՀԲԲ, 4, 177): Դառնալով բառարանային մեկնություններին (հմմտ. նաև ԱԲ նշած իմաստները՝ «կանանչ տերևով՝՝ ճղերով լեցուն» և «տերևները դուրս տուած, ծլած» (ԱԲ, 715))՝ կարելի⁵ է արդյոք ենթադրել՝ տերեւախիտ, խիտ սաղարթներով վայրը կամ տեղանքը լիովին չի բնութագրել *անտառ* հասկացությունը, հետևաբար ստեղծվել է **սաղարթափթիթ**-ը:

¹ *Ջահուկյան Գ.*, նշվ աշխ., 544:

² Տե՛ս *Հովհաննիսյան Ն.*, Հայերենի հոմանշային շարքերի համադրական քննության փորձ, Լրաբեր հասարակական գիտությունների, Ե., 2005, I, 29-39:

³ Թիվ 537 ձեռագիրը բառերի կոպիտ այբբենական դասավորությամբ է, թիվ 3286 -ը՝ ոչ այբբենական:

⁴ Հանդիպում է միայն թիվ 3468 ձեռագրում (458բ):

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ ՀՀՀԲ-ում չկա սաղարթա-
փթիթ բառը. արդի բացատրական բառարաններն էլ նշում են առանց բնա-
գրային օրինակների (ԱՀԲԲ, 1273. ԺՀԼԲԲ, 4, 266):

Հաջորդ հավելումը առակել-ն է XVIIդ. թիվ 6097 (284ա) և XVIIIդ. թիվ
9992 (4ա) ձեռագրերում՝ *Լուտալ. պարտաւել. բամբասել. ապագովել. բար-
քողել. բշնամանել. աշպանել. քամահրել. նշկահել. անարգել. արիամարիել.
դրսովել. նախատել. աղավաղել. հիքել. քքել. զանել. ձաղել. ձառակոծել.
հալիոյել. պախարակել** հոմանշային շարքում:

Բառարաններն արձանագրում են «խայտառակել... նշաւակել յանդի-
ման առնել ի նշաւակ» (ՆՀԲ, 1, 284. ԱԲ, 108) բացատրությամբ: ՀԲԲ-ն՝
«հին բառ կամ նշ.» և «գաւառական բառ կամ նշ.» նշումներով (ՀԲԲ, 1,
214): ԺՀԼԲԲ-ն «խայտառակել, նշավակել» իմաստների համար ունի
«հնց.» նշումը (ԺՀԼԲԲ, 1, 170): ՀՀՀԲ-ում նույնպես այս նշումն է (ՀՀՀԲ,
255), ԱՀԲԲ-ում՝ «արևմտ.» նշումով (ԱՀԲԲ, 101): ՀԼԲԲ-ն առակել-ը նշված
իմաստներով արձանագրում է Ղարաբաղի, Կարինի, Պոլսի, Վանի, Ուր-
միայի բարբառներում (ՀԼԲԲ, 1, 97), Հ. Աճառյանը՝ հավելում մաս Մոկքի
ու Ասլանբեգի բարբառները (ՀԱԲ, 1, 250):

XVII դ. թիվ 2019 ձեռագրում՝ *Ասել. ողել. պատմել. թուել. ձայնել. ճա-
ռել. առակս հիւամայել. առագրել. արտադրել. արտասել. վիպել. հաւանել.
վարկանել. բացառողել. բացիրել. բանալ. խոստովանել. դաւանել. ճամար-
տակել. առասել. հատուցանել. բարբառել. համարել. քարոզել. վճարել.
ատենախոսել. ճօթնել. հրապարակել* հոմանշային շարքում, վերջին բառը
փոխարինվել է *հրատարակել*-ով (166բ): Հավանական է՝ լինի վրիպակ.
փորձենք, սակայն, պարզաբանել՝ արդարացնել սույն հավելումը բառարա-
նային տվյալներով:

Հ.Աճառյանի հավաստումով *հրատարակ*¹-ը «մունետիկ, հրապարա-
կող»-ն է (ՀԱԲ, 3, 133: Տե՛ս մաս ԱԲ, 510՝ «քարոզող»), ասել է՝ լուր տարա-
ծողը, և բնականաբար ենթադրվում է ասելն ու խոսելը ...

Հրատարակել-ն արձանագրված է «հռչակել. քարոզել. հրապարակել.
հանդիսացուցանել» իմաստներով (ՆՀԲ, II, 138. ԱԲ, 512), Բառ. Երեմ.-ն՝
«հայտնել, կամ քարոզել, կամ մեկնել, կամ վճարել» (Բառ. Երեմ., 191):
Նշված իմաստները ՀԲԲ-ում, ԱՀԲԲ-ում «հին բառ կամ նշ.», «հնց.» նշում-
ներով են (ՀԲԲ, 3, 149. ԱՀԲԲ, 906), ԺՀԼԲԲ-ում՝ առանց որևէ նշումի՝

* Միայն XVI դ. թիվ 4149 ձեռագրում այս բառի փոխարեն արձանագրված է
անիծանել (356ա): XIVդ. թիվ 530, 5919, XV դ. թիվ 2335, XVII դ. թիվ 529, 2019 ձե-
ռագրում հոմանշային շարքը սահմանափակվում է Լուտալ.պախարակել. բամբա-
սել. բարքողել. նշաւակել բառերով, իսկ թիվ 7117-ում այն չկա:

¹ Գ. Ջահուկյանն այն դիտում է ածանցավոր կազմություն. մանրամասն տե՛ս
Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն..., 568:

առաջնային համարելով «տալագրել և լույս ընծայելը, որևէ պարբերականի լույս ընծայումը ձեռնարկելը և տնօրինելը» (ԺՀԼԲԲ, 3, 393):

Արդի հայերենում առկա է բառիմաստի փոփոխություն՝ նախնական, առաջնային իմաստի՝ **հրապարակել** -ին փոխանցումով:

Ինչ վերաբերում է **վճարել** բային, ապա բայի առկայությունը հոմանշային շարքում, թերևս, կարելի է բացատրել **վճար** արմատի ստուգաբանությամբ: Հր. Աճառյանը այն բխեցնում է պիլ. *vičār* ձևից («վարձք, փոխարեն հատուցում» նախնական իմաստով, որից *վճարել* «կատարել, գործադրել, վերջացնել»)՝ համեմատվող տարբերակներում հիշատակելով նաև *vičārtan*-ը՝ «բաժանել, լուծել, զատել, բացատրել, մեկնել, կատարել», և *vazārdan*-ը՝ «բաժանել, մեկնել, մեկնաբանել» (ՀԱԲ, 4, 345-346. ընդգծ.՝ Ն.Հ.): Իսկ *բացատրել, մեկնել, մեկնաբանել*-ը անկասկած ենթադրում է նաև պարզաբանում, բացահայտում, ուրեմն նաև ասել- խոսել...

Հրատարակել. վճարել¹-ի համար ենթադրելի է նաև *Dixi* արտահայտության² թարգմանությունը՝ «ասացի. վերջացրի». այսպես էին վերջացնում հռոմեացի հռետորները իրենց ճառը՝ ցանկանալով շեշտել, որ խոսքն ավարտել են:

Հիղինակ. դետ. պարետ. էսպատիս. առաջնորդ. հովիւ. վերակացու. տեսաւ. խնամիչ. նախախնամաւ. յոզարարծու. խնամածու. տնտես. հազարապետ. մատակարար. ապահով. ապաքինիչ. փարատիչ. վարդապետ և բժիշկ հոմանշային շարքում թիվ 5995 (211բ) -ում առկա է **դիտապետ**, իսկ թիվ 6097 (281բ) և 9992 (3բ) ձեռագրերում՝ **տանուտէր**, խնամարար հավելումները:

Ըստ ՆՀԲ-ի՝ **հեղինակ**-ը «առաջնորդ. առաջնորդօղ. ...գլուխ. ...սկզբնահայր» -ն է (ՆՀԲ, II, 83), **դիտապետ** -ը՝ նաև «առաջնորդ» (ՆՀԲ, I, 626), **տանուտէր**-ը՝ նաև «ազգապետ, ցեղապետ, նահապետ» (ՆՀԲ, II, 843). առաջնորդը, նահապետը պետք է հոգ տանի իր հպատակների մասին, հոգա նրանց պետքերն ու կարիքները. այստեղից էլ **խնամարար** (խնամ «հոգատարութիւն, հոգացողութիւն, ջանադրութիւն». ՀԱԲ, 2, 378) բառի հավելումը (հմմտ. նաև հոմանշային շարքի **խնամածու**-ն. Խնամարար, տես Խնամածու, ԱԲ, 381):

Ժամանակակից հայերենում, թեև որոշակի նշումներով, պահպանվել են **դիտապետ**-ը (կրոն.), **տանուտէր**-ը (պատմ.) և **խնամարար**-ը, իսկ **հեղինակ**-ի «նոր նշանակությունն է «երկասիրող»» (ՀԱԲ, 3, 78):

¹ *Վճար*-ը «վերջ, վախճան, լրումն» նախնական առաջնային իմաստով գտնում ենք միջնադարյան պանդխտության տաղերում. տես Հայ միջնադարյան պանդխտության տաղեր (XV- XVIII դդ.), Ե., 1979, 183: *Վճարել*-ը՝ ՀԲԲ-ում՝ «վերջացնել, ավարտել». ՀԲԲ, 4, 348:

² Բառգիրք լատիներեն եւ օտարազգի դարձուածների, Թիֆլիս, 1911, 26:

Յախումնախաւս. շաղակրատող. քանգուզել... պաճունաբան հոմանշային շարքում XII-XVIդդ. թիվ 4149, 8198(II), 5925, 8106 ձեռագրերում **յոխորտաբան**-ն է, թիվ 530, 5919, 2335-ում՝ **յոռոտաբան**-ը, և թիվ 266, 538, 1654, 2371, 2372, 3197, 3934, 4612, 5596, 7117, 7250 ձեռագրերում՝ **ուռոտաբան**-ը:

Յոխորտաբան. բաղադրված է **յոխորտ** («խորխտ. յանդուզն» ՆՀԲ, I, 367) և **բան** արմատներով: **Յոխորտաբան** բառը վերը նշված հոմանշային շարքում արձանագրել է միայն Ն. Բյուզանդացին՝ հղելով Թրակացուն (ՆՀԲԼ, 367): Հետագա բառարաններից այն «հզվի. բառ կամ նշ.» նշումով և «համարձակ խոսող, մեծախօս» բացատրությամբ արձանագրում է միայն ՀԲԲ-ն (ՀԲԲ, 3, 414):

Արտաքուստ **պոռոտաբան**¹ բառը հիշեցնող **յոռոտաբան**-ը և **ուռոտաբան**-ը նույնպես չկան գրաբարի բառարաններում: Անշուշտ, դրանք կարելի է դիտել սխալագրություններ՝ նկատի առնելով, որ չեն հիշատակվում և ոչ մի բառարանում, այդուհանդերձ փորձենք տալ որոշ բացատրություն:

Ուռոտաբան. ենթադրելի է ուռ + ոտ² + ա + բան կառույցը: Ըստ ՀԱԲ-ի՝ ուռ-ը «ուռած տեղ, ուռոյց պալար»-ն է (ՀԱԲ, 3, 607), որից էլ՝ ուռնուկ կամ ուռչիլ «...որ և իբր ռմկ. ուռենալ. Այտնուլ... և Փքանալ. ամբարտաւանիլ. հպարտանալ» (ՆՀԲ, II, 554): Այստեղից էլ, քերես, հետևում է **ուռոտաբան**-ի «ամբարտավան, հանդուզն խոսող» իմաստը:

Յոռոտաբան. վերը նշված կառույցի նմանակումն է **յոռ** արմատով: Հոռ-ն իբրև բարբառային բառ արձանագրել է ՀԲԲ-ն, հետագայում՝ նաև ԺՀԼԲԲ-ն, ՀԼՀԲ-ն Արարատյան, Ղարաբաղի, Գանձայի, Մշո, Մոկսի և այլ բարբառներում «լավ կերած-խմած... փարթամ աճած» իմաստներով (ՀԲԲ, 3, 130. ԺՀԼԲԲ, 3, 376. ՀԼԲԲ, 3 301): Իսկ «լավ կերած-խմած» վիճակը դարձյալ հանգում է ուռչելուն, փքվելուն, փոխաբերական իմաստով՝ ամբարտավանանալուն:

Այսպիսով, XII-XVIIIդդ. հոմանիշների ձեռագիր բառարաններում ձեռագրային միջամտությունները մեծապես նորակազմ և արդի հայերենում բառիմաստային այլ նրբերանգներով պահպանված բառեր են:

¹ *Պոռոտաբան* վկայված է X դարի հայ պատմիչների երկերում. տե՛ս *Ղուկասյան Շ.*, 10-րդ դարի հայ պատմագրության լեզուն, քեկն. ատենախոս., 2004թ., 59-60:

² Ինչպես նշված է լեզվաբանական գրականության մեջ, «Ու-ը ածականներ է կերտում գոյականներից, որոնք արտահայտում են տվյալ գոյականով արտահայտված առարկան, իրը կամ երևույթը ունենալու (իր վրա կրելու) հատկանիշ: ...Ու ածանցով բայահիմքերից կազմված ածականները արտահայտում են ոչ միայն տվյալ բանը ունենալու, այլև այն կատարելու համար ունակ լինելու իմաստ», Արքահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու, հ.2, Ե., 1974, 175: Հմմտ. **պոռոտ**-ը՝ **պոռ**- արմատից և **-ոտ** մասնիկով. ՀԱԲ, 4, 100:

Համառոտագրություններ

1. ՆՀԲ – Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. Ա-Բ, Վենետիկ, 1836-1837:
2. ԱԲ – Առձեռն բառարան Հայկազեան լեզուի, Վենետիկ, 1865:
3. ՆԲՀԼ – Ն. Բիւզանդացի. Նոր բառգիրք հայկազեան լեզուի. սրբագրուած և ճոխացուած Ն. Բիւզանդացու ձեռքով, հ. 1-5, Ժնև, 1990:
4. ՀԱԲ – Աճառյան Հ., Հայերեն արժատական բառարան, հ. 1-4, Ե., 1971-1979:
5. Բառ. Երեմ. – Մեղրեցի Երեմիա, Բառգիրք հայոց, Ե., 1975:
6. ՄՀԲ – Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Սյօին հայերենի բառարան, հ. Ա,Բ, Ե., 1987, 1992:
7. ԳԲ – Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, հ. Ա,Բ, Ե., 2000:
8. ՂԳՀԲ – Ռ. Ղազարյան, Գրաբարի հոմանիշների բառարան, Ե., 2006:
9. ԱՀԲԲ – Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, 2, Ե., 1976:
10. ԺՀԼԲԲ – Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1-4, Ե., 1969-1980:
11. ՀԼՀԲ – Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Ե., 1967:
12. ՀԼԲԲ – Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 1-5, Ե., 2001 – 2008:
13. ՀԲԲ – Մալխասեանց Ստ., Հայերեն բացատրական բառարան, հ. 1, Պէյ-րոս, 1955, 2-4, Ե., 1944-45:

ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐ, ԵՂԱՆԱԿՆԵՐ ԵՎ ՄԻՋՈՅՆԵՐ

Հայ լեզվաբանության մեջ սկսած XX դ. կեսերից զգալի տեղ է հատկացվել բառակազմության խնդիրների քննությանը: Ուսումնասիրություններն ընթացել են բառակազմության՝ որպես հետազոտության առանձին բնագավառի ձևավորման, նյութի առավել լիակատար ընդգրկման ու մանրամասն նկարագրության, դասակարգումների ճշգրտման ու խորացման, հետազոտության պատմական ու համաժամանակյա հայեցակետերի ավելի հստակ սահմանազատման ուղղությամբ: Ուշադրություն է դարձվել նաև բառակազմագիտական տերմինաբանության հարցերին, թեև միշտ չէ, որ հետազոտողները բացահայտորեն անդրադարձել են այս կամ այն տերմինի սահմանմանը կամ իմաստի ճշգրտմանը: Հաճախ դրանք պարզապես կիրառվել են առանց որևէ նախնական բնորոշման: Մասնավորապես, մինչև այժմ բոլորի կողմից ընդունված սահմանումներ չեն ստացել *բառակազմության* (կամ *բառակազմական*) *տիպ*, *եղանակ* և *միջոց* հասկացությունները: Եթե վերջին երկուսը կիրառվել են ավելի հաճախ և քիչ թե շատ որոշակի նշանակությամբ, երբեմն նաև միմյանց փոխարինելով, ապա *բառակազմության տիպ* տերմինը հայ լեզվաբանության մեջ լայն կիրառություն չի գտել: Դա թերևս կարելի է բացատրել նրանով, որ ուսումնասիրողները հիմնականում հետաքրքրվել են բաղադրյալ բառերի տեսակներով ու դրանց դասակարգմամբ և ավելի քիչ ուշադրություն են դարձրել բառակազմության՝ որպես գործընթացի քննությանը: Դեռևս Մ. Աբեղյանը, որից փաստորեն սկսվում է աշխարհաբարի բառակազմության գիտական ուսումնասիրության պատմությունը, «բառակազմության եղանակ» կապակցությանը տերմինային արժեք չի տվել և այն կիրառել է լայն իմաստով՝ որպես ընդհանրապես բաղադրյալ բառեր ստանալու հնարավորություն: «Բառակազմության սովորական եղանակը, սակայն, է՝ բաղադրությունը, որով լեզվի մեջ եղած բառերից և արմատներից կազմվում են նոր բառեր – բարդ և ածանցական բառեր»¹: Հետագա շարադրանքում Մ. Աբեղյանը արդեն խոսում է բաղադրյալ բառերի տեսակների մասին՝ նշելով, թե դրանցից յուրաքանչյուրը ինչպես է կազմվում, և խմբավորելով դրանք ըստ բաղադրիչների բնույթի: Ըստ Աբեղյանի, բարդ բառեր են համարվում երկու բառի կամ արմատի միացումները, իսկ ածանցական՝ արմատի և ածանցի (կամ Աբեղյանի տերմինով՝ ձևական մասի) կցումը: Բարդ բառերի կամ «բարդության տեսակների» մեջ ըստ բաղադրիչների կցման առանձնահատկությունների՝

¹ Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Եր., 1965, էջ 167:

առանձնացվում են հարադրություններ, կցական բարդություններ, իսկական բարդություններ, որոնք տարբերվում են շարահյուսական կապակցության սերտաձման աստիճանով: Ինչպես նշում է Աբեղյանը, շարահյուսական կապն ավելի զգալի է հարադրությունների մեջ. «թեպետ մթնած է», կցականներն առաջացել են «լեզվի սովորական շարահյուսական ձևերից», իսկ իսկական բարդությունների մեջ «շարահյուսական կապակցության ձևը իբրև այնպիսին բոլորովին մեռած է ... և պահվում է միայն բարդության մեջ և բարդության համար: Դա բաղադրության հնագույն եղանակն է, որ այժմ էլ կենդանի գործոն է, և այս եղանակով միշտ նորանոր բառեր ենք կազմում»¹: Ինչպես տեսնում ենք, այստեղ էլ եղանակ բառին տերմինային արժեք չի տրվում. այն պարզապես նշանակում է կերպ, ձև և գործածվում է միայն բարդությունները բնորոշելիս: Ածանցումը Աբեղյանը չի բնորոշում որպես բառակազմության եղանակ, այլ միանգամից անցնում է ածանցների ծագման ուղիների քննությանը: Նշենք ի դեպ, որ նախաձանցները նա ներկայացնում է բարդությունների բաժնում:

Մ. Աբեղյանը ժամանակակից հայերենի բառակազմությունը համաժամանակյա առումով որպես գործընթաց չի քննում, այլ նկարագրում է միայն որպես արդյունք ստացված բառերը՝ պարզապես դրանք բաժանելով տարբեր «տեսակների»: Դա արտացոլվել է նաև նրա աշխատության գլուխների և բաժինների վերնագրերում՝ «Բառերի տեսակներն ըստ կազմության», «Բարդության տեսակները», ընդ որում հավասարապես «տեսակ» են համարվում ինչպես հարադրական, կցական, այնպես էլ իսկական բարդությունները, թեև նրանց կազմության տիպերը և եղանակները տարբեր են: Դրա փոխարեն Մ. Աբեղյանը հատուկ ուշադրություն է դարձնում բարդությունների «տեսակների» առաջացման պատմությանը տարածամանակյա հայեցակետով և առանձնացնում «կցական բարդություններ հարադրական բայերից», «կցական բարդություններ բաղիյուսական հարադրություններից», «կցական բարդություններ վերադրի և իր գոյականի, այլև ուրիշ շարահյուսական կապակցություններից», «կցական բարդություններ կրկնավորներից»²: Ավելին, Աբեղյանն ածանցումը նույնպես քննում է պատմական հայեցակետից՝ բարդության մթագմման և ածանցների առաջացման այլևայլ ուղիների մատնանշումով՝ «ածանցական մասնիկների ծագումը հնչափոխությամբ», «ածանցիկների ծագումն առանց հնչափոխության», «ածանցական մասնիկների ծագումը երկու մասնիկների միացումից»³ և այլն: Այսպիսով, թեև Աբեղյանը ներկայացնում է ժամանակակից հայերե-

¹ Ն.տ., էջ 169:

² Ն.տ., էջ 174, 177, 178, 182:

³ Ն.տ., էջ 224, 226, 233:

նի բառակազմությունը, բայց հատակորեն չի տարբերակում քննության համաժամանակյա և տարածամանակյա հայեցակետերը, որ իր ժամանակի համար դեռևս հետազոտական ճշգրտության անհրաժեշտ պայման չէր: Բոլոր դեպքերում գնահատելի է բառակազմության մեջ շարահյուսական կապակցության հետագա սերտաճումների և կադավարային ուղիների առանձնացումը, թեև ոչ այսօրվա տերմինաբանությամբ: Կադավարային ուղին Աբեղյանը ներկայացնում է որպես կազմություն «անալոգիայով», իսկ առաջինի համար պարզապես նշում է շարահյուսական կապակցության «պարզացման աստիճանավորումներ», ըստ այնմ, թե որքանով են դրանք արդեն որպես մեկ առանձին բառ ընկալվում:

Բառակազմության քննության արելյանական սխեման և տերմինաբանությունը յուրացվեց և զարգացվեց հետագա ուսումնասիրողների կողմից: Սույն հոդվածի սահմանները հնարավորություն չեն տալիս մանրամասն անդրադառնալու հարցի քննության պատմությանը և արտահայտված տարբեր տեսակետներին, անհրաժեշտ է սակայն նշել, որ հայ բառակազմագիտության նշանակալից ձեռքբերումների կողքին տեղ են գտել նաև տերմինագործածության անորոշություններ և դասակարգման հակասություններ, միևնույն երևույթին տարբեր անվանումներ տալու և միևնույն անվան տակ տարբեր խմբավորումներ ներկայացնելու փաստեր:

Բառակազմագիտական տերմինների հետագա ճշգրտմանը նպաստել են հատկապես Ա.Ա.Աբրահամյանը և Է.Բ. Աղայանը: Ա.Աբրահամյանը դեռևս 1962 թ. իր «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ «բայական բառույթների» բառակազմական առանձնահատկությունները քննելիս նոր անվանում է տալիս նրանց տեսակներին: Ըստ Ա. Աբրահամյանի՝ «...ընդհանուր առմամբ կարելի է տարբերակել երկու հիմնական տեսակի կազմություններ՝ համադրական և վերլուծական»¹: Միևնույն ժամանակ, Ա.Աբրահամյանը «վերլուծական» տերմինի հետ զուգահեռաբար կիրառում է նաև դեռևս Աբեղյանից եկող «հարադրական» անվանումը: Ա.Աբրահամյանը, կառուցվածքային տեսակետից ճիշտ բնորոշելով բաղադրյալ բայերի կազմությունը, այնուամենայնիվ, դրանք դիտում է որպես արդեն «պատրաստի» արդյունք և չի դիտում դրանց առաջացումը որպես գործընթաց:

Է.Աղայանը նույնպես բառակազմությունը քննում է որպես արդյունք, այսինքն՝ «բառերի տեսակներն ըստ կազմության»²: Այդ տեսակները դասակարգելիս Է.Աղայանը, ի տարբերություն նախորդ հետազոտողների,

¹ Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1-ին, Եր. 1962, էջ 46:

² Էդ. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., էջ 219:

առաջին անգամ գործածում է *տիպ* անվանումը, սակայն դարձյալ առանց հատուկ սահմանման, և ըստ երևույթին նույնիսկ դրան տերմինային արժեք չի տալիս, այլ պարզապես կիրառում է բառերի կազմության զանազանությունները տարբերակելու համար: Սակայն այստեղ կարևոր է այն հանգամանքը, որ տիպերը առանձնացնելիս նա նկատի է առնում «ամենաընդհանուր բառակազմական հատկանիշները», թեև դրանց սահմանումը նույնպես չի տալիս. «Հիմնվելով ամենաընդհանուր բառակազմական հատկանիշների վրա՝ ժամանակակից հայերենի բոլոր բաղադրությունները կարելի է բաժանել երեք տիպի՝ *վերլուծական, համադրական և հապավական*»¹ (ընդգծումը հեղինակինն է - Լ.Հ.): Հարադրական և համադրական անվանումները (ինչպես և Ա.Աբրահամյանը) փոխարինելով վերլուծական և համադրական անվանումներով՝ Է.Աղայանը հետևողականորեն կիրառում է լեզուների տիպաբանական կառուցվածքը բնութագրող տերմիններ: Այս տեսակետից, սակայն, առարկություն է հարուցում հապավական կազմությունները որպես առանձին «տիպ» դիտարկելը, քանի որ բառակազմական գործընթացի արդյունքում այս դեպքում էլ ստացվում են համադրական, այսինքն՝ մեկ համաձույլ բառի արժեք ունեցող կառույցներ:

Բառակազմագիտական տերմինների (resp. հասկացությունների) մեր առաջարկած դասակարգումը հենվում է երկու հիմնական սկզբունքի՝ նախ՝ նկարագրության համաժամանակյա և տարաժամանակյա հայեցակետերի հստակ սահմանազատման և երկրորդ՝ բառակազմության՝ որպես գործընթացի, և բաղադրյալ կառույցների՝ որպես այդ գործընթացի արդյունքի, տարբերակման վրա: Դասակարգումը նկատի է առնում նաև տերմինների միջև եղած հարաբերակցությունը, որ յուրատեսակ ստորակարգային բնույթ ունի. ամենավերին աստիճանը՝ բառակազմության տիպը, ներառում է բառերի կազմության տարբեր եղանակները, որոնք իրենց հերթին օգտվում են որոշակի միջոցներից և որոնց կիրառման հետևանքով ստացվում են որոշակի կառույցներ:

Տիպ տերմինով մենք նշանակում ենք բառերի կազմության ամենաեական կառուցվածքային հատկանիշը՝ բաղադրիչների կցման սկզբունքը (տեխնիկան), որը կառուցվածքային տիպաբանության տեսակետից լեզուների ձևաբանական դասակարգման ելակետային հատկանիշը կամ չափորոշիչն է՝ քերականական (այս դեպքում նաև բառակազմական) իմաստների արտահայտման ձևը: Այս տեսակետից բառակազմական տիպ հասկացությունը ներառվում է լեզվական տիպ հասկացության մեջ որպես մասնավոր դեպք, քանի որ այստեղ ևս նկատի է առնվում բառակազմական միավորների բաղադրման ձևը և արդյունքը:

¹ Ն.տ., էջ 220-221:

Եղանակ տերմինը բնութագրում է այն գործընթացը, որի արդյունքն են բաղադրյալ բառերը: Միջոցներ տերմինով նշանակվում են լեզվի կոնկրետ նյութական միավորները, որոնք բաղադրիչ տարր են հանդիսանում տվյալ բառակազմական եղանակով որոշակի կառույցներ ստանալու համար: Եվ վերջապես բառակազմական գործընթացի հետևանքով ստացվում են կառույցներ (բառամիավորներ), որոնց անվանումներն արտացոլում են նրանց կառուցվածքային հիմնական (ամենաընդհանուր) հատկանիշները: Դրանց մասնավոր հատկանիշները դրսևորվում են բազմազան կառուցվածքային կաղապարներում, որոնք ի հայտ են բերվում լեզվական նյութի ավելի մանրամասն քննության և ներկայացման ժամանակ: Ամենաընդհանուր բնորոշմամբ բառակազմական կաղապարներն են բառակազմական տարրերի (միջոցների) զուգորդման եղանակները, որոնց օգնությամբ կազմվում են բաղադրյալ բառամիավորները՝ իրենց իրացումների կառուցվածքային բանաձևերով:

Հայերենի բառակազմական տերմինները և նրանց հարաբերակցությունը արտացոլված են ստորև բերվող աղյուսակում:

Աղյուսակ № 1

Տիպեր	Եղանակներ	Միջոցներ	Կառույցներ
Համադրական	Բարդում	Արմատներ, հիմքեր, հողակապ	Բարդություններ
	Ածանցում	Արմատներ, հիմքեր, ածանցներ, հողակապ	Ածանցյալներ
	Հապավում	Բառամասեր (հնչյուններ, վանկեր, արմատներ, հիմքեր)	Հապավյալներ
Վերլուծական	Հարադրում	Անկախ բառամիավորներ	Հարադրություններ
	Կրկնում	Անկախ բառամիավորներ, հնչյունական և քերականական ձևավորում	Կրկնավորներ

Հայերենի զարգացման բոլոր փուլերում էլ բառակազմության համակարգում գործել են նշված երկու՝ համադրական և վերլուծական տիպերը, թեև տարբեր համամասնությամբ և կառուցվածքային ու գործառական մասնավոր դրսևորումներով:

Բառակազմության համադրական տիպին են պատկանում երկու հիմնական եղանակները՝ բառաբարդումն ու ածանցումը, երբ արդյունքում ստացվում են միաձույլ բառեր՝ հիմնական ու երկրորդական ձևույթների տարբեր զուգորդություններով: Ըստ արդյունքի («բառանման» կազմություններ) համադրական տիպին են միանում նաև հապավյալները:

Բառակազմության վերլուծական տիպին հատուկ են դարձյալ երկու եղանակ՝ հարադրում և կրկնում: Վերլուծական տիպի դեպքում ստացվում են այնպիսի միավորներ, որոնց բաղադրիչները պահպանում են իրենց հարաբերական ինքնուրույնությունը (բառային շեշտ, անջատ գրություն, բաղադրիչների համապատասխան հնչյունական և քերականական ձևավորման հնարավորություն, այդ թվում՝ նախդիրների կիրառություն, բաղադրիչների շարադասության համեմատական ազատություն և տեղափոխելիություն, նրանց միջև այլ բառերի ներմուծման հնարավորություն և այլն): Այս ամենով հանդերձ այս կարգի վերլուծական կառույցները դիտվում են որպես բառակազմական և ոչ թե շարահյուսական իրողություններ (բառակապակցություններ), քանի որ որպես արդյունք ստացվում են մեկ բառի արժեք ունեցող միավորներ: Սրանք այն կազմություններն են, որոնք փաստորեն միջանկյալ օղակ են բառակապակցություններից բաղադրություններին անցնելիս: Ուստի վերլուծական կառույցները չպետք է մտցնել բարդությունների (բարդ բառերի) մեջ, ինչպես շատերի կողմից ընդունված է հայագիտության մեջ՝ հարադրական բարդություններ անվանումով, քանի որ դրանք ստացվում են բառակազմական բոլորովին այլ, անկախ եղանակի՝ հարադրման հետևանքով, որի արդյունքում ստացվող բաղադրությունները պետք է կոչել հարադրություններ (ի տարբերություն բարդությունների և ածանցյալների), իսկ բաղադրիչները՝ հարադիրներ:

Բացի վերը նշվածներից, համադրական և վերլուծական կառույցների էական տարբերություններից մեկն էլ այն է, որ համադրական կառույցների մեջ ելակետային միավոր է ընդունվում բառակազմական հիմքը, իսկ վերլուծականների մեջ՝ առանձին բառ-բաղադրիչը: Համադրականների դեպքում հետագա դասակարգումը կատարվում է ըստ բառի մեջ հիմնական և երկրորդական ձևույթների առկայության և նրանց հարաբերության (բարդ, բարդ-ածանցավոր, նախաածանցավոր, վերջաածանցավոր բառեր և այլն), իսկ վերլուծական կառույցների մեջ՝ ըստ բաղադրիչների խոսքիմասային պատկանելության (անվանական և բայական): Սրանց մեջ իրենց հերթին ըստ բաղադրիչների միացման ձևի և դրանց շարահյուսական կապակցման բնույթի կարող են առանձնացվել ենթատեսակներ, որոնք կարելի է ներկայացնել հետևյալ աղյուսակով.

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
ԿՐԿՆԱՎՈՐՆԵՐ	ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Անվանական	Անվանական	Բայական
1. Հարակցական (խումբ-խումբ)	1. Հարակցական (երկար-բարակ)	1. Ջուգադրական բայեր (ուտել-խմել)
2. Շաղկապական (իսկ և իսկ)	2. Շաղկապական (թանկ ու կրակ)	2. Հարադրական բայեր (զլուխ բերել)
3. Նախորդական (բառ առ բառ)	3. Առդրական (տուն-քանգարան)	
	4. Հատվածական (հայ-ռուսերեն)	
	5. Կապակցական (ամեն ինչ)	

Պետք է նաև նշել, որ համադրական կառույցների կադապարները շատ ավելի հարուստ և բազմազան են, քան վերլուծականներինը, քանի որ վերջիններս փաստորեն հանգում են ընդամենը խոսքի մասերի հնարավոր զուգորդություններին:

Հայագիտության մեջ բառակազմության երկու տիպի առանձնացումը և դրանցից յուրաքանչյուրին հատուկ համապատասխան եղանակների, միջոցների ու կառուցվածքային կադապարների հստակ սահմանազատումը հնարավորություն են տալիս խուսափելու մինչև օրս հայ բառակազմագիտության մեջ կիրառվող *իսկական*, *անիսկական*, *կցական*, *բադիյուսական*, *հարադրական բարդություն* և այլ նման անվանումներից, որոնք տարբեր հետազոտողների կողմից ստացել են տարբեր մեկնաբանումներ և դասակարգվել են ոչ միասնական սկզբունքներով:

Ավելորդ չենք համարում նշել, որ հայ բառակազմագիտության մեջ վերն առաջարկված դասակարգմանը համադրական կառույցների կադապարային քննության տեսակետից համապատասխանում են մեր «Գրաբարի բառակազմությունը» (Երևան, 1987) և Ս.Գալստյանի «Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում» (Երևան, 1978) աշխատությունները, իսկ վերլուծական կառույցների նկարագրությունը տրվում է Ա.Մարգարյանի «Հայերենի հարադիր բայերը» (Երևան, 1966) մեկնադրության և Գ.Վարդանյանի «Ժամանակակից հայերենի անվանական (ոչ բայական) վերլուծական բառակազմությունը» (Երևան, 2008) քեկնածուական ատենախոսության մեջ, որտեղ անվանական վերլուծական կազմությունները ներկայացված են № 2 աղյուսակում տրվող դասակարգման համապատասխան: Պետք է սակայն հիշել, որ Ա.Մարգարյանի աշխատության մեջ բայական հարադրությունները իր ժամանակ ընդունված տերմինաբանության համաձայն դեռևս անվանվում են «բարդություններ»:

Լիանա Հովսեփյան
Երևանի պետական համալսարան
Օֆեյա Խաչատրյան
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅՈՒ ՏԱՂԵՐԻ ԵՎ ԳԱՆՁԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մատենագրական հուշարձանների լեզվի, հատկապես բառապաշարի ուսումնասիրությանը մեծապես նպաստում են բնագրային համաբարբառները, որտեղ հավաստի փաստերով և համակարգված ձևով արտացոլվում են տվյալ ստեղծագործությանը վկայված լեզվական իրողությունները:

Ի թիվս մինչև օրս կազմված մի քանի տասնյակ հայ հին և միջնադարյան մատենագրության արժեքավոր ստեղծագործությունների՝ համաբարբառային մշակման է ենթարկվել նաև միջնադարի հայ մեծ բանաստեղծ փիլիսոփա Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» երկը: Սակայն Նարեկացու գրչին, բացի նրա հռչակավոր պոեմից, պատկանում են նաև այլ ստեղծագործություններ, որոնք թեև տարբեր տեսակետներից արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը, սակայն դրանց լեզվական նյութը դեռևս ավելի խոր բնության ու գնահատման կարիք ունի: Դա մասնավորապես վերաբերում է նաև Նարեկացու գրական ժառանգության մեջ կարևոր տեղ գրավող փոքր ծավալի չափածո ստեղծագործությունների՝ տաղերի, գանձերի, ներբողների լեզվին¹:

Նարեկացու ստեղծագործական ժառանգության մեկնողական-բանասիրական ուսումնասիրությունը վաղեմի պատմություն ունի: Նրա անունով մեզ հասած և նրան վերագրվող երկերի մեկնություններով զբաղվել են ինչպես միջնադարում (Գևորգ Սկևռացի), այնպես էլ նոր ժամանակներում: Հատկապես Նարեկացու տաղերի ու գանձերի բնությանն անդրադարձել են այնպիսի հետազոտողներ, ինչպիսիք են Հ. Նալյանը, Գ. Ավետիքյանը, Մ. Պոտուրյանը, հետագայում նաև Մ. Աբեղյանը, Ա. Չոպանյանը, Ն. Պողարյանը, Մ. Սլյքյանը և այլք: Հայ բանասերներին և գրականագետներին հատկապես հետաքրքրել են ճշված երկերի և հետագայում դրանցից կազմված ժողովածուների ծագման ու ձևավորման ժամանակի, ժանրային առանձնահատկությունների, հայ եկեղեցու ժամակարգության մեջ նրանց գրաված տեղի, հավաստիորեն Նարեկացու գրչին պատկանելու հարցերը և այլն: Այդ հարցերի մասին հայ բանասիրության մեջ արծարծված կարծիքները ի մի են բերված և ներկայացված 1981թ. Արմինե Բյոշկերյանի աշ-

¹ Գրիգոր Նարեկացու գանձերն առաջին անգամ տպագիր լույս են տեսել «Մատենան ողբերգության» պոեմի երկրորդ հրատարակությանը կից՝ 1700 թ. Կոստանդնուպոլսում:

խատասիրությամբ լույս տեսած՝ Գ. Նարեկացու «Տաղեր և զանգեր» քննական բնագրերի ժողովածուի ընդարձակ առաջաբանում¹:

Ա. Քյոչկերյանի կազմած ժողովածուում տեղ են գտել 10 զանգերի և 21 տաղերի քննական բնագրերը, որոնք կազմված են թե՛ ձեռագիր, թե՛ տպագիր աղբյուրների հիման վրա: Ձեռագիր աղբյուրներում ընդգրկված են ինչպես հնագույն, այնպես էլ հետագայի 44 ընտիր ընդօրինակություններ, սակայն հիմնականում օգտագործվել են ԺԳ-ԺԴ դարերի մեկ տասնյակի հասնող Գանձարան ժողովածուները: Տպագիր ժողովածուներից նախապատվությունը տրվել է 1840 թ. Վենետիկում հրատարակված հատորին, որը պարունակում է 3 զանգի և 17 տաղի բնագրերը:

Նարեկացու բանաստեղծությունները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ զանգեր (որ հնում կոչվել են մաս քարոզ²) և տաղեր: Սրանք ստեղծվել են հատուկ համակարգով և ծառայել են որոշակի նպատակների: Գանձերը եկեղեցական տոների առթիվ գրված կրոնական մաղբանքներ են: Նարեկացուն է վերագրվում ոչ միայն զանգերի սկզբնավորումը, այլև *զանձ* անվանումը, որը պայմանավորվում է հեղինակի ստեղծագործությունների սկզբնաբառերով: Այդ երգերը մեծ մասամբ ունեցել են «Գրիգորի է երգս այս» ծայրակապը, որտեղ Գ. տառին համապատասխանել է *Գանձ* բառը: Այսպիսով՝ Նարեկացին հիմնադրում է հոգևոր երգի մի նոր տեսակ, որը կոչվում է *զանձ*: Այս գործերի հետևողությամբ հետագայում նորանոր երգեր են ստեղծվում և հիմք դառնում Գանձարան ժողովածուների համար: *Տաղը* զանգին կից հանդես եկող բանաստեղծական միավոր է: Թեև տաղը լայն իմաստով ըստ ՆՀԲ-ի ընդհանրապես նշանակում է «բան չափաբերական, ոտանավոր երգ, քերթումած նուագելի»³, սակայն Գանձարաններում «...այդ բառի տակ հասկացվում է հոգևոր երգի որոշակի մի տեսակ, որը չի կարող շփոթվել ո՛չ զանգի, ո՛չ շարականի, ո՛չ էլ այլաբնույթ որևէ ստեղծագործության հետ: Այդ տաղերը, սովորաբար, փոքրածավալ ու կուռ բանաստեղծություններ են՝ «տերունական և սրբերի տոների վերաբերյալ հատուկ երգեր» [Մ.Աբեղյան]՝ կապված համապատասխան զանգերի հետ»⁴: Գան-

¹ Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանգեր, Աշխատասիրությամբ Արմինե Քյոչկերյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981: Նշենք մաս, որ դրանից ավելի քան երկու տասնամյակ առաջ Նարեկացու տաղերը գրաբար բնագրերով, գուգահեռ աշխարհաբար թարգմանությամբ, ներածականով ու ծանոթագրություններով լույս են ընծայվել Արշավիր Մխիթարյանի կողմից՝ Գրիգոր Նարեկացի, Տաղեր, Հայպետհրատ, Երևան, 1957:

² Հմմտ.՝ «Նարեկացու զանգերի հին ընդօրինակությունները պահպանվել են ոչ թե զանձ, այլ քարոզ անունով» (Գ.Մխիթարյան, *Քարոզը և զանձը* հայերենի երաժշտական տերմինաբանական համակարգում, Ջահուկյանական ընթերցումներ, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2008), տես մաս՝ Ա.Արևշատյան, *Քարոզի ժանրը* հայ հոգևոր երաժշտության մեջ, ՊԲՀ, 1992, № 2-3:

³ Նոր բառգիրք հայկազգեան լեզուի, Բ, էջ 239:

⁴ Ա. Քյոչկերյան, նշվ. աշխ., էջ 31:

ծարաններում տեղ գտած տաղերի առաջին հեղինակը, ինչպես նշում է Ա. Բյոշկերյանը, նույնպես համարվում է Գրիգոր Նարեկացին: Տաղերը քեւ կապված են զանձերի հետ, սակայն նրանց չեն նույնանում և ունեն մաս ինքնուրույն արժեք՝ զանձերից տարբերվելով իրենց քնարական էությամբ, հուզականությամբ և առավել պատկերավոր բնույթով, մինչդեռ զանձերը ավելի էպիկական՝ պատմողական-մկարագրական բնույթի երգեր են: Տարբեր է և նրանց երաժշտությունը՝ զանձերն ավելի պարզ մեղեդի ունեն, իսկ տաղերը երգվում են ավելի հարուստ եղանակներով¹: Գանձարան ժողովածուներում Նարեկացու որոշ զանձեր ու տաղեր ունեն մաս *փոխ* խորագիրը: Փոխը հանդիպում է երկու տարբերակով: Սովորաբար դա բանաստեղծության վերջին տունն է կամ տվյալ տաղի որևէ մասը, որոնք անջատվել և դիտվել են որպես փոխ: Սրանք ամենայն հավանականությամբ երգվել են փոխված եղանակով (երբեմն դրանց կողքին նշվում է՝ «Փոխ է զձայն»): Փոխերի մյուս տեսակը ինքնուրույն բանաստեղծություններ են, զանձարանային առանձին միավորներ: Այս ամենով հանդերձ, որքան էլ ժանրային առանձնահատկությունների և գեղարվեստականության տեսակետից Գրիգոր Նարեկացու զանձերն ու տաղային միավորները ինքնուրույն երկերի արժեք ունեն, սակայն դրանք սերտորեն շաղկապված են միմյանց: Այս յուրահատկությունը հաշվի է առնված և արտացոլված է Նարեկացու զանձերի ու տաղերի քննական բնագրերի՝ վերը նշված հրատարակության մեջ:

Այդ ժողովածուի մեջ զետեղված 10 զանձերի և 21 տաղերի քննական բնագրերի հիման վրա կազմվել է Նարեկացու զանձերի ու տաղերի բնագրային համաբարբառը²: Համաբարբառը իր հերթին հիմք է ծառայել Նարեկացու զանձերի ու տաղերի բառապաշարի հաճախականության բառարանի համար³:

Համաբարբառը և հաճախականության բառարանը հնարավորություն են ընձեռում Նարեկացու զանձերի ու տաղերի բառապաշարը բազմակողմանիորեն քննել վիճակագրական, լեզվաոճական և բառակազմական տեսանկյունից:

Առաջին հերթին այս հաղորդման մեջ փորձել ենք բացահայտել ու ներկայացնել ժողովածուի մեջ ներառված երկերի բառապաշարի քանակական բնութագրերը՝ բոլոր բառագործածությունների ընդհանուր քանակը, բառարանային գլխաբառերի թիվը, բառային միավորների գործածման հաճախականությունը, բառարաններում արձանագրված լինելը և այլն: Հայտնի է, որ տվյալ ստեղծագործության մեջ բառերի հաճախականություն-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 32-33:

² Գրիգոր Նարեկացի, Տաղեր և զանձեր, Բնագրային համաբարբառ, աշխատասիրությամբ Օֆելյա Խաչատրյանի, Երևան, 1988 (դեռևս անտիպ):

³ Օֆելյա Խաչատրյան, Գրիգոր Նարեկացու տաղերի և զանձերի բառապաշարի հաճախականության բառարան, Երևան, 2009 (անտիպ):

նը, ինչպես նաև այս կամ այն բառի առկայությունը կարևոր հատկանիշներ են հեղինակի ոճի բնութագրման, լեզվագործածության միայն իրեն բնորոշ առանձնահատկությունների բացահայտման տեսակետից:

Ամենից առաջ պարզելու համար, թե որքանով և ինչ սկզբունքներով է Նարեկացու բառապաշարը արտացոլված Նոր Հայկազյան բառարանի մեջ, «Տաղեր և զանգերի» համաբարբառի բոլոր բառային միավորները համեմատել ենք ՆՀԲ-ի գլխաբառերի հետ: Պարզվել է, որ Նարեկացու «Տաղեր և զանգերում» օգտագործված բառային միավորների մեծ մասն արտացոլված է ՆՀԲ-ում¹: Այդ բառամիավորների մեջ առկա են և՛ այնպիսիք, որոնք ՆՀԲ-ում բերվում են նաև այլ, հիմնականում ավելի ուշ ժամանակաշրջանի հեղինակներից քաղված վկայություններով, և՛ այնպիսի բառեր, որոնց միակ վկայությունը վերցված է Նարեկացուց: Այդ բառերի քանակն է 91: Կան նաև այնպիսի բառեր, որոնք ՆՀԲ-ում նշված են որոշ տարընթերցումներով:

Այնուհետև, դուրս բերելով ՆՀԲ-ում ընդհանրապես չարձանագրված բառամիավորները (թվով 76), դրանք համեմատել ենք ավելի ուշ շրջանի՝ Առձեռն բառարանի, Հր. Աճառյանի «Հայերեն արձատական բառարանի», Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի», Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» բառանյութի հետ: Համեմատությունից պարզվել է, որ նշված 76 բառերից 33-ը տեղ չեն գտել նշված բառարաններից և ոչ մեկում: Դրանք հետևյալ բառերն են (բառերի կողքին նշվում են բնագրի էջերը)։

անբանող - 90
աշխատացեալ - 127, 140
առեցեալ - 140
աղիմատիպ - 111
բղխենալ - 114
եղելի - 108
ինքնախորհել - 222
կայլակահեղ - 148
կանխառար - 150
կարկաջալ - 124
կուսինաժոց - 75

համագումարեալ - 143
հաւուն - 115
հաւուն-հաւուն - 114
հոգիազգեստեալ - 121
հրաշագանութիւն - 184
ճոճ - 62
մահակործան - 143
մատնաւրիմաւրեն - 90
մշտաշնորհ - 210
նսեմապատ - 144
շարժենալ - 114

շուրջանափայլ - 186
ունարան - 149
սաքբերունի 121
սափիրանափայլ - 100
սկզբնացուցիչ - 141
սրովբեաճոխ - 186, 187
վաղաւտ - 83
վաղ ի վաղ - 76
վերաղիտողութիւն - 197
տաղերամ - 89
քառասնապաճոյճ - 81

¹ Բառարանում հարյուրավոր բառեր վկայված են միայն Նարեկացու և նրան հաջորդած հայ մատենագիրների երկերով: Այդ իրողությունը նշում է նաև Հ. Ղ. Միրզոյանը իր «Նարեկացու բառաշխարհը» (ԲԵՀ, 2005, № 1), և «Նարեկացու լեզվական ազդեցությունը հետագա դարերի մատենագրության վրա» (ԲԵՀ, 2006, № 1) հոդվածներում:

Մնացած 43 բառերը վկայված ենք գտնում նշված չորս բառարաններից որևէ մեկում, երկուսում կամ երեքում: Չկան բառամիավորներ, որոնք արտացոլված լինեն բոլոր չորս բառարանների մեջ: Ընդ որում, ավելի շատ ընդհանրություններ նկատվում են մի կողմից՝ Առձեռն բառարանի և Ստ.Մալխասյանցի բառարանի, մյուս կողմից՝ Ստ.Մալխասյանցի և Էդ.Աղայանի բառարանների միջև: Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է նշված բառարաններում տեղ գտած բառերի համեմատական պատկերը:

Աղյուսակ № 1

№	Բ ա ռ ե Ր	Նախնական բնագրի էջը	Առձեռն	Աճառյան	Մալխասյանց	Աղայան
1.	ակնաքքիթ	83	+		+	+
2.	ահեղինաճեմ	87			+	
3.	աղերսագոչ	84	+		+	+
4.	բոսորաերվնագարդեալ	169	+			
5.	թէկնիթիկին/ քիկնէթէկին	121, 124	+			
6.	թեւատրոհաթեւ	109	+		+	
7.	լեռնաբալիեան	90			+	
8.	հեղինաւորեալ	84		+		
9.	հուռն	121	+	+		
10.	հրահոսավտակ	111			+	
11.	հրաւիրողակ	111	+			
12.	ծայնաղի	98			+	+
13.	ծայնաստեղծեալ	89	+		+	
14.	մխակցութիւն	189			+	+
15.	յանկարծահնչել	111	+		+	
16.	յերագգալից	109	+			
17.	նէճել	120, 124			+	
18.	նուաստատիլալ	89	+		+	
19.	շարժվարժենի	120, 123			+	+
20.	շարունակիչ	144			+	
21.	շմաթ	121			+	+
22.	շողաճիգ	184				+
23.	ոսկեշողել	122			+	+
24.	ոսկիական	187			+	

25.	պտղինաւետ	68			+	+
26.	սաքայեան	114			+	
27.	սաստիկաշունչ	109			+	
28.	սիրաբորբոր	178			+	+
29.	ստղի-հտղի	121			+	
30.	վաղընթաց	98				+
31.	վալելչալից	126			+	+
32.	վերատուեալ	90	+	*		
33.	տալրալին	75				+
34.	տալրաշիշ	89			+	+
35.	տալրալ	142	+	+		
36.	տալիդալմիւ	85			+	
37.	տիլատուր	174			+	
38.	ցոփինաճեմ	127			+	+
39.	ցոփինընթաց	84, 87			+	+
40.	փառատուող	85, 86			+	
41.	փնջել	62			+	+
42.	քաղցրերգանալ	121, 124			+	
43.	քառադեան	114			+	

* Առձեռնում՝ վերատրել:

** Մալխասյանցի բառարանում՝ տարրաղիշ, ընդ որում, նշվում է որպէս անհայտ նշանակութեամբ բառ:

Ավելորդ չենք համարում նաև առանձին ցանկով ներկայացնել «Տաղեր և զանձեր» ժողովածուից այն 91 բառամիավորները, որոնք ՆՀԲ-ում բերված են միայն Նարեկացուց բաղված վկայություններով (բառերի կողքին հղում է տրվում բնական բնագրի էջերին)։

ահագնակոշկոճ - 78
աղերսարկու - 148,
182
աղերսարկութիւն -
161
ապածեռն - 159
աստեղանիշ - 166
աւտարասերմ - 165
բոսորաերփնագար-
դեալ - 109
լեքինաքինդ - 70
կարկեհան - 165
կողիմնապատիւ - 92
հազրէվարդ - 85, 86

համանունակ - 165
համբարձային - 76
համբերապատ - 83
հանդերձիշ - 152
իլիւրալաց - 76
հոգեպայծառ - 224
հոգետոհմութիւն -
171
հոգիաձիւր - 168
հոգիապատում - 76
հողմահնչել - 111
հրակոճ - 70
հրաշունակ - 75
հրարփի - 85, 86

ծորձածածուկ - 90
ճապուկ - 62
ճոխարան - 109
մահինաբողբոջ - 83
մաղբողական - 160
մայրատախտակ -
165
մանուածաւալ - 69
մանուշկալքեր - 85,
86
մանրահեղել - 67
մատինալարին - 108
մարմնագոյք - 168

մաքրակրաւն - 161,
199

մաքրինսննմ - 85, 86

մեղեղի86 - 123

մերունական - 85

յայտաթորեալ - 84

յառաջակառոյց - 164

յաւժարընրաց - 165

յոգնախմբեան - 184

յոգնածայն - 185

յորդահեղու - 84

յուսաբեր - 93

նեղիչ - 225

նորախնդիր - 86, 87,

90

նուսխայարւեն - 75,

121, 124

շողշողել - 118, 118

շողշողենի - 67

շուշանագործ - 187

շրջանապտոյտ - 69

ոստազութարճ - 89

ոստինայկոտոր - 84,
86

ովսաննայաբեր - 90

ուղխինահոս - 69

ուռամիջակ - 62

պատմաբանիչ - 154

պատշաճակերտ -

164

պարկեշտասնունդ -

208, 210

պերճաբարոյ - 127

սամի(ք) - 62

սաստկակսկիծ - 79

սիրամայր - 85, 86

սիրաշարժ - 73

սկզբնագարդ - 83

սկզբնածեռն - 164

սնոտիաժողով - 154

սոսկական - 159, 216

ստեղծաշխտակ - 85,

86

սրտաճմիկ - 90

վայելչապանմ - 184

վեհինաճեմ - 67

տարփ - 75

տեառնագիր - 92

տեղիարան - 91

տիեզերախումբ - 220

տիեզերահեղձոյց -

154

րաբուն - 75, 132

րախճան - 163, 201

րոպ - 85

ցաղիկ - 73

փայլակնածն - 121,

124

փայլենագարդ - 91

փրփինագարդ - 68

փողփողեն - 67

քառաջահեան - 187

քառավտակ - 221

քոյիկակրաւն - 158,

207

քոյինաշունչ - 154

Համաբարբառի և հաճախականութեան բառարանի տվյալների և վերը նշված բառարանների հետ կատարած համեմատությունների արդյունքների հիման վրա կազմել ենք Նարեկացու տաղերի ու զանգերի բառապաշարի քանակական ընդհանուր տվյալները արտացոլող հետևյալ աղյուսակը.

Աղյուսակ № 2

1.	Բառագործածությունների ընդհանուր քանակը	12088
2.	Բառարանային միավորների ընդհանուր քանակը	2892
3.	Մեկ անգամ գործածված բառեր	1404
4.	ՆՀԲ-ում միայն Նարեկացու հղված բառեր	91
5.	ՆՀԲ-ում չարձանագրված բառեր	76
6.	Այլ բառարաններում արձանագրված բառեր	43
7.	Որևէ բառարանում չարձանագրված բառեր	33

Աղյուսակի տվյալների ուսումնասիրությունից կարելի է հանգել այն եզրակացության, որ Նարեկացու զանգերի և տաղերի բառապաշարը աչքի է ընկնում մեծ հարստությամբ և բազմազանությամբ: Այդ մասին են վկայում նախ՝ բառերի գործածության միջին հաճախականությունը՝ 4,17, որն ընդ-

հանուր առմամբ փոքր ցուցանիշ է¹, այսինքն՝ Նարեկացու բնագրերում նույն բառերը շատ չեն կրկնվում, և երկրորդ՝ մեկ անգամ գործածված բառերի քանակը՝ որը կազմում է ամբողջ բառապաշարի գրեթե կեսը՝ 48,5 %: Սա նշանակում է, որ իր բանաստեղծական պատկերները ստեղծելիս Նարեկացին խուսափում է նույն բառերը կրկնելուց և գործածում է նորանոր, շատ հաճախ նաև նորաստեղծ բառեր: Ընդհանրապես պետք է ասել, որ երկու և մեկ անգամ գործածված բառերի համամասնությունը (տոկոսային հարաբերությունը բառագործածությունների ընդհանուր քանակի հետ) տվյալ հեղինակի բառապաշարի հարստության ու բազմազանության չափանիշ է: Ըստ արդեն հիշատակված² Խորենացու «Հայոց պատմության» հաճախականության բառարանի տվյալների Խորենացու երկում մեկ և երկու հաճախականություն ունեցող բառերի քանակն է համապատասխանաբար 3584 և 2048 միավոր (միասին 5632), որ կազմում է բառարանային բառերի թվի 80,8 %-ը, իսկ միայն մեկ անգամ գործածվածներինը՝ 51,4 %-ը, որը բացառիկ արդյունք է, եթե հիշենք, որ ճոխ և հարուստ բառապաշարով հայտնի հեղինակ Ա. Պուշկինի լեզվի բառարանի տվյալներով այդ ցուցանիշը կազմում է ընդամենը 48 %²: Նարեկացու «Տաղեր ու զանգերի» 48,5 % ցուցանիշը, ինչպես տեսնում ենք, նույնպես ավելի բարձր է:

Սույն հաղորդման մեջ բերված Նարեկացու տաղերի ու զանգերի բառապաշարի քանակական բնութագրերը, ինչպես նաև տաղերի ու զանգերի բնագրային համաբարբառն ու հաճախականության բառարանը նախադրյալ են ստեղծում ավելի մանրամասն և հանգամանալից ուսումնասիրելու համար Նարեկացու բառապաշարի լեզվաոճական և բառակազմական առանձնահատկությունները, ինչպես նաև նրա ինքնատիպ բառագործածումները:

¹ Հետաքրքրական է այդ ցուցանիշը համեմատել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» երկի հաճախականության բառարանի վիճակագրական տվյալների հետ, որտեղ բառերի միջին հաճախականությունն է 8,09, որ թեև կրկնակի ավելի է Նարեկացու համապատասխան տվյալից, սակայն նկատի ունենալով պատմահոր երկի ժանրային առանձնահատկությունը, դարձյալ մեծ չէ և նույնպես վկայում է հեղինակի բառապաշարի հարստության մասին:

² Տվյալը քաղել ենք Բ. Ղազարյանի «Հաճախականության բառարանը հայոց լեզվի միևնույն-բառարանի հիմք» աշխատությունից, «Բառագիտության և բառաբանագրության հարցեր» ժող., Էր., 1972, էջ 117:

ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԱԿԱՆ ՆՈՐԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՆՔԸ
ԵՎ ԴՐԱՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արդի հայերենի բայական նորաբանությունների հենքը կազմվել է հայերենի բայերի որոնողական համակարգը հնարավորինս ամբողջական դարձնելու նպատակով: Այն ընդգրկում է Ս. Էլոյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառարան»-ի, Ա. Մարտիրոսյանի «Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները» գրքի, Փ. Մեյքիխանյանի «Նոր բառերի բացատրական բառարանի» և Հ. Մեսրոպյանի «Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկերի բառարանի» բառացանկերը: Առաջին երկուսի բայական նորաբանությունները 643-ն են՝ ներառյալ բայական բառակապակցությունները (բառարանների բառերի քանակը համապատասխանաբար՝ 7700, 1100), Փ. Մեյքիխանյանի բառարանում՝ 148-ը (բառերի քանակը՝ 2800), Հ. Մեսրոպյանինը՝ 165 (բառերի քանակը՝ 1666):

Հենքը մշակվել է որպես բազմահատկանիշ որոնողական այնպիսի համակարգ, որը հետազոտողին հնարավորություն է ընձեռում կատարելու լեզվաբանական տարբեր բնույթի աշխատանքներ՝ դասդասել բառերն ըստ տարբեր հատկանիշների, օրինակ, խոնարհման հարացույցի, բառակազմական կաղապարների, բառարանային բնութագրերի և այլն:

Բայերի բառակազմական կաղապարները ներկայացվում են ըստ երկու՝ Ս. Շահումյանի ու Պ. Սորոկանի փոխակերպման (տրանսֆորմացիոն) քերականության և Լ. Հովսեփյանի՝ գրաբարի բառակազմությունը նկարագրող ձևային քերականությունների: Այս երկու նկարագրությունները ընտրված են բառակազմությունը առավել լիակատար ներկայացնելու նպատակով՝ օգտագործելով երկու համակարգերի հնարավորությունները: Առաջին քերականությունը հնարավորություն է տալիս որոշելու, թե որ խոսքի մասից և բառակազմական որ փուլում են կազմվում բառերը (բայերը), իսկ երկրորդը՝ բացի բառակազմական փուլերից թույլ է տալիս ներկայացնել նաև բառի ձևությամբ կազմը և արմատի փոփոխությունները:

Հենքը կազմված է Access ծրագրային համակարգում աղյուսակների տեսքով: Այս համակարգը հնարավորություն է տալիս կազմակերպելու որոնում և տվյալների դասդասումը այսպես կոչված զտման գործողությամբ՝ ըստ բազմաթիվ քերականական հատկանիշների և բառարանային բնութագրերի: Հենքի աղյուսակը պարունակում է յոթ սյունակ.

1. Word-ում բառերն են, այս սյունակի բառերից կարող ենք առանձնացնել ցանկացած հիմքով, նախածանցով, վերջածանցով բայերը, ինչպես նաև *ա-*, *ե-*խոնարհման բայերը, օրինակ, *-գերծել*-ով (Աղյուսակ 1), *վեր(ա)-* նախածանցով (մի հատված Աղյուսակ 2-ում), *-(ան)ալ* վերջածանցով (Աղյուսակ 3) կազմված բառերը:

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
անտառազերծել	aPV010	neo	OR2OR1	b, մմլ.	SjSa	ՍԷ
առասպելազերծել	aPV010	neo	OR2OR1	b, մմլ.	SjSa	ՍԷ
արաբազերծել	aPV010	neo	OR2OR1	b, մմլ.	SjSa	ՍԷ
արմատազերծել	aPV010	neo	OR2OR1	b, ՀրչՍ	SjSa	ՍԷ
մաֆիազերծել	aPV010	neo	OR2OR1	b, մմլ.	SjSa	ՍԷ
պեպենազերծել	aPV010	neo	OR2OR1	b, մմլ.	SjSa	ՍԷ

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
վերազագիֆիկացվել	aPVr095	neo	OR2R1R1	մմլ.	a(Sa)	ՍԷ
վերադիրքորոշվել	aPVr095	neo	OR2OR1R1	b, մմլ.	a(SSa)	ՍԷ
վերաենթարկել	aPV010	neo	OR1R1	մմլ.	a(aSa)	ՍԷ
վերաթողարկվել	aPVr095	neo	OR1R1R1	մմլ.	a(Sa)	ՍԷ
վերաճզրտել	aPV010	neo	OR1R1	մմլ.	a(Saa)	ՍԷ
վերամահանալ	aPVm071	neo	OR2R1R1	մմլ.	a(Sa)	ՍԷ
վերանվիրագործել	aPVm050	neo	OR2OR1R1	b, եկեղեց, մմլ.	a(SjSa)	ՍԷ
վերադեքավորել	aPV010	neo	OR2R1R1	մմլ.	a(Sa)	ՍԷ
վերացուցանակել	aPV010	neo	OR2R1R1	մմլ.	a(Saa)	ՍԷ
վերաուղղորդել	aPV010	neo	OR2R1	մմլ.	a(Saa)	ՍԷ
վերաուղղորդվել	aPVr095	neo	OR2R1R1	մմլ.	a(Saa)	ՍԷ
վերաքրիստոնեացնել	aPVc090	neo	OR3R1R1	մմլ.	a(Sa)	ՍԷ

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
անդենանալ	aPVm071	neo	OR2R3R1	փխբ., մմլ.	(aS)a	ՍԷ
անկանանալ	aPVm071	neo	OR2R3R1	մմլ.	(aS)a	ՍԷ
ապահերմետիկանալ	aPVm071	neo	OR3R1R1	մմլ.	a(Sa)	ՍԷ
ապաշրթնայնանալ	aPVm071	neo	OR2R3R1R1	լգվբ. ԳԶ	a(Saa)	ՍԷ
ապաքաղաքականանալ	aPVm071	neo	OR2R3R1R1 / OR2R3R3R1	մմլ.	a(Saa)	ՍԷ
ասուլանալ	aPVm071	neo	OR2R1	մմլ., ՄՆ	Sa	ՍԷ
արևելականանալ	aPVm071	neo	OR2R3R1	b, մմլ.	SSaa	ՍԷ

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
զաղափարանալ	aPVm071	neo	OR2(R3)R1	մմ.	Saa	Ut
ղաշնակցականանալ	aPVm071	neo	OR2R3R1	մմ.	Saaa	Ut
եսասիրանալ	aPVm071	neo	OR2OR3R1	b, մմ.	SjSa	Ut
երկրապահանալ	aPVm071	neo	OR2OR1R2R1	b, մմ.	SjSa	Ut
ինքնափրականանալ	aPVm071	neo	OR3R1OR1	b, մմ.	Sj(Sa)	Ut
ինքնամեկուսանալ	aPVm071	neo	OR1OR1	b, մմ.	Sj(Sa)	Ut
ֆերմերանալ	aPVm071	neo	OR2R1	մմ.	Sa	Ut

2. Paradigm սյունակում նշված է բալի խոնարհման հարացույցի համա-
րը. այս սյունակը հնարավորություն է տալիս առանձնացնելու ներգործա-
կան, կրավորական սեռի բայերը, ինչպես նաև միևնույն հարացույցին
պատկանող բառերը, օրինակ՝ պատճառական ածանցով բայերը ունեն *c*
հատկանիշ, դրանց ընդհանուր քանակը 57-ն է (մի հատված տես աղյու-
սակ 4-ում):

Աղյուսակ 4

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
բնականոնացնել	aPVժ090	neo	OR2R3OR1 / OR2R1R1	b, մմ.	Saaa	Ut
զավառականացնել	aPVժ090	neo	OR2R3R1	եղԱ, մմ.	Saa	Ut
դենոնացնել	aPVժ090	neo	OR2R1	դվնգ.	Sa	Ut
դրամատիկացնել	aPVժ090	neo	OR2R3R1	փխք, մմ.	Saa	Ut
երևույթացնել = ներկայացնել	aPVժ090	neo	OR2R1	մմ.	Sa	Ut
գոմբիացնել	aPVժ090	neo	OR2R1	մմ.	Sa	Ut
թանձրացականացնել	aPVժ090	neo	OR3R3R1	զրք., Q Հ, մմ.	Saa	Ut
ժողովրդավարացնել	aPVժ090	neo	OR2OR1R1	b, մմ.	SjSa	Ut
ինկուբացնել	aPVժ090	neo	OR2R1	անհշղ., մմ.	Sa	Ut
ինքնաչեզոքացնել	aPVժ090	neo	OR2OR3R1	b, մմ.	Sj(Sa)	Ut
ինքնատիպացնել	aPVժ090	neo	OR2R3R3	b, Ա.Շիր	(aS)a	Ut
իրավականացնել	aPVժ090	neo	OR2R3R1	մմ.	Saa	Ut

3. Neo: Քանի որ համակարգը հայերենի բայերի որոնողական համակարգի մի հատված է, այս սյունակը պարունակում է երկու հատկանիշ՝ նորաբանություն՝ *neo*, *c neo* -բայական բառակապակցություն:

4. Model-ում բայի բառակազմական կաղապարներն են ըստ Ս. Շահումյանի և Պ. Սոթոկայի ձևային քերականության: OR1, OR2, OR3, OR4-ով նշվում են արմատական բայերը, գոյականները, ածականները, մակբայները, OR1R1 - բայից, OR2R1 - գոյականից, OR3R1 - ածականից, OR4R1- մակբայից կազմված բայերն են, այս սյունակը հնարավորություն է տալիս առանձնացնելու, օրինակ, արմատական գոյականից, բայից, ածականից կամ մակբայից կազմված, ինչպես նաև միևնույն բառակազմական կաղապար ունեցող բայերը. օրինակ՝ OR2R1 կաղապարով սերված բայերը բովոլ 105-ն են (մի հատված տես՝ Աղյուսակ 5-ում):

Աղյուսակ 5

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
ռահվիրել	aPV010	neo	OR2R1	կտկ., հեղ., ՂԴ	Sa	ՄԵ
դոլարանալ	aPvm071	neo	OR2R1	փխբ., մմլ.	Sa	ՄԵ
եղյամել	aPvm010	neo	OR2R1	ս, ՀրչՍ	Sa	ՄԵ
երակվել	aPvr095	neo	OR2R1	փխբ.	Sa	ՄԵ
երևանվել	aPvr095	neo	OR2R1	բնստ., ՀՇ	Sa	ՄԵ
գոմբիացնել	aPvc090	neo	OR2R1	մմլ.	Sa	ՄԵ
գորբել	aPvm010	neo	OR2R1	բնստ., փխբ., ՈԴ	Sa	ՄԵ

5. Type սյունակում նշված են բառարանային բնութագրերը. տերմինային՝ *արվ.*, *տնտգ.*, *եկեղեց.*, *լզվբ.*, *ռազմ.*, *քղբ.*, *դվգ.*, *երաժշտ.*, *ֆին.*, *ոճական*՝ *գրք.*, *ժղ.*, *հեղ.*, *հեզմ.*, *դիպ.*, *բնստ.*, *խակց.*, *հսրկբ.*, *ժրգ.*, *անհեղ.*, *հեղինակների* *անունների* *համառոտագրությունները*՝ *ՀՇ*, *ՊՍ*, *ՀրչՍ*, *ՀՍ*, *ՎՀ*, *ԱԶ*, *ԻՍ*, *ՎՓ*, *ԳՋ*, քերականական բնութագրեր՝ *հր* (*հարադիր բայ*), *բ* (*բառաբարդում*), *ս* (*իմաստային նորաբանություն*), *ի* (*կրկնվող արմատով կազմություն*), *փխբ.*, *դրծ.*, *մմլ* (*մամուլ*): Նշված բոլոր հատկանիշներով հնարավոր է ընտրություն կատարել: Աղյուսակ 6-ում տրվում են *դիպ.* (*դիպվածալի*) հատկանիշով բառերը:

Աղյուսակ 6

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
ամենախելոքանալ	aPvm071	neo	OR3R3R1	դիպ., մմլ.	(aS)a	ՄԵ
մարդուկվել	aPvr095	neo	OR2R2R1	դիպ., ՀՍրապ. մմլ.	Saa	ՄԵ
ոստիկանել	aPvm050	neo	OR2R1	դիպ., մմլ.	Sa	ՄԵ
չթուրվել	aPvr095	neo	OR2R1R1	դիպ., հեզ., ՀՇ	a(Sa)	ՄԵ

6. ModelL-ում բայի բառակազմական կաղապարներն են ըստ Լ. Հովսեփյանի գրաբարի բառակազմությունը նկարագրող ձևային քերականության. S-ը արմատն է, Sf-ը- ձևափոխված արմատ, a-ն՝ ածանց (նախածագ կամ վերջածանց), j-ն հոդակապ է: Արմատական բայերն ունեն Sa կաղապարը: Փակագծերը (տես Աղյուսակ 6) նշում են բառակազմական փուլերը: Այս պլուրալում կարելի է առանձնացնել, օրինակ, նախածանցավոր, հոդակապով և առանց հոդակապի բարդ բառերը: Աղյուսակ 7-ում տրվում է առանց հոդակապի բառաբարդմամբ (SS կաղապարով) սերված բայերի ցանկից մի հատված:

Աղյուսակ 7

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
արևելականնալ	aPVm071	neo	OR2R3R1	b, մնլ.	SSaa	ՄԷ
բռնարգելվել	aPVr095	neo	OR4OR1R1	b, քըք., մնլ.	SSa	ՄԷ
գատգատել	aPV010	neo	OR1OR1	it. զԱ	SSa	ՄԷ
լուսանցքվել	aPVr095	neo	OR2OR1R1	b, մնլ.	SSa	ՄԷ
խաչքարվել	aPVr095	neo	OR2OR2R1	b, բնատ.,	SSa	ՄԷ
հաղթարշավել	aPV010	neo	OR3OR1R1	b, մնլ.	SSa	ՄԷ
շքերթել	aPVm050	neo	OR3OR2R1	b, մնլ.	SSa	ՄԷ
պաշտոնանկվել	aPVr095	neo	OR2OR1	մնլ.	SSa	ՄԷ
սեվերիզել	aPV010	neo	OR3OR2R1	b, ԿԴ2, մնլ.	SSa	ՄԷ

7. Source-ում նշվում է նորաբանության աղբյուրը: Հենքի ներկայացվող աղյուսակը ներառում է Ս. Էլոյանի և Ա. Մարտիրոսյանի բառացանկերը. այն պարունակում է երկու հատկանիշ՝ ՄԷ, ԱՄ (տես Աղյուսակ 8): Բանի որ Փ.Սեյթիխանյանի և Հ.Սեթրոյանի բառարանների բառացանկերը շատ են տարբերվում (հիմնականում հեղինակային են) այստեղ ներկայացված բառացանկից, տարբեր են մաս դրանց հատկանիշները, ուստի այդ երկու բառարանների բառացանկերը տրվում են առանձին-առանձին՝ մույն կառուցվածքը ունեցող աղյուսակներով:

Աղյուսակ 8

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
զուգահեռել	aPVm050	neo	OR4R3R1/OR3R1	մնլ.	SjSa	ԱՄ
ժամանակացույց մտցնել	aPVc090	c neo	OR2OR1(R3)+OR1	b N,	SjS+Sa ?	ԱՄ
գերմասնագիտանալ	aPVm071	neo	OR2R1R1	մնլ.	a(SjSa)	ՄԷԱՄ
տարադասել	aPV010	neo	OR2R1R1	մնլ.	a(Sa)	ՄԷԱՄ

Համակարգը հնարավորություն է ընձեռում ընտրություն կատարելու մաս ըստ մի քանի հատկանիշների, որոնք կարող են լինել ինչպես միևնույն, այնպես էլ տարբեր սյունակներում: Աղյուսակ 9-ում բերվում է ըստ երկու հատկանիշների գտված՝ OR2R1 կադապարով (Model սյունակ) և պատճառական c հատկանիշով (Paradigm սյունակ) բայերի աղյուսակի մի մասը:

Աղյուսակ 9

Word	Paradigm	Neo	Model	Type	ModelL	Source
երևույթացնել	aPVc090	neo	OR2R1	մմլ.	Sa	Ut
գոմբիացնել	aPVc090	neo	OR2R1	մմլ.	Sa	Ut
ինկուբացնել	aPVc090	neo	OR2R1	անիջլ., մմլ.	Sa	Ut
կիպրոսացնել	aPVc090	neo	OR2R1	մմլ.	Sa	Ut
վրացացնել	aPVc090	neo	OR2R1	մմլ.	Sa	Ut
տրանսֆորմացնել	aPVc090	neo	OR2R1	մմլ.	Sa	Ut
ուզուրպացնել	aPVc090	neo	OR2R1	մմլ.	Sa	Ut

Ինչպես տեսնում ենք, մեզնից որոնողական համակարգը բազմաթիվ ու բազմապիսի լեզվաբանական և վիճակագրական (քանակական) հետազոտությունների հնարավորություն է ընձեռում:

Օգտագործված գրականության ցանկ

1. С.К.Шаумян, П.А.Соболева. Основания порождающей грамматики русского языка, Москва, Наука, 1968:
2. Լ.Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Երևան, 1987:
3. Ս.Էլոյան, Արդի հայերենի նորարարությունների բառարան, Երևան, 2000:
4. Ա.Մարտիրոսյան, Արդի հայերենի նորարարությունների բառակազմական կադապարները, Երևան, 1987:
5. Փ.Մեյրիխանյան, Նոր բառերի բացատրական բառարան, Երևան, 1996:
6. Հ.Մեսրոպյան, Գաբեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի երկերի բառարան, Մոսկովա, 2000:

ՊՈԼՍԻ ԽՈՍՎԱԾՔԻ ԲԱՅԱԿԱՆ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ
ԸՍՏ Հ. ՊԱՐՈՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Պոլսահայ խոսվածքի ուսումնասիրությանը նվիրված իր աշխատության մեջ Հրաչյա Աճառյանը, քննության առնելով բայական համակարգը, երկրորդական բաղադրյալ ժամանակներ՝ որպես այդպիսիք, չի առանձնացնում: Դրանք հիմնականում ներառելով *պատմողական* կոչված եղանակի մեջ՝ հեղինակը գրում է, որ այն կազմվում է մյուս եղանակներից (ստորադասական, սահմանական, հրամայական)՝ «ավելացնելով բայի վրա *եղեր* դերբայածևը, որ թրք. *իմիշ* բառի քարգմանությունն է»: Բերում է օրինակներ՝ *վաղը բիդի գա եղեր... բերելու բիդի ըլլայիր նե եղեր...գացած էղած ըլլայի նե եղեր...* և մյլն [Աճառյան, էջ139]: Պետք է նշել, սակայն, որ *լինել* բայի վաղակատար դերբայով հայերենի ոչ միայն արևմտյան, այլ նաև արևելյան խմբակցության բարբառներում հաճախ են կազմվում երկրորդական ժամանակներ, որոնք թուրքերենի ազդեցություն համարել չենք կարող:

Պոլսի խոսվածքում երկրորդական բաղադրյալ ժամանակներ կազմվում են նաև *ունիմ* բայի օգնությամբ: Հ. Աճառյանը այսպիսի կազմությունները (*բերած ունիմ, բերած ունեյի* և այլն) անվանում է «հարակատար և գերակատար անցյալ»: Հեղինակը գրում է, որ Երևանի բարբառում այդ ժամանակածներին համապատասխանում են *կամ* բայով ստեղծված ձևերը՝ *բերած կաս, բերած կայիր* [նույնը, էջ158]: Ի դեպ, նման կազմությունները հատուկ են արևելյան բոլոր բարբառներին:

Հ. Աճառյանը նկատում է, որ թեպետ եվրոպական լեզուներում *ունիմ*-ի համարժեքը նույնպես օժանդակ բայի դեր է կատարում, սակայն Պոլսի խոսվածքը դրանցից ազդեցություն չի կրել [նույն տեղում]: Հարկ է նշել, որ հնդեվրոպական լեզուներին ընդհանրապես հատուկ է և՛ *եմ* (*լինել*), և՛ *ունենալ* բայերով բաղադրյալ ժամանակների կազմումը: Այսինքն՝ այդ լեզուներում հին համադրական (սինթետիկ) կառուցվածքները ուշ շրջանում վերածական են դարձել գրեթե նույն ձևով:

Իր աշխատությունում, սակայն, հեղինակը հստակորեն չի ներկայացնում հիմնական և երկրորդական բաղադրյալ ժամանակների գործառական ու իմաստային տարբերությունները: «Դերբայ» բաժնում, օրինակ, նա գրում է, որ եթե «գրական հայերենում անորոշ դերբայը ժամանակ չունի», ապա «Պոլսի բարբառում *սիրել* ձևը հատկապես ներկա է, *սիրած ըլլալ*

անցյալ է (հարակատար) և *սիրելու ըլլալ*՝ ապառնի»[*Ճույնը*, էջ 157-158]: Ինչպես կարելի է նկատել, *սիրել* անորոշին Հ. Աճառյանը հակադրել է բաղադրյալ ձևեր, որոնցում ժամանակային իմաստը արտահայտվում է *սիրած*, *սիրելու* դերբայներով: Իսկ ոճական առումով նա նշում է միայն, որ պատմողական եղանակը, այսինքն՝ երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով կառույցները, ցույց են տալիս 1) ուրիշից լսված, սակայն պատմողի համար ոչ այնքան էլ հավաստի մի դեպք, 2) հեզմանք կամ ծաղր [*Աճառյան*, էջ 139]:

Աշխատությունը, ցավոք, չունի բարբառային մոմշներով հավելված, որոնցով կարելի լիներ որոշակի պատկերացում կազմել խնդրո առարկա ժամանակաձևերի գործառական, իմաստային յուրահատկությունների վերաբերյալ: Այդ պատճառով համապատասխան նյութը քաղել ենք արևմտահայ հանճարեղ երգիծաբան Հ. Պարոնյանի ստեղծագործություններից, որոնք աչքի են ընկնում Պոլսի խոսակցական լեզվի առատ գործածությամբ:

Հակոբ Պարոնյանի ստեղծագործական ժամանակաշրջանը (19-րդ դարի 60-90-ական թթ.) համընկնում է գրական արևմտահայերենի ձևավորման, այսինքն՝ «գրապաշարի» փուլին: Այն ժամանակ, երբ աշխարհաբարը դեռ չէր հաստատվել որպես գրական լեզու, բվում է՝ Հ. Պարոնյանի ստեղծագործություններում և, ընդհարապես, գեղարվեստական երկերում, բարբառային ձևերը, ասենք, օրինակ, բայի երկրորդական ժամանակները, պետք է ավելի հաճախ լինեին: Մինչդեռ հեղինակի վաղ շրջանի՝ 1860-ականների գրվածքներում («Երկու տերով ծառա մը», «Ատամնաբույժն արևելյան»), դրանք գրեթե չեն հանդիպում: Իսկ արևմտահայ գրական լեզուն սկսել էր ձևավորվել Պոլսի խոսվածքի՝ Պոլսի «աշխարհաբարի» հիմքի վրա [*Աճառյան*, էջ 213-220]: Հ. Պարոնյանը հետագայում ավելի համարձակ ու վարպետորեն սկսեց օգտագործել պոլսահայ խոսվածքը, որի շնորհիվ կարողացավ ստեղծել շատ կենդանի, պատկերավոր, գունեղ կերպարներ: Այդ տեսակետից ուշագրավ են հատկապես «Պաղտասար աղբար», «Մեծապատիվ մուրացկաններ», «Ազգային ջոջեր», «Քաղաքավարության վնասները» և այլ երկեր: Հ. Աճառյանը նկատում է, որ «երբ մաքուր աշխարհաբար լեզուն կազմակերպվեց և ռամիկ լեզուն գրական ասպարեզից հեռացավ, այն ժամանակ էլ պոլսահայ բարբառը երգիծաբանների և ժողովրդական գրողների գրչին նյութ դարձավ, այնպես որ մինչև վերջին ժամանակներս էլ բոլոր զավեշտաբերքերը լցված էին Պոլսի ռամիկ բարբառով գրված բազմաթիվ հոդվածներով» [*Աճառյան*, էջ 6]: Ասվածը, փաստորեն, վերաբերում է նաև բայի երկրորդական ժամանակներին, որոնք գրական ոճին հարիր ձևեր չդարձան:

Հ.Պարոնյանի ստեղծագործություններում՝ գեղարվեստական, քե երգիծական-հրապարակախոսական, շատ է հանդիպում բայի բոլոր եղանակներով (հրամայականից բացի) երկրորդական ժամանակների կիրառություն: Գերակշռում են հատկապես *եղեր* վաղակատար դերբայի (*ըլլալ*) հարադրությամբ կազմված՝ Պոլսի խոսվածքին հատուկ ձևերը: Որոշ դեպքերում դրանց համարժեքները ընդհանուր արևելահայերենով, քերես, կարելի է տալ: Ինչպես՝ *փաստաբանական պարտքը կպահանջե եղեր* («պահանջելիս է եղել»), *որ առանձին տեսակցություն մը ունենա եղեր* («ունեցած լիներ») *պաշտպանչալին կնոջ հետ* [ՊԱ, էջ 181], *ամեն նամակ և լրագիր անոնց ձեռքով պիտի դրկե եղեր* («պետք է ուղարկելիս լիներ») [SL, հ.4, էջ 10], *այսօր կամ վաղը պիտի գա եղեր* («պետք է եկած լիներ») [ՄՄ, հ. 3, էջ 68]: Իսկ, օրինակ, խոնարհվող բայի անցյալ անկատար և անցյալի ապառնի երկրորդական ժամանակաձևերը համապատասխանություններ ունեն Մեղրու բարբառի Գ-ուղեմնիսի, Վարիավարի (Կաբավաբերդ) ենթախոսվածքներում: Այսպես. *և ասոր համար քսան ոսկի տալու եմ եղեր* [ՄՄ, հ. 3, էջ 85], («տալով ըմ լն», Կաբավաբերդ), *իրար կը շմբակոծեն եղեր* [ՆԼ, հ.4, էջ 11], («ռմբակոծում ըմ լն», Կ.). *մեծապատիվ էֆենտին շատ բարև կընե եղեր* [ՄՄ, հ. 3, էջ 68], («բարեվ ա անում լն», Կ.):

Բայական մմանատիպ կառույցները, կարելի է ասել, ինքնին հեզմանք կամ ծաղր չեն արտահայտում, այլ քեականություն, գործողության շարունակականություն, որոնք ստեղծվում են *եղեր* դերբայի օգնությամբ: Դրանք էլ հնարավորություն են ընձեռում հումորային, հեզմական խոսքում բայի այդպիսի ձևերը լայն կիրառելու: Ուրեմն *եղեր* դերբայը, քերես, արդեն դարձել է եղանակավորող բառ, ինչպես օրինակ՝ *պիտի, կոր, մե* և այլն բառերը: Ի դեպ, խնդրո առարկա խոսվածքում բայի բոլոր պարզ, բարդ և բաղադրյալ ձևերը՝ հրամայական եղանակից բացի «ունին իրենց *քեական եղանակը*, որ կազմվում է բայի վերջում ավելացնելով *մե* մասնիկը» [Աճառյան, էջ 139]:

Պոլսահայ խոսվածքը «թուրքերենի ազդեցությամբ», ինչպես Հ. Աճառյանն է գտնում, ունի *բուն* կամ *պարզ* ներկա, որը կազմվում է *կ-* եղանակիչի օգնությամբ, և *շարունակական* կամ *անմիջական* ներկա, սա էլ կազմվում է՝ բուն ներկայի վրա ավելացնելով *կոր/գոր* մասնիկը [նույնը, էջ 134]: Այս ներկան և մման կազմությամբ անցյալ անկատարը ցույց են տալիս տվյալ պահին ստույգ կատարվող գործողություն: Հարկ է նշել, որ գրական արևմտահայերենում *կոր/գոր* եղանակիչը գործածական չէ: Գեղարվեստական երկերում (19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի) *կոր*-ով կազմությունները հանդիպում են միայն ուրիշի ուղիղ խոսքում, այսինքն՝ խոսակցական լեզվում:

Նմանատիպ բայական ժամանակներ օժանդակ բառերի (*հըրէս, հէս, հան, ահա, կամ, կա* և այլն) օգնությամբ ստեղծվում են հայերենի գրեթե բոլոր բարբառներում, և, բնականաբար, թուրքերենի ազդեցություն համարել չի կարելի: Հավելենք, որ գործողության շարունակականություն, հավաստի կատարում արտահայտելը հատուկ է հնդեվրոպական շատ լեզուների:

Նշված *կոր/գոր* մասնիկը Պոլսի խոսվածքում կիրառվում է նաև անցյալի երկրորդական ժամանակներում: Այն Հ. Պարոնյանի երկերում ունի մեծ գործածություն. *անցած գիշեր տեղ մը մուգիքա կը չալվի կոր եղեր* [ՆԼ, հ. 4, էջ 11]. *ստակ ալ կուզեր կոր եղեր քիչ մը* [ՍՄ, հ. 3, էջ 93]. *լուսավորությունը ասանկ կը պահանջէ կոր եղեր* [ԹԲ, հ. 10, էջ 15]. *թող ուզածնին գրեն, կ'ըսեն կոր եղեր* [հ. 10, էջ 34]. *ճշմարտություն խոսողն գէշ խոսած կ'ըլլա կոր* [ԱԿ, հ. 10, էջ 493]: Այս օրինակներում *եղեր*-ը, գործողության շարունակականություն ցույց տալով հանդերձ, նախադասություններին քեականության երանգ է հաղորդում:

Մեծ երգիծաբանի ստեղծագործություններում առկա են երկրորդական ժամանակների նաև այնպիսի կազմություններ, երբ, արևելահայ բարբառների նման, նկարագրական կառույցներում բայը խոնարհվում է *ըլլալ*-ի օժանդակությամբ: Այսինքն՝ խոնարհվող բայի ապառնի կամ հարակատար դերբայներին հարադրվում են *ըլլալ*-ի դիմաժամանակային ձևերը: Այսպես. *թե որ երազիդ մեջ անձրևեն քրջելու ըլլաս...* *երազիդ մեջ սատանա տեսնելու ըլլաս նե* [Ե, հ. 6, էջ 140]. *և հաճեր ես երևակայել, որ անպատիվ տնե մը դուրս ելած ըլլամ. ուրիշ բան մը ըրած չեմ ըլլար, ալ պարզապես սկզբունք մը պաշտպանած կ'ըլլամ* [ՊԱ, էջ 176, 211]. *անպատճառ հանցանք մը, մեղք մը գործած ըլլալու էր. անպատճառ ջուրը ձգված պիտի ըլլար* [ԱԶ, հ.2, էջ 172, 19]:

Հ. Պարոնյանի ստեղծագործություններում, այսինքն՝ Պոլսի խոսվածքում, երկրորդական բաղադրյալ ժամանակների համար օժանդակ բայ է ծառայում նաև *ունիմ*-ը, որը հարադրվում է միայն խոնարհվող բայի հարակատար դերբային, և ստեղծվում են հարակատար ներկայի ու հարակատար անցյալի երկրորդական ժամանակներ: Ինչպես արդեն վերը նշել ենք, արևելյան բարբառներում *ունիմ*-ի համարժեքը երբեմն *կամ*-ն է լինում: Այսպես. *ո՛չ ասանկ դատախազ տեսած ունեի, ո՛չ ալ ասանկ փաստաբան* («տեսած կայի») [հ. 9, էջ 80]. *Դուք կերած ունի՞ք, տեր Երկաթ* («կերած կա՞ք»): Բայց՝ *զո՞վ սիրած ունիմ* («ու՞մ եմ սիրել») [ՊԱ, էջ 176, 197]. *ի՞նչ ըրած ունիմ քեզի* («ի՞նչ եմ արել քեզ») [ՍՄ, հ. 3, էջ 33]:

Արևելյան բարբառախմբից Թիֆլիսի խոսվածքում է հանդիպում *ունիմ*-ի նշված կիրառությունը: *Յիս էս դարդին վու՞նց դիմանամ, մական սիր-*

տրս ունի՞մ քարած, արտասունքս արուն շինեցիր, խիլքըն գըլխես ունի՞մ տարած [Սայաթ-Նովա, էջ 34]: Հարկ է նշել, սակայն, որ այս բարբառային միավորը ձևավորվել է ինչպես արևելյան, այնպես էլ արևմտյան բարբառների՝ հատկապես Կարինի, փոխներթափանցմամբ: Եվ մեր համեմարեղ բանաստեղծի՝ Սայաթ-Նովայի ստեղծագործելու ժամանակաշրջանում՝ 18-րդ դարում, արևմտյան բարբառային հատկանիշները այստեղ դեռևս լավ էին պահպանված:

Խնդրո առարկա ժամանակաձևերի ժխտականը կազմվում է բայի խոնարհվող բաղադրիչի կամ *պիտի* եղանակիչի միջոցով՝ չ- մասնիկ ստանալով, իսկ *եղեր*-ը բոլոր դեպքերում մնում է անփոփոխ: Օրինակ. *դրովիեստև սիրելու դիտավորությամբ սիրած չէ եղեր, այլ դիպվածով սիրած է եղեր* [ՊԱ, էջ 174]. *օղի չխմեր եղեր, վայ ապուշ, վայ* [ԲՎ, էջ 286]. *բայց չպիտի փոխե եղեր, մեր սեռին պատիվ մը ըրած կըլլա* [Ն, հ. 6, էջ 211]. *այնքան գաղտնի ողորմություն տված կըլլար աղբատներում, որ մարդ տեսած չէր ըլլա. սուտ խոսած չենք ըլլար, եթե թող տրվի մեզ խոստովանիլ* [ԱԶ, էջ 18, 31]. *այսչափ աներեսություն բնավ տեսած ու լսած չունեի* [ՊԱ, էջ 211]. *ես մինչև հիմա պատկերս բնավ քաշել տված չունիմ* [ՄՄ, էջ 49]. *մենք դժբախտաբար ժողովներու մեջ ալ իրեն հանդիպած չունինք* [ԱԶ, հ. 2, էջ 21]:

Ինչպես երևում է օրինակներից, Պոլսի խոսվածքում *ըլլալ*-ով կարող են խոնարհվել և՛ անցողական, և՛ անանցողական բայերը, իսկ *ունիմ*-ով՝ միայն անցողական: Երկու դեպքում էլ գործողությունը ստանում է տևականության, վիճակային իմաստ:

Այսպիսով՝ մեր ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ Պոլսի խոսվածքը շատ հարուստ է եղել բայի երկրորդական բաղադրյալ ժամանակաձևերով: Ինչպես նշել ենք Ղարաբաղի բարբառին վերաբերող մեր մի այլ աշխատանքում, դրանք այս խոսվածքում նույնպես խոսքին հաղորդում են կերպաժամանակային երանգներ և առաջանում են, երբ անհրաժեշտ է լինում ցույց տալ գործողությունների հաջորդականություն, տևականություն, անընդհատություն կամ շարունակականություն [Միքայելյան, էջ 52]: Մի բան ակնհայտ է, որ բոլոր դեպքերում էլ երկրորդական ժամանակները գործածվում են պատմողական ոճի մեջ: Իզուր չէ, որ Հ. Աճառյանը դրանք հիմնականում ներառել է մի եղանակի մեջ, որն էլ անվանել է *պատմողական*:

Համառոտագրություններ

ԱԿ - «Անհատական կարծիք», ԱԶ - «Ազգային ջոջեր», Ե - «Երագահան», ԹԲ - «Թոհավճի բժիշկը», ՄՄ - «Մեծապատիվ մուրացկաններ», Ն - «Նամակակի», ՆԼ - «Ներքին լուր», ՊԱ - «Պաղտասար աղբար», ԲՎ - «Բաղաբալարության վնասները»:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աճառյան Հ., Զննություն պոլսահայ բարբառի, Եր., 1941:
2. Աճեմյան Վ., Գրական արևմտահայերենի ձևավորումը, Եր., 1971:
3. Միրայեյան Ժ., Բայի երկրորդական ժամանակները Ղարաբաղի բարբառում, «Հայոց լեզվի պատմության հարցեր», Ստեփանակերտ, 2008:
4. Մուրադյան Հ., Կաքավաբերդի բարբառը, Եր., 1967:
5. Պարոնյան Հ., հ.1 – 10, Եր., 1962 - 1979թթ.:
6. Պարոնյան Հ., Պաղտասար աղբար, «Հայ դրամատուրգիա», Եր., 1985:
7. Սայաք-Նովա, Խաղերի ժողովածու, Եր., 1987:
8. Սաֆարյան Ա., Սողոմոնյան Ա., Լորմագյուղյան Տ., Թուրքերենի դասագիրք, Ա հատոր, Եր., 2004:

**ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՊԱՐԱՆԻ ԽՈՍՎԱԾՔՆԵՐՈՒՄ**

Արագածոտնի մարզի Ապարան քաղաքի և հարակից շուրջ երկու տասնյակ գյուղերի բնակիչները պատմական Հայաստանի բազմաթիվ բնակավայրերից ներգաղթյալներ են^{*}։ Արդեն երկու հարյուր տարի Ապարանի տարածաշրջանում ապրող բարբառախոսները, պատմական ճակատագրի բերմամբ կորցնելով բուն տարածքային (արեալային) հիմքը և բնական կենսակերպը, տարածական նոր միջավայրում երկարատև շփման հետևանքով փոխազդել են միմյանց վրա և բնականորեն ձեռք բերել լեզվական նոր որակներ։ Այդ երկարատև շփումների և փոխազդեցությունների արդյունքում բարբառախոսները հայերենի միօրինակացման և բարբառների վերացման համատեքստում ազդվել են մաս գրական հայերենից։ Այս հարցում նպաստավոր են և՛ գրական հայերենի համընդհանուր գործառույթները, և՛ այն, որ Ապարանն իր զբաղեցրած տարածքով բավականին մերձ է գրական հայերենի կենտրոնին՝ Երևանին, որը նպաստում է գրական լեզվի օրինաչափությունների ներթափանցմանը այդ տարածաշրջանում։

Սույն հոդվածում մեր նպատակն է բարբառագիտության մեջ ընդունված գուգաբանությունների մեթոդի օգնությամբ նկարագրել ու ներկայացնել Ապարան քաղաքի և հարակից Ափնա, Արայի, Հարթավան, Շենավան, Վարդենուտ, Արագած, Ծաղկաշեն, Քուչակ, Երնջատափ, Նորաշեն, Մուլքի գյուղերի բարբառախոսների տրամադրած լեզվական փաստերը հաղորդակցման ընթացքում գործառվող բայ խոսքի մասի, ի մասնավորի՝ սահմանական եղանակի ժամանակաձևերի դրսևորումների վերաբերյալ։ Համաժամանակյա կտրվածքով կատարվելիք այս հետազոտությամբ կտրվեն հայերենի համահարթեցման գործընթացում սահմանական եղանակի և նրանից կազմվող ժամանակաձևերի ձևափոխության առանձնահատկությունները։ Որպես կարևոր հավելում՝ նշենք, որ այս քննության հիմքում ընկած են փոքր, միջին և տարեց բարբառախոսների գործածած լեզվական կառույցները։

^{*} Ըստ Հայաստանի ազգային արխիվի՝ Ֆոնդ 90-ում արձանագրված մարդահամարի տվյալների՝ Ապարանի տարածաշրջանում ապրող բարբառախոսների նախնիները Մշո, Վանի բարբառների, խոսվածքների՝ Ալաշկերտի, Մանազկերտի, Դիաղինի, Բուլանլիսի ներկայացուցիչներ են։

Ինչպես ընդունված է բնութագրել, սահմանական եղանակի բա-
յաձևերը հայերենի բոլոր դրսևորումներում ցույց են տալիս խոսողի ներկա-
յացմամբ ստույգ կերպով կատարվող, կատարված կամ կատարելի գործո-
ղություն: Ի հակադրություն մյուս եղանակների՝ սահմանական եղանակը
լեզվաբանության մեջ բնութագրվում է որպես իրականության առարկայա-
կան եղանակ, քանի որ մյուս եղանակներին հատուկ՝ անհատի վերաբեր-
մունքը այստեղ բացակայում է (Ասատրյան, 2002, էջ 287): Ստորև
կներկայացնենք դիտարկվող խոսվածքներում առկա սահմանական եղա-
նակի ժամանակաձևերի առանձնահատկությունները:

Ներկա ժամանակ

Ներկա ժամանակն Ապարանի խոսվածքներում այժմ ունի արտա-
հայտման երկու լեզվական կաղապար՝ *ա) գրաբարյան ներկա+կը եղանա-
կիչ, բ) բայարմատ+անկատար դերբայ + օժանդակ բալ:* Ներկայի արտա-
հայտման գրաբարատիպ + մասնիկավոր կաղապարում կը- եղանակիչը՝
իր հնչյունական տարբերակներով՝ կը-//կու-//զը-, դրվում է բայից առաջ:
Ափնա, Արայի, Արագած, Շաղկաշեն, Շենավան, Մուլքի ենթախոսվածք-
ներում ներկան կազմվում է բացառապես կը- եղանակիչ +գրաբարյան ներ-
կա կաղապարով և զուգահեռ, համաձայն խոլ բաղաձայնների՝ բառա-
սկզբի դիրքում ձայնեղացման օրենքի, խոլ կ-ն հնչում է նաև որպես ձայ-
նեղ գ՝ *կը մըռսիմ, կը մեռնիս, կը խաղա, կը պաղմա, զը նայիմ, զը քնամ, զը
բռռա* և այլն: Ընդ որում, Ապարանի տարածքային տարբերակների համար
ընդհանուր է այն, որ ձայնավորից առաջ կը- եղանակիչի ը ձայնավորը սղ-
վում է՝ *կիշկամ, կանեն, կուղիմ, գիմնամ, գիստըգէմ, գուգէմ* և այլն: Օրինա-
չափ է նաև այն, որ խոլ հ-ով սկսվող բայերում հ-ն կը-//զը- եղանակիչից
առաջ ընկնում է՝ *գուզվիմ, գաշվիմ, գազամ, գողի* և այլն: Արագածի և Ափ-
նայի խոսվածքներում կան փաստեր, երբ կը- եղանակիչը ոչ միայն կորցրել
է ը ձայնավորը, այլև, հավանաբար, տարմանման օրենքով վերածվել
շնչեղ խոլ ք բաղաձայնի. չարտասանվող խոլ հ-ն տարբերել է իրենից
խոլ կ-ին՝ *քարցում, քասնիմ, քանվիմ, քալիմ, քանիմ* և այլն: Վերոբերյալ
խոսվածքներում անկանոն գալ, լալ տալ բայերի ներկան ևս անկանոն
դրսևորումներ ունի, ուր առկա են կը- եղանակիչի գի-//կի- տարբերակային
ձևերը՝ *գիքամ, գիլամ, կիդամ* (Բ. Մադաթյան, 1985, էջ 120): Ապարան քա-
ղաքում և Վարդենուտ գյուղում կը-ին զուգահեռ կենսունակ է նաև կու-
եղանակիչը՝ *կու ուտէմ, կու ասէմ, կու լամ, կու տամ, կու գամ, կու նաէմ* և
այլն: Նշյալ երկու բնակավայրերի բարբառախոսները, ըստ էության, պահ-
պանել են ներկայի կազմության բարբառային հիմքը՝ ըստ ծագման: Շենա-
վանի խոսվածքը գալ բայի համար ունի հետևյալ տարբերակը ևս՝ *զըլէմ,
զըլէս, զըլա, զըլէն, զըլէկ, զըլէն:*

Ներկայի արտահայտման՝ բայարմատ + անկատար դերբայ + օժանդակ բայ կադապարը գործում է հիմնականում Քուչակի, մասամբ՝ Երնջատափի, Նորաշենի խոսվածքներում: Երևանամերձ Երնջատափում և Նորաշենում ներկայի կազմությունն արդեն երկփեղկվել է, որը հիմնավորվում է բացառապես գրական լեզվի ներգործությամբ: Կը- եղանակիչի ու գրաբարյան ներկայի միջոցով արտահայտվելուն զուգահեռ գործառնում է նաև անկատար դերբայ+օժանդակ բայ կառույցը, ընդ որում՝ Երնջատափում – ում՝ *գնում էմ, ուտում էմ, սովորում էմ*, իսկ Նորաշենում՝ – *քմ տարբերակներով՝ գնքմ էմ, խմքմ էմ, սովորքմ էմ, գալքմ էմ, լալքմ էմ, տալքմ էմ* և այլն: Ինչ վերաբերում է Քուչակ համայնքի բարբառախոսներին, ապա այստեղ կանոնական է – ում մասնիկի և օժանդակ բայի միջոցով ներկայի իմաստն արտահայտելը, որը պայմանավորված է քուչակցիների՝ Արարատյան բարբառի Նոր Բայազետի ենթաբարբառի կողմեր լինելով (Ա. Ղարիբյան, 1953, էջ 218-229): Քուչակում – ում են ստանում ինչպես կանոնավոր, այնպես էլ անկանոն գալ, լալ, տալ բայերը՝ *վազում էմ, խաքնում էմ, խաղում էմ, գալում էմ, լալում էմ, տալում էմ* և այլն: Զննարկվող խնդրում կա ուշագրավ մի երևույթ: Շենավանի, Վարդենուտի և Մուլքիի խոսվածքներում ներկայի իմաստն արտահայտվում է ոչ միայն կը- եղանակիչի և գրաբարյան ներկայի միջոցով, այլև ներկայի իմաստն արտահայտվում է հենց գրաբարած, որը, ի դեպ, դրսևորվում է լեզվական այնպիսի կառույցներում, ուր միմյանց հաջորդում են մեկից ավելի ստորոգումներ, այն է՝ 10^{րդ}դ արօղավայր կա, տանին, կը պախեն, կօվ պախեն, յօտիկ պախեն, մօզիզ պախեն, փօղ ա էլի: յաշկերս մընա բաց, գիշկամ, բըռնիմ յաշկերս, գլօխս կը ֆըռա: կուրախանան, էդ ձեվ գ՞բան տուն էլ նըստին, կեր ու խում կուղեն, խըմեն: տենաս, 10^ր էս յառիքըս մնացեր ա փեղեթօվ, 10^ր տենամ, կասեմ, անջադեկ: են յանից բօռամ, կասեմ: մըզավա խառսներ բերես, կեսրերների խես նըստին, խաց կուղեն և այլն: Այս երևույթում, ըստ էության, պահպանվում է ներկայի արտահայտման գրաբարյան ձևը: Հավանական է նաև այն, որ բերվածն ընդամենը կը- եղանակիչի զեղչում է՝ արագախոսության, խոսքը հակիրճելու նպատակադրմամբ:

Անցյալ անկատար ժամանակ

Այս ժամանակածը Ապարանի խոսվածքներում համադրական և վերլուծական կառույցներով է հանդես գալիս: Այն ունի ձևավորման երեք կադապար՝ ա) *բայարմատ + համապատասխան համադիր դիմաբվային վերջավորություններ*, բ) *կը եղանակիչ+համադրական կառույց՝ դիմաբվային վերջավորությունների ներքին փոփոխություններով*, գ) *բայարմատ + անկատար դերբայ + օժանդակ բայի անցյալի ձև՝ դիմաբվային վերջավորությունների փոփոխություններով*: Ապարանի, Ափնայի, Արայի, Արագածի,

Հարթավանի, Մուլքիի, Ծաղկաշենի, Շենավանի, Վարդենուտի խոսվածքներում անցյալ անկատարն ունի երկու դրսևորում, որոնք համապատասխանում են վերոնշյալ երեք կաղապարներից առաջին երկուսին, այն է՝ ա) *բայարմատ+համադրական վերջավորություններ*՝ -ենկ, -էր (-իր), -էր, -ենկ, -էկ, -էն՝ *կարտենկ, կարտիր (-էր), կարտեր, կարտենկ, կարտեկ, կարտեն, բ) կը- եղանակիչ+բայարմատ+ համապատասխան դիմաբվային վերջավորություններ*՝ -ի (-ինկ), -իր(-էր), -էր, -ենկ, -էկ, -էն, այն է՝ *կը բաղի (կը բաղինկ), կը խոսիր(էր), կը խոսեր, կը խոսենկ, կը խոսեկ, կը խոսեն*: Երեքատափի խոսվածքում անցյալ անկատար ժամանակն արտահայտության երեք կաղապար ունի՝ ա) *գրաբարատիպ*՝ համապատասխան դիմաբվային վերջավորությունների հնչյունափոխված տարբերակներով՝ *կըթէի, կըթիր, կըթեր, կըթինք, կըթիք, կըթին, բ) դերբայի և օժանդակ բայի անցյալի ձևերով*՝ *փորում ի, փորում իր, փորում էր, փորում ինք, փորում իք, փորում ին, գ) կը- եղանակիչ գործադրմամբ*՝ *կը կըթի, կը կըթիր, կը կըթեր, կը կըթինք, կը կըթիք, կը կըթին*: Շենավանի և Վարդենուտի խոսվածքներում անցյալ անկատարը դրսևորման երկու կաղապար ունի՝ ա) *բայարմատ+համապատասխան դիմաբվային*՝ -ի, -էր (-իր), -էր, -ինկ, -իկ, -ին վերջավորություններ՝ *փակի, փակեր (իր), փակեր, փակենկ, փակիկ, փակին, բ) կը- եղանակիչ+բայարմատ+ -ի, -էր (-իր), - էր, -ինկ, -իկ, -ին վերջավորություններ*, այն է՝ *կը խօսի, կը խօսիր, կը խօսեր, կը խօսինկ, կը խօսիկ, կը խօսին*: Շենավանում գործածական են նաև անցյալ անկատարի գրաբարատիպ կազմություններ՝ *խիվնդնայի, խիվնդնայիր, խիվնդնար* կամ *խիվնդներ, խիվնդնայինք, խիվնդնայիք, խիվնդնային*: Այս խմբի խոսվածքների համար ընդհանուր է այն, որ անկանոն գալ, լալ, տալ բայերն անցյալ անկատարում ունեն հետևյալ կառույցները՝ գի, գեր, գեր, գինկ, գենկ, գեկ, գեն, տի, տեր, տեր, տենկ, տեկ կամ տիկ, տեն կամ տին, լի, լեր, լեր, լենկ, լեկ կամ լիկ, լեն կամ լին: Վերլուծական կազմություններում փոփոխության է ենթարկվում օժանդակ բայը: Այսպես է ձևավորվում Քուչակի և Նորաշենի անցյալ անկատար ժամանակը: Քուչակում այն ունի հետևյալ պատկերը՝ սովրում ի, սովրում իր, սովրում էր, սովրում ինք, սովրում իք, սովրում ին, իսկ Նորաշենում՝ խաղըմ ի, խաղըմ իր, խաղըմ էր, խաղըմ ինք, խաղըմ իք, խաղըմ ին: Նորաշենում անցյալ անկատարի իմաստն արտահայտելիս տարածված է նաև *կը- եղանակիչ+բայարմատ+ -ի, - էր (-իր), - էր, -ինկ, -իկ, -ին վերջավորություններ կաղապարի* գործածությունը:

Ապառնի և անցյալ ապառնի ժամանակներ

Ապարանի խոսվածքներում այս ժամանակածը չի կազմվում պատմականորեն ձևավորված, անորոշ դերբային հավելվող -ու ապառնի դերբայակերտ ձևությի և եմ օժանդակ բայի խոնարհված ձևերի համադրմամբ:

Ինչ վերաբերում է տվյալ ժամանակաձևի իմաստի արտահայտմանը, ապա սահմանական եղանակի ներկա ժամանակը՝ կը- եղանակիչ+գրաբարյան ներկա կառույցը և հարկադրական եղանակը՝ պիտի- եղանակիչ+գրաբարյան ներկա կառույցը, հիմնական քերականական իմաստն արտահայտելուն զուգահեռ գործածվում են նաև այս ժամանակաձևի իմաստն արտահայտելիս, ընդ որում, ապառնի ժամանակի իմաստն այլ ժամանակաձևերի միջոցով արտահայտելը հնարավոր է միայն որոշել նախադասության բնույթից: Պիտի - եղանակիչի բրդի հնչյունական տարբերակը Ապարանի խոսվածքներում այժմ գործածական չէ, քեև այն Մշո բարբառին ու նրա խոսվածքներին բնորոշ իրողություն է համարվում (Ս.Հ. Բաղդասարյան-Թափալցյան, 1958, էջ 120): Օրինակ՝ «լողանալու են» նախադասությունը բարբառախոսները իրացնում են այսպես՝ կը լօղզընամ կամ պըղի լօղզընամ, իսկ անցյալը կլինի՝ կը լօղզընենկ, պըղի լօղզընենկ, համապատասխանաբար՝ կետաս Յերեվան, պըղի էթաս Յերեվան, անցյալը՝ կետէիր Յերեվան, պըղի էթիր Յերեվան (գնալու ես Երևան, գնալու էիր Երևան): կօվըն կը կըթեն, կօվըն պըղի կթեն, կօվըն կը կըթենկ, կօվըն բըղի կըթենկ (կովը կթելու են, կովը կթելու էի): յէկուծ պըղի էթամ Պաթոյ տուն (վաղը գնալու եմ Պապիկի տուն), յերեկ Յերեվան պըղի էթի, չգացի (երեկ Երևան էի գնալու, բայց չգնացի) և այլն: Սակայն պետք է կարևորել, որ պատմականորեն առաջացած ապառնի դերբայը ճշյալ խոսվածքներում, չմասնակցելով ժամանակաձևերի կազմությանը, որպես կախյալ դերբայ՝ որոշչային կիրառությամբ, գործածվում է գոյականների հետ՝ ուղէլու խած, պաղմէլու բան, խօրվէլու կառուօլ և այլն: Խոսվածքներ էլ կան, ինչպես Ափնայի, Արայիի պարագայում է, ենթակայական դերբայն էլ է գործածվում ապառնու իմաստով, ինչպես՝ յես մեռնօղ էմ (ես մեռնելու եմ), յես էրթօղ էմ (ես գնալու եմ) և այլն:

Ներկա վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակներ

Ապարանի խոսվածքներում վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայի միջինհայերենյան ծագում ունեցող -է ք վերջավորության և օժանդակ բայի տարբերակային ձևերով: Ընդ որում, այս հատկանիշը համընդհանուր է բոլոր խոսվածքներում, իսկ գրական հայերենում վաղակատար դերբայը կերտող, գրաբարյան անցյալ դերբայի՝ -եալ-ի պատմական զարգացումից առաջացած -եղ դերբայակերտ ձևույթը դեռևս խորք է Ապարանի տարածաշրջանի բարբառախոսներին: Միակ տարբերակիչ հատկանիշն այն է, որ Ապարան քաղաքի բարբառախոսները – է ք-ին զուգահեռ վաղակատարը կազմում են նաև -իը-ով՝ որպես Վանի բարբառից անցած լեզվական ենթաշերտ (Ա. Ղաբիրյան, 1953, էջ 387), այն է՝ յերգիր էմ, յերգիր էս, յերգիր ա, յերգիր ենկ, յերգիր էկ, յերգիր էն: Եթե վաղակատար դերբայն արտահայտող ձևույթով դիտարկվող խոսվածքները

միավորվում են, ապա տարբերակվում են օժանդակ բայի դրսևորած առանձնահատկություններով: Արայի, Ափնա, Մուլքի, Հարթավան, Արագած, Ծաղկաշեն համայնքներում վաղակատար ներկան կազմվում է էմ օժանդակ բայի ներկայի հետևյալ ձևերով՝ իմ, իս, ա, ինկ, իկ, ին (*նը ստէր իմ, նը ստէր իս, նը ստէր ա, նը ստէր ինկ, նը ստէր իկ, նը ստէր ին*), անցյալը՝ ի, իր, էր, ինկ, իկ, ին կամ էնկ, էկ, էն (*նը ստէր ի, նը ստէր իր, նը ստէր էր, նը ստէր ինկ, նը ստէր իկ, նը ստէր ին* կամ *նը ստէր էնկ, նը ստէր էկ, նը ստէր էկ*), իսկ Երնջատափ, Շենավան, Նորաշեն, Ապարան, Վարդենուտ, Քուչակ համայնքներում վաղակատար ներկա ժամանակում էմ օժանդակ բայն ունի էմ, էս, ա, էնկ, էկ, էն (*գացէր էմ, գացէր էս, գացէր ա, գացէր էնը, գացէր էք, գացէր էն*)՝ վաղակատարի անցյալում միավորվելով առաջին խմբում տրված համայնքներում ապրող բարբառախոսների գործածած օժանդակ բայերի անցյալի ձևերի հետ՝ *ղընջըծէր ի, ղընջըծէր իր, ղընջըծէր էր, ղընջըծէր ինկ, ղընջըծէր իկ, ղընջըծէր ին*: Ապարանի խոսվածքներում վաղակատար ներկան ունի մի այլ առանձնահատկություն ևս. վաղակատարն ունենում է նաև -է վերջավորությունը, ընդ որում եզակի երրորդ դեմքում օժանդակ բայը զեղչվում է՝ *տըղէն էգէ, նըստէ, կէրէ, խըմէ ու քըմէ (տ դան եկել է, նստել է, կերել է, խմել է ու քնել)*, իսկ եզակի թվի առաջին երկրորդ և հոգնակի թվի մյուս երեք դեմքերում օժանդակ բայը նախորդում է դերբայական ձևին, երբեմն նաև՝ զեղչվում, այն է՝ *յէս տղամառտի նման դուսն էմ էղէ (ես տղամարդի նման եղել եմ դրսում), մէ վօըղս վերցըրէ, մէ վօըղս դըրէր էմ (մի ոտքս վերցրել եմ, մի ոտքս դրել եմ), ցէրէզվա գօրծն գըշէրն էմ էրէ (ցերեկվա գործը արել եմ գիշերը), դու իս նըստէ յուդա տէղ (դու նստել ես այդտեղ), գօղէր ին մըղէ, թալնէ ու գածէ (գողերը մտել են, թալանել են ու գնացել են), ցէրէկ զըբաղված կնիգ էմ էղէ (ցերեկը եղել եմ զբաղված կին), աստըված բէրէ, տըվէ ընծի (աստված բերել է, տվել է ինձ)* և այլն: Անդրադառնալով վաղակատար ժամանակի ժխտման ձևերին՝ պետք է ասել, որ գրեթե բոլոր խոսվածքներում ընդհանուր է այն, որ օժանդակ բայը նախադաս է վաղակատար դերբային՝ կրելով ժխտման ցուցիչը՝ *չըմ խօսէր, չըմ դառնէր* և այլն, մինչդեռ Քուչակի և Շենավանի խոսվածքները տալիս են փաստեր, ըստ որի՝ նախադասված ժխտական ձևին հաջորդած վաղակատար դերբայը կրում է նաև հաստատական օժանդակ բայ՝ *չըմ էրէր էմ, չըր մահացէր էր* և այլն:

Հարակատար և անցյալի հարակատար ժամանակներ

Ապարանի խոսվածքներում առանձնացվում է նաև հարակատար ժամանակաձևը, որով էլ հետագուտվող խոսվածքներում սահմանական եղանակի պարզ ժամանակաձևերի քանակը հասնում է իննի: Այդ ժամանակը արտահայտվում է հավասարաչափ երկու բառահարաբերում արտահայ-

տող -ած//-ած և -ուկ//-ուգ ձևությամբ: Դիտարկվող խոսվածքներում հարակատար ժամանակաձևը տարբերվում է միայն եմ օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների դրսևորումներով: Թե՛ -ած//-ած+օժանդակ բայ, թե՛ -ուկ//-ուգ +օժանդակ բայ կադապարները այնքան գործուն են Ապարանի խոսվածքներում, որ միայն ամենամանրակրկիտ վիճակագրական քննությունը կարող է պարզել նրանցից մեկի գործածության գերակշռությունը: Արայի, Ափնա, Մուլքի, Հարթավան, Արագած, Ծաղկաշեն համայնքներում հարակատար ներկան ունի հետևյալ գործածությունը՝ ա) -ած//-ած+օժանդակ բայ կադապարը՝ *խըմած իմ, խըմած իս, խըմած ա, խըմած ինկ, խըմած իկ, խըմած իմ* կամ *խըմած ա, իսկ անցյալը՝ խըմած ի, խըմած իր, խըմած էր, խըմած ինկ, խըմած իկ, խըմած իմ* կամ *խըմած էնկ, խըմած էկ, խըմած էն*, բ) -ուկ//-ուգ+օժանդակ բայ կադապարը՝ *խըմուգ իմ, խըմուգ իս, խըմուգ ա, խըմուգ ինկ, խըմուգ իկ, խըմուգ իմ*, իսկ անցյալը՝ *խըմուգ ի, խըմուգ իր, խըմուգ էր, խըմուգ ինկ, խըմուգ իկ, խըմուգ իմ* կամ *խըմուգ էնկ, խըմուգ էկ, խըմուգ էն*: Ի հակադարձություն վերոբերյալի՝ Երնջատափ, Ծենավան, Նորաշեն, Ապարան, Վարդենուտ, Զուչակ համայնքներում հարակատար ներկան ունի հետևյալ գործածությունը՝ ա) -ած//-ած+օժանդակ բայ կադապարը՝ *նըստած էմ, նըստած էս, նըստած ա, նըստած էնկ, նըստած էկ, նըստած էն* կամ *նըստած ա*, հարակատարի անցյալում՝ *նըստած ի, նըստած իր, նըստած էր, նըստած էնկ/ինկ, նըստած էկ/իկ, նըստած էն/ին*, բ) -ուկ//-ուգ +օժանդակ բայ կադապարը՝ *նըստուգ էմ, նըստուգ էս, նըստուգ ա, նըստուգ էնկ, նըստուգ էկ, նըստուգ էն*, հարակատար անցյալում՝ *նըստուգ ի, նըստուգ իր, նըստուգ էր, նըստուգ էնկ/ինկ, նըստուգ էկ/իկ, նըստուգ էն/ին*: Մի նրբություն ևս. -ած//-ած+օժանդակ բայ կադապարում հոգնակի երրորդ դեմքը, ինչպես նկատեցինք վերևում, ձևաբանորեն մնում է նաև որպես եզակի երրորդ դեմք: Բարբառախոսները շատ հաճախ, օրինակ, *մառտիգ խմած էն* կառույցի փոխարեն ասում են՝ *մառտիգ խըմած ա*, կամ՝ *ախճըզէրք գացած ա* և այլն: Ընդգծենք նաև, որ -ած-ով և -ուկ-ով ձևավորված հարակատար ժամանակը, ըստ գործածության, կարող է ընկալվել նաև վաղակատար ժամանակաձևի իմաստով:

Անցյալ կատարյալ ժամանակ

Համադրական բնույթ ունեցող այս ժամանակաձևը Ապարանի խոսվածքներում գրական հայերենի նման հիմնարար տարբերակիչ դրսևորումներ չի ունենում: Այն երկու կարգի վերջավորություն ունի՝ -ի, -իր, - (-աց, -եց), -ինկ, -իկ, -ին և -ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան, որոնք դրվում են անցյալ

կատարյալի և՛ արմատական, և՛ ցոյական հիմքերին: Սակայն նկատելի է բազմաթիվ բայերի՝ անցյալ կատարյալում ցոյական հիմք ունենալուն զուգահեռ պարզ, արմատական հիմքով հանդես գալը, բացառությամբ եզակի թվի երրորդ դեմքի՝ *յերգի, յերգիր, յերգեց, յերգինք, յերգիք, յերգին, կըթի, կըթիր, կըթեց, կըթինք, կըթիք, կըթին, խաղի, խաղիր, խաղաց, խաղինք, խաղիք, խաղին* և այլն: Փաստենք նաև, որ առկա է կրավորական բնույթի վերջավորությունների՝ -ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան, գործածության ածի միտում, որոնք բնորոշ են այդ խոսվածքներին: Հատկապես է, ա լծորդություններին պատկանող պարզ բայերը, որոնք պետք է օրինաչափորեն ստանան -ի, -իր, - (աց, -եց), -ինկ/ք, -իկ/ք, -ին վերջավորությունները, մեծ մասամբ ստանում են -ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան վերջավորությունները, ինչպես՝ *խաղցա, խաղցար, խաղցավ, խաղցանք, խաղցաք, խաղցան, վազա, վազար, վազավ, վազանք, վազաք, վազան* և այլն:

Ամփոփելով Ապարանի խոսվածքներում սահմանական եղանակի ինը ժամանակաձևերի դրսևորումներին նվիրված բնութայունը՝ կարելի է անել հետևյալ եզրակացությունները.

ա) Ափնայի, Արայիի, Արագածի, Ծաղկաշենի, Շենավանի, Մուլքիի խոսվածքները միավորվում են գրաբարյան ներկայի և կը-, գը- եղանակիչների միջոցով սահմանական եղանակի ներկա ժամանակը կազմելու հատկանիշով: Ապարան քաղաքի և Վարդենուտի խոսվածքները, ի հակադրություն մյուս խոսվածքների, միավորվում են նրանով, որ կը-ին զուգահեռ գործում է նաև կու- եղանակիչը: Նշված բոլոր խոսվածքներում եղանակիչները նախադաս են բային: Անկատար դերբայի և են օժանդակ բայի խոնարհված ձևերի միջոցով արտահայտվում է **Քուչակ**, մասամբ՝ **Երնջատափ**, **Նորաշեն** համայնքներում ապրող բարբառախոսների սահմանական եղանակի ներկա ժամանակը: Այս համատեքստում **Երնջատափի** և **Քուչակի** խոսվածքները նույնական են, քանի որ ներկան կազմում են -ում ձևույթի միջոցով, ի հակադրություն **Նորաշենի** խոսվածքի, ուր անկատար դերբայը դրսևորվում է անկատար դերբայի -ըմ տարբերակով: Մյուս կողմից՝ **Նորաշենն** ու **Երնջատափը** միավորվում են, որովհետև պահպանել են կը-//գը- եղանակիչի ու գրաբարյան ներկայի միջոցով ներկան արտահայտելու տարբերակը ևս: Նկատենք, որ գրեթե բոլոր խոսվածքներում աստիճանաբար գործառում է նաև ներկայի արտահայտման չափակարգված ձևը, որը խոսում է տվյալ խոսվածքներում ներկա ժամանակի արտահայտման ձևերի երկփեղկվածության փաստի և գրական ձևի աստիճանական տարածման մասին:

բ) Ապարան, Ափնա, Արայի, Արագած, Հարթավան, Մուլքի, Ծաղկաշեն, Շենավան, Վարդենուտ գյուղերի խոսվածքները միավորվում են այն հատկանիշով, որ անցյալ անկատար ժամանակն արտահայտում են բա-

յարմատին հավելելով դիմաքվային վերջավորություններ: Այս ժամանակաձևը կազմվում է մաս կը- եղանակիչի և համապատասխան դիմաքվային վերջավորություններով: **Շենավանի** և **Երնջատափի** խոսվածքները նշյալ խոսվածքներից տարանջատվում են նրանով, որ ունեն անցյալ անկատարի գրաբարատիպ կազմության գործածության հետքեր ևս: Ընդ որում, **Երնջատափի** խոսվածքն էլ հակադրվում է վերոնշյալ խոսվածքներին այն հատկանիշով, որ անցյալ անկատարը կազմում է մաս անկատար դերբայի և օժանդակ բայի անցյալի ձևերով՝ սույնով միավորվելով **Քուչակի** և **Նոքաշենի** հետ, ուր անցյալ անկատարը վերլուծական կազմություն ունի:

գ) Սահմանական եղանակի ապառնի ժամանակաձևը Ապարանի խոսվածքներում արտահայտվում է ներկա ժամանակի և հարկադրական եղանակի ժամանակաձևերի միջոցով: Այս հատկանիշով միավորվում են Ապարանի բոլոր խոսվածքները:

դ) Ապարանի խոսվածքները ներկա վաղակատար և անցյալ վաղակատար ժամանակները կազմելու, միավորվում են՝ վաղակատար դերբայի համար ունենալով **-եր** վերջավորությունը: Ուսումնասիրվող խոսվածքներից տարբերվում է **Ապարանի** խոսվածքը, ուր **-եր** ձևույթից բացի, վաղակատարը կազմվում է մաս **-իր** տարբերակային ձևույթով: Սակայն այս ժամանակաձևն արտահայտելիս խոսվածքները տարբերակվում են օժանդակ բայի դրսևորումներում:

ե) Ուսումնասիրվող խոսվածքներում, որպես համատարած իրողություն, հարակատար եւ անցյալի հարակատար ժամանակները կազմվում են **-ած/-ած** և **-ուկ/-ուգ** ձևույթներով: Տարբերվում են միայն օժանդակ բայի խոնարհված ձևերով:

զ) Ապարանի խոսվածքներն անցյալ կատարյալ ժամանակաձևը կազմելիս ու գործածելիս միավորվում են, տարբերություններ գրեթե չկան՝ գրական հայերենի մոյն ժամանակաձևից տարբերվելով միայն անցյալ կատարյալի հիմքի՝ մեծ մասամբ պարզ, արմատական հիմքով գործածվելու հատկանիշով: Մյուս տարբերությունն էլ գրական լեզվի համեմատ այն է, որ անցյալ կատարյալի կրավորատիպ վերջավորություններն ավելի կենսունակ են:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, ձևաբանություն, Երևան, 2002:
2. Ս. Հ. Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը, Երևան, 1958:
3. Ա. Ղարիբյան, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953:
4. Զ. Մադաթյան, Ալաշկերտի խոսվածքը, Երևան, 1985:
5. Գ. Ջախուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972

**ԲԱՅԱԿԱՆ ՋՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՅՍ ԱՂՅՈՒՄԱԿԸ ՏՐՎՈՒՄԷ ԸՍՏ
ԳԵՎՈՐԳ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱԶՄԱՀԱՏԿԱՆԻՇ ԴԱՄԱԿԱՐԳՄԱՆ (ՀԱՅ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ, Ե.1972 թ.)**

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԶԵԿՆԵՐԻ ՋՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ	Ափսա	Արայի	Վարդենուտ	Արագած	Ծաղկաշեն	Շենական	Հարթական	Երևանատափ	Նորաշեն	Քույսակ	Ապարան	Մուլի
Գրաբարյան ներկա+կը- եղանակիչ կադակարող ներկա ժամանակ	+	+	+	+	+	+	+	°	°	-	+	+
Անկատար դերբայ+օժանդակ բայ կադակարող ներկա ժամանակ	-	-	-	-	-	-	-	+	+	+	-	-
Գրաբարատիպ ներկա	-	-	+	-	-	+	-	-	-	-	-	+
Բայարժմատ+համապատասխան համադիր դիմաբովանդակ վերջավորություններով անցյալ անկատար ժամանակակաձև	+	+	+	+	+	+	+	-	-	-	+	+
Կը- եղանակիչ+ համադրական վերջավորություններով անցյալ անկատար ժամանակակաձև	+	+	+	+	+	+	+	+	-	-	+	+
Գրաբարատիպ անցյալ անկատար ժամանակակաձև	-	-	-	-	-	+	-	+	-	-	-	-
Անկատար դերբայ+ օժանդակ բայի անցյալի ձևերով անցյալ անկատար ժամանակակաձև	-	-	-	-	-	-	-	+	+	+	-	-
-Ու ձևությի և օժանդակ բայի միջոցով կազմվող ապառնի ժամանակակաձև	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	-
Կը- եղանակիչի +գրաբարյան ներկայի և հարկադրական եղանակի ժամանակաձևերի միջոցով ապառնի ժամանակի իմաստի արտահայտում	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
-Էր ձևությով վաղակատար դերբայի առկայություն	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
-Իր ձևությով վաղակատար դերբայի առկայություն	-	-	-	-	-	-	-	-	-	-	+	-
Օժանդակ բայի իժ, իս, և, ինկ, իկ, ին ձևերով կազմվող ներկա վաղակատար ժամանակ	+	+	-	+	+	-	+	-	-	-	-	-
Օժանդակ բայի էժ, էս, և, էնկ, էկ, էն ձևերով կազմվող ներկա վաղակատար ժամանակ	-	-	+	-	-	-	+	+	+	+	+	-
Օժանդակ բայի ի, իր, էր, ինկ/ք, իկ/ք, ին կամ էնկ, էկ, էն ձևերով կազմվող անցյալ վաղակատար ժամանակ	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
-Աժ/-աժ և -ուկ/-ուգ ձևության երի և օժանդակ բայի ներկայի եւ անցյալի ձևերի միջոցով կազմվող ներկա և անցյալ հարկադրական ժամանակակաձևեր	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
Անցյալ կատարյալ ժամանակաձևի երկու կարգի վերջավորությունների՝ -ի, -իր, - (-աց, -էց), - ինկ, -իկ, -ին և -ա, -ար, -ավ, -անք, -աք, -ան հավասարաչափ բաշխվածություն, որոնք դրվում են անցյալ կատարյալի և արմատական, և ցույցալան հիմքերին:	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+

ԴԺՈՒՔ ԵՎ ԴՐԱՆՏ ԲԱՌԵՐԻ ՍԱՍԻՆ

Ինչպես հայտնի է, հին շրջանում հայերենը ամենաշատ փոխառություններ կատարել է իրանական լեզուներից: Դարեր շարունակ ապրելով կողք կողքի՝ հայերը միշտ շփվել են իրանական ժողովուրդների հետ: Այդ շփումները կրել են թե՛ քաղաքական, թե՛ տնտեսական, թե՛ մշակութային բնույթ: Եղել են ժամանակներ, երբ հայերը եղել են պարսից գերիշխանության տակ: Երկարամյա հարևանությունը, մշակութային, հաճախ էլ քաղաքական սերտ առնչությունները, առևտրական և տնտեսական հարաբերությունները ունեցել են իրենց ազդեցությունը լեզվի վրա: Բնականաբար, այդ ընթացքում փոխառվել են բազմաթիվ բառեր: Հայերենի իրանական փոխառությունները կատարվել են և՛ գրավոր, և՛ բանավոր ճանապարհով:

Արշակունիների գահակալության տարիներին համեմատաբար ավելի շատ են իրանական լեզուներից կատարված փոխառությունները: Այս մասին ահա թե ինչ է գրում Ա. Մեյեն. «Աքեմենյան թագավորների կողմից գրավվելուց մինչև իր գրականության սկզբնավորումը Հայաստանը գրեթե չի դադարել այս կամ այն ուժեղ չափով իրանական ազդեցությունը կրելուց: Իրանի ազդեցությունը հատկապես ուժեղացել է, երբ մակեդոնա-հելլենական թագավորությունների կործանումից հետո ստեղծվել են ազգային թագավորություններ... պարթևական ազնվականությունը հսկայական ազդեցություն է բողել, որի վկայությունը կրում է լեզուն» (Մեյե, 108):

Անդրադառնալով իրանական լեզուներից հայերենին անցած *դրախտ* և *դժոխք* բառերին:

Դժոխ(ք) - բառի արմատն է *դժոխ*, որն անեզական է. առանձին գործածությամբ միշտ հանդիպում է ք հոգնակերտ մասնիկով: Իրանական փոխառություն է՝ հմնտ. ավեստ. *došax* պրսկ. *dōzax*, քրդ. *dūže*, բոլորն էլ «դժոխք» նշանակությամբ՝ կազմված *duž-* դժ «վատ» և *anhav* «լինել, ելություն, կյանք, գոյություն» բառերից: Բառացի նշանակում է «վատ կայան» (ՀԱԲ, 1, 664): Ըստ Ջահուկյանի՝ բառը նախագրային շրջանից է (Ջահուկյան, 523): ՆՀԲ-ն *դժոխք* բառը բացատրում է հետևյալ ձևով. «1. Խորք երկրի. ծոց հորդյ հեռագոյն՝ ի ծագաց երկնից. որպես գեհեն. տաքտարոս. սանդարամետք. բանտ դիւաց և դատապարտելոց և 2. Գերեզման»: Բառի առաջին իմաստի համար բերենք օրինակներ Աստվածաշունչ մատյանից՝ «Եւ ի դժոխսն ամբարձ գաչս իւր մինչ տանջանս էր ետես զԱբրահամ ի հեռաստանէ...» (Դուկ. ԺԶ. 23), «Եւ ես քեզ ասեմ, զի Դու ես վեմ, եւ ի վերայ այդր վիմի շինեցից գեկեղեցի իմ, եւ դրունք դժոխսոց զնա մի յաղթահարե-

ցեն» (Մտք. ԺԶ. 18): Իսկ բառի երկրորդ՝ *գերեզման* իմաստի համար՝ «Իջից սովին սգով առ որդի իմ ի դոխս» (Ծն. ԼԷ.34), «Յո չոգաւ. միթէ ի գերեզման երկրի, զոր զիրք դոխք կոչեն» (Եզնիկ, էջ 275):

Դոխք բառը հունարեն «հաղես» և եբրայերեն «շեղ»¹ բառերի հայերեն համարժեքն է, այսինքն՝ «մեռյալների թագավորություն»: Ըստ քրիստոնեական կրոնի և շատ հին ազգերի հավատալիքների՝ դոխքը տեղ է, որտեղ մեղավորները՝ դատապարտված են մշտնջենական տանջանքների: ՔՀ հանրագիտարանը գրում է. «Աստծո ներկայությունից թափուր վայր կամ վիճակ. հավիտենական տանջարան, անլույս պատժարան, անհանգչելի կրակ, որը, աստվածային արդարության սահմանումով, նախատեսված է սատանայի, իր արբանյակների՝ անկյալ հրեշտակների, դևերի և սրանց կամակատար մարդկանց համար» (ՔՀ, 273):

Իսկ Ղ. Ալիշանը հիշում է դոխքի մի այլ անվանում և՛ *տխուրք*՝ «...հին բառգիրքը դոխքը անվանում է նաև տխուրք, որի իմաստը հայոցնի է ու շատ հարմար՝ հակառակ ուրախության և զվարթության կամ լույսի, այսինքն՝ մութ ու խավար» (Ալիշան, 212):

Դոխս(ք) արմատից կազմված բառերից են՝ *դոխսաբար*, *դոխսաբնակ*, *դոխսակեզ*, *դոխսակուլ*, *դոխսահրավէր*, *դոխսային*, *դոխսապարտ*, *դոխսապետ*, *դոխսարմատ* և այլն:

Բազմաթիվ են դոխս(ք) բառով կազմված դարձվածքները՝

դոխք գնալ – մեռնել

դոխքի բաժին – դոխքին արժանի, հանցագործ

դոխքի բաժին դառնալ – չարաչար տանջվել

դոխքի ծնունդ – չար, չարագործ, ստոր

դոխքի կերակուր դառնալ – դոխք գնալ, որպես մեղավոր տանջվել

դոխք ուղարկել – սպանել

դոխք վառել մեկի սրտում – չարություն գործել, չարաչար տանջել

Դոխս(ք) բառի երկրորդ նշանակությունը «դժվար, դժվարին»-ն է, որն առկա է միայն բաղադրություններում, ինչպես՝ *դոխսաբուժելի* (դժվար բուժելի), *դոխսագյուտ* (դժվար գտնվող), *դոխսադասելի* (դժվար հասանելի), *դոխսելանելի* (դժվար ելանելի), *դոխսահասանելի* (դժվար հասանելի), *դոխսաշարժելի* (դժվարաշարժ) և այլն: Այս իմաստի համար բերենք օրինակ խորենացուց. «Ձորոյ պարսպեալ զգագաթն՝ դժուարամուտս ոմանս և դժոխսելանելիս ի նմա յօրինէ շինուածս արքայանիստս» (Խորենացի, 54): Բառը ավելի ուշ ստացել է փոխաբերական նշանակություն՝ *անտանելի վիճակ, խառնաշփոթություն, անկարգություն*:

¹ Շեղ եբրայերեն բառը բացատրվում է “прикрытая пропасть или пустота внутри” (Энциклопедический словарь, Санкт-Петербург, 2004, стр. 8).

Դժոխ(ք)-ին զուգահեռաբար հին հայերենում գործածվում էր *սանդա-
քամեն* բառը:

Սանդաքամեն – միջին պարսկերեն *spandāramat*(*spandarmat*)«երկրի
դիր», պարսկերեն *sipendārmēd* կամ *sipandārmud*՝ «հող, երկիր» նշանա-
կություններով: Հին հայերենում ուներ 1. «ստորերկրեայ վիհ» և 2. «դժոխքի
նշխան, սաղայել» իմաստները / ՆՀԲ, 2,693 /:

Սանդաքամեն բառի նախնական ձևը *Սպանդաքամեն* է:

Տեսնենք, թե ինչ է նշանակում և որտեղից է ծագում այդ բառը:

Ինչպես հայտնի է, իրանական հին կրոնը մարգարե Ջրադաշտի անու-
նով կոչվում է զրադաշտականություն, որի սկզբնավորման ժամանակը
հայտնի չէ: Ջրադաշտական կրոնի համաձայն՝ աշխարհը բաժանվում է
երկու թագավորության՝ բարու և չարի: Առաջինը գլխավորում է Ահուրա-
Մազդան՝ Արամազդը՝ բարության, լույսի, երկնքի ու երկրի արարիչը, իսկ
նրա հակառակորդը՝ Ահրիմանը, չարության և խավարի արարիչն է: Եր-
կուն էլ անսկիզբ ու անվախճան են: Ահուրա-Մազդայի՝ Արամազդի
շքախմբի անդամներն են ամէշասպենտաները, որ թարգմանաբար նշանա-
կում է «սուրբ ամնահներ» (ամէշա - ամնահ և սպէնտա - սուրբ), որոնցից
մեկն էլ սպէնտա Արմայիտին էր՝ սուրբ¹ իմաստությունը: Ահա թե ինչ է
գրում Կ. Կոստանյանը. «... այդ (սպէնտա Արմայիտի – Ս.Գ.) Ամէշասպէն-
տան իգական սեռից էր, եւ համարուում էր, Ձենդավեստայի խոսքերին նա-
յելով, մերթ ամուսին եւ մերթ դուստր Ահուրամազդայի: *Սպէնտա Արմայի-
տի* (որից էլ առաջացել է Սպանդաքամեն բառը) նշանակում է խոհակա-
նութիւն կամ իմաստութիւն անարատ, սուրբ եւ իմաստութիւն աճեցուցիչ.
ծննդական. աւելի այս վերջին նշանակութեան պատճառով է թերեւս Ձեն-
դավեստայի մէջ Սպէնտա Արմայիտի աստվածուիւ մասնաւոր հովանաւոր-
ութեան տակ է յիշուում եւ այս երկիրս, գետինը» (Կոստանեան, 29): Այ-
սինքն՝ հին պարսիկները խնամակալ աստվածուիւ անունով խնամակա-
լին ևս կոչում են նույն անունով՝ Սպէնտա Արմայիտի – խոհականության
աստվածուիւ և Սպէնտա Արմայիտի - երկիր: *Սպանդաքամեն* բառը ՆՀԲ-
ն բացատրում է. «Դիոնիսոս, որ և Բաքոս՝ չաստվում շուայտութեանց և
արբեցողութեանց՝ իբր վերակացու սպանդից՝ ուտելեաց և ըմպելեաց»
(ՆՀԲ, 2, 754), իսկ այս արմատից կազմված *սպանդաքամենական* բառը՝
«Մեպիական կամ ձօնեալ Սպանդաքամենի. դիոնիսեան, բաքոսեան (բա-
րեկենդան հեթանոսաց) (նույն տեղում): Նույն բառը ՀՀԲ-ն բացատրում է
«որմզդական դիր, որ է կուռք, զոր յոյնք կոչեն Դիոնիսոս և լատինք՝ Բա-

¹ «Հին պարսից գաղափարով սուրբ այն մարդն է, որ ձգտում է աճումն տալու,
աճեցնելու բարի արարչի՝ Ահուրամազդայի փառքը, ուրեմն նուազեցնելու իր
եռանդուն դիմադրութեամբ չար Ահրիմանի փառքը՝ չեզոքացնելով բոլոր նրա չար
խորհուրդները», Կ. Կոստանեան, էջ 28:

քո» (ՀՀԲ, 1004): Ինչպես տեսնում ենք, *Սպանդարամետ*-ը, ըստ բառարանների, աստվածության անվանումն է: Օրինակներ բերենք մեր մատենագրությունից. «... վարէին ամէին ստէպ-ստէպ յամաստր յօր տօնի ծննդեան թագաւորին, զի զոհեացեն: Իբրեւ տօն հասանէր Սպանդարամետական պաշտամանն, տագնապէին զնոսա՝ պսակեալս թաւ ոստօք Սպանդարամետին կաքաւել...» (Բ Մակ. Զ. 7), որն աշխարհաբար թարգմանվել է. «Թագաւորի ծննդեան օրը, իւրաքանչիւր ամսուայ այդ օրը ստիպում էին զոհեր մատուցել: Երբ հասնում էր պտղաբերութեան պաշտամունքի տօնը, ստիպում էին նրանց թաւ ոստերից հիսած պսակներով պարել Բաքոսի կոտրի մոտ» (Աստուածաշունչ, 1999): Ռուսերենում այդ նախադասությունը հնչում է այսպէս. «С тяжким принуждением водили их каждый месяц в день рождения царя на идольские жертвы, а на празднике Диониса принуждали Иудеев в плюшевых венках идти в торжественном ходе в честь Диониса» (Մակ.6. 7): Հունարեն տեքստում նույնպէս Դիօնիսոս է: Այսինքն՝ աշխարհաբարում Բաքոս է, իսկ ռուսերեն և հունարեն տեքստերում՝ Դիօնիսոս: Ինչպէս հայտնի է, Ջեսի և Սեմէլի որդու՝ Դիօնիսոսի կրկնակ անունը Բաքոս է (տե՛ս Գ. Գալստյան, Դիցաբանական անունների ու դարձվածքների համառոտ բացատրական բառարան, Երևան, 1966, էջ 29: Ա. Կուն, Հին Հունաստանի լեզենդներն ու առասպելները, Երևան, 1956, էջ 94):

Հունական դիցաբանության մէջ երկրագործության և բարեբերության աստվածուհին Դեմետրեն է, և թերևս ավելի ճիշտ կլինէր Դիօնիսոս-Բաքոսի փոխարեն գործածել հենց Դեմետրե անվանումը, սակայն, ինչպէս գտնում է Հ. Վարդանյանը. «Դեմետրե ընդհանրապէս երկրի Շահապետն է, մինչ Դիօնիսոս մասնատրապէս այգեստաններու, կարելի է թերեւս այնուհետև արդարացնել թարգմանչին ընտրողությունը ու ենթադրել, որ հայոց Սպանդարամետին և յունական Դիօնիսոսին մէջ կայ ազգակցութիւն» (Հ. Վարդանեան, ՀԱ, 1928, 457-462):

Հավանաբար սպանդարամետական տոները ուղեկցվում էին բաքոսյան տոներին հատուկ զվարճություններով, այդ պատճառով է թարգմանիչը ընտրել այդ բառը, որ երևում է նաև ՀՀԲ-ի բացատրության մէջ՝ «զի ի տօնի գոր յոյժ մեծահանդէս կատարէին, համարձակութիւն էր ամենեցուն ըստ հաճոյից իւրեանց խենէշանալ ի գարդս, և ի պաճուճանս. ուտել, և ըմպել, և կաքաւել, և խաղալ և ընդ միմեանս գարշաբար խառնակիլ» (ՀՀԲ, 1004):

Սպանդարամետ բառից է *Սանդարամետ*-ը. «...այս վերջին կոչումը (Սանդարամետ - Ս.Պ.) անէլի շատ գործ է դրուում քրիստոնէության ժամանակ դժոխքի, այսինքն՝ երկրիս խորքերը հասկացնելու համար. այս դեպքում, ինչպէս մի քանի ուրիշ խօսքերի մէջ էլ պատահած է, *ս* գիրը կորչում է եւ երկու խօսքը միացած փոխանակ Սպանդ Արամետի, ասուում է Սանդարամետ» (Կոստանեան, 30): Ե՛վ ՀՀԲ-ն, և՛ ՆՀԲ-ն *սանդարամետ* բառը բա-

ցատրում են «խորք երկրի, անդունդը, վիհ, դժոխք, արք»¹ ՀՀԲ-ն բառը տալիս է *սանդարամետ* անեզական ձևով: Բերենք օրիինականեր՝ «Ի ձայնէ կործանման նորա դրողեցան ազգք, յորժամ իջուցի զնա ի դժոխս ընդ իջեալսն ի գուր. և մխիթարէին զնա ի Սանդարամետսն ամենայն ծառք փափկութեան» (Եզեկ. ԼԱ. 16): «Եւ եկն էջ եհաս մինչեւ մօտ ի յատակս երկրիս ի շինամէջ քաղաքիս եւ բախեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյս եւ մեծ եւ անշափ թնդիւնք հնչեցին ի Սանդարամետս անդնդոց» (Ագաթ. 272)¹:

Երկու բառարաններն էլ տարբերակում են *Սպանդարամետ*-ը և *Սանդարամետ*-ը: Կարծում ենք, այդ տարբերակումը տեղի է ունեցել քրիստոնեության մուտքից հետո: Առաջինը աստվածության, անձնավորության անվանումն է, երկրորդը՝ դժոխքի: Հայ նախաքրիստոնեական դիցարանի իրանական դիցանունների համալիրը, ապա և հայերենում մեծաքանակ պաշտամունքային տերմինների գոյությունը ցույց են տալիս, որ իրանական կրոնի ազդեցությունը հայկականի վրա եղել է համակարգային:

Նոր կրոնի ընդունումով ժողովուրդը հեշտությամբ չի հրաժարվում իր հնագույն հավատալիքներից. դրանք հաճախ խառնվում են քրիստոնեական հավատալիքների հետ: *Սպանդարամետ* աստվածության անվանումը ժողովուրդը ավելի շուտ է մոռացել, իսկ *սանդարամետ*-ը պահպանվել է:

Կրոնների պատմության մեջ հաճախ բարի աստվածը կամ դյուցազնը ժամանակի ընթացքում օժտվում է չար աստծու կամ դևի հատկություններով: Այդպես է լուսավոր և բարի Միհրը դառնում «վատմիհր», իսկ *Սպանդարամետ* – *Սանդարամետ*-ը, որ հին հայերի և հին պարսիկների մոտ երկրի, արգասաբերության, «սուրբ իմաստության» կրողն էր, քրիստոնյա հայերի մոտ ստանում է հակառակ իմաստը, եթե կարելի է ասել, տեղի է ունեցել հին աստվածների «դիվացում»:

ՀՀԲ-ում *Սպանդարամետ* բառի բացատրությունը հղվում է *Սանդարամետ* գլխաբառին՝ «երկրի խորքերը, անդունդ, վիհ, դժոխք, դժոխային ոգի» նշանակություններով: Կա ամենձք՝ «Սանդարամետ մտնես»: ԱՀԲԲ-ում *սպանդարամետ* բառը վկայված չէ, իսկ *սանդարամետ*-ը «վիհ, անդունդ, դժոխք» իմաստներով՝ *հնացած* նշումով է: Այսինքն՝ կարող ենք արձանագրել բառիմաստի շրջում:

Դրախտ – միջ. արսկ. draxt, արսկ. diraxt «ծառ, պարտեզ» ձևից: ՆՀԲ-ն բացատրում է. «պարտեզ. բուրաստան. տեղի պտղատու ծառոց և ծաղ-

¹ Ագաթանգեղոսը վկայում է, որ Գրիգոր Ա Լուսավորչին տեսիլք է երևում, ըստ որի, Հիսուս Քրիստոսը իջնում է և իր ձեռքի ոսկե ուռով ցույց տալիս այն վայրը, որտեղ պետք է կառուցվի «տուն աղօթից»: Գ.Լուսավորիչը Տրդատ Մեծի և նախա-րարների օգնությամբ կործանում է Սանդարամետի մեծիանը և տեղում կառուցում (301-303թթ.) Մայր տաճար Սուրբ Էջմիածինը (ՀՄՀ, հ.4, էջ 66):

կանց. առանցին անուամբ՝ Աստուծատուր վայրն եղեմական, որ և դրախտ փափկութեան» (ՆՀԲ, I, 642):

Պարտեզ իմաստը նախնականն է, որ երևում է Հին կտակարանում՝ «Եւ տնկեաց Աստուած գորախտն՝ յԵդեմ ընդ արեւելս, եւ եղ անդ զմարդն զոր ստեղծ: Եւ բուսոյց եւս Տէր Աստուած յերկրէ զամենայն ծառ գեղեցիկ ի տեսանել եւ քաղցր ի կերակուր, եւ զծառն կենաց ի մէջ դրախտին, եւ զծառն գիտելոյ զգիտութիւն բարոյս և չարի» (Ծն. Բ. 8-9): *Դրախտ*-ը պարտեզ իմաստով գործածված է նաև Երգ երգոցում՝ «Պատգամաւորութիւն քո դրախտ նռնենեաց՝ հանդերձ պտղովք մրգաբերաց» (Երգ երգոց. Դ. 13): Մեր մատենագիրները նույնպես վկայում են բառի այդ իմաստը. «Ձոր բարձեալ աշակերտացն՝ քաղեցին ի միայնարանի նորին, որ կոչի Հացեաց դրախտ» (Խորենացի, 272):

Կցորդային իմաստափոխության հետևանքով *դրախտ* բառը ստացել է «երանավետ վայր» իմաստը, որը համապատասխանում է եբր. *edem* բառին: Բրիտոնեական հավատալիքների համաձայն՝ *դրախտը* երանավետ վայր է, որտեղ արդարների հոգիները մշտնջենապես պետք է ապրեն երանության մեջ՝ «երկնքի արքայություն»: Այս իմաստի համար կարող ենք օրինակներ բերել Նոր կտակարանից՝ «Եւ ասէ ցնա Յիսուս, Ամեն ասեմ քեզ, Այսօր ընդ իս իցես ի դրախտին» (Դուկ. ԻԳ. 43), «Որ ունի ականջս լսելոյ՝ լուիցէ զինչ ասէ Հոգին առ եկեղեցիս. որ յաղթէն, տաց նմա ուտել ի փայտէն կենաց, որ է ի մէջ դրախտին Աստուծոյ» (Յայտ. Բ. 7): Մեր մատենագիրների գործերում այս իմաստի համար՝ «Նովաւ գորրունս փակեալ դրախտին եբաց» (Եղիշէ, 154): «Քանզի ի պատուիրանազանցութեան գտեալ առաջինն ի մարդկանէ՝ ի դրախտէն և յԱստուծոյ, չարին աղազաւ, ... գտանի արտասահմանեալ» (Խորենացի, 15): Նոր կտակարանում *դրախտ* բառի համար երբեմն գործածվում է *Աբրահամի գոգ* կապակցությունը՝ «...ետես զԱբրահամ ի հեռաստանէ, եւ զՂազարոս ի գոգ նորա հանգուցեալ» (Դուկ. ԺԶ. 23):

Դրախտ-ից կազմված հինհայերենյան բառերից կարելի է նշել *դրախտաբաց*, *դրախտաբարոյս* (*դրախտաբարոս*), *դրախտաճուն*, *դրախտանալ*, *դրախտապան*, *դրախտատունկ* բառերը (ՆՀԲ):

Սրանք բոլորն էլ պատկանում են կրոնական տերմինահամակարգին:

Ժամանակակից հայերենում *դրախտ* բառը հիմնական իմաստին զուգահեռ ստացել է փոխաբերական գործածություն՝ «զեղատեսիլ, խաղաղ վայր» և «վայր, որտեղ մարդիկ երջանիկ են»: ԱՀԲ-ում *դրախտ*-ից կազմված նոր բառեր են՝ *դրախտաբույր* (բնատ.), *դրախտագեղ* (բնատ.), *դրախտաշունչ* (բնատ.), *դրախտավայել*, *դրախտվել* (բնատ.), *դրախտավայր* բառերը. կան նաև բուսանուններ՝ *դրախտախնձոր* (խնձորենու տեսակ), *դրախտածառ* (արծվածառ), *դրախտավարդ* (ծաղկի տեսակ՝ հորտենզիա):

Շրջատույթներից կարող ենք նշել՝ *Ադամա տուն, հավիտենական երանության վայր* (տե՛ս Պ. Բեդիրյան, Հայերեն շրջատությունների բառարան, Ս. Էջմիածին, 2002, էջ 14, 178), դարձվածքներից՝ *դրախտ ուղարկել (մեկին)* - սպանել, այն աշխարհն ուղարկել, *դրախտում սովել տեսնել (փնտրել)* - ամեն ինչում թերություն տեսնել, *դրախտն ընկնել* - լավ, երանավետ պայմաններում լինել:

Վերոշարադրյալից երևում է, որ *դրախտ* արմատում տեղի է ունեցել բառիմաստի ընդլայնում: Այս բառը կրոնական տերմինահամակարգից անցել է համագործածական բառերի շերտին. դրանով կազմված շատ բառեր հանդես են գալիս բանաստեղծական մասնաշերտում: Թերևս կարող ենք արձանագրել *դրախտ* բառի մասնակի ապատերմինացում:

Համառոտագրություններ

1. Ալիշան - Ղ.Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002 (գրական արևելահայերենի վերածեց Վ.Գ.Բաբսեդյանը):
2. ԱՀԲԲ - Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976-1978:
3. ԲՍԳ - Բառարան Սուրբ գրքոց, Կոստանդնուպոլիս, 1881:
4. Բուզանդ - Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն հայոց, Ս.Պետերբուրգ, 1883:
5. Եզնիկ - Եզնիկայ Կողբացոյ Բագրևանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:
6. Եղիշէ - Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957:
7. Խորենացի - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն հայոց, Տփլիս, 1913:
8. Կոստանեան - Կոստանեան Կ., Հայոց հեթանոսական կրօնը, ի տպարանի Սրբոյ Կարողիկէ Էջմիածնի, 1879:
9. ՀԱ - Հանդէս ամսօրեայ:
10. ՀԱԲ - Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1-4, Երևան, 1971-1979:
11. ՀԲԲ - Ստ. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, Երևան, 1944-1945:
12. ՀԼՊ - Հ.Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 1-2, 1940-1951:
13. ՀՀԲ - Բառգիրք հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1749:
14. Մեյն Ա., Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 1978:
15. ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազնեան լեզուի, Վենետիկ, 1836-1837:
16. Ջահուկյան - Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ծամանակաշրջան, Երևան, 1987:
17. ՔՀ - Քրիստոնյա Հայաստան (հանրագիտարան), Երևան, 2002:

**Հ.-Ե. ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ**

Հնդեւրոպական նախալեզվի խոնարհման համակարգի վերականգնված կառուցվածքը (architecture), որն առ այսօր շարունակում է դիտարկվել որպէս ընդհանրության՝ տրոհմանն անմիջապէս նախորդող ժամանակահատվածի վիճակ, հետևյալ պատկերն է ներկայացնում՝

1) եղանակներ՝ սահմանական, հրամայական, ստորադասական, (ըստ ոմանց նաև՝ ըղծական)։

2) ժամանակներ՝ ներկա, անցյալ, (ապառնի ժամանակն ըստ երևույթին հ.-ե. ընդհանրության ժամանակ դեռևս չէր ձևավորվել)։

3) կերպ՝ անկատար (infect), կատարյալ (aorist), հարակատար (perfect)։

4) բայասեռ՝ ակտիվ (ներգործական-անցողական), մեղիո-պասիվ (չեզոք-կրավորական)

5) թիվ՝ եզակի, երկակի, հոգնակի։

6) դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ։

Հ.-ե. լեզուների (ինչպէս նաև վերականգնված հ.-ե. նախալեզվի) որևէ բայածև կարելի է ներկայացնել հետևյալ պարզագույն բանաձևով՝

բայահիմք + թեքույթ։

Վերոհիշյալ բերականական կարգերից դեմքը, թիվը, մեծավ մասամբ նաև բայասեռը, արտահայտվում են թեքությներով։ Թիվն անվանական և դերանվանական, իսկ դեմքը դերանվանական կարգ է, և դրանք ընդգրկվում են խոնարհման կարգերի մեջ այն հիմունքով, որ խոնարհված բայը (թեքույթի միջոցով) սերտորեն առնչվում է ենթակային, որն արտահայտվում է անվամբ կամ դերանվամբ։ Հավելենք նաև, որ բայասեռը հաճախ առնչվում է բառիմաստին, այսինքն նաև բառային (բառիմաստային) հատկանիշ է։

Մյուս կարգերը (եղանակը, ժամանակը և, հատկապէս, կերպը) արտահայտվում են բայահիմքի միջոցով։ Հ.ե. նախալեզվի բայահիմքերին վերագրվում են կերպային՝ ներկա (անկատար, infect), կատարյալ (aorist) և հարակատար (perfect) իմաստներ, և ըստ այդմ բայահիմքերը, որոնք իրենց կազմությամբ բազմազան են, բաշխվում են այս կերպերի միջև։ Ըստ էության այս կարգերը բուն բայական կարգերն են։ Մյուսն համադրությամբ էլ

կարելի է ներկայացնել որևէ լեզվի խոնարհման համակարգի ընդհանուր պատկերը: Հ.ե. նախալեզվի ընդունված վերականգնված խոնարհման համակարգը հետևյալ պատկերը կունենա (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ժամանակ	կերպ		
	անկատար	կատարյալ	հարակատար
ներկա	սահմանական ստորադասական (ըղծական ?) հրամայական		սահմանական (ստորադասական ?) (ըղծական ?)
անցյալ	սահմանական	սահմանական	(սահմանական ?)
(ապառնի?)	(սահմանական ?)		

Անցյալ դարի երկրորդ կեսին այս վերականգնումը բավական հիմնավոր կասկածի ենթարկվեց: Այս առթիվ խեթա-հնդկական տեսության հիմնադիրներից՝ Ուորեն Քոուգիլը (Warren Cowgill) իր հոդվածներից մեկում (հրապարակված 1972-ին) գրում է. «Ես հնարավոր չեմ համարում առավել կամ նվազ ընդունելի եղանակով՝ անատոլիական լեզուների բայական մոդելների արտածումը **հունարենի և հնդիրանական լեզուների համար ընդհանուր մոդելից**»¹: Այս քաղվածքում ընդգծված բառերը պետք է հասկաննել որպես **հնդեւրոպական վերականգնված** մոդելից, քանի որ վերջինն, ըստ

¹ Cowgill, W. More evidence for Indo-Hittite: the tense-aspect systems, p 563. (In: PICL XI, Vol. 2 (Ed. by Luigi Heilmann). Bologna: Società editrice il Mulino, 1972, 557 – 570: (Քաղում ենք ըստ Новое в лингвистике, вып. XXI, М., "Прогресс", 1988, с.264 = W. Schmalstieg. Indo-European Linguistics. A New Synthesis. University Park and London, 1980)

էության, սանսկրիտի, ավեստերենի, մասամբ նաև հունարենի համապատասխան համակարգերի գրեթե մույնական դրսևորումն է (ընդգծումներն իմն են - Վ.Ջ.): Համեմատության համար ներկայացնենք երկու հ.ե. լեզուների՝ խեթերենի (գրավոր վկայված հնագույն) և գոթերենի (ուշ վկայված լեզուներից մեկը՝ մ.թ. 5-րդ դար) խոնարհման համակարգերի պատկերները՝

խեթերեն			գոթերեն		
ժամանակ			ժամանակ		
ներկա	սահմանական		ներկա	սահմանական ստորադասական	
անցյալ	սահմանական		անցյալ	սահմանական ստորադասական	
	հրամայական			հրամայական	

Ժամանակի մեջ երկու և կես հազարամյակ (թերևս և ավելի) միմյանցից հեռու գտնվող երկու լեզուներ՝ համակարգի ընդհանուր կառուցվածքում ցուցաբերում են չափազանց ուշագրավ մերձավորություն: Երկու լեզուներն էլ բայափոխների կերպային տարբերակումներ չունեն. խեթերենը ներկայացնում է ամենապարզ կառուցվածքը՝ ներկա և անցյալ ժամանակներ սահմանակում և հրամայական, գոթերենն ունի նաև ստորադասականի ներկա և անցյալ (բայց չեզոք՝ կրավորականում ստորադասականն անցյալ ժամանակածն չունի): Խեթերենում բոլոր ժամանակածները միևնույն բայափոխից են կազմվում, գոթերենում ներկան և հրամայականը կազմվում են մեկ բայափոխից, անցյալը՝ մեկ այլ:

Խոնարհման համակարգի կառուցվածքից (ճարտարապետությունից) բացի կասկածի է ենթարկվել նաև բայափոխների՝ ըստ կերպերի բաշխման դրույթը: Այսպես՝ Վիլյամ Շմալստիգն իր «Հնդեվրոպական լեզվաբանություն» աշխատության՝ բային նվիրված բաժնում գրում է. «Մենք հիմքեր ունենք ենթադրելու, որ սանսկրիտի եւ հին հունարենի բայական բարդ կառուցվածքը երկրորդական է: Տարբեր հիմքերի բաշխումը ներկայի, առօրինի եւ պերֆեկտի միջեւ ներկայանում է որպես ինչ-որ նոր երեւույթ»¹:

Դեռևս 120 տարի առաջ Կարլ Բրուգմանը նշում է, որ որպես բայափոխների դասակարգման ուղեցույց գերադասելով իմաստը ձևին, արդյունքում

¹ W. Schmalstieg. Indo-European Linguistics. A New Synthesis. University Park and London, 1980, p 88 (Քաղում ենք Новое в лингвистике, вып. XXI, М., "Прогресс", 1988, с.262):

ունենում ենք այն, որ «ստուգաբանորեն և ձևաբանորեն մերձավոր ձևերը միմյանցից հեռանում են և ստուգաբանորեն և ձևաբանորեն տարբեր ձևերը միավորվում են (ընդգծումն իմն է – Վ.Ջ.): Բայաձևերի կիրառությունների խնդիրը շարահյուսությանն է վերաբերում: Արդ, այստեղ մենք կբնենք հնդեւրոպական բայի կառուցվածքը և զուգահեռ կնշենք այն ամենը, որ ձևաբանորեն նույնական (նման) է. և ձևական մյուսի դասակարգման ու ամվանման ընթացքում չենք առաջնորդվի ձևերն ըստ իրենց գործառնայի կամ շարահյուսությանը բնորոշ եզրերով նկարագրելով, բացառությամբ այն դեպքերի, երբ այն հնարավոր է առանց ձևն իբրև այդպիսին անտեսելուց, և առանց ընդունված տերմինաբանությունն ու այս գրքի առարկայի հիմնական կառուցվածքը շփոթելու»¹:

Բայահիմքերի (բայաձևերի) ձևային կամ ձևաբանական քննության սկզբունքների Բրուգմանի ներկայացումը ժամանակակից հնչեղություն ունի: Հայտնի է, որ ձևն ու իմաստը (արտահայտության և բովանդակության պլանները) փոխկապակցված են լեզվում, սակայն Բրուգմանի առաջարկած սահմանազատումը անհրաժեշտ է ոչ միայն ձևերի առանձին քննության և դրանց ձևային հարաբերակցության որոշման համար, այլև դրանց (ձևերի) իմաստային փոփոխություններին հետևելու առումով:

Սանսկրիտում և հին հունարենում անցյալ անկատարի (imperfect, ներկայի հիմք) և անցյալ կատարյալի (aorist, աորիստի հիմք) մի շարք ձևերի նույնական կազմությունը Բրուգմանը համարում է ներկայի և աորիստի հիմքերի միջև երբևէ իրական տարբերությունների բացակայության ապացույց: «Հաճախ նույն ձևը անցյալ անկատար է մի լեզվում և աորիստ մեկ այլ լեզվում. **é-gene-t* (√*gen-* 'gignere') և **é-dnke-t* (√*denk-* - 'bite') անկատար են սանսկրիտում (*ájanat*, *ádaśat*) և աորիստ են հունարենում (*'εγενετο*, *'ε-δακε*)», գրում է Բրուգմանը: Առավել ուշագրավ է մի և նույն լեզվում մի և նույն ձևի երկու տարբեր իմաստներ (կիրառություններ) ունենալու հանգամանքը, ինչպես՝ սանս. *á-pā-t*՝ խմում էր՝ *pā-ti* ներկայի անկատարն է, *pība-ti* ներկայի աորիստը²:

Բրուգմանը նշում է նաև մի կողմից՝ ներկայի, մյուս կողմից՝ ապառնիի (ժամանակին դրա հնդեւրոպական նախատիպ լինելը քննարկվել է համեմատական քերականության մեջ), սիզմատիկ աորիստի (s-աորիստի) և հա-

¹ K.Brugmann, Grundriss der vergleichenden Grammatik der indogermanischen Sprachen, zweiter Band: zweite hälfte: Strassburg. 1892. ss. 868-871.

² Անդ, ss. 872-873:

րակատարի (perfect) հիմքերի միջև ձևային տարբերությունների բացակայությունը¹:

Հ.-ե. բայահիմքերի ձևաիմաստային այս հակասականությունները նկատված են ուրիշների կողմից ևս²:

Վերոշարադրյալից հետևում է, որ հ.-ե. խոնարհման ընդունված համակարգը վերանայելու անհրաժեշտություն կա: Կարծում եմ, այն պետք է ընդգրկի նախ՝ յուրաքանչյուր հ.ե. լեզվի բայական հիմքակազմության և տարակազմ բայահիմքերի հարաբերակցության ձևային քննությունը: Այս խնդրի առաջին մասի իրականացման հիմքն արդեն կա, այն է՝ հնդեվրոպաբանության մեջ բայահիմքերի, դրանց կազմության և գործառույթի մասին ընդհանուր ընդունելություն գտած տեսակետների համադրմամբ Գ. Բ. Ջահուկյանի առաջարկած՝ հ.-ե. բայահիմքերի ընդհանրական կապարները՝ ըստ կերպերի (models).

ա) ներկա (անկատար. infect) - $(R+)(R+if)(+sf_1)(+sf_2)(+t)$.

բ) կատարյալ (aorist) - $(R+)(R+sf_1)(+sf_2)(+t)$.

գ) հարակատար (perfect) - $(R+)R^3$:

¹ Անդ, ss 873-874:

² “Աորիստի եւ ներկայի համակարգերի միջև սերտ կապը հաստատվում է այն փաստով, որ աորիստի հիմքերի որոշ տիպեր իրենց ձևով նույնական են ներկայի հիմքերի որոշ տիպերին: Այսպես է իրերի վիճակը արձատական աորիստում (nkar և այլն). որ կազմվում է նույն ձևով. ինչպես արձատական դասի անկատարը (nhan և այլն). և -a-ով աորիստում (nrūhat և այլն). որը մնան է վեցերորդ դասի անկատարին (ntudat և այլն): Այս երկու տիպի կազմությունների աորիստային կամ անկատարային բնույթը որոշվում է ոչ թե նրանց ձևով, այլ մի և նույն հիմքից ներկայի արտածման հնարավորությամբ”: Burrow, T. The Sanskrit Language, 2nd ed. Glasgow, The University Press, 1965, pp. 295-296. (Քաղում ենք ըստ Новое в лингвистике, вып. XXI, М., “Просвек”, 1988, с.264 = W. Schmalstieg. Indo-European Linguistics. A New Synthesis. University Park and London, 1980): Ավելացնենք, որ նույնատիպ անկատարի եւ աորիստի տարբերակումը՝ նույն այդ հիմքից ներկայի կազմության հնարավորությամբ կամ անհնարինությամբ պայմանավորելը, հատուկ է նաև հին հունարենին: «Իմպերֆեկտի եւ աորիստի միջև տարբերությունը *ձեռայնորեն* կախված է ներկայի բնույթից: Այսպես. ε-ֆդ-ν՝ *ասում էր*՝ կոչվում է ֆդ-μ բայի իմպերֆեկտ. իսկ ε-σθ-ν՝ *կանգնեց*՝ երկրորդ աորիստ է. որովհետև այն տարբեր ժամանակային հիմք ունի քան ՚ιστημι ներկան»: Herbert Weir Smyth. Greek Grammar for Colleges, p.175, §553.

³ Գ.Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան, 1987, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, էջ 43-44: Ի դեպ. որքան մեզ հայտնի է սա հ.ե. բայահիմքերի կաղապարման (ձևայնացման) առաջին և միակ փորձն է:

Հիմք ընդունելով Ջահուկյանի այս կադապարները, ինչպես նաև հ.ե. խոնարհման համակարգի և բայահիմքերի մասին արտահայտված տեսակետներն ու, մասնավորապես, Բրուգմանի չափազանց մուրթ դիտարկումներն այս հարցում, առաջարկում ենք հ.ե. բայահիմքի հետևյալ ամենաընդհանրական կադապարը՝

$$(R+)(R)(+if)(+sf_1)(+sf_2)(+t),$$

ուր փակագծերում ներառված R-ն կրկնավոր բայահիմքի առաջին վանկն է (արմատի մասնական կամ ամբողջական կրկնավորմամբ), երկրորդ (փակագծերից դուրս) R-ն բայարմատն է. այն հիմնական բաղադրիչը, առանց որի բայահիմքը չի կարող գոյություն ունենալ. դա բայահիմքի կորիզն է: Ապա հետևում են ամանցները (-if- միջնածանց, -sf₁- առաջնային վերջածանց, -sf₂- երկրորդային վերջածանց: Այս կառույցները եզրափակում է -t- բնի ձայնավորը (thematic vowel)¹: Հնդեվրոպաբանության մեջ ընդունված է բայահիմքերը բաշխել նախ ըստ բնի ձայնավորի առկայության կամ բացակայության (անբուն – athematic և բնավոր – thematic հիմքեր: Մենք նախընտրում ենք առաջնորդվել բառակազմական մյուս եղանակներով՝ կրկնավորում, ամանցում կալին: Ըստ այսմ հ.ե. լեզուներում (կամ հ.ե. նախալեզվում) հնարավոր էին (որքան թույլ են տալիս եզրակացնել առկա փաստերը) հետևյալ տիպի բայահիմքեր (յուրաքանչյուր դասում առանձնացնում են անբուն և բնավոր ենթադասերը).

Ա. պարզ-արմատական.

1. պարզ-արմատական՝ անբուն - R (= 0 + R + 0 + 0 + 0 + 0). ընդգրկում է Բրուգմանի դասակարգման I դասը [Brugmann, ss. 887-912].

2. պարզ-արմատական՝ բնավոր - R + t (= 0 + R + 0 + 0 + 0 + t). ընդգրկում է Բրուգմանի դասակարգման II, և թերևս IX, X դասերը [Brugmann, ss. 913-930, 947-950, 951-966].

Բ. կրկնավոր-արմատական.

1. կրկնավոր-արմատական՝ անբուն – R + R (= R + R + 0 + 0 + 0 + 0). ընդգրկում է Բրուգմանի դասակարգման III, V, VII դասերը [Brugmann, ss. 930-938, 941-943, 945-946].

2. կրկնավոր-արմատական՝ բնավոր – R + R + t (= R + R + 0 + 0 + 0 + t). ընդգրկում է Բրուգմանի դասակարգման IV, VI, VIII, և թերևս IX, XI դասերը [Brugmann, ss. 938-941, 943-945, 946-947, 950 § 577, 966-968].

¹ Թվում է, որոշ կառույցներում վերջածանցներին կարող է նախորդել ինչ-որ (բնի²) ձայնավոր. հմտ. ստորև Ե3 ենթադասը (պարզ-արմատական-բնավոր² / առաջնային ամանցավոր²-երկրորդային վերջածանցավոր):

Գ. միջնածագավոր.

1. միջնածագավոր՝ անբուն. – $R + if (= 0 + R + if + 0 + 0 + 0)$. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XV դասը [Brugmann, s. 993].

2. միջնածագավոր՝ բնավոր. – $R + if + t (= 0 + R + if + 0 + 0 + t)$. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XVI դասը [Brugmann, ss. 993-1006].

Դ. առաջնային վերջածանցավոր.

1. պարզ-արմատական - առաջնային վերջածանցավոր՝ անբուն – $R + sf_1 (= 0 + R + 0 + sf_1 + 0 + 0)$. [վերջածանցների իրացումներն են՝ -n- / -nā- / -nə-, -neų / -nu-, -s- / -es- / -əs-, -sko- / -esko-, -to- / -t-, -dho- / -do-]. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XII, XVII, XIX, XXII, XXIV, XXV դասերը [Brugmann, ss. 972-979, 1006-1014, 1019-1020, 1031-1037, 1038-1045, 1045-1054].

2. պարզ-արմատական - առաջնային վերջածանցավոր՝ բնավոր – $R + sf_1 + t (= 0 + R + 0 + sf_1 + 0 + t)$. [վերջածանց + բնի ձայնավոր իրացումներն են՝ -no- / -n no- / -eno- / -ono-, -neų / -o / -nu-o-, -so- / -eso-]. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XIII, XIV, XVIII, XX դասերը [Brugmann, ss. 979-986, 986-992, 1014-1018, 1020-1026].

3. կրկնավոր - առաջնային վերջածանցավոր՝ բնավոր – $R + R + sf_1 + t (= R + R + 0 + sf_1 + 0 + t)$. [վերջածանցների իրացումներն են՝ -so- / -eso-, sko-]. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XXI, XXIII դասերը [Brugmann, ss. 1027-1029, 1037-1038].

Ե. երկրորդային վերջածանցավոր. [իրացումն է -i o- -ij o-]

1. պարզ-արմատական - երկրորդային վերջածանցավոր՝ անբուն. – $R + sf_2 (= 0 + R + 0 + 0 + sf_2 + 0)$. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XXVI, XXXI, XXXII դասերը [Brugmann, ss. 1059-1083, 1104-1141, 1141-1169].

2. կրկնավոր - երկրորդային ածանցավոր – $R + R + sf_2 (= R + R + 0 + 0 + sf_2 + 0)$. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XXVII դասը [Brugmann, ss. 1083-1085].

3. պարզ-արմատական - բնավոր (առաջնային վերջածանցավոր) - երկրորդային վերջածանցավոր – $R + t + sf_2 (= 0 + R + 0 + sf_1 + t + sf_2 + 0)$. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման XXVIII դասը [Brugmann, ss. 1085-1089].

4. պարզ-արմատական - առաջնային ածանցավոր - երկրորդային ածանցավոր – $R + sf_1 + sf_2 (= 0 + R + sf_1 + 0 + sf_2 + 0)$. ընդգրկում է Բրուզմանի դասակարգման, XXIX, XXX դասերը [Brugmann, ss. 1089-1090, 1090-1102].

Հ.-ե. բայահիմքերի զուտ ձևային սկզբունքով կատարված այս դասակարգումը հիմնված է առավելապես սանսկրիտի և հունարենի լեզվական տվյալների վրա: Առանձին լեզուներում բայահիմքերի ձևային քննությունները կարող են զգալի ճշգրտումներ մտցնել առաջարկված դասակարգման մեջ:

Բայաձևի երկրորդ բաղադրիչը թեքույթն է. ի վերջո հենց թեքույթն է կոնկերտացնում բայահիմքի քերականական իմաստը՝ լինի այն դիմա-թվային, եղանակա-ժամանակային, վերջինի հետ կապված մաս կերպային, մասամբ՝ բայասեռային: Ըստ այսմ՝ բայահիմքերի ձևային դասակարգմանը զուգահեռ և դրանից անկախ անհրաժեշտ է ձևայնացնել յուրաքանչյուր լեզվի խոնարհման համակարգի քերակարգերի (ըստ Բրուգմանի՝ իմաստների կամ գործառույթների) նկարագրությունը, քննել այդ քերակարգերի հարաբերակցությունը: Սա խնդրի առավել դժվար և ժամանակատար մասն է: Որպես սկիզբ կարելի է օգտագործել այդ քերակարգերի առկա ցանկերը՝ բացահայտելու համար առանձին քերակարգերի և բայահիմքերի առանձին տիպերի հարաբերակցությունը:

Հ.-ե. գրականության մեջ նկատված են մույնաձև տարազան քերակարգերի, ինչպես նաև միևնույն քերակարգի բազմաձև դրսևորումներ: Այս խնդիրը, մեր կարծիքով, պետք է լինի նախ՝ հ.-ե. առանձին լեզուների բայական համակարգերի համակարգված քննության առարկան, հուսկ ապա՝ ստացված արդյունքների համադրության ու քննության հիման վրա հ.-ե. նախալեզվի՝ 'տրոհմանն' անմիջապես նախորդող շրջանի բայական համակարգի վերականգնումը:

ՂԱՐԱՔԱՂԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐՔԱՌՆԵՐԻ ԱՐԴԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ԸՍՏ Գ. ՋԱՀՈՒԿՅԱՆԻ ԲԱԶՍԱՀԱՏԿԱՆԻՇ-ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

Ղարաքաղի բարբառը հայերենի ամենատարածված և կենսունակ բարբառներից է, որի մասին առաջին հիշատակությունը թողել է 8-րդ դարի քերական Ս.Սյունեցին: Այն Արցախում, ՀՀ-ում և աշխարհի տարբեր երկրներում, հատկապես ՌԴ-ում և Սիջին Ասիայի հանրապետություններում բնակվող շուրջ 500 000 հայերի մայրենի խոսվածքն է: Սակայն պատմական հանգամանքների բերումով տարբեր ժամանակաշրջաններում Ղարաքաղի տարածքում բնակություն են հաստատել հայ ազգագրական ուրիշ շրջաններից գաղթած հայեր, որը հանգեցրել է տարածաշրջանում այլ բարբառների գործածության: Հատկապես նշանակալից է 1828-30թթ. Պարսկաստանի որոշ գավառների հայ բնակչության մի մասի ներհոսքը Ղարաքաղ: 1827 թ., ռուսական զորքերի կողմից Երևանի և Նախիջևանի խանությունների գրավումից հետո, ռուսական արքունիքում և հայ քաղաքական շրջաններում առաջանում է Պարսկաստանի հայ բնակչությանը Հայաստան տեղափոխելու խնդիրը:

Գնդապետ Եղիազար Լազարյանին Ներսես Աշտարակեցու գրած մի նամակում Թուրքմենչայի պայմանագիրը կնքելուց առաջ ասվում է. «Այլ այսու ամենայնիւ, զոր մեք զիտեմք ոչ անդէպ համարիմք յայտնել, զի փրկութիւն հայրենեաց Հայաստանի եղիցի ապահով, յորժամ քազմասցեն ի Հայաստան ի գաւառն Արարատեան, ի Նախիջեւան, ի Փայտակարան եւ յամենայն յեզերս սահմանաց այնոցիկ ազգք հայոց»¹:

Ինչ վերաբերում է ցարական արքունիքին, ապա նա ցանկանում էր, Արևելյան Հայաստանում հայ խիտ բնակչություն կենտրոնացնելով, ապահով հենարան ստեղծել իր համար: Դեռևս Թուրքմենչայի բանակցությունների նախագծում նախատեսված է եղել. «Ռուսաստանի էական օգուտի համար, հանգստություն պահպանելու և լեռնականների, թուրքերի ու պարսիկների հարձակումներից պաշտպանվելու համար անհրաժեշտ է սահմանամերձ, գլխավորապես նոր նվաճված մարզերում, բնակեցնել մեծ թվով առավելապես հայերից՝ որպես ռուսական գահին առանձնապես նվիրվածների»²:

Նույն նախագծի երկրորդ կետում ասված է. «Դաշնագրում պարտադիր կանոն հաստատել, որպեսզի այդպիսի գաղթը չարգելվի, որովհետև

Էջմիածնի Մայր աթոռը հայ ժողովրդի կենտրոնն է, և Նախիջևանի ու Երևանի մարզերը Էջմիածնի հետ միասին կազմում են մախկին հայկական բազմավորության հիմքը, որա համար էլ այդ ժողովուրդը բնակվելու համար իրավունք ունի հավաքվելու իր հայրենիքում, որտեղ յուրաքանչյուրի և բոլորի անվտանգությունը պետք է ապահովվի»³:

Ռուսական դիվանագիտության համար դժվար էր համոզել պարսկական իշխանություններին՝ թույլ տալ պարսկահայերին գաղթել Հայաստան, քանի որ նրանք չէին ուզում հեշտությամբ ազատել հազարավոր հայ հարկատու գյուղացիներին: Այդ հարցում մեծ էր ռուս նշանավոր գրող, դիվանագետ Ա.Գրիբոյեդովի դերը, որի առաջարկությամբ և անմիջական ջանքերով Թուրքմենչայի պայմանագրի 15-րդ կետով պարսկահայերին թույլատրվում է գաղթել Արևելյան Հայաստան:

Վերջապես 1828 թ. սկսվում է պարսկահայության ներգաղթը: Նույն և հաջորդ տարիներին Ղարաղաղի հայ բնակչության մի մասը վերաբնակություն է հաստատում Ղարաբաղի Հաղլուրթի շրջանի Խծաբերդ, Դոլանլար, Շաղախ, Մեկիջանլու, Խրմանջուղ, Աղբուլաղ և Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ գյուղերում: Խոյի գավառից գաղթածները հիմնադրում են Ասկերանի շրջանի Մեհտիշեն գյուղը, Ուրմիայի գավառից գաղթածները՝ Մարտակերտի շրջանի Վերին Չալու և Ներքին Չալու, իսկ Մարաղայից գաղթածները՝ Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղերը:

Նշված տարածքներից Ղարաբաղ տեղափոխվածների մայրենի խոսվածքներն էլ բարբառագիտական ուսումնասիրություններում ներկայացվել են որպես տարբեր բարբառներ: Հր.Աճառյանը Ղարաբաղի բարբառը հատկացրել է *-Ում* ճյուղին, Խոյի և Մարաղայի բարբառները՝ *-Ել* ճյուղին: Հետագայում Ա.Ղարիբյանը, առանձնացնելով *-Ս* ճյուղը, վերջինիս մեջ ընդգրկեց Հաղլուրթի, Քեյվան-Շաղախի և Ուրմիայի բարբառները՝ դրանք առանձին բարբառներ համարելով նաև ըստ հնչյունական դասակարգման:

1966 թ. հրատարակվեց Կ.Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» արժեքավոր աշխատությունը, որի մեջ հեղինակը հանգամանորեն ներկայացրել է Ղարաբաղի բոլոր խոսվածքների հնչյունաբերականական առանձնահատկությունները: Հեղինակը առանձին բաժին է նվիրել բարբառային խմբավորումներին՝ տարածքում առանձնացնելով 6 բարբառ՝ բուն Ղարաբաղի (*-Ում* ճյուղ), Մեհտիշենի (*-Ում* ճյուղ), Հաղլուրթի (*-Ս* ճյուղ), Շաղախ-Խծաբերդի (*-Ս* ճյուղ), Չալվի (*-Ս* ճյուղ), Մարաղայի (*-Լ* ճյուղ): Բնականաբար, մնան որակումները, հիմնված լինելով միահատկանիշ դասակարգման վրա, չէին կարող հաշվի առնել խոսվածքների իրական վիճակը, որի հետևանքով էլ մեկ կամ մի քանի հատկանիշների տարբերությունը հանգեցրել է դրանք առանձին բարբառներ համարելուն: Ահա

թե ինչու հայերենի բարբառների դասակարգման և բարբառային միավորների հստակ առանձնացման հարցում անգերազանցելի է Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ-վիճակագրական դասակարգման սկզբունքը⁴: Դասակարգման հիմքում դնելով 100 տարբերակիչ հատկանիշ և այդ սկզբունքը կիրառելով 120 բարբառախոս վայրի նկատմամբ՝ մեծ լեզվաբանը վերջնականապես որոշել է դրանցից յուրաքանչյուրի կարգավիճակը՝ 0,5-ից մինչև 11 տարբերակիչ հատկանիշ ունեցող միավորները որակելով խոսվածքներ, 11,5-ից մինչև 22-ը՝ ենթաբարբառներ, 22,5-ից մինչև 44-ը՝ բարբառներ, 44,5-ից բարձրը՝ բարբառախմբեր: Ելնելով այդ սկզբունքի համեմատ՝ պետք է ասել, որ Հաղրուքի խոսվածքը բուն Ղարաբաղի բարբառից ունի ընդամենը 16 տարբերակիչ հատկանիշ, ասել է թե՛ այն ոչ թե բարբառ, այլ ենթաբարբառ է: Հարկ է նշել նաև, որ Գ.Ջահուկյանը Ղարաբաղի բարբառի խոսվածքների համեմատության համար հիմք է ընդունել Վրաստանի Բողնիս-Խաչեն գյուղի խոսվածքը՝ հաշվի առնելով այն, որ վերջինիս կրողների նախնիները, շուրջ 200 տարի առաջ գաղթելով Ասկերանի շրջանի Սեյդի շեն (Խաչեն) գյուղից, լեզվական այլ միջավայրում առավել անաղարտ են պահել մայրենին:

Իրականում Հաղրուքի ենթաբարբառի տարբերությունները հարևան Մարտունու շրջանի խոսվածքներից ավելի քիչ են (մեր հաշվումներով՝ 13), որը հիմք է տալիս ասելու, որ ենթաբարբառը աստիճանաբար կորցնում է առանձնահատկությունները և խոսվածքի վերածվելու միտում ունի:

Պարսկաստանի Ղարաղաղի գավառից գաղթած և Հաղրուքի շրջանի վերոհիշյալ վեց գյուղերում վերաբնակվածների խոսվածքը, որ Ա.Ղարիբյանը կոչել է Քեյվան-Շաղախի, իսկ Կ.Դավթյանը՝ Շաղախ-Խծաբերդի բարբառ, Հաղրուքի ենթաբարբառի համեմատ ունի ընդամենը չորս տարբերակիչ հատկանիշ և պարզապես նրա խոսվածքն է: Ինչ վերաբերում է Մարտակերտի շրջանի Ջանյաթաղ գյուղի խոսվածքին, ապա վերջինս լեզվական օրինաչափություններով այլևս չի հիշեցնում մայրենի՝ Ղարաղաղի խոսվածքը և գրեթե նույնացել է Ղարաբաղի բարբառի Մարտակերտի շրջանի խոսվածքներին:

Բարբառային այլ միջավայրերից եկած և առանձին գյուղերով Ղարաբաղում վերաբնակվածներից մայրենի խոսվածքները առավել անաղարտ են պահել չայլուեցիները (Ուրմիա) և մարաղացիները (Մարաղա): Սա պայմանավորված է նրանց գյուղերի՝ իրար սահմանակից լինելու և բնակչության թվով Ղարաբաղի բարբառը կրող հարևան գյուղերին գերազանցելու հանգամանքով: Գ. Ջահուկյանի դասակարգման համաձայն՝ Ուրմիան և Մարաղան նույն՝ Խոյ-Մարաղայի բարբառի խոսվածքներն են, ուստի Մարտակերտի շրջանի Վերին Չայլու, Ներքին Չայլու և Մարաղա գյուղե-

րի խոսվածքները նույնպես պետք է ներառել այդ բարբառի մեջ: Դժբախտաբար, արցախյան պատերազմի ընթացքում բազմաթիվ գյուղերի հետ ավերվեցին մասն առ մաս գյուղերը, որի հետևանքով հազարավոր բնակիչներ բնակություն հաստատեցին ԼՂՀ, ՀՀ և արտերկրի տարբեր բնակավայրերում:

Դիշտ է, Մարտակերտից ոչ մեծ հեռավորության վրա՝ Ստեփանակերտ-Մարտակերտ մայրուղու հարևանությամբ, հիմնադրվել է Նոր Մարտա գյուղը, սակայն այդտեղ վերաբնակված 109 ընտանիքներից միայն 25-ն է Մարաղայից, 74-ը տեղափոխվել է Մարտակերտ քաղաքից, 10-ը՝ այլ վայրերից, որը փաստում է, որ Խոյ-Մարաղայի բարբառը Արցախի տարածքում գոյատևման հեռանկարներ չունի:

Հետաքրքիր պատկեր է ներկայացնում Մեհտիշենի խոսվածքը: 1829 թ. գաղթելով Պարսկաստանի Խոյի գավառից և հաստատվելով Արցախի Ասկերանի շրջանում՝ նախկին խոյեցիները նոր միջավայրի խոսվածքների ազդեցությամբ էապես փոխել են մայր բարբառը: Գ. Ջահուկյանի դասակարգման համաձայն՝ Մեհտիշենը Խոյի խոսվածքի համեմատ ունի 36,5, իսկ Ղարաբաղի Բոլնիս-Խաչենի խոսվածքի՝ 25 տարբերակիչ հատկանիշ, որից ելնելով էլ հեղինակը Մեհտիշենը համարել է առանձին բարբառ:

Մեր կարծիքով Մեհտիշենի խոսվածքն այլևս բարբառային սահմաններ գծող տարբերություններ չունի: Նախ՝ նրա կարգավիճակը որոշելու համար ամենից առաջ պետք է համեմատել հարևան գյուղերի խոսվածքների հետ, քանի որ Բոլնիս-Խաչենը գտնվում է Վրաստանի տարածքում: Նույն՝ Ասկերանի շրջանի Հարավ գյուղի խոսվածքի համեմատությամբ տարբերությունների թիվը 19 է: Մյուս կողմից, Գ.Ջահուկյանը Մեհտիշենի խոսվածքի տվյալները հիմնականում քաղել է Կ.Դավթյանի՝ 1966 թ. հրատարակած «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունից, որը փաստորեն հեղինակի՝ 1948 թ. պաշտպանած ատենախոսությունն է, և որի նյութերը հիմնականում Կ.Դավթյանը հավաքել է 20-րդ դարի 20-ականներից սկսած: Արդի շրջանում Մեհտիշենին հատուկ որոշ առանձնահատկություններ արդեն իսկ վերացել են, ինչպես՝ *-իս* -ով անկատար ներկայի կազմությունը, ժխտական դերբայի հատուկ ձևերի առկայությունը, մի քանիսն էլ գործածվում են Ղարաբաղի բարբառի ձևերին զուգընթաց, ինչպես՝ *ց*-ով բացառականը, *ք*-ով վաղակատարը, կամ էլ հատուկ են միայն հին սերնդի խոսվածքին, մինչդեռ երիտասարդների խոսվածքը ավելի մոտ է հարևան գյուղերի խոսվածքներին: Այս ամենից ելնելով՝ կարելի է ասել, որ Մեհտիշենի խոսվածքը արդեն իսկ վերածվել է Ղարաբաղի բարբառի ենթաբարբառի:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի տարածքում արդի դարաշրջանում համատարած գործածություն ունի Ղարաբաղի բարբառը, որի ենթաբար-

բառներն են Հաղորդի և Մեհտիշենի խոսվածքները: Խոյ-Մարաղայի բարբառը հանրապետության տարբեր բնակավայրերում ապրող առաձին ընտանիքների և անհատների սեփականությունն է միայն և գտնվում է անհետացման ճանապարհին: Հարկ է նշել նաև որ Ղարաբաղի բարբառն իր հերթին հետզհետե ավելի ու ավելի է ենթարկվում գրական հայերենի խիստ ազդեցությանը և զարգացման ու գոյատևման մեծ հեռանկարներ չունի:

Ծանոթագրություններ

1. Տե՛ս Վ.Ա.Պարսամյան, Գրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1947, էջ 107:
2. Տե՛ս նույն տեղը, էջ 248:
3. Տե՛ս նույն տեղը, էջ 248-249:
4. Տե՛ս Գ.Բ. Ջախուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972:

ԽՈՍՔԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՍԱՄԻՆ

Մեր լեզվաբանական գրականության մեջ խոսքի դրսևորման ձևերի (արտահայտության եղանակների) մասին տեսությունը բավականաչափ հստակ է ու ամբողջական: Առանձնացված են դրանց հիմնական տեսակները (բանավոր և գրավոր), բացատրված ու զնահատված են դրանցից բխող կամ դրանց առնչակից իրողությունները (ներքին և արտաքին խոսք, հեղինակային և մեջբերվող խոսք, ընթերցանություն, մենախոսություն, երկ-խոսություն և այլն), հանգամանորեն վերլուծված են ինչպես բանավոր խոսքի հնչարտասանական բազմաբնույթ հատկանիշները, այնպես էլ գրային միջոցներով (գրավոր) դրսևորված խոսքի առանձնահատկությունները, դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերակիչ գծերը:

Այս առումով գրական լեզվի շրջանակներում խոսքի արտահայտության եղանակներին հատուկ անդրադառնալու անհրաժեշտություն չկա: Բայց իրավիճակը փոխվում է, երբ քննության նյութ է դառնում խոսակցական լեզուն: Այս դեպքում արդեն անհնար է դառնում շրջանցել մի շարք հայտնի իրողություններ, որոնք վերաբերում են տերմինային բազմազանությանը, ըմբռնումների տարբերություններին և խոսքի դրսևորման ձևերի զնահատությանը: Առանց որոշակի կոնկրետացման և սահմանազատման՝ օգտագործվում են տարբեր անվանումներ՝ խոսակցական լեզու, բանավոր լեզու, ժողովրդա-խոսակցական լեզու, գրական-խոսակցական լեզու, գրական լեզվի խոսակցական տարբերակ, առունին խոսք, առօրյա խոսք, առօրյա-խոսակցական լեզու և այլն: Տերմինային այսպիսի բազմազանությունն, անշուշտ, հիմնված է տարբեր ըմբռնումների վրա, որոնք կարելի է դասակարգել հետևյալ հիմնական խմբերում.

ա) առավել տարածված «խոսակցական լեզու» տերմինը օգտագործվում է տվյալ լեզվով խոսելու կամ չխոսելու հանգամանքի հաշվառմամբ. խոսակցական համարվում է այն լեզուն, որով խոսում են (ի հակադրություն այն լեզուների, որոնք մեռած են, կամ որոնցով չեն խոսում):

բ) Նախորդ իրողությամբ պայմանավորված՝ նույն տերմինով է անվանվում նաև բանավոր խոսքը, քանի որ որևէ լեզվով խոսելը իրացվում է որպես բանավոր հաղորդակցություն:

գ) Առօրյա-խոսակցական լեզու է համարվում նաև լեզվական հաղորդակցության այն դիրքը, որը միջին դիրք է գրավում նորմավորված գրական լեզվի և բարբառների համեմատությամբ՝ տեղական ավելի կամ պակաս երանգավորմամբ:

դ) Հայտնի է նաև գործառական ըմբռնումը, որի համաձայն՝ առօրյա կամ խոսակցական է անվանվում գրական լեզվի գործառական ոճերից մեկը՝ ի տարբերություն գործառական մյուս ոճերի:

Կան ևս մի քանի մասնավոր մեկնություններ, որոնց անդրադառնալու հարկ չկա, քանի որ այս կամ այն չափով լրացնում կամ առնչվում են արդեն վերը թվարկածներին:

Մոտեցումները նույնն են նաև արտասահմանյան լեզվաբանության մեջ: Այդ պատճառով էլ, օգտվելով հողվածի ընձեռած հնարավորություններից, կփորձենք անդրադառնալ խոսքի դրսևորման ձևերի հարցին և համառոտակի ներկայացնել մեր նկատառումները: Դիտարկման առարկայական հիմքը այն տեսակետն է, ըստ որի խոսակցական լեզվի բնորոշումը կատարվում է խոսքի գրավոր և բանավոր ձևերի զուգադրության միջոցով՝ գրեթե հավասարության նշան դնելով խոսակցական լեզվի և բանավոր խոսքի միջև:

Այս տեսակետի առաջին մասը մեզ համար ևս միանգամայն ընդունելի է. խոսակցական լեզվի ուսումնասիրության համար, իսկապես, բավականաչափ կարևոր է նրա ու բանավոր խոսքի փոխհարաբերությունների վերլուծությունը: Վերջինիս տարբեր հատկանիշներ տարբեր չափով բնութագրական են նաև խոսակցական լեզվին (մանավանդ վերջինիս բանավոր դրսևորումների դեպքում):

Մեր առարկությունը այս տեսակետի մյուս դրույթին է վերաբերում՝ խոսակցական լեզվի և բանավոր խոսքի նույնացմանը, հավասարեցմանը:

Միանգամից ասենք, որ ամեն մի բանավոր խոսք դեռևս խոսակցական լեզվի փաստ չէ: Ճիշտ է, առօրյա խոսքը մեծ մասամբ դրսևորվում է բանավոր ձևով, բայց այն չի նույնանում ընդհանրապես բանավոր խոսքի հետ: Չէ՞ որ բանավոր խոսքը շատ ավելի լայն հասկացություն է, այն իր մեջ կարող է ընդգրկել թե՛ գրական բանավոր խոսքը, թե՛ բարբառը, թե՛ ժարգոնն ու հասարակաբանությունը և այլն: Հենց միայն գրական բանավոր խոսքը ունի տեսակներ (դասասխոսություն, զեկուցում, հրապարակային ելույթ, բեմական խոսք և այլն), որոնց հատկացումը խոսակցական լեզվին ճիշտ չի լինի: Եվ ընդհանրապես, նպատակահարմար չէ վերը թվարկած իրենց բնույթով, արժեքով ու գործառությամբ միանգամայն տարբեր լեզվական իրողությունները միավորել մեկ հասկացության մեջ՝ լրացուցիչ անհարկի դժվարություններ ստեղծելով միասնական լեզվաբանական ուսումնասիրության ենթարկելու տեսակետից:

Բացի այդ, դրանց նույնացումը բացառում է նաև խոսակցական լեզվի ոչ միայն բանավոր, այլև գրավոր ձևով հանդես գալու հնարավորությունը. հենց դրանից էլ բխում է կարծիքների տարբերությունը այս հարցում ևս:

Սի խումբ լեզվաբաններ առաջ են մղում այն տեսակետը, որ խոսակցական լեզուն կարող է ունենալ գրավոր դրսևորում, բայց կա նաև հսկանակ տեսակետը:

Ընդունելով սրանցից առաջինը՝ հարկ ենք համարում որոշ դիտարկումներ կատարել:

Իսկապես, ինչքանով է խոսակցական լեզվի գրավոր վիճակը արտացոլում նրա բանավոր վիճակը, ինչքանով է հարազատ նրա գոյության բուն (բանավոր) ձևին:

Ձանազան գրությունների փոխանակությունները, մասնավոր մամակները և այլն արդյո՞ք պատկանում են խոսակցական լեզվին:

Բնականաբար առաջին պլան է մղվում այն հարցը, թե խոսակցական լեզվի գլխավոր, որոշարկիչ հատկանիշները ինչպե՞ս են դրսևորվում այս դեպքում, ի՞նչ փոփոխություններ են կրում:

Մեր կարծիքով խոսակցական լեզվի գրավոր տեքստերի համար էլ պիտի ընդունել արտալեզվական երեք որոշարկիչները: Մի քանի խոսք դրանց մասին:

Անպատրաստության հատկանիշը խոսակցական լեզվի գրավոր դրսևորումներում այլ կերպ է արտահայտվում, քան բանավորում: Որքան էլ տվյալ գրությունը, մամակը գրված լինեն այդ սկզբունքով, այնուամենայնիվ դրանք ներառում են որոշակի պատրաստվածության տարրեր. դա նշանակում է, որ անպատրաստության հատկանիշը գրավոր դրսևորումներում խստիվ չի գործում: Խոսակցական լեզվի բանավոր դրսևորման դեպքում էլ միշտ չէ, որ այս հատկանիշը հանդես է գալիս խստիվ կերպով. հանպատրաստից շատ գեկուցումներ, ժողովներում, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հանպատրաստից շատ ելույթներ մույնպես ենթադրում են որոշակի պատրաստվածություն: Բացի այդ, չէ՞ որ գրական լեզուն էլ երբեմն անպատրաստվածության տարրերով է ներթափանցված լինում, սակայն դա չի համարվում նրա համար բնութագրական: Ուրեմն այն հանգամանքը, որ գրավոր առօրյա խոսք են ներթափանցում պատրաստվածության որոշ տարրեր, բոլորովին էլ չի նշանակում անպատրաստության չեզոքացում ընդհանրապես կամ առավել ևս՝ անպատրաստության հատկանիշի կորուստ: Այս դեպքում առավել նպատակահարմար է խորապես ուսումնասիրել այդ փոփոխությունները, գտնել ու բացահայտել այն օրինաչափություններն ու յուրահատկությունները, որոնք բնորոշ են խոսակցական լեզվին:

Անկաշկանդության (ոչ պաշտոնականության) հատկանիշը ևս որոշակի փոփոխություններ է կրում՝ կապված, թեկուզ, անպատրաստության հատկանիշի մասնակի փոփոխությունների հետ: Բայց այդ փոփոխությունները էականորեն տարբեր չեն և հնարավորին չափ համընկնում են բանավոր դրսևորումներին, ուրեմն խոսք չի կարող լինել նաև անկաշկանդության հատկանիշի չեզոքացման կամ կորստի մասին: Դարձյալ վճռական խոսքը պատկանում է հատկանիշի կրած փոփոխությունների մանրամասն քննությանը, համապատասխան յուրահատկությունների բացահայտմանը:

Ինչ վերաբերում է խոսակիցների անմիջական մասնակցության հատկանշին, ապա այս դեպքում ևս հարցը բավականին մուրր է. չէ՞ որ գրավոր խոսքը հիմնականում բացառում է հաղորդակցվողների անմիջական մասնակցությունը: Ուրեմն գրավոր խոսակցական լեզվում չեզոքանում², կորչում է այդ հատկանիշը: Մյնչև վերջնական պատասխան տալը պետք է նկատի ունենալ հետևյալը. նամակները, զանազան գրությունները ուղղված են լինում կոնկրետ որևէ մեկին կամ մի քանիսին և շատ դեպքերում դրանք գրված են լինում հաղորդակցության հակառակ կողմի անմիջական արձագանքը նկատի ունենալով, այսինքն՝ եթե սուպահովված չէ հաղորդակցվողների անմիջական մասնակցությունը, ապա առկա է իրադրային անմիջականության պատկերացումը: Այս դեպքում էլ շատ կարևոր է ուսումնասիրել և բացահայտել, թե այդ պատկերացումը ինչքանով է կարողանում փոխարինել բուն իրադրությանը, ինչպիսի առանձնահատկություններ են հանդես գալիս, երբ հաղորդակցվողների անմիջական մասնակցությունը ներկայանում է անմիջական մասնակցության պատկերացման ձևով:

Հարկ է ավելացնել նաև, որ գրավոր խոսակցական լեզվում էլ երբեմն հնարավոր է խոսակիցների անմիջական մասնակցությունը: Դրա օրինակ կարող է ծառայել, ասենք, դասախոսությունների ժամանակ միմյանց մոտ նստած երկու ուսանողների գրավոր հաղորդակցությունը. մույն բոլորի վրա հերթով գրելով իրենց ասելիքը՝ նրանք իրացնում են իրենց «խոսակցությունը», որը, կարելի է ասել, նրանց բանավոր առօրյա խոսքն է, միայն թե գրավոր դրսևորմամբ: Ընդ որում, այս դեպքում նրանք օգտվում են նաև բանավոր խոսքին հատուկ արտալեզվական այնպիսի միջոցներից, ինչպիսիք են դիմախաղը, զանազան շարժումները, որոնց կիրառությունը գրավոր լեզվի այլ դրսևորումներում հնարավոր չէ:

Գրավոր խոսակցական լեզվի գոյության օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ այդպիսի գրավոր տեքստերը լեզվական միավորների քննության, խոսքի կառուցման և այլ հատկանիշներով լեզվական հաղորդակցության մյուս բոլոր ոլորտներից առավել մերձենում են բանավոր առօրյա խոսքին:

Ընդունելով, որ խոսակցական լեզուն և բանավոր խոսքը մույնական չեն, և խոսակցական լեզուն էլ իր հերթին կարող է ունենալ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր դրսևորումներ, պետք է ասել, որ այդ հարցերը դեռևս խորագնին քննության կարիք ունեն: Առանձնապես կարևոր են մի կողմից խոսակցական լեզվի և բանավոր խոսքի, մյուս կողմից՝ խոսակցական լեզվի բանավոր և գրավոր դրսևորումների միջև եղած ընդհանուր և տարբերակիչ հատկանիշների բացահայտումը, վերլուծությունն ու գնահատումը:

Մուսաննա Տիոյան
Վ.Բրյուսովի անվան լեզվաբանական համալսարան
Անժելա Մանուկյան
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

**ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՅԵՐԻ ԽՆԴՐԱՌՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՅԻՆ
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Խնդրառության կամ կառավարման հարցն ամենատարբեր հայեցակետերով քննարկել են շատ օտարագրի ու հայ լեզվաբաններ: Մենք դրան անդրադառնում ենք զուտ կիրառական նպատակներով, այն է՝ ինչպես ներկայացնել հայերենի բայական խնդրառությունը (կառավարումը) UNL համակարգում:

UNL-ը ունիվերսալ ցանցային այնպիսի համակարգ է, որի առաջնային նպատակն է աշխարհի ժողովուրդների ազգային լեզուներով ներկայացնել հույժ կարևոր տեղեկատվություններ: UNL-ի հեղինակները ծրագրում են դրա գործողության ոլորտը տարածել (համակարգի բարենպաստ զարգացման և բավարար ֆինանսավորման դեպքում) համացանցում (Internet-ում) հրատարակվող պարբերականների, էլեկտրոնային փոստի, գիտաժողովների, գրադարանների, գիտատեխնիկական և տեղեկատվական-որոնողական համակարգերի, ինչպես նաև ՄԱԿ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հրատարակությունների վրա:

UNL-ը բնական լեզուների իմաստը նկարագրող արհեստական լեզու է: Այն հեղինակել է Հ. Ռոշիլան (ՄԱԿ-ի համալսարան): Նախագծի գաղափարը հետևյալն է. առաջարկվում է ունիվերսալ միջնորդ լեզու, որը բավարար չափով հզոր է՝ բնական լեզվով տեքստերում պարունակվող ողջ կարևորագույն ինֆորմացիան արտահայտելու համար. այն առավելագույնս հարմարեցված է ավտոմատ մշակման համար: Այս ծրագիրը տարբերվում է ավանդական մեքենական թարգմանության համակարգերից նախ նրանով, որ տարբեր լեզուներով տեքստերի սերման ուղի է հարթում UNL արտահայտություններից, ապա՝ UNL լեզվով արտահայտությունները կարելի է սերել և պահել՝ անկախ թարգմանվող բնական լեզուներից:

Ժամանակի ընթացքում այս ծրագրին միացավ նաև հայերենը՝ որպես նմանօրինակ աշխատանքներում լուրջ նախադրյալներ ունեցող լեզու:

Նշված համակարգում կարևորվում են ինչպես բառապաշարի ներկայացման հարցերը (կոնկրետ բերականական կարգերով), այնպես էլ շարահյուսական որոշակի հարաբերությունների՝ տվյալ դեպքում՝ բայական խնդրառության հարցերը:

Ինչպես նշեցինք վերը, հայերենի խնդրառությունը կամ կառավարումը (ըստ Հ.Հարությունյանի¹), տարբեր հայեցակետերով քննարկել են շատ լեզվաբաններ (Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան, Ս. Աբրահամյան, Հ. Բարսեղյան, Ա. Մայիլյան, Ս. Մխիթարյան). այստեղ համառոտ կանոնադաշտնանք Հ. Հարությունյանի այն դիտարկումներին, որոնք այս կամ այն չափով առնչվում են մեր աշխատանքին: Առաջին «...կառավարումով ստեղծված շարահյուսական կառույցի բաղադրիչների միջև առկա իմաստային հարաբերության (խորքային կառուցվածք) կառավարումն արտահայտվում է իբրև *խնդրառություն* (ուտել հաց, գրել նամակ, մոտենալ սեղանին, հեռանալ սեղանից, գրել գրիչով), *պարագաառություն* (ապրել Երևանում, զնայ տուն, ցրտից դողալ, կանգնել հատակին, ազատվել ըստ հրամանի...), *ստորոգառություն* (մարդ կոչել, ուսանող դառնալ)» (1, էջ 41) :

Երկրորդ, ըստ կապակցության բնույթի «...առանձնացվում է ըստ կառույցի բաղադրիչների միջև առկա շարահյուսական հարաբերության իմաստի (խորքային կառուցվածք), որը Ն. Ֆիլիչևան կոչում է շարահյուսական դաշտ և գերմաներենի բայի համար առանձնացնում է *օբյեկտային* (ուղիղ խնդիր), *պարագայական, կոմպլեկտիվ* (անուղղակի խնդիր) և *հատկանշային* (ձևի պարագայի) դաշտեր:

Հայ քերականագիտության մեջ շարահյուսական հարաբերության իմաստի հիման վրա առանձնացվել են նախադասության անդամները: Անտեսելով մասնատումներն ու ներքին բաժանումները՝ հայերենում կարող ենք առանձնացնել հինգ ընդհանուր բնույթի հարաբերություններ՝

ա) *ենթակայական*՝ ենթակայի և ստորոգյալի հարաբերությունը, որը նախադասություն է կամ նախադասության առանցքը.

բ) *ստորոգելիական*՝ ստորոգելիի (ստորոգելիական վերադիր) կապը բայ հանգույցի հետ: Ստորոգելին ցույց է տալիս վերացական բայով ենթակային վերագրվող հատկանիշ և դրանով իսկ իմաստային կապի մեջ է ենթակայի հետ (*եղբայրս ուսանող է, եղբայրս ուսանող դարձավ*).

գ) *որոշչային կամ վերադրային*՝ գոյականի լրացման կապը լրացյալ գոյականին (*լավ գիրք, վագոդ տղա, աշակերտի գիրք, Արամը՝ նկարիչը*).

դ) *խնդրային*՝ առարկայանիշ բառի կապը գերադասին, ավելի հաճախ բային (*ջորը խմել բաժակով, նամակ ստանալ ընկերոջից*): Խնդրային հարաբերության մեջ են նաև բայանուն գոյականի առարկայանիշ լրացումները (*ծանոթություն տեղանքին, խոսք ընկերոջ մասին*), ածականի գոյական լրացումները (*սարերին սովոր, կապանքներից ազատ, բերքով առատ*).

¹ Հ. Հարությունյանի դիտարկվող աշխատանքում բերված ու ըստ ամենայնի քննարկված են խնդրառությանն առնչվող բոլոր աշխատանքներն ու տեսակետները, այդ պատճառով մենք օգտվել ու առաջնորդվել ենք այդ ուսումնասիրությամբ:

ե) պարագայական՝ բայիմաստի հատկանիշ, զանազան հանգամանքներ ցույց տվող բառերի կապը բային (*արագ գնալ, մատել լսարանում, ամոթից կարմրել, լավ սովորել, կռվել հանում հայրենիքի*), ինչպես նաև որոշ բայահաղորդ գոյականների ու ածականների (1, էջ 64 – 65):

Ինչպես այս, այնպես էլ թվարկված հեղինակների աշխատանքներում բայական խնդրառության իմաստային տարբեր դրսևորումների համար ըստ էության հիմք են ծառայել Յու. Ապրեսյանի՝ բայական վալենտակա-նության (որոնք կարող են լինել իմաստային գոնե մի քանի բառերի հա-մար) առանձնացրած քսանհինգ տիպերը (2, էջ 125-126): Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են բայի երկանդամ հարաբերությունները ըստ Ապրեսյանի և ըստ UNL համակարգի, եթե կա համապատասխանու-թյուն:

	ըստ Ապրեսյանի	օրինակ	UNL
1	Sub (սուբյեկտ)	Ես← մեկնեցի Մոսկվա:	agt -գործող
2	Contrag (կոնտրա-գենտ)	Գիրքը գնեցի→ նրանից:	-, cag-կից գոր-ծող (coagent), ptn
3	Cap	Նա մեղավոր էր→ ընկերների առաջ	-, համարժեքը չունի
4	Obj (օբյեկտ)	Վերցնել→ գիրքը, խփել→ սեղանին	obj, opl
5	Content (բովանդա-կութ.)	Ինձ պատմեցին→ այդ դեպ-քի մասին	obj, -cnt (ոչ բայա-կան),
6	Adr (հասցեատեր)	Գրել→ ընկերոջը	obj, ben
7	Recip (ստացող/ընդո-նող)	Նվիրել→ երեխաներին	obj, ben
8	Via (միջնորդ)	Ուղարկել→մեկի միջոցով	obj, man
9	Is (ելակետ/աղբյուր)	Գնել→ խանութից	src, plf ¹
10	Loc (տեղ)	Ապրել→ քաղաքում, Խաղալ→ բեմում	plc, scn
11	Ab (սկզբնակետ)	Դուրս գալ→սենյակից	plf
12	Ad (վերջնակետ)	Գնալ→ անտառ, մեկնել→ Մոսկվա	plt
13	Itin (երթուղի)	Քայլել→ ճանապարհով	via
14	Med (միջոց)	Կայցնել→ մեխով	met
15	Instr (գործիք)	Գրել→ գրիչով	ins

¹ -, պայմանական նշանը ցույց է տալիս կոնկրետ համապատասխանության բացակայություն. այս դեպքում տալիս ենք նրա UNL-ական հնարավոր համարժե-քը (cap հարաբերության դեպքում վերջինս բացակայում է):

16	Mod (ձև)	Կարդալ→ արագ	man
17	Cond (պայման)	Անել→ որևէ պայմանով	con
18	Motiv (հիմնավորում)	Պարզևատրել→ լավ աշխատանքի համար	rsn
19	Caus (պատճառ)	Ուրախանալ→ նվերով, ուրախությամբ→ լաց լինել	rsn
20	Result (արդյունք)	Ներկել→ կարմիր գույն	-, obj
21	Dest (նպատակ)	Զգտել→ լավ կյանքի	pur
22	Asp (ասպեկտ)	Գերազանցել→ գիտելիքներով	-
23	Quant (քանակ)	Պլանը գերակատարել→ 10 տոկոսով, գնել→ 2 դրամով	-, bas
24	Period (ժամկետ)	Գնալ→ երկու օրով	dur
25	Temp (ժամանակ)	մեկնել→ առավոտյան, →ամսի մեկին	tim, tmf (time from), tmt (time to)

Ինչպես տեսնում ենք, ապրեսյանական և UNL- ական հարաբերությունները ընդհանուր առմամբ համընկնում են, բայց կան դեպքեր, երբ մեկ հարաբերությանը համապատասխանում են մեկից ավելի հարաբերություններ (Temp → tim, tmf, tmt) և հակառակը (Motiv, Caus → rsn). միայն մեկ՝ Cap - ի դեպքում UNL - ական համապատասխանություն չունենք:

UNL համակարգում երկանդամ հարաբերությունները 44-ն են՝

agt, and, aoj, bas, ben, cag, cao, cnt, cob, con, coo, dur, equ, fnt, frm, gol, icl, ins, int, iof, man, met, mod, nam, obj, opl, or, per, plc, plf, plt, pof, pos, ptn, pur, qua, rsn, scn, seq, src, tim, tmf, tmt, to, via, որոնցից բային վերաբերում են 31-ը (մի քանիսի համար նշենք իմաստները՝ օրինակներով).

agt - գործող, Արամը կարդում է,

aoj - առարկան իր հատկանիշով, տերևը կարմիր է,

bas - համեմատության հիմք, գերադասել ապրել գյուղում,

ben - նպատառու, կյանքը տալ իր երկրի համար,

cag - կից գործող, զբոսնել Արամի հետ

և մյուսները՝ cao, cob, con, coo, dur, gol, ins, int, iof, man, met, obj, opl, plc, plf, plt, ptn, pur, rsn, scn, seq, src, tim, tmf, tmt, to, via:

Այս հարաբերությունները տեղ են գտել մեր կազմած բայերի խնդրառության աղյուսակում: Նշենք, որ երկանդամ հարաբերությունների մի մասը՝ ժամանակ (tim (tmf, tmt)), տեղ (plc, (plf, plt)), ձև (man), որոնք հիմնականում ծառայում են պարագայական հարաբերություններ արտահայտելու համար, ըստ էության վերաբերում է բոլոր բայերին. աղյուսակում դրանք նշվում են միայն այն դեպքերում, երբ տվյալ հարաբերությունները պար-

տաղիր են կոնկրետ բայի տվյալ իմաստի համար. օրինակ՝ plf, plt հարաբերությունները՝ շարժման բայերի դեպքում:

Աղյուսակում նշում ենք բայերի իմաստային խմբերը՝ «...շարժում արտահայտող (գնալ, վազել, քայլել, մեկնել, գալ, ժամանել), զգացական (վախենալ, երկյոռել, ատել, սիրել), խոսքային (ասել, պատմել, զրուցել, խոսել), հանգման, մատուցման (տալ, մատուցել, նվիրել, ընծայել, մոտենալ, կպչել), անջատման, ելման, սկսման (հեռանալ, պոկել, ստանալ, անջատել, դուրս գալ), պատրաստման (պատրաստել, կառուցել, շինել, գործել, հյուսել), հարկադրման (ստիպել, հարկադրել, հրամայել, պահանջել, թելադրել) և այլն» (1, էջ 74): Հաշվի ենք առել և այն հանգամանքը, որ «... հաճախ բայի բազմիմաստության, իմաստավորության պատճառով առաջանում է սեռի փոփոխություն, որն էլ ինքնին նշանակում է կառավարման փոփոխություն, տարբերություն, ուստի նման դեպքերում կարելի է ասել, որ կառավարվող բառի ձևավորումը պայմանավորված է բայի սեռով: Բայց բանն այն է, որ մի կողմից սեռային փոփոխությունը հետևանք է բայիմաստի փոփոխության, սեռի տարբերությունը՝ բազմիմաստության, մյուս կողմից նույն սեռի բազմիմաստ բայը տարբեր իմաստներով կարող է առնել տարբեր ձևավորում ունեցող լրացումներ (ինչպես բաժանել բայը), այդ պատճառով էլ հիշյալ կարգի տարբերությունները համարում ենք բայի բազմիմաստությամբ պայմանավորված, թեև չենք անտեսում նաև սեռը: Ասվածը լավագույնս երևում է **անցնել** բայի օրինակով. ըստ Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» այս բայն ունի 30 իմաստ, որոնցից 27-ում չեզոք է, 3-ում՝ ներգործական՝ «որոշ տարածությամբ ճանապարհ գնալ» և «ուսումնասիրել, սովորել» իմաստներով ներգործական է և պահանջում է ուղղակիանով արտահայտված խնդիր՝ **անցնել սարեր ու ձորեր, անցնել գետը, անցնել հայոց լեզու**» (1, էջ 78):

Աղյուսակի առաջին սյունակում նշվում են բայի սեռը, իմաստային խումբը, դրա UNL-ական տիպը, երկրորդում՝ տվյալ բայի խնդրառության ներկայացումը հայերենում, երրորդում՝ երկրորդ սյունակի նկարագրությունը UNL համակարգում, չորրորդ սյունակում բերված են օրինակներ: Նշենք, որ խնդրառության բոլոր հնարավոր դեպքերը ցույց տալու համար բերված օրինակներում բոլոր ակտանտները լեզվում կարող են միաժամանակ չդրսևորվել. օրինակ՝ «Մայրը աղջկա համար ձեռքով մետաքսից զգեստ է կարում կարմիր թելով» նախադասությունը քիչ իրականացնալի է համարվում:

ԻՄԱՍՏԱՅԻՆ ԵՎ ՍԵՌԱՅԻՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ	ԽՆԴԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ	UNL	ՕՐԻՆԱԿՆԵՐ
զմալ, մեկնել շարժման, չեզոք V,DoV	1.ենթ, Գ/Դ, ուղղ.հ 2.անջ. անուղղ.խնդ., Գ, հատ/հաս, բաց.հ, 3. միջ.անուղղ.խնդ.,Գ, հաս, զործ.հ 4.տ.սլ.,Գ/Դ, հաս/ հատ, զործ.հ 5.տ.սլ., Գ/Դ, հաս/հատ, հայց. 6.նսլ.սլ.,Գ/Դ-ք,սեռ.հ/ +(նպատակով) 7.ժմ.սլ.,Գ, հաս.,զործ.հ 8. ժմ.սլ.Գ, սեռ+Թ, բաց.հ+Թ, ուղղ.հ	agt,N/Pron,Nom ← V → →plf, N,Abl → met,N,Ins → via, N,Ins →plt, N,Acc →gol,N,Gen →dur,Num+N(T),Ins →tmf,(N(T)+Num/N(T))Abl→ →tmt, Num/N(T)Acc,Def	Արամը← մեկնեց → → Երևանից(plf) → զնացքով(met) → նոր բացված ճանապարհով (via) → Մոսկվա (plt) → սովորելու (gol) → մեկ ամսով (dur) → ապրիլի մեկից (tmf) → →30-ը (tmt)
ուղարկել նգ. V,DoV	1.ենթ, Գ/Դ,ուղղ.հ 2.ուղ. խնդ.Գ/Դ, հաս. հայց.հ. 3.անջ.անուղղ.խ.,Գ, հաս/հատ, բաց.հ 4.միջ.անուղղ.խնդ.,Գ, հաս, զործ.հ 5.տ.սլ.,Գ/Դ, հաս/հատ, զործ.հ 6.հանգ. անուղղ.խնդ. Գ/Դ, հատ/հաս, հայց.հ, 7.նսլ.սլ.,Գ/Դ-ք,սեռ.հ	agt N/Pron,Nom← V → →obj, N/PPron,Acc →plf, N,Abl → met,N,Ins → via, N,Ins →plt, N,Acc →gol,N,Gen →dur,Num+N(T),Ins	տնօրենը← ուղարկեց → →Արամին/ նրան (obj) →Երևանից(plf) → զնացքով(met) → նոր բացվ.ճան-ով (via) →Մոսկվա (plt) →վերապատրաստման (gol)

	8.Ժմ.պ., Գ, հաս., գործ.հ 9.Ժմ.պ. Գ, սեռ+Թ, բաց.հ+Թ, ուղղ.հ	→tmf,(N(T)+Num/N(T))Abl→ →tmt	→մեկ ամսով (dur) →ապրիլի մեկից (tmf) → →30-ը (tmt)
ուղարկել նգ. V, DoV	1.ենթ, Գ/Դ, ուղղ.հ 2.ուղ. խնդ., Գ/Դ, հաս., հայց.հ. 3. տ.պ., Գ, հաս/հատ, հայց,հ 4.ծ.պ., Գ, հաս., գործ.հ, 5.անջ.անուղղ.խնդ., Գ/Դ, հաս/հատ, բաց.հ 6.տ.պ., Գ/Դ, հաս/հատ, հայց.հ 7.միջ.անուղղ.խնդ. Գ, հաս., գործ.հ	agt N/Pron,Nom← V → →obj, N,Acc →plc, N,Acc /gol, N,Acc →met,N,Ins →plf, N,Abl →plt, N,Acc →met,N,Ins	նա← ուղարկեց → →դիմումը (obj) →բռն (plc) →մամակով(met) →Երևանից(plf) →Մոսկվա (plt) →փոստով(met)
տանել նգ. V, DoV	1.ենթ, Գ/Դ, ուղղ.հ 2.ուղ. խնդ., Գ, հաս., հայց.հ. 3.նպ.պ., Գ/Դ-ք, սեռ.հ 4.անջ. անուղղ.խնդ. Գ, հատ/հաս, բաց.հ 5.տ.պ., Գ, հաս/հատ, գործ.հ 6.տ.պ., Գ/Դ, հաս/հատ, հայց.հ 7.միջ.անուղղ.խնդ., Գ, հաս., գործ.հ	agt,N/Pron,Nom ← V→ →obj, N/PPers,Acc →gol,Part,Gen →plf, N,Abl → via, N,Ins →plt, N,Acc →met, N,Ins	Նա← տանում է → →փաստաթղթերը(obj) →հաստատելու (gol) →Երևանից (plf) → Վրաստանով (via) →Մոսկվա (plt) →գնացքով (met)

գրել նգ V, DoV	1. ենթ, Գ/Դ, ուղղ. հ 2. ուղ. խնդ., Գ, հաս, հայց. հ 3. հանգ. անուղղ. խնդ., Գ/Դ, հաս/հատ, որոշ. առ., հայց. հ 4. միջ. անուղղ. խնդ., Գ, հաս, գործ. հ 5. նպ. պ., Գ/Դ, հաս/հատ, սեռ. հ + մասին	agt, N/PPron, Nom ← V → → obj, N, Acc → obj, N, Acc, Def → ins, N, Ins → obj, N, Gen+ մասին	Արամը ← գրում է → → նամակ (obj Do) → ընկերոջը (obj Do) → գրիչով (ins) → իրավիճակի մասին (obj)
ասել պատմել ասացական նգ V, DoV	1. ենթ, Գ/Դ, ուղղ. հ 2. ուղ. խնդ. Գ. հաս, հայց. հ. 3. հանգ. անուղղ. խնդ., Գ/Դ, հաս/հատ, որոշ. առ., հայց. հ 4. նպ. պ., Գ/Դ, հաս/հատ, սեռ. հ + մասին	agt, N/Pron, Nom ← V → → obj, N, Acc → gol, N, Acc, Def → obj, N, Gen+ մասին	Արամը ← պատմում է → → դասը → ընկերոջը (gol) → իրավիճակի մասին (obj)
կարել նգ V, DoV	1. ենթ, Գ/Դ, ուղղ. հ 2. ուղ. խնդ. Գ, հաս., հայց. հ. 3. նպ. պ., Գ/Դ, հաս/հատ, սեռ. հ + համար 4. միջ. անուղղ. խնդ., Գ, հաս, գործ. հ 5. միջ. անուղղ. խնդ., Գ, հաս, գործ. հ 6. նյութի անուղղ. խնդ., Գ, հաս, բաց. հ	agt, N/Pron, Nom ← V → → obj, N, Acc → pur, N, Gen+ համար → ins, N, Ins → met, N, Ins → src, N, Abl → met, N, Abl	Նա ← կարում է → → զգեստ (obj Do) → աղջկա համար (pur) → ձեռքով (ins) → (կարմիր) ← թելով (met) → մետաքսից (src) (met)

